

Դեկտեմբեր 8, 2008

## Դեղերի արտադրության բնագավառում ուսակությունների եւ գիտելիքների կարիքների հետազոտություն

Դաշվետվություն, Մաս 1

Ուսակությունների եւ գիտելիքների ուսումնասիրություն

Դեղինակ՝ ԱՄ Փաթևը քուսաւթիւն քայլու ՍՊԸ



Տեքստում տեղ գտած հապավումների վերծանումներ.

ՊԱԳ	- Պատշաճ Արտադրական Գործառույթներ
ԵՊՀ	- Երեւանի Պետական Համալսարան
ԵՐԵՎԱՆԻ ՔՂՖ	- Երեւանի Քիմիադեղագործական ֆիրմա
ՊԼԳ	- Պատշաճ Լաբորատոր Գործառույթներ
ԵՊԲՀ	- Երևանի Մ. Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարան
ՀՊՃՀ	- Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան
ՄՍՀՀ Ծրագիր	- Մրցունակ Մասնավոր Հատված Հայաստանում Ծրագիր
ՄՁԳ	- Միջազգային Զարգացման Գործակալություն
ՈՎՀ	- Որակի Վերահսկողության լաբորատորիա

Բովանդակություն

Կատարողական Ամփոփագիր	3
Ներածություն. հետազոտության անցկացման նախադրյալները և նպատակները	3
Հիմնական արդյունքներ	3
<b>ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ</b>	<b>9</b>
Հետազոտության տրամաբանությունը և մոտեցումները	9
Ղեղագործական բնագավառի հիմնական պաշտոնների բացահայտում	9
Օրինակելի աշխատանքի նկարագրերի մշակումը	9
Լավագույն փորձի հետազոտություն	10
Տեղական գործառույթներ	10
Հետազոտության բաղադրիչը	11
Ընտրանքը	11
Հետազոտության գործիքներն ու թեմաները	11
Իրականացված գործողություններ և ստացված արդյունքներ	12
<b>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՑՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ</b>	<b>13</b>
Ղեղագործության բնագավառի կարևոր պաշտոնների սահմանումը	13
ՊԱԳ պահանջներ	13
Հիմնական միջոցներ	13
Հիմնական անձնակազմը	13
Տեղական գործառույթներ	14
Աշխատանքի Նկարագրեր	15
Առկայություն	15
Օրինակելի Աշխատանքի Նկարագրի կազմությունը	16
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ</b>	<b>17</b>
Ունակությունների և գիտելիքների անբավարարությունն ըստ ղեղագործական ձեռնարկությունների ղեկավարների	17
Հավելյալ աշխատողներ ներգրավելու կարիքը	17
Չբաղվածության աստիճանը	17
Անհապաղ լրացման ենթակա թափուր աշխատատեղերը	17
Թափուր աշխատատեղերը չլրացնելու պատճառները	18
Կազմակերպչական կառուցվածքի համապատասխանությունը առկա կարիքներին	19
Պարտականությունների սահմանումը	19
Աշխատանքի Նկարագրերի առկայությունը	19
Աշխատանքի Նկարագրերի վերաբերյալ աշխատողներին իրազեկելու ձևերը	20
<b>Աշխատողների որակավորման բարելավման կարիքները</b>	<b>20</b>
Ունակությունների եւ գիտելիքների հարցում գործառուների կարիքները	20

Ունակությունների եւ գիտելիքների առկա կարիքների առաջացման պատճառները	21
Ունակությունների եւ գիտելիքների կարիքները բավարարելու եղանակները	22
<b>Վերապատրաստման դասընթացների բնութագրերը</b>	<b>23</b>
Թեմաները	23
Անհապաղությունը	23
Դասընթացների իրականացման վայրը	23
Նախընտրելի դասընթացավարներ	24
<b>Հարաբերությունները կրթական հաստատությունների հետ</b>	<b>25</b>
Առկա համագործակցություն	25
Դեղագործական ձեռնարկությունների ակնկալիքները կրթական հաստատություններից	26
Համագործակցության արդյունավետությունը	27
<b>Նոր աշխատողների պահանջը</b>	<b>28</b>
Կարձաֆամկետ և 5 տարվա կտրվածքներով պահանջվող նոր աշխատողների թիվը	28
Աշխատողներ ներգրավելու հնարավոր եղանակները	30
Ունակությունների և գիտելիքների անբավարարությունն ըստ կրթական հաստատությունների ներկայացուցիչների	30
Կրթական հաստատությունների նկարագիրը և առաջարկվող ուսուցումը	30
<b>Դիմորդների և կրթական տեղերի համադրությունը</b>	<b>31</b>
Ուսանողների ներկա թիվը	31
Ուսանողների թվի և կրթական տեղերի համադրությունը	33
Կրթական տեղերի թվի որոշումը	34
5 տարիների կտրվածքով դեղագործական ֆակուլտետներ ավարտող ուսանողների թիվը	35
<b>Կրթական հաստատություններում կիրառվող ծրագրերը</b>	<b>36</b>
Կրթական ծրագրերի համապատասխանությունը ներկա իրավիճակին	36
Կրթական ծրագրերի փոփոխության անհրաժեշտությունը	36
Բարձր որակավորում ունեցող դասախոսների առկայությունը	37
<b>Հարաբերությունները դեղագործական ձեռնարկությունների հետ</b>	<b>37</b>
Համագործակցության աստիճանը	37
Համագործակցության արդյունավետությունը	39
Աջակցություն ուսանողներին աշխատանք գտնելու հարցում	39
Դեղագործական ոլորտի ազդեցությունը կրթական գործընթացների վրա	39
<b>Դեղագործական ձեռնարկությունների վերաբերյալ կրթական հաստատությունների տեղեկացվածությունը</b>	<b>40</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</b>	<b>41</b>
Հավելված 1 - Հետազոտված դեղագործական ձեռնարկությունների ցանկը	41
Հավելված 2 - Հետազոտված կրթական հաստատությունները	41
<b>ՀՈՌՄՈՒՄՆԵՐ</b>	<b>43</b>

## Կատարողական Ամփոփագիր

### Ներածություն. հետազոտության անցկացման նախադրյալները և նպատակները

ԱՄՆ ՄԶԳ Մրցունակ Մասնավոր Հատված Հայաստանում Ծրագրի շրջանակներում, Աշխատուժի Զարգացման բաղադրիչի ներքո զգալի ջանքեր են ներդրվել աշխատուժի զարգացման և անձնակազմի ունակությունների բարելավման համար՝ նպատակ ունենալով բավարարել Հայաստանում դեղագործական ձեռնարկությունների պահանջները և ապահովել բարձր որակավորում ունեցող կադրերով։ ՄՄՀՀ Ծրագրի շրջանակներում իրականացված **Դեղերի արտադրության բնագավառում ունակությունների և գիտելիքների կարիքների սույն հետազոտության նպատակներն են.**

- i) բացահայտել դեղագործական ձեռնարկությունների աշխատողների առկա գիտելիքների և ունակությունների մակարդակի և նրանց ներկայացվող պահանջների անհամապատասխանության աստիճանը,
- ii) բացահայտել դեղագործական ձեռնարկությունների աշխատողների գիտելիքների և ունակությունների բարելավման և հետագա ուսուցման/վերապատրաստման կարիքները,
- iii) բացահայտել կրթական համակարգի թերությունները և սահմանել երկարաժամկետ կտրվածքով վերջիններիս նկատմամբ առաջադրվող խնդիրները։

Ունակությունների և գիտելիքների կարիքների հետազոտությունը բաղկացած է հետևյալ կոնկրետ առաջադրանքներից։

1. Հայաստանի դեղագործական ձեռնարկությունների համար սահմանել և դասակարգել աշխատանքային հիմնական պաշտոնները,
2. Հայաստանի դեղագործական ձեռնարկություններում իրականացնել Ունակությունների և գիտելիքների կարիքների հետազոտություն, ներառյալ այդ ձեռնարկությունների և համապատասխան կրթական հաստատությունների դեկավարների առկա և անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների հետազոտության իրականացում, ինչպես նաև դեղագործական ձեռնարկությունների աշխատակիցների հետազոտություն՝ անկետավորման եղանակի կիրառմամբ,
3. Որակական հետազոտության և անկետավորման ընթացքում հավաքված տեղեկատվության վերլուծություն և հաշվետվությունների պատրաստում։

### Հիմնական արդյունքներ

Ունակությունների և գիտելիքների կարիքների հետազոտության արդյունքում կատարվել են մի շարք հետևողական ներկայացվում է ստորև, իսկ մնացած՝ հաշվետվության մյուս երկու հատորներում։ Ներկայացված հետևողական վերաբերում են միջազգային լավագույն փորձի ուսումնամիջությանը, ինչպես նաև դեղագործական ընթերությունների և համապատասխան կրթական հաստատությունների դեկավարների/ներկայացուցիչների որակական հետազոտությանը։

1. Հետազոտության արդյունքում, հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա, սահմանվել են 15 հիմնական պաշտոններ։ Չնայած հետազոտված ձեռնարկությունների դեկավարներն առանց տատանվելու ընդունել են նշված 15 պաշտոնները զբաղեցնող աշխատակիցներ ունենալու կարևորությունը, տեղական ձեռնարկություններից և ոչ մեկը ամբողջությամբ չի ապահովում այս պահանջների իրականացումը։ Որոշ պաշտոններ, ինչպիսիք են Լիազորված Անձը, Դեղագործության Մասնագետը, Գիտական Հետազոտություններ Պատասխանատուն և այլն,

հաճախ համատեղվում են այլ աշխատակիցների կողմից, կամ դրանց պարտականությունների իրականացվում են ձեռնարկությունների ղեկավար անձնակազմի կողմից:

2. Պատշաճ Արտադրական Գործառույթների (ՊԱԳ) և միջազգային լավագույն փորձի կառուցվածքային և կազմակերպչական պահանջներին համապատասխանելու համար, տեղական դեղագործական ձեռնարկությունները պարտադիր չեն, որ ունենան շատ բարդ կառուցվածք: Ցավոք ընդամենը մի քանի տեղական ձեռնարկություններ են բավարարում այդ պահանջներին: Այդ ձեռնարկություններն ունեն բավականին բարդ կառուցվածքներ՝ համապատասխանեցված իրենց ներկա կարիքներին և գործառույթներին: Միաժամանակ տեղական բազմաթիվ դեղագործական ձեռնարկություններ իսկապես կարիք ունեն վերանայել իրենց կազմակերպչական կառուցվածքները՝ գոնե նվազագույն պահանջներին բավարարելու համար:
3. Նմանատիպ իրավիճակ է նաև Աշխատանքի Նկարագրերի ներդրման հետ կապված: Չնայած գրեթե բոլոր ուսումնասիրված դեղագործական ձեռնարկությունների ղեկավարները հայտարարել են, որ իրենց ձեռնարկություններում ներդրվել և կիրառվում են դրանք, նրանցից քչերն են կարողացել ցույց տալ այդ փաստաթղթերը: Որոշ ձեռնարկությունների ղեկավարներ պարզապես չեն կարևորում ԱՊՆ-երի կիրառությունը և բացատրում են դա շատ արագ փոփոխվող շուկայական և աշխատանքային պայմաններով, և այդ փաստաթղթերը շատ հաճախ փոփոխվելու անհրաժեշտությամբ:
4. 2008թ. նոյեմբերի դրությամբ Հայաստանում գործում են շուրջ 15 դեղագործական ձեռնարկություններ՝ ներառյալ հարակից արտադրություններով (դեղաբույսերի, բիոակտիվ հավելումների և այլ ապրանքների արտադրությամբ) գրաղվող արտադրական միավորները: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են 9 առաջատար դեղագործական ձեռնարկություններ, որոնցից ընդամենը 5-ն են արտադրում և իրացնում դեղերի և դեղագործական այլ արտադրանքների համեմատաբար լայն տեսականի: Որոշ ձեռնարկություններ գրաղվում են ոչ միայն դեղերի արտադրությամբ, այլ նաև իրականացնում են դրանց ներմուծում, մեծածախ դիստրիբուցիա և մանրածախ վաճառք:
5. Հետազոտված 9 դեղագործական ձեռնարկություններում ընդհանուր առմամբ աշխատում է 570 մարդ: Այս աշխատողների մոտ 60%-ը ներգրավված են 2 համեմատաբար խոշոր ձեռնարկություններում Երևանի Քիմիադեղագործական Ֆիրմայում և Լիկվորում: Հետազոտված ձեռնարկություններում կան ընդամենը մի քանի թափուր աշխատատեղեր, որոնք կլրացվեն մոտ ապագայում:
6. Տեղական դեղագործական ձեռնարկությունները քիչ են կիրառում մասնագետների «գրոյից» պատրաստման մոտեցումը: Զերնարկությունների ղեկավարները գերադասում են ներգրավվել առնվազն նվազագույն պատրաստվածություն, գիտելիքներ և ունակություններ ունեցող աշխատողներ, որոնք հետագայում գործնական վերապատրաստում են անցնում և ծեռք են բերում որակավորման անհրաժեշտ մակարդակ: Բացառություն են կազմում հիմնական ղեկավար պաշտոնների գրաղեցման համար հրավիրվող մասնագետները. նրանց նկատմամբ որակավորման պահանջները շատ ավելի բարձր են: Տվյալ իրավիճակը երկակի բնույթ ունի: Մի կողմից գործնական վերապատրաստումից հետո աշխատողները ծեռք են բերում որակավորման անհրաժեշտ բարձր մակարդակ, մյուս կողմից, դառնալով որակավորված մասնագետներ, աշխատողները զգալիորեն ավելացնում են իրենց պահանջները՝ մասնավորապես կապված աշխատավարձերի հետ: Շատ դեպքերում տեղական դեղագործական ձեռնարկությունները պարզապես ի վիճակի չեն լինում բավարարելու աշխատակիցների պահանջած բարձր աշխատավարձները և ստիպված են լինում նոր աշխատողներ փնտրել: Այս ցիկլը բավականին խնդիրներ է պարունակում իր մեջ.

համեմատաբար խոշոր և ֆինանսապես ուժեղ ձեռնարկությունները ի վիճակի են բարձր որակավորում ունեցող մասնագետներին առաջարկել բարձր աշխատավարձներ և գրավել իրենց կողմը, մինչդեռ համեմատաբար փոքր և թույլ ձեռնարկությունները ստիպված են անընդհատ մասնագետներ փնտրել:

7. Բոլոր հետազոտված ձեռնարկությունները հայտնել են, որ ունեն աշխատողների որակավորումը բարձրացնելու կարիք: Որոշ ձեռնարկությունների ղեկավարներ ցանկանում են բարելավել բոլոր աշխատակիցների որակավորումը, մյուսները՝ միայն որոշների: Աշխատակիցների որակավորումը բարձրացնելու կարիքը պայմանավորված է հետևյալ պատճառներով.
- ⇒ Մասնագետների գիտելիքները հնացած են, աշխատակիցները ծանոթ չեն դեղագործության ժամանակակից տեխնոլոգիաներին: Բացի այդ, Հայաստանում չեն կազմակերպվում վերապատրաստման և մասնագետների որակավորման բարձրացման կանոնավոր դասընթացներ:
- ⇒ Չնայած դեղագործական ձեռնարկությունները գինված են ժամանակակից սարքավորումներով՝ դրանց օպերատորները լիովին չեն տիրապետում դրանց շահագործման նրբություններին և սարքավորումների հնարավորություններին: Սարքավորումների առավել արդյունավետ շահագործման համար սպասարկող օպերատորները կարիք ունեն զգալիորեն բարելավել իրենց գիտելիքներն ու ունակությունները:
- ⇒ Ընդհանուր առնամբ Հայաստանում բավականին քիչ են դեղագործության բնագավառում բարձր որակավորում ունեցող մասնագետները: Ղեղագործական ձեռնարկությունները սովորաբար ներգրավում են ընդհանուր մասնագետների, որոնք ունեն որոշակի գիտելիքներ, և գործնական վերապատրաստման միջոցով բարձրացնում նրանց որակավորումները:
- ⇒ Համապատասխան կրթական հաստատություններում առաջարկվող ուսուցումը հնարավորություն չի տալիս մասնագետներին համապատասխանել դեղագործական ձեռնարկությունների պահանջներին:
8. Ղեղագործական ձեռնարկությունների ղեկավարների կարծիքով վերապատրաստման դասընթացները հանդիսանում են աշխատակիցների որակավորման բարձրացման հիմնական ուղին: Չնայած դրան, աշխատողները չեն հաստատում այս կարծիքը. նրանք գրեթե չեն կարևորում ինտենսիվ վերապատրաստման դասընթացները կամ պարզապես չեն ցանկանում այդ նպատակի համար ժամանակ հատկացնել:
9. Ղեղագործական ձեռնարկությունների ղեկավարների կարծիքով իրենց աշխատողները կարիք ունեն մասնակցել վերապատրաստման դասընթացների ՊԱԳ-ի, Պատշաճ Լաբորատոր Գործառույթների (ՊԼԳ) և այլ հարակից մասնագիտական թեմաներով: Սա տրամաբանական է, քանի որ ներկայումս գրեթե բոլոր դեղագործական ձեռնարկությունները պլանավորում են իրենց մոտ ներդնել ՊԱԳ ստանդարտներ: Դրանցից ոմանք արդեն իսկ նախաձեռնել են կոնկրետ միջոցառումներ այս ուղղությամբ: Բացի այդ, մոտ ապագայում սպասվում են նաև որոշակի օրենսդրական փոփոխություններ, որոնք նպատակ ունեն տեղական դեղագործական արտադրությունը համապատասխանեցնել ՊԱԳ ստանդարտներին: Ղեղագործական ձեռնարկությունները շատ լավ են հասկանում այս իրավիճակը և փորձում են ժամանակին և արդյունավետորեն արձագանքել սպասվող փոփոխություններին: Ղեղագործական ձեռնարկությունների ղեկավարների կարծիքով վերը նշված վերապատրաստման դասընթացները շատ կարևոր են և պետք է իրականացվեն անհապաղ:
10. Ղեղագործական ձեռնարկությունների և կրթական հաստատությունների համագործակցությունը շատ սերտ չէ: Այդ հարաբերությունները հիմնականում սահմանափակվում են

ղեղագիտական/ղեղագործական և քիմիական ֆակուլտետների ուսանողների համար գործնական դասընթացների կազմակերպմանք և անցկացմամբ: Չեն իրականացվում գիտահետազոտական համատեղ ծրագրեր, փորձնական/վեճռությային ծրագրեր, չեն պլանավորվում և անցկացվում աշխատողների նպատակային ուսուցումներ, ղեղագործական ձեռնարկությունները բացարձակապես հնարավորություն չունեն ազդելու կրթական հաստատություններում դասավանդվող առարկաների և ծրագրերի ընտրության վրա և այլն: Ներկա իրավիճակը կարելի է սահմանել որպես «հարաբերություններ», սակայն ոչ «համագործակցություն»:

11. Ղեղագործական ձեռնարկությունների ղեկավարներն ավելի սերտ համագործակցություն են ակնկալում կրթական հաստատություններից: Վերջիններս պետք է փորձեն հնարավորինս հաշվի առնել ոլորտի ձեռնարկությունների կարիքներն ու պահանջները: Ղեղագործական ձեռնարկությունները կրթական հաստատություններից ունեն հետևյալ կրնկրետ սպասումները.
- ⇒ **ՊԱԳ** և հարակից բնագավառների մասնագետների պատրաստում: Այս մասնագետները ներկա իրավիճակում պարզապես անհրաժեշտ են դարձել:
- ⇒ Զգալիորեն ավելացնել գործնական դասընթացների ծավալը:
- ⇒ Վերանայել դասավանդվող առարկաների ցանկն ու դասընթացների ծրագրերը:
- ⇒ Իրականացնել նոր ղեղերի հայտնաբերման ուղղությամբ իրականացվող գիտահետազոտական աշխատանքներ և սինթեզել նոր ղեղեր: Կրթական հաստատությունները սովորաբար տնօրինում են բավարար տեխնիկական ու լաբորատոր սարքավորումներ և մարդկային ռեսուրսներ՝ այս աշխատանքներն իրականացնելու համար: Սա լուրջ օժանդակություն կլինի ղեղագործական ձեռնարկություններին, քանի որ նրանց մեջ մասը չունեն նոր ղեղամիջոցներ սինթեզելու համար անհրաժեշտ պայմաններ կամ հնարավորություններ:
- ⇒ Աշխատուժի հետ կապած ծրագրերի մշակում և իրականացում: Այս ծրագրերի ներքո կրթական հաստատություններում կարող են ընտրվել լավագույն ուսանողները, նրանց դասավանդումը կիրականացվի հատուկ ծրագրերով, նրանց կառաջարկվի երաշխավորված աշխատատեղ: Այլ կերպ ասած, կիրականացվի աշխատուժի որակավորման բարձրացման ներդրումային ծրագիր:
12. Ղեղագործական ձեռնարկությունների ղեկավարները հայտնել են, որ իրենց ձեռնարկություններում գալիք 12 ամսներին կրացվեն մոտ 170 լրացուցիչ աշխատատեղեր: Ընդհանուր առմամբ ղեղագործական ձեռնարկություններում աշխատողների թիվը կավելանա մոտ 30%-ով: Միաժամանակ, որոշ ձեռնարկություններ ունեն հաջողության հասնելու ավելի շատ նախադրյալներ, քան մյուսները: Այսպես՝ աշխատողների թվի հայտարարված ավելացման մոտ 65%-ը նախատեսվում է ապահովել ընդամենը 2 ձեռնարկություններում:
13. Ղեղագործական ձեռնարկությունները նոր աշխատողներին սովորաբար ներգրավում են աշխատանքի աշխատանքի տեղավորման գործակալությունների և զբաղվածության պետական կենտրոնների միջոցով: Որոշ աշխատողներ նույնիսկ համապատասխան կրթություն չեն ունենում: Անմիջապես կրթական հաստատություններից ներգրավվող աշխատողները համեմատաբար համեստ պահանջներ ունեն, բայց նրանց գիտելիքները և ունակությունները լիովին չեն համապատասխանում ներկայացվող պահանջներին՝ քիչ աշխատանքային փորձի և նույնիսկ դրա բացակայության պատճառով: Ղեղագործական ձեռնարկությունների ղեկավարներին գրավուն է անմիջապես կրթական հաստատություններից աշխատողներ ներգրավելու միտքը: Դա կարող է հանդիսանալ ղեղագործական ձեռնարկությունների և կրթական հաստատությունների համագործակցության սերտացման ուղղությամբ առաջին արդյունավետ քայլը:

14. Ներկայումս տարբեր կրթական հաստատություններում դեղագործության բնագավառի պոտենցիալ ճամանակաշրջանում ընդհանուր թիվը կազմում է 1,563 մարդ: Այս թիվը ներառում է միջնակարգ ճամանակաշրջան ուսումնական հաստատությունների, ԲՈՒՀ-երի և ետքուհական կրթության (ասպիրանտուրա, մագիստրատուրա) բոլոր ուսանողներին: Միջնակարգ ճամանակաշրջան կրթական հաստատություններ ավարտած ճամանակետները կարող են գրադեցնել օպերատորների կամ միջին դեկավարների պաշտոններ: Ավելի բարձր պաշտոններ գրադեցնելու համար ավելի բարձր կրթություն և ունակություններ են անհրաժեշտ:
15. Ընդհանուր առմանք դեղագործական կրթության պահանջարկը համարելի է կրթական հաստատությունների կողմից ներկայացվող առաջարկին: Տարբեր կրթական հաստատությունների համար առաջարկի և պահանջարկի գործակիցը տարբեր է: Որոշ հաստատություններ չեն կարողանում բավարարել պահանջարկը. մյուս հաստատությունները, որոնք նույնիսկ ավելի հանրահայտ են, ունեն դիմորդների անբավարար քանակություն: Դիմորդների նման սակավությունը հիմնականում պայմանավորված է կրթության թանկությամբ. այս հաստատություններում շատ քիչ թվով անվճար տեղեր կան:
16. Դեղագիտական/դեղագործական ֆակուլտետների ուսանողների գերակշիր մեծամասնությունը նույնիսկ չի էլ մտածում դեղագործական ծերնարկություններում աշխատելու մասին: Նրանք գերադասում են աշխատանք գտնել դեղատներում, որտեղ աշխատանքային պայմաններն ավելի լավ են, աշխատանքն ավելի հեշտ է, անվտանգ ու ավելի բարձր է վարձատրվում: Չնայած դեղատներում ճամանակաշրջանը ազի հնարավորությունն ավելի սահմանափակ է, ճամանակետների մեծամասնությունն իսկապես գերադասում է աշխատանք փնտրել դեղատներում:
17. Կրթական հաստատություններում ուսումնական տեղերի քանակը որևէ կապ չունի Հայաստանում դեղագործական բնագավառի դիմանիկայի հետ: Կրթական հաստատությունները գործում են ոլորտից անկախ, խիստ պետական վերահսկողության ներքո: Կրթական տեղերի քանակը սահմանվում է Հայաստանի Կրթության և Գիտության Նախարարության կողմից տրված Լիցենզիայով: Իր հերթին՝ նախարարությունը լիցենզավորումն իրականացնում է տվյալ կրթական հաստատության հզորությունների տարածքների և ենթակառուցվածքների առկայությունից ենելով:
18. Գալիք 5 տարիներին տարբեր կրթական հաստատությունների դեղագիտական/դեղագործական ֆակուլտետները կավարտեն մոտ 2,500 ուսանողներ: Նույն ժամանակահատվածում դեղագործական ծերնարկությունների կողմից ներկայացվող աշխատողների պահանջարկը կկազմի մոտ 410 աշխատող:
19. Դեղագործական ծերնարկությունների դեկավարները դժգոհ են կրթական ներկա համակարգից և առաջարկում են անհապաղ փոփոխություններ իրականացնել: Որոշ դեկավարներ բողոքում են, որ դասավանդվող առարկաներն ու ծրագրերը չեն փոփոխվել արդեն մի քանի տասնամյակ: Իրենց հերթին, կրթական հաստատությունները վստահ են, որ կրթական ներկա ծրագրերը լավագույն ձևով համապատասխանում են ներկա պահանջներին:
20. Կրթական հաստատությունների ներկայացուցիչների մեծամասնությունը կարծում է, որ այցելությունները դեղագործական ծերնարկություններ վերջիններիս և կրթական հաստատությունների միջև համագործակցության առավել հաճախ հանդիպող ձևն է: Համագործակցության մյուս տարբերակը գործնական դասընթացներն են: Որոշ դեղագործական ծերնարկություններ նման միջոցառումներ են կազմակերպում առևտրային հիմունքներով, մյուսներո՞ անվճար: Որոշ դեպքերում դեղագործական ծերնարկություններն ընտրում են որոշ ուսանողների և նրանց համար հատուկ գործնական պարագաներու

կազմակերպում, նույնիսկ վարձատրություն նշանակում: Համատեղ հետազոտական ծրագրերի իրականացումն ամենահազվադեպ հանդիպող համագործակցության ձևն է:

21. Դեղագործական ձեռնարկությունները կրթական հաստատությունների վրա որևէ իրական ազդեցություն չունեն: Ձեռնարկությունները կարող են դիմել կրթական հաստատություններ և իրենց աշխատակիցների համար առանց մրցույթի վճարովի ուսումնական տեղեր բացել և ոչ ավել: Որոշ դեպքերում դեղագործական ձեռնարկությունների դեկավարներին հրավիրում են մասնակցելու քննական հանձնաժողովների կամ առաջարկում են ոչ մեծ փոփոխությունների առաջարկություններ անել կրթական ծրագրերի մեջ:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### Հետազոտության տրամաբանությունը և մոտեցումները

#### Դեղագործական բնագավառի հիմնական պաշտոնների բացահայտում

Սույն հետազոտության հիմնական խնդիրներից մեկն է Հայաստանում դեղագործական ձեռնարկությունների հիմնական պաշտոնների դասակարգումը: Այս նպատակով ոչ միայն հետազոտվել են տեղական ձեռնարկությունները, այլև ուսումնասիրվել է միջազգային առաջատար ընկերությունների փորձը: Ուսումնասիրվել են նաև բազմաթիվ այլ փաստաթղթեր: Տեղական ձեռնարկությունների դեկավարներին առաջարկվել է տրամադրել իրենց ձեռնարկությունների կազմակերպչական կառուցվածքը: Այս խնդրանքին արձագանքել են ոչ բոլոր ձեռնարկությունների դեկավարները. որոշ դեպքերում նման տեղեկության տրամադրման խնդրանքը մերժվել է գաղտնիության պահպանման պատճառաբանություններով:

Արդյունքում, հետազոտության արդյունքները հիմնվել են մի քանի տեղական եւ արտասահմանյան ձեռնարկությունների տեղեկությունների, ինչպես նաև ՊԱԳ ստանդարտների վերաբերյալ և նմանատիպ այլ փաստաթղթերի տվյալների վրա: Նման մոտեցումը թույլ է տվել անդրադառնալ խնդրին ինչպես տեսական, այնպես էլ գործնական տեսանկյուններից: Արդյունքում սահմանվել են դեղագործական ձեռնարկությունների 15 հիմնական պաշտոններ, որոնց ապահովումը և զբաղեցումը որակավորված մասնագետներով կարող է երաշխավորել դեղագործական ձեռնարկության արդյունավետ աշխատանքը: Սահմանված և դասակարգված պաշտոններից յուրաքանչյուրի մասով մշակվել են հետազոտության հարցաթերթեր որոնց հիման վրա հետազայտմ մշակվել են այդ պաշտոնների համար օրինակելի Աշխատանքի Նկարագրեր: Ստորև ներկայացվում են դասակարգված 15 պաշտոնները.

1. Որակավորված/Լիազորված անձ,
2. Որակի վերիասկողության դեկավար
3. Արտադրության դեկավար
4. Տեխնոլոգիական հարցերի պատասխանատու
5. Լաբորատորիայի վարիչ
6. Գրանցման մասնագետ
7. Արտադրության օպերատոր
8. Փաթեթավորման օպերատոր
9. Քիմիկոս, որակի վերահսկող
10. Լաբորանտ
11. Մանրէաբան
12. Պահեստի պատասխանատու
13. Մարքեթինգի մասնագետ
14. Բողոքների և դեղազգության պատասխանատու
15. Գիտահետազոտական աշխատանքների պատասխանատու:

#### Օրինակելի աշխատանքի նկարագրերի մշակումը

Դեղագործական ձեռնարկություններում կարևոր պաշտոնների համար Աշխատանքի Նկարագրերի մշակումը հանդիսանում է սույն հետազոտության հիմնական արդյունքներից մեկը: Օգտակար, կիրառելի և հիմնավոր Աշխատանքի Նկարագրեր մշակելու համար կիրառվել են երկու

մեթոդոլոգիական գործիքներ՝ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն և Հայաստանում  
կրությունը գործառույթների ուսումնասիրություն:

### Լավագույն փորձի հետազոտություն

Լավագույն փորձի ուսումնասիրության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդոլոգիական հիմունքները.

- Որպես ուսումնասիրության օբյեկտ են ընտրվել հետևյալ երեք ուղղությունները՝
  - ⇒ Միջազգային Դեղագործական Ասոցիացիաների փորձի ուսումնասիրություն: Այս միությունները ներկայացված են եղել այնպիսի հանրահայտ կազմակերպություններով, ինչպիսիք են ԵրիMRA (Եվրոպական Դեղագործական Շուկայի Հետազոտությունների Միությունը), PHMRA (Ամերիկայի Դեղագործական Հետազոտությունների և Արտադրողների Միությունը), IFPMA (Դեղեր Արտադրողների և Միությունների Միջազգային Ֆեդերացիա):
  - ⇒ Եվրոպիության, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության և ՊԱԳ համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրություն:
  - ⇒ Առաջատար միջազգային դեղագործական ձեռնարկությունների հաջող փորձի ուսումնասիրություն: Որպես այս ձեռնարկությունների ընտրության չափանիշեր են համարվել իրացումների ծավալը և աշխատողների քանակը: Հետազոտության մեջ ընդգրկվել են հետևյալ դեղագործական ձեռնարկությունները.

### Աղյուսակ 1 - Հետազոտված արտասահմանյան ձեռնարկությունների ցանկը

⇒ Pfizer, ԱՄՆ	⇒ Merck & Co., ԱՄՆ
⇒ Bayer, Գերմանիա	⇒ Abbott Laboratories, ԱՄՆ
⇒ GlaxoSmithKline, ՄԲ	⇒ Wyeth, ԱՄՆ
⇒ Novartis, Շվեյցարիա	⇒ Bristol-Myers Squibb, ԱՄՆ
⇒ Sanofi-Aventis, Ֆրանսիա	⇒ Eli Lilly and Co., ԱՄՆ
⇒ Hoffmann-La Roche, Շվեյցարիա	⇒ Schering-Plough, ԱՄՆ
⇒ AstraZeneca, ՄԲ/Շվեյցարիա	⇒ Elan Corporation, Իռլանդիա

- Դեղագործական ձեռնարկությունների գրասենյակային հետազոտության հիմնական գործիքն է հանդիսացել ինտերնետային ուսումնասիրությունը: Վերը ներկայացված Միությունների և առաջատար ձեռնարկությունների ինտերնետային էջերը ուսումնասիրվել են մանրակրկիտ ձևով, տեղեկություններ են հավաքվել դեղագործական ձեռնարկությունների աշխատակիցների ֆունկցիաների, պարտականությունների, ինչպես նաև նրանց առաջադրվող ունակությունների և գիտելիքների պահանջների վերաբերյալ: Բացի այդ անդրադարձ է կատարվել աշխատողների համար անհրաժեշտ փորձին և կրթությանը:
- Հավաքված տեղեկություններն ամփոփվել են, վերլուծվել և վերագրվել դեղագործական ձեռնարկությունների սահմանված և դասակարգված կարևոր պաշտոններին:

### Տեղական գործառույթներ

Հետազոտության ընթացքում մանրամասն ուսումնասիրվել է արտասահմանյան առաջատար ձեռնարկությունների լավագույն փորձը, սակայն պետք է նկատի ունենալ, որ ոչ միշտ է այդ փորձը կիրառելի Հայաստանում գործող դեղագործական ձեռնարկությունների համար: Անհրաժեշտ է հաշվի առնել տեղական իրավիճակի առանձնահատկությունները: Արտասահմանյան

Դեղագործական ձեռնարկությունների որոշ պահանջներ շատ խիստ կարող են համարվել տեղական ձեռնարկությունների համար և դեռևս բավականին երկար ժամանակ կիրառելի չեն լինի Հայաստանում:

Մյուս կողմից, տեղական առանձնահատկությունները կարող են հատուկ պահանջներ առաջ բերել Հայաստանի դեղագործական ձեռնարկություններում աշխատանքի անցնելու ցանկացողների համար: Միաժամանակ մի քանի տարբեր պարտականությունների կատարումը, առանց նեղ մասնագիտացման աշխատելը, 6-օրյա աշխատանքային շաբաթը և բազմաթիվ այլ պահանջներ են առաջադրվում տեղական աշխատողներին, սակայն այս պահանջները միջազգային պրակտիկայում չեն կիրառվում:

## Հետազոտության բաղադրիչը

### Ընտրանքը

Սույն հետազոտության բաղադրիչը բաղկացած է 3 հիմնական մասերից.

- դեղագործական ձեռնարկությունների դեկավարների որակական հետազոտություն,
- համապատասխան կրթական հաստատությունների ներկայացուցիչների որակական հետազոտություն,
- դեղագործական ձեռնարկությունների աշխատողների հարցում՝ անկետավորման միջոցով:

Հետազոտության ընտրանքը ներառում է 9 տեղական դեղագործական ձեռնարկություններ, որոնց ցանկը ներկայացված է Հավելված 1-ում: Այս ձեռնարկություններ են այցելել հատուկ պատրաստված հետազոտողներ և դեմ առ դեմ հարցազրույցներ անցկացրել դեկավար պաշտոնյաների հետ: Հարցազրույցների ընթացքում հավաքված տեղեկությունները համարվել են այլ աղբյուրներից ստացվող տվյալների հետ և որոշակի ճշգրտման ենթարկվել:

Հետազոտվել են նաև 9 կրթական հաստատություններ, որոնք առաջարկում են դեղագործության բնագավառում կրթության տարբեր տեսակներ: Այս հաստատությունների ցանկը ներկայացված է Հավելված 2-ում:

Անկետավորման միջոցով ինքնակառավարվող հետազոտության մեթոդոլոգիական լուծումները ներկայացված են սույն հաշվետվության երկրորդ հատորում:

## Հետազոտության գործիքներն ու թեմաները

Հետազոտության յուրաքանչյուր մասի համար մշակվել է առանձին հարցաշար: Դեղագործական ձեռնարկությունների դեկավարների հետ անցկացված հարցազրույցների հարցաշարը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից:

- ա) Պատասխանողի տվյալները,
- բ) Աշխատողների և թափուր աշխատատեղերի քանակը,
- գ) Աշխատանքի Նկարագիրը և դրանց վերաբերյալ աշխատողներին իրազեկումը,
- դ) Հիմնական ֆունկցիաների և պարտականությունների կարևորությունը,
- ե) Ունակությունների և գիտելիքների բարելավման կարիքները,
- զ) Պահանջվող վերապատրաստման դասընթացները և դրանց ձևաչափը,
- է) Հարաբերությունները կրթական հաստատությունների հետ,
- ը) Գալիք 5 տարիների կտրվածքով ներգրավվելիք մասնագետների թիվը:

Կրթական հաստատությունների ներկայացուցիչների հետ անցկացված հարցազրույցների հարցաշարը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից:

- ա) Կրթական հաստատությունների տվյալները,
- բ) Վերջին 3 տարիների ուսանողների և դիմորդների թվի դիմամիկան,
- գ) Ուսանողների թվի սպասվելիք փոփոխությունները,
- դ) Առաջարկվող առարկաներն ու կրթական ծրագրերը,
- ե) Հզորությունների առկայությունը,
- զ) Հարաբերությունները դեղագործական ձեռնարկությունների հետ:

### Իրականացված գործողություններ և ստացված արդյունքներ

Հետազոտության ընթացքում իրականացվել են հետևյալ գործողությունները.

- ա) Տեղական դեղագործական ձեռնարկությունների դեկավարների որակական հետազոտություն,
- բ) Կրթական հաստատությունների ներկայացուցիչների որակական հետազոտություն,
- գ) Տեղական դեղագործական ձեռնարկությունների աշխատողների հարցում՝ անկետավորման միջոցով,
- դ) Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն:

Սույն հետազոտության շրջանակներում ՄՄՀՀ Ծրագրին է ներկայացվում հետևյալ արդյունքները.

- ա) Դեղերի արտադրության բնագավառում ունակությունների և գիտելիքների կարիքների վերաբերյալ դեղագործական ձեռնարկությունների դեկավարների և կրթական հաստատությունների ներկայացուցիչների շրջանում անցկացված հետազոտությունների հաշվետվությունը (Հաշվետվություն, Մաս 1):
- բ) Դեղերի արտադրության բնագավառում ունակությունների և գիտելիքների կարիքների վերաբերյալ դեղագործական ձեռնարկությունների աշխատողների շրջանում անցկացված հետազոտության հաշվետվությունը (Հաշվետվություն, Մաս 1):
- գ) Դեղագործական ձեռնարկությունների 15 հիմնական պաշտոնների սահմանումն ու դասակարգումը (Հաշվետվություն, Մաս 2):
- դ) Օրինակելի Աշխատանքի Նկարագիր դեղագործական ձեռնարկությունների 15 կարևոր պաշտոնների համար (Հաշվետվություն, Մաս 3):

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ղեղագործության բնագավառի կարևոր պաշտոնների սահմանումը

### ՊԱԳ պահանջներ

#### *Հիմնական միջոցներ*

Ղեղագործական ձեռնարկությունների հզորությունները պետք է նախագծվեն, տեղակայվեն, կառուցվեն և հարմարեցվեն դրանցում իրականացվելիք արտադրության արանձնահատկություններին համապատասխան: Հզորությունների նախագծումը պետք է իրականացվի այնպես, որ նվազագույնի հասցի սխալների ռիսկը և առավելագույնս հնարավոր լինի մաքրություն ապահովել. խուսափել խաչած աղտոտումից, փոշուց, կեղտի կուտակումից, որոնք կարող են անցանկալի բացասական հետևանքներ ունենալ արտադրանքի վերջնական արտադրության վրա:


- Արտադրություն:** Խաչած աղտոտման հետևանքով առաջացող լուրջ բժշկական վտանգներից խուսափելու համար յուրաքանչյուր դեղամիջոցի արտադրության համար առանձին պայմաններ պետք է ստեղծվեն:
  - *Տարբեր արտադրատարածքներ:* Արտադրությունը պետք է իրականացվի տրամաբանական հաջորդականությամբ իրար կապված տարածքներում՝ համապատասխան կոնկրետ դեղամիջոցի արտադրության տեխնոլոգիական միջոցառումների հաջորդականությամբ:
  - *Փաթեթավորման տարածքներ:* Փաթեթավորման տարածքները նախագծվում են հատուկ ձևով, խառնաշփոթից և խաչած աղտոտումներից խուսափելու համար:
- Որակի վերահսկողության լաբորատորիա(ներ) (ՈՎԼ):** ՈՎԼ-ները պետք է առանձնացված լինեն արտադրատարածքներից: ՈՎԼ-ներում պետք է իրարից առանձնացվեն այն տարածքները, որտեղ իրականացվում են կենսաբանական, մանրէաբանական և ռադիոիզոտոպային փորձարկումներ:
- Պահեստային տարածքներ:** Ղեղագործական ձեռնարկությունները պետք է տնօրինեն բավարար տարածքներ՝ նյութերի և ապրանքների տարբեր կատեգորիաների անվտանգ պահեստավորման և առանձին պահպանման համար: Պետք է լինեն հետևյալ պահեստային տարածքները:
  - Հումքի եւ փաթեթավորման նյութերի պահեստ,
  - Կարանտինում գտնվող ապրանքների պահեստ,
  - Վերջնական արտադրանքի պահեստ,
  - Մերժված, վերադարձված և ետ կանչված ապրանքների պահեստ:

#### *Հիմնական անձնակազմը*

Համաձայն ՊԱԳ ստանդարտների հիմնական դեկավար անձնակազմը բաղկացած է Որակավորված/լիազորված անձից, Արտադրության դեկավարից և Որակի վերհասկողության դեկավարից: Ներկայացված դեկավար պաշտոնյաների պարտականությունները նկարագրված են բազմաթիվ միջազգային փաստաթղթերում<sup>1</sup>:

<sup>1</sup> 1. EU Directive 2001/83/EC  
2. EU DIRECTIVE 2003/94/EC, «The principles and guidelines of good manufacturing practice in respect of medicinal products for human use and investigational medicinal products for human use»

Ղեղագործական ձեռնարկությունների համար անհնար է մշակել իդեալական (բոլորի համար կիրառելի) կազմակերպչական կառուցվածք: Ստորև ներկայացվում է հնարավոր օրինակելի տարբերակներից մեկը: Այն նվազագույն պահանջներ է առաջարկում և կարող է ծառայել որպես ուղեցույց:



Նկար 1 - Ղեղագործական ձեռնարկության օրինակելի մոդել

## Տեղական գործառություններ


Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են նաև որոշ տեղական ղեղագործական ձեռնարկությունների կազմակերպչական կառուցվածքները: Պետք է ընդունել, որ առաջատար որոշ ձեռարկություններ ունեն բավականին բարդ և տպավորիչ կառուցվածք և կարիք չունեն փոփոխությունների: Այս ընկերություններում իրականացվել է ISO սերտիֆիկացում և կազմակերպչական կառուցվածքի օպտիմիզացումը հանդիսանում է այդ գործընթացի պարտադիր բաղկացուցիչ մասերից մեկը: Նման կառուցվածքը ունենալը այդ առաջատար ձեռնարկությունների համար տրամաբանական է, քանի որ վերջիններս բավականին լուրջ ռեսուրսներ են ծախսել իրենց գործունեության կազմակերպչական հարցերի կարգավորման նպատակով: Զնյաց դրան, որոշ ղեպերում մշակված կազմակերպչական կառուցվածքն ու Աշխատանքի Նկարագրերը կարող են բավարարել ISO պահանջներին, սակայն չհամապատասխանել ՊԱԳ ստանդարտներին:

3. EudraLex Volume 4: The Rules Governing Medicinal Products in the European Union, EU Guidelines to Good Manufacturing Practice Medicinal Products for Human and Veterinary Use

4. WHO, Quality Assurance of Pharmaceuticals (WHO Good Manufacturing Practice: main principles for pharmaceutical products) volume 2

5. PIC's Good Manufacturing Practice

Առաջատար ձեռնարկությունների կողքին Հայաստանում գործում են համեմատաբար փոքր ձեռնարկություններ, որոնց կառուցվածքն ավելի թույլ է, և, միզուցե դրանք չունեն կուռ կառուցվածք ունենալու խնդիր: Համապատասխան ֆունկցիոնալ ստորաբաժանումները ստեղծվում, և կոնկրետ մասնագետներն էլ ներգրավվում են անհրաժեշտության առաջացման պահին: 4-5 առաջատարներից բացի, մյուս դեղագործական ձեռնարկությունները բավականին թույլ են և իրենց գործունեության համար ավելի լավ լուծումներ գտնելու կարիք ունեն: Ստորև ներկայացվում է համեմատաբար ընդունելի կառուցվածք ունեցող տեղական դեղագործական ձեռնարկություններից մեկի կազմակերպչական կառուցվածքը:



Նկար 2 - Հայկական դեղագործական ձեռնարկություններից մեկի կազմակերպչական կառուցվածքը

Ներկայացված կառուցվածքը շատ բարդ չէ, սակայն մյուսների համեմատությամբ այն իրական ձեռքբերում կարող է համարվել: Որոշ ձեռնարկություններում այս խնդիրը պարզապես ուշադրության չի արժանանում:

## Աշխատանքի Նկարագրեր

### Արկայություն

Հետազոտությանը ներգրավված բոլոր տեղական դեղագործական ձեռնարկություններին հարց է ուղղվել իրենց աշխատանքային պարտականությունների վերաբերյալ աշխատակիցներին իրազեկման գործընթացների առկայության վերաբերյալ: Այլ կերպ ասած՝ արդյոք կիրառություն ունե՞ն Աշխատանքի Նկարագրերը այդ ձեռնարկություններում, թե ոչ: Արդեն իսկ քննարկված առաջատար ձեռնարկությունները կիրառում են Աշխատանքի Նկարագրերը: Մյուս ձեռնարկությունները կամ մշակում այս փաստաթղթերը, կամ էլ՝ ընդհանրապես չեն պատրաստվում կիրառել դրանք: Հարցումների ընթացքում բոլոր տեղական դեղագործական ձեռնարկությունների դեկավարներին առաջարկվել է տրամադրել իրենց մոտ կիրառվող Աշխատանքի Նկարագրերը, որպեսզի հնարավոր լինի համեմատություններ իրականացնել միջազգային լավագույն փորձի հետ:

Ցավոք հետազոտված ձեռնարկություններից միայն մեկն<sup>2</sup> է բավարարել մեր խնդրանքը և տրամադրել իրենց Աշխատանքի Նկարագրերը: Մյուսները մերժել են՝ պատճառաբանելով իրենց որոշումը այդ փաստաթթերի գաղտնիության և դրանցում առևտրային նշանակության տեղեկատվության առկայության փաստարկներով: Որոշ ձեռնարկություններ բավականին մեծ ֆինանսական միջոցներ են ծախսել այդ փաստաթթերը պատրաստելու համար: Որոշ դեպքերում էլ դեղագործական ձեռնարկությունները պարզապես ոչինչ չեն ունեցել փոխանցելու համար: Արդյունքում հնարավոր չեղավ համեմատականներ անցկացնել միջազգային լավագույն փորձի և առկա գործառույթների միջև, և մենք ստիպված էինք սահմանափակվել առաջատար միջազգային ձեռնարկությունների կիրառվող փորձով: Տեղեկությունների աղբյուրները ներկայացված են սույն հաշվետվության Հղումներ հավելվածում:

## Օրինակելի Աշխատանքի Նկարագրի կազմությունը

Ստանդարտ Աշխատանքի Նկարագրի բաղկացած են հետևյալ բաժիններից:

- ա) Պաշտոնի անվանումը,
- բ) Պաշտոնի հակիրձ նկարագիրը՝ սահմանումը,
- գ) Աշխատողի կողմից իրականացվելիք իիմնական ֆունկցիաները և պարտականությունները,
- դ) Աշխատողին ներկայացվող լրացուցիչ պահանջները՝ իիմնականում կրթական աստիճանի և փորձառության վերաբերյալ,
- ե) Աշխատանքային պարտականությունների հաջող իրականացման համար անհրաժեշտ ունակություններն ու գիտելիքները:

Ներկայացված բաժինները կազմում են Աշխատանքի Նկարագրի իիմնական մասը: Տարբեր ձեռնարկություններում այս փաստաթուղթը ենթարկվում է կոնկրետ փոփոխությունների. այն կարող է տվյալներ պարունակել աշխատողներին առաջարկվող վարձատրության պայմանների, առաջարկվող պայմանագրի տևողության, հատուկ սոցիալական կարգավիճակի (տարիքի, սերի և այլն) վերաբերյալ և այլն:

Ենթադրյալ դեղագործական ձեռնարկության համար սահմանվել և դասակարգվել են 15 կարևոր պաշտոններ և դրանց համար մշակել օրինակելի Աշխատանքի Նկարագրեր: Մենք չենք հավակնում հայտարարելու, որ ներկայացված փաստաթթերը անհապաղ եւ ամբողջապես կիրառելի են և հանդիսանում են աշխատանքի կազմակերպման լավագույն լուծումներ, սակայն մենք կարծում ենք, որ այս Աշխատանքի Նկարագրերն ուղեցույց կարող են հանդիսանալ տեղական դեղագործական ձեռնարկությունների համար, եթե նրանք կստանձնեն իրենց համար այս խնդրի լուծումը:

Սահմանված և դասակարգված 15 կարևոր պաշտոնների համար մշակված օրինակելի Աշխատանքի Նկարագրերը ներկայացված են սույն հաշվետվության երրորդ մասում:

<sup>2</sup> Կիտամաքս-Ե

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՂԵՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐՆ ԸՍՏ ՈՒՂՈՇԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ

Ունակությունների և գիտելիքների անբավարարությունն ըստ դեղագործական  
ձեռնարկությունների ղեկավարների

### Հավելյալ աշխատողներ ներգրավելու կարիքը

#### Զբաղվածության աստիճանը

2008թ. նոյեմբերի դրույթամբ Հայաստանում գործում են շուրջ 15 դեղագործական ձեռնարկություններ՝ ներարյալ հարակից արտադրություններով (դեղաբույսերի, բիոհակտիվ հավելումների և այլ ապրանքների արտադրությամբ) զբաղվող տնտեսվարող սուբյեկտները: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են 9 դեղագործական ձեռնարկություններ, որոնցից ընդամենը 5-ն են արտադրում և իրացնում դեղերի և դեղագործական այլ արտադրանքների համեմատաբար լայն տեսականի: Մյուսները մասնագիտանում են խիստ սահմանափակ թվով դեղերի արտադրության մեջ կամ էլ պարզապես նոր են սկսել իրենց գործունեությունը: Որոշ ձեռնարկություններ զբաղվում են ոչ միայն դեղերի արտադրությամբ, այլ նաև իրականացնում են ներմուծում, մեծածախ և մանրածախ վաճառք:

Հետազոտված 9 դեղագործական ձեռնարկություններում ընդհանուր առմանը աշխատում է 570 մարդ: Այս աշխատողների մոտ 60%-ը ներգրավված են 2 համեմատաբար խոշոր ձեռնարկություններում՝ Երևանի Քիմիադեղագործական Ֆիրմայում և Լիկվորում: Սույն հետազոտության կարևորագույն արդյունքներից մեկն է հանդիսանում դեղագործական ձեռնարկություններում աշխատատեղերի զբաղվածության աստիճանի կամ թափուր աշխատատեղերի քանակի պարզումը: Հետազոտված ձեռնարկություններում կան ընդամենը մի քանի թափուր աշխատատեղեր, որոնք կլրացվեն մոտ ապագայում:

Հետազոտության անցկացման պահին 9 ձեռնարկություններից ընդամենը 4-ում են թափուր աշխատատեղեր հայտնաբերվել: Թափուր աշխատատեղերը լրացնելու համար դեղագործական ձեռնարկությունների ընդհանուր պահանջը կազմել է 16 մարդ: Միաժամանակ սպասվում է նաև աշխատատեղերի ավելացում՝ պայմանավորված նոր հզորությունների շահագործման հանձնվելով:

#### Անհապաղ լրացման ենթակա թափուր աշխատատեղերը

Դեղագործական ձեռնարկություններում թափուր աշխատատեղերի ուսումնասիրությունը հանգեցրել է շատ հետաքրքիր մի եզրահանգման՝ դեղագործական ձեռնարկությունների ոչ բոլոր աշխատողներն են հանդիսանում դեղագործական նեղ մասնագետներ: Այսպես կոչված «ոչ մասնագետները» աշխատողների ընդհանուր թվում զգալի մաս են կազմում: Որոշ պաշտոնների համար, որպիսիք են արտադրության և փաթեթավորման օպերատորները, բժշկական ներկայացուցիչները, շուկայավարման մասնագետները, դեղագործական ձեռնարկությունները հաճախ ներգրավում են ընդհանուր մասնագիտացում, գիտելիքներ և ունակություններ ունեցող աշխատողների: Այլ կերպ ասած նեղ մասնագիտացումը ոչ միշտ է պարտադիր:

Դեղագործական ձեռնարկությունների ղեկավարների ներկայացմամբ հետազոտության պահին առկա են եղել հետևյալ թափուր աշխատատեղերը.

## Աղյուսակ 2 - Թափուր աշխատատեղերը հետազոտված ձեռնարկություններում

- |  |                             |
|--|-----------------------------|
| 1. Մարքեթինգի մասնագետ                 | ☞ 2 աշխատող                 |
| 2. Դիզայներ                            | ☞ 1 աշխատող                 |
| 3. Բժշկական ներկայացուցիչ              | ☞ 1 աշխատող                 |
| 4. Տեխնոլոգ                            | ☞ 3 աշխատողներ              |
| 5. Որակի վերահսկողության<br>դեկավար    | ☞ 1 աշխատող                 |
| 6. Լարորատորիայի քիմիկ                 | ☞ 1 աշխատող                 |
| 7. ??? (գաղտնի է)                      | ☞ 7 աշխատողներ <sup>3</sup> |
| 8. Լիաֆիլիզացիոն <sup>4</sup> մասնագետ | ☞ 10-12 աշխատողներ          |

Ինչպես առկա թափուր աշխատատեղերի, այնպես էլ նոր սպասվող/բացվող աշխատատեղերի մասով իրավիճակն անհանգստացնող չէ: Պահանջվող 28 աշխատողներից (ներառյալ 12 նոր բացվելիք աշխատատեղերի համար) միայն 5-ի դեպքում է խնդիրը ենթակա անհապաղ լուծման: «Անհապաղներից» են շուկայավարման մասնագետները և տեխնոլոգները: Ընդհանուր առմանք դեկավարները գերադասում են մասնագետներ գտնել և ներգրավել առանց շտաբելու: Ներկայացվել է, որ պահանջվող 28 աշխատողներից առնվազն 15-ը կարող են ներգրավվել գալիք 3-12 ամիսների ընթացքում, կամ նույնիսկ ավելի ուշ: Սա նշանակում է, որ տեղական դեղագործական ձեռնարկությունները այնքան էլ չեն «խեղճանում» որակյալ մասնագետների սակավությունից և կարող են բավականին երկար ժամանակ հանգիստ աշխատել առանց թափուր աշխատատեղերի լրացման: Որոշակի խնդիրներ կարող են առաջանալ միայն ձեռնարկությունների գգալի աճի պարագայում: Արագ զարգացող ձեռնարկությունները որոշակի պահի կարող են բախվել լուրջ խնդիրների. մասնավորաբեր անձնակազմը կարող է ստիպված լինել աշխատել սովորականից ավելի երկար ու ծանրաբեռնված:

## Թափուր աշխատատեղերը չլրացնելու պատճառները

Տարբեր ձեռնարկություններում թափուր աշխատատեղերը չհամարելու պատճառները տարբեր են: Որոշ դեղագործական ձեռնարկություններ ընդլայնում են իրենց արտադրությունը՝ լաբորատորիաները, արտադրական հզորությունները և այլն, կամ տեղափոխվում են նոր արտադրատարածքներ: Դեղագործական ձեռնարկությունները նոր աշխատողներ գտնելու և ներգրավելու համար սովորաբար օգտագործում են հայտարարություններ տալու մեթոդոլոգիան: Նրանք գետեղում են իրենց հայտարարությունները ԶԼՍ-ներում կամ աշխատանքի տեղավորման/զբաղվածության կենտրոններում և սպասում արձագանքի:

Դեղագործական ձեռնարկությունները որոշ դեպքերում (հատուկ պաշտոնների համար) կիրառում են մասնագետների պատրաստման եղանակը: Սովորաբար նրանք ներգրավում են նվազագույն ընդհանուր գիտելիքներ և ունակություններ ունեցող մասնագետների և նրանց համար կազմակերպում գործնական վերապատրաստում ու որակավորման բարձրացման դասընթացներ: Այս մեթոդով սակայն չեն պատրաստվում կարևորագույն դեկավար պաշտոնյանները՝ արտադրական գործընթացի դեկավարները և որակի վերահսկողության պատասխանատունները:

Տվյալ իրավիճակը երկակի է: Մի կողմից գործնական վերապատրաստումից հետո աշխատողները ձեռք են բերում որակավորման անհրաժեշտ բարձր մակարդակ, մյուս կողմից, դաշնալով որակավորված մասնագետներ, աշխատողները զգալիորեն ավելացնում են իրենց պահանջները՝ մասնավորապես կապված աշխատավարձի հետ: Շատ դեպքերում տեղական դեղագործական ձեռնարկությունները պարզապես ի վիճակի չեն լինում բավարարելու աշխատակիցների


<sup>3</sup> Հագենասը մերժել է իր թափուր աշխատատեղերի մասին տվյալներ տրամադրելու մեր խնդրանքը

<sup>4</sup> Մրգերի չորացմամբ զբաղվող մասնագետներ

պահանջած բարձր աշխատավարձները և ստիպված են լինում նոր աշխատողներ փնտրել: Այս ցիկլը բավականին վտանգներ է պարունակում իր մեջ. համեմատաբար խոշոր և ֆինանսավես ուժեղ ձեռնարկությունները ի վիճակի են բարձր որակավորում ունեցող մասնագետներին առաջարկել բարձր աշխատավարձներ և գրավել իրենց կողմը, մինչդեռ համեմատաբար փոքր և թույլ ձեռնարկությունները ստիպված են անընդհատ մասնագետներ փնտրել:

### Կազմակերպչական կառուցվածքի համապատասխանությունը առկա կարիքներին

Այս հարցադրմանը տեղական դեղագործական ձեռնարկությունների դեկավարները տարբեր պատասխաններ են տվել. ոմանք քիչ թե շատ բավարարված են իրենց ձեռնարկությունների կազմակերպչական կառուցվածքով, մյուսները՝ գտնում են, որ դեռևս լուծնան ենթակա բազմաթիվ խնդիրներ կան: Այնուամենայնիվ, մեծամասնությունը գոհ է իրենց ձեռնարկությունների ներկա կառուցվածքից: Որոշ դեպքերում դեկավարները ցանկանում են նոր աշխատողներ ներգրավել իրենց պարտականությունների մի մասը նրանց փոխանցելու և ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով:



Նկար 3 - Դեղագործական ձեռնարկությունների կազմակերպչական կառուցվածքի համապատասխանությունը առկա կարիքներին

Անընդհատ փոփոխվող արտաքին միջավայրի պահանջներին դիմանալու համար: Այդ փոփոխությունների հնարավոր տարբերակներից են նոր շենքային պայմանների և արտադրատարածքների շահագործումը, շուկայական իրավիճակի փոփոխություններից բխող քայլերը, ներքին շուկայավարման քաղաքականության փոփոխությունները և այլն: Այդ իսկ պատճառով այս ձեռնարկությունների դեկավարները կարծում են, որ իրենց կազմակերպչական կառուցվածքը մասնակիորեն է համապատասխանում իրենց առկա կարիքներին:

Հետազոտված ձեռնարկությունների դեկավարների 22%-ը կարծում է, որ իրենց ձեռնարկությունների կազմակերպչական կառուցվածքը չի համապատասխանում իրենց ներկա կարիքներին: Նրանց կարծիքով աշխատողները չափազանց ծանրաբեռնված են, անհապաղ անհրաժեշտ է զգալի փոփոխություններ իրականացնել:

### Պարտականությունների սահմանումը

#### Աշխատանքի նկարագրերի առկայությունը

Հետազոտված 9 դեղագործական ձեռնարկություններից 6-ի դեկավարները հայտնել են, որ իրենց մոտ ներդրված է Աշխատանքի նկարագրերի համակարգ: Չնայած դրան, հետազոտված ձեռնարկություններից միայն մեկն<sup>5</sup> է տրամադրել իր մոտ կիրառվող Աշխատանքի նկարագրերը: Մյուսները իրենց մերժումը հիմնականում հիմնավորում են գաղտնիության փաստարկներով: Նրանցից ոմանք նույնիսկ մեկնաբանում են, որ այդ փաստաթղթերի պատրաստման համար լուրջ գումարներ են ծախսել<sup>6</sup> և չեն կարող հենց այնպես տրամադրել դրանք:

<sup>5</sup> Վիտամաքս-Ե

<sup>6</sup> 28,000 Եվրո

Տեղական դեղագործական ձեռնարկությունների կողմից կիրառվող Աշխատանքի Նկարագրերի բացակայությունը թույլ չի տվել իրականացնել տեղական և միջազգայի փորձի համեմատություն ու համադրում: Միաժամանակ այն փաստը, որ տեղական ձեռնարկություններն արդեն իսկ լուրջ ֆինանսական միջոցներ են հատկացնում կազմակերպչական նման խնդիրների լուծման համար, շատ հուսադրող է:

Այն դեղագործական ձեռնարկությունները, որոնք դեռևս չեն կիրառում Աշխատանքի Նկարագրեր, այդ փաստը բացատրում են 2 պատճառներով.

- ա) Դրանք նոր հիմնված ձեռնարկություններ են և դեռևս չեն հասցրել պատրաստել այդ փաստաթղթերը,
- բ) Տեխնոլոգիաները և աշխատողների ֆունկցիաներն անընդհատ փոփոխվում են: Անհնար է այնպիսի վերջնական փաստաթուղթ ստեղծել, որը լիովին կբավարարի փոփոխվող արտաքին միջավայրի պահանջներին:

### Աշխատանքի Նկարագրերի վերաբերյալ աշխատողներին իրազեկելու ձևերը

Ինչպես երևում է վերը բերված վերլուծությունից, դեղագործական ձեռնարկությունների մեջ մասը կիրառում է Աշխատանքի Նկարագրեր: Այն դեպքերում, երբ այս համակարգը դեռ լիովին մշակված և ներդրված չէ, դեկավարները բանավոր ձևով են իրենց աշխատողներին ներկայացնում նրանց պարտականությունները: Այս եղանակը շատ արդյունավետ չէ, իսկ որոշ իրավիճակներում նույնիսկ վտանգավոր է: Այնուամենայնիվ, արտադրանքի տեսականու և արտադրության ծավալների ավելացման պարագայում դեղագործական ձեռնարկությունները պարզապես ստիպված կլինեն փոփոխություններ կատարել և ներդնել Աշխատանքի Նկարագրերի համակարգը:

### Աշխատողների որակավորման բարելավման կարիքները

#### Ունակությունների եւ գիտելիքների հարցում գործառուների կարիքները

Հետազոտված բոլոր դեղագործական ձեռնարկությունների դեկավարները հայտնել են, որ իրենց ձեռնարկություններում ունեն վերապատրաստման և դասընթացների կարիք: Որոշ դեկավարների կարծիքով իրենց ձեռնարկության ողջ անձնակազմն ունի նման կարիք, մյուսներն առանձնացնում են մի քանի կոնկրետ կարևոր պաշտոններ զբաղեցնող մասնագետների: Ստորև ներկայացվում է ամբողջական պատկերը.

**Աղյուսակ 3 - Դեղագործական ձեռնարկություններում աշխատողների վերապատրաստման կարիքներն ըստ այդ ձեռնարկությունների դեկավարների**

Դասընթացների կարիքները	Բոլոր մասնագետների համար	Որոշ մասնագետների համար
Երևանի քոչ	a) <b>Հատկապես</b> այն մասնագետները, որոնք արնչվում են ՊԱԳ ստանդարտների ներդրման խնդիրների հետ և բարձր դեկավարությունը	
Արևիմեր	b) <b>Հատկապես</b> ինժեներներն ու տեխնիկները, պատասխանատու որոնք են	

Դասընթացների կարիքները	Բոլոր մասնագետների համար	Որոշ մասնագետների համար
	սարքավորումների համար, և լաբորատորիայում գիտական ու հետազոտական աշխատանքով զբաղվողները	
Վիտամաքս-Ե	c) Բոլոր աշխատողներն առանց բացառության	
Էսկուլապ	d) Հատկապես տեխնոլոգները, ՈՎԼ-ի և մարքեթինգի մասնագետները	
Լիկվոր	e) Բոլոր աշխատողներն առանց բացառության: Այս նպատակով առանձին բյուջե պետք է մշակվի:	
Մեդիկալ-Հորիզոն		f) Արտադրության Ղեկավարը, ՈՎԼ-ի ստորաբաժաննան աշխատողները
Բիզոն-1	g) Բոլոր աշխատողներն առանց բացառության	
Լեյկո-Ալեքս		h) Արտադրության և Փաթեթավորման օպերատորները
Հագենաս		i) Պահեստի աշխատողները, Փաթեթավորման օպերատորները

### Ունակությունների եւ գիտելիքների առկա կարիքների առաջացման պատճառները

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ դեղագործական ծերնարկությունների ղեկավարները լիովին ընթացներ են իրենց աշխատողների ունակություններն ու գիտելիքները բարելավելու կարիքը: Նրանց կարծիքով աշխատողների որակավորման շարունակական բարելավումը հանդիսանում է իրենց հաջողության հիմնական գրավականը: Միաժամանակ անընդհատ վերապատրաստման կարիքները նրանք բացատրում են հետևյալ պատճառներով:

- ա) Առկա մասնագետները իին են: Որոշ աշխատողներ աշխատում են արդեն 30 տարուց ավել և այնքան էլ լավ չեն ծանոթ ժամանակակից տեխնոլոգիաներին: Բացի այդ, ներկայում Հայաստանում կանոնավոր դասընթացներ չեն անցկացվում, ինչը զգալիորեն պակասեցնում է աշխատողների գիտելիքների և ունակությունների բարելավման հնարավորությունները:
- բ) Չնայած դեղագործական ծերնարկությունների տրամադրության տակ կան ժամանակակից սարքավորումներ, դրանք շահագործող օպերատորները միշտ չեն, որ լավատեյակ են այդ սարքավորումների բոլոր հնարավորություններից: Նրանք կարիք ունեն բարելավելու իրենց որակավորումները սարքավորումների առավել արդյունավետ շահագործման համար:
- գ) Հայաստանում առկա է որակյալ մասնագետների ընդհանուր պակաս: Ղեղագործական ծերնարկությունները սովորաբար ներգրավում են ընդհանուր մասնագետների և նրանց համար գործնական վերապատրաստման դասընթացներ անցկացում:
- դ) Կրթական հաստատություններում ստացվող մասնագիտական կրթությունը չի բավարարում դեղագործական ծերնարկությունների պահանջներին:
- ե) Տեխնոլոգիաներն անընդհատ գարգանում են և դեղագործական ծերնարկությունները պետք է անընդհատ բարելավեն իրենց աշխատողների ունակություններն ու գիտելիքները:
- զ) Աշխատողները գործնական վերապատրաստման արդյունքում զգալիորեն բարելավում են իրենց որակավորումը, որից հետո նրանք սովորաբար ավելի բարձր վարձատրություն են պահանջում: Ղեղագործական ոչ բոլոր ծերնարկություններն են ի վհճակի լինում բավարարել

այս պահանջները և հաճախ կորցնում են իրենց մասնագետներին: Կանոնավոր դասընթացների առկայությունը թույլ կտա զգալիորեն ավելացնել որակյալ մասնագետների թիվը և, այլ հավասար պայմաններում, հավասարակշռել դրանց պահանջարկը իրական առաջարկով:

**Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ մասնագետների ունակությունների և գիտելիքների բարելավումը թույլ կտա զգալիորեն մասնագետների շուկայում առկա լարվածությունը՝ ավելացնելով բարձր որակավորում ունեցող մասնագետների քանակը երկրում:**

### **Ունակությունների եւ գիտելիքների կարիքները բավարարելու եղանակները**

Հայաստանում դեղագործական ձեռնարկությունների համար աշխատողների ունակությունների և գիտելիքների բարելավումը հանդիսանում է կարևորագույն խնդիր և մարտահրավեր: Այս նպատակով տարբեր միջոցառումներ են իրականացվում: Ներկայումս աշխատողների վերապատրաստումը հիմնականում իրականացվում է հենց արտադրության գործընթացում: Սա բավականին արդյունավետ եղանակ է և շատ ռեսուրսներ չի պահանջում: Միաժամանակ որոշ արտադրողներ բավականին մեծ ֆինանսական ռեսուրսներ են հատկացնում՝ իրենց աշխատողներին արտադրական գործընթացից դուրս վերապատրաստելու համար: Բոլոր ձեռնարկությունների դեկավարներն են իրենց գոհունակությունն են հայտնել վերապատրաստումներ և դասընթացների մատուցման կենտրոնացված կառույցի ստեղծման վերաբերյալ: Մասնավորապես տարբեր դեղագործական ձեռնարկությունների դեկավարների կարծիքները այս խնդիրի շուրջ ներկայացված են ստորև.

Երևանի ք. Վիտամաքս-Ե, Էսկուլապ,  
Լիկվոր

❖ Վերապատրաստման և ուսումնական կենտրոնի ստեղծում Ղեղ Արտադրողների և Ներմուծողների Միության կառավարման ներքո

Արփիմեդ, Մեդիկալ-Հորիզոն, Բիզոն-1

❖ Վերապատրաստման դասընթացների և գործնական սեմինարների կազմակերպում (ցանկալի է արտերկրում), կամ մասնագետ դասընթացավարների հրավիրում արտերկրից

Լեյկո Ալեքս

❖ Գործնական դասընթացների կազմակերպում և ուղեցույցների տրամադրում

Հագենաս

❖ Տեխնիկական Աջակցության Ծրագրի նախագծում և իրականացում: Ծրագրի նպատակը կլինի դեղագործական ձեռնարկությունների աշխատողների վերապատրաստման ֆինանսավորման հրականացումը

Հետազոտված դեղագործական ձեռնարկությունների դեկավարների կարծիքով վերապատրաստման դասընթացների կենտրոնացված կազմակերպման հնարավորությունները թույլ կտան ներդնել որոշ կարևոր մասնագիտությունների սերտիֆիկացման պրակտիկան: Նման գործառույթը թույլ կտա լիովին երաշխավորել կոնկրետ պաշտոնների հավակնող մասնագետների որակավորման բարձր աստիճանը:

## Վերապատրաստման դասընթացների բնութագրերը

Հետազոտության ընթացքում անդրադարձ է կատարվել պահանջվող վերապատրաստման դասընթացների հետևյալ բնութագրերին՝ կարիքներին, անհապաղությանը, թեմային, իրականացման վայրին, իրականացնող մասնագետներին և այլն: Այս բնութագրերի վերաբերյալ պատուախանների կոմիտենացված վերլուծությունը մեզ թույլ կտա օբյեկտիվ դատողություններ անել տեղական դեղագործական ձեռնարկությունների իրական կարիքների մասին: Բոլոր բնութագրերի վերաբերյալ գնահատականները ներկայացված են հաջորդիվ:

### Թեմաները

Հետազոտված գրեթե բոլոր դեղագործական ձեռնարկությունների դեկավարները հայտնել են, որ իրենց ձեռնարկություններում աշխատողները կարիք ունեն ստանալու ՊԱԳ, ՊԼԳ և այլ մասնագիտական թեմաներով վերապատրաստման դասընթացներ: Սա բնական է, քանի որ ներկայում գրեթե բոլոր դեղագործական ձեռնարկություններն են պատրաստվում են կիրառել ՊԱԳ ստանդարտներ: Որոշ ձեռնարկություններ արդեն իսկ որոշ միջոցառումներ են նախաձեռնել այս նպատակով: Բացի այդ, մոտ ապագայում Հայաստանում որոշակի օրենսդրական փոփոխություններ են սպասվում, որոնք նպատակ ունեն մեր երկրում դեղագործական արտադրությունը համապատասխանեցնել ՊԱԳ ստանդարտներին: Տեղական դեղագործական ձեռնարկությունները շատ լավ են հասկանում այս բոլոր հանգամանքները և պատրաստվում են պատշաճ ձևով արձագանքել:

Դասընթացների մյուս հիշատակված թեմաները վերաբերվում են կազմակերպչական և առաջման խնդիրներին: Մասնավորապես նշվել են մարքեթինգի ունակությունների բարելավումը, համակարգչային գիտելիքները, կազմակերպչական գիտելիքները և այլն: Այս թեմաներն ուղղակի կապ չունեն դեղագործության հետ, սակայն բնագավառի զարգացման տեսանկյունից պակաս կարևոր չեն:

### Անհապաղությունը

Կոնկրետ վերապատրաստման դասընթացների կարևորության լավագույն գնահատականը դրանց անհապաղության աստիճանն է: Որոշ դասընթացներ պետք է իրականացվեն անհապաղ, մինչդեռ նյութները կարող են հետաձգվել որոշակի ժամանակով: Մեկ անգամ ևս հաստատվում է, որ մասնագիտական դասընթացները առավել պահանջված են և կարևոր: Դեղագործական ձեռնարկությունների դեկավարների կարծիքով այս դասընթացներն իսկապես պետք է իրականացվեն անհապաղ:

### Դասընթացների իրականացման վայրը

Վերապատրաստման դասընթացների իրականացման վայրը շատ կարևոր գործոն է, որը կարող է մեծապես ազդել դրանց իրականացման արդյունավետության վրա: Որոշ մասնակիցների համար նախընտրելի է մասնակցել այնպիսի դասընթացների, որոնք իրականացվում են նրանց աշխատանքի կամ բնակության վայրի մոտ: Այս պարագայում նրանք կարողանում են հնարավորինս քիչ խախտել իրենց առօրյան և զբաղվել նաև այլ խնդիրների լուծմամբ: Ուրիշները գերադասում են վերապատրաստման դասընթացների մասնակցել հատուկ այդ նպատակով նախատեսված վայրերում՝ ամբողջովին կտրվելով իրենց առօրյայից: Այս պայմաններում նրանք կարողանում են կենտրոնանալ դասընթացների թեմայի վրա և առավելագույն տեղեկություն ստանալ կարծ ժամանակահատվածում:

Քննարկման մեկ այլ թեմա է նաև վերապատրաստման դասընթացները տեղում կամ արտերկրում կազմակերպելու խնդիրը: Արտերկրում իրականացվող վերապատրաստման դասընթացներն առավել օգտակար են, քանի որ դրանց մասնակցում են բազմաթիվ մասնագետներ տարբեր երկրներից, ինչը հնարավորություն է տալիս ինտենսիվ ձևով փորձի փոխանակում իրականացնել: Սակայն պետք է նշել, որ այս դասընթացները շատ թանկարժեք են և ոչ բոլոր դեղագործական ձեռնարկություններն են ի վհճակի նման ծախսեր իրականացնել:

### Նախընտրելի դասընթացավարներ

Դասընթացավարներն ու նրանց որակավորումը հանդիսանում են վերապատրաստման դասընթացների կարևորագույն բնութագրերից: Տեսական գիտելիքների խորացման համար անհրաժեշտ է ներգրավել տեսաբան դասընթացավարների, գործնական ունակությունների բարելավման համար՝ գերադասելի են պրակտիկ մասնագետները: Հատկանշական է, որ տեղական դեղագործական ձեռնարկությունները նախընտրում են դասընթացավարների վերջին խումբը:

**Այլուսակ 4 - Վերապատրաստման դասընթացների վերաբերյալ հետազոտված 9 դեղագործական  
ձեռնարկությունների դեկավարների կարծիքների անփոփում**

Առավել պահանջված դասընթացների թեմաները	Կարծիք հայտնած ձեռնարկությունների թիվը	Անհապա- ղությունը		Դասընթացների վայրը			Դասընթացավարները			
		Անհասա- նություն	Գալու ամիսներին	Աշխատանքի վայրում	Հայաստանում, աշխատանքի վայրից դուրս	Աղոթություն	Տեղական մասնագետների աշխատաքաղաքացիների մասնակիցների թվաքանակը	Տեղական մասնագետների աշխատաքաղաքացիների մասնակիցների թվաքանակը	Սիոներիության նախարարը	Արդերկության մասնագետների թվաքանակը
ՊԱԳ	9	6	3	3	6	4	1	3	3	8
ՊԼԳ	9	6	3	3	6	4	1	3	3	8
Մասնագիտական դեղագործական թեմաներ	8	3	5	5	1	4	2	5	0	3
Մարքեթինգ	4	1	3	2	2	1	2	2	0	2
Համակարգիչներ	4	1	3	1	4	0	4	2	0	0
Հաշվապահական թեմաներ	1	0	1	0	1	0	1	1	0	0
Իրավական թեմաներ	1	0	1	0	1	0	1	1	0	0

Ինչպես երևում է այլուսակից ՊԱԳ-ն, ՊԼԳ-ն և նեղ մասնագիտական թեմաներն առավել պահանջված են դասընթացներ անցկացնելու տեսանկյունից: Զերնարկությունների մեջ մասի համար այս դասընթացների իրականացման անհապաղ կարիք կա: Դասընթացների մյուս թեմաները (մարքեթինգ, համակարգիչներ, հաշվապահություն և այլն) ևս պահանջված են, սակայն ոչ այդքան շտապ:

Վերապատրաստման դասընթացների իրականացման վայրի վերաբերյալ հետազոտված ձեռնարկությունների դեկավարների կարծիքները կիսվել են: Մեծամասնությունը գերադասում է մասնակցել Հայաստանում, բայց աշխատավայրից հեռու կազմակերպված դասընթացների: Ինչ վերաբերվում է դասընթացավարներին, ապա միանշանակորեն առավել պահանջված են արտերկույա մասնագետները, որոնք իրականացնում են գործնական դասընթացներ:

### Հարաբերությունները կրթական հաստատությունների հետ

#### Արևա համագործակցություն

Հետազոտության ամենասկզբում տպավորություն կար, որ սերտ համագործակցություն պետք է լինի դեղագործական ձեռնարկությունների և համապատասխան կրթական հաստատությունների (դրանց դեղագործական ֆակուլտետների) միջև: Հետազոտության արդյունքների ամփոփման փուլում, սակայն, արդեն պարզ էր, որ նման պնդումը այնքան էլ ճիշտ չէ: Իհարկե արևա են ինչ-որ հարաբերություններ, սակայն դրանք հիմնականում սահմանափակվում են գործնական դասընթացների կազմակերպմանք: Ստորև բերված այլուսակում ներկայացվում են դեղագործական ձեռնարկությունների և կրթական հաստատությունների հարաբերությունները:

**Այլուսակ 5 - Հետազոտված դեղագործական ձեռնարկությունների հարաբերությունները կրթական  
հաստատությունների հետ**

1. Երևանի քղթ
  - ☞ Գործնական դասընթացներ, ինտերնատուրա, դիպումային աշխատանքների պատրաստման դասաժամեր ԵՊՀ-ի<sup>7</sup>, Բժշկական ուսումնարանի և ԵՊՀ<sup>8</sup> Դեղագործական ֆակուլտետի ուսանողների համար
2. Արփիմեր
  - ☞ Գործնական դասընթացներ, ինտերնատուրա, դիպումային աշխատանքների պատրաստման դասաժամեր ԵՊՀ-ի, Բժշկական ուսումնարանի և ԵՊՀ Դեղագործական ֆակուլտետի ուսանողների համար: Ումեն հատուկ կահավորված սենյակներ ուսանողների համար:
3. Վիտամաքս-Ե
  - ☞ Գործնական դասընթացներ և ինտերնատուրա Մեհրաբյանի անվան Բժշկական Ինստիտուտի և Էրեբունիի Բժշկական Ուսումնարանի ուսանողների համար
4. Էսկուապ
  - ☞ Հանդիսանում է ԵՊՀ-ի ինտերնատուրայի բազան
5. Լիկվոր
  - ☞ ԵՊՀ-ի ուսանողների համար գործնական դասընթացներ: Զերնարկության դեկավարը հանդիսանում է ԵՊՀ-ի քննական հանձնաժողովի անդամ:
6. Բիզոն-1
  - ☞ Գործում են Բիոտեխնոլոգիաների ինստիտուտի տարածքում: Ինստիտուտի բոլոր ուսանողները այցելում են ձեռնարկություն ամեն կուրսում առնվազն մեկ անգամ:
7. Լեյկո-Ալեքս
  - ☞ Գործնական դասընթացներ ոչ բժշկական կրթական հաստատությունների ուսանողների համար: Պրակտիկաներում են ընդունվում բացառապես ձեռնարկության դեկավարությանը կատարվող երաշխավորությունների միջոցով:
8. Հագենաս
  - ☞ Որոշակի համագործակցություն ունեն Հայաստանի Պետական Գյուղատնտեսական Համալսարանի, Գիտությունների Ակադեմիայի հետ: Պայմանագիր են կնքել ԵՊՀ-ի հետ գործնական դասընթացներ կազմակերպելու համար: Կազմակերպվում են ուսանողների այցելություններ և բացատրական - պրեզենտացիոն այլ միջոցառումներ ԵՊՀ-ի ուսանողների համար:

Ինչպես ներկայացվեց վերևում, ողջ համագործակցությունը սահմանափակվում է տարբեր տեսակի գործնական դասընթացներով և այցելություններով: Նման համագործակցությունը չի կարող բավարար լինել և արդյունավետ համարվել: Զեն իրականացվում գիտահետազոտական համատեղ ծրագրեր, փորձնական/վեճչության ծրագրեր, չեն ալանավորվում և անցկացվում աշխատողների նախատակային ուսուցումներ, դեղագործական ձեռնարկությունները բացարձակապես հնարավորություն չունեն ազդելու կրթական հաստատություններում դասավանդվող առարկաների և ծրագրերի ընտրության վրա և այլն: Ներկա իրավիճակը կարելի է սահմանել որպես «հարաբերություններ», սակայն ոչ «համագործակցություն»:

**Դեղագործական ձեռնարկությունների ակնկալիքները կրթական հաստատություններից**

Ընդհանուր առմամբ դեղագործական ձեռնարկությունները կրթական հաստատություններից ակնկալում են առավել սերտ համագործակցություն, ընդ որում՝ ամեն մի ձեռնարկություն յուրովի է տեսնում այդ համագործակցության եղանակը: Ինչ որ առումով ձեռնարկությունների դեկավարները ճիշտ են. կրթական հաստատությունները միզուցե պետք է հնարավորինս հաշվի առնեն ոլորտի

<sup>7</sup> Ա. Յերացու անվան Երևանի Պետական Բժշկական Համալսարան

<sup>8</sup> Երևանի Պետական Համալսարան

ձեռնարկությունների պահանջները: Միաժամանակ պետք է նշել, որ դեղագործական ձեռնարկությունները և շատ պրոակտիվ չեն: Տեղական դեղագործական ձեռնարկությունների սպասումները կրթական հաստատություններից համառոտ ներկայացվում է ստորև.

- ա) **ՊԱԳ և հարակից մասնագետների պատրաստում:** ՊԱԳ ստանդարտների դերը Հայաստանում և ամբողջ աշխարհում շարունակաբար աճում է: Այս ոլորտի որակյալ մասնագետները պարզապես անհրաժեշտություն են դարձել:
- բ) **Ուսուցման որակի բարեյավում:** Բժշկական կրթական հաստատությունների ուսանողների որակավորումը չի համապատասխանում դեղագործական ձեռնարկությունների պահանջներին: Տեսական գիտելիքները, որոնք մատուցվում են ուսանողներին կրթական հաստատություններում, որոշակիորեն հնացած են և ուսանողներն ունեն ավելի շատ գործնական դասաժամների կարիք:
- գ) **Դասավանդող առարկաների և կրթական ծրագրերի վերանայում:** Կրթական ծրագրերը որոշակիորեն հնացած են և ենթակա են վերանայման, քանի որ կիրառվող տեխնոլոգիաները մշտապես փոփոխվում և արդիականացվում են: Այդ փոփոխություններն անհրաժեշտաբար պետք է արտահայտվեն կրթական մակարդակում, այլապես դեղերի արտադրության մեջ կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաների և կրթական հաստատություններում մատուցվող գիտելիքների միջև զգալի տարբերություններ և անհամապատասխանություններ կառաջանան:
- դ) **Հետազոտություններ և նոր դեղերի սինթեզում:** Որոշ դեղագործական ձեռնարկություններ ի վիճակի չեն նոր դեղեր սինթեզել, քանի որ դա պահանջում է հաստուկ լաբորատոր սարքավորումների, ենթակառուցվածքների և գիտնականների առկայություն: Կրթական հաստատությունները սովորաբար տնօրինում են բավարար տեխնիկական ու լաբորատոր սարքավորումներ և գիտնականներ այս աշխատանքն իրականացնելու համար: Սա լուրջ օժանդակություն կլինի դեղագործական ձեռնարկություններին, քանի որ նրանց մեջ մասը չունեն նոր դեղամիջոցներ սինթեզելու համար անհրաժեշտ նախադրյալներ և պայմաններ:
- է) **Աշխատուժի հետ կապված ծրագրերի մշակում և իրականացում:** Այս ծրագրերի ներքո կրթական հաստատություններում կարող են ընտրվել լավագույն ուսանողները, նրանց դասավանդումը պետք է իրականացվի հաստուկ ծրագրերով, նրանց առաջարկվի երաշխավորված աշխատատեղ: Այլ կերպ ասած, պետք է իրականացվի աշխատուժի որակավորման բարձրացման ներդրումային ծրագիր: Հայաստանում նման ծրագրերի օրինակներ կան Տեղեկատվական Տեխնոլոգիաների բնագավառում, և այդ ծրագրերը հաջող արդյունք են համարվում և առևտրային ձեռնարկությունների, և կրթական հաստատությունների համար:

### Համագործակցության արդյունավետությունը

Չնայած դեղագործական ձեռնարկությունների և կրթական հաստատությունների միջև առկա համագործակցությունը չի կարող շատ արդյունավետ համարվել, գործնական դասընթացների կազմակերպումը ուսանողների համար շատ օգտակար և պիտանի միջոցառում է: Ղեղագործական ձեռնարկությունների դեկավարները նույնիսկ կարծում են, որ հենց այդ գործնական դասաժամների ընթացքում են ուսանողներն իրական գիտելիքներ ստանում: “Հասարակ հայացքը արտադրության պրոցեսին շատ ավելի օգտակար է, քան տեսական բազմաթիվ դասաժամների անցկացումը”.

Հետազոտված դեղագործական ձեռնարկությունների դեկավարները հայտնել են, որ գործնական դասընթացների ժամանակ նրանք շատ հաճախ ընտրում են ընդունակ ուսանողների և նրանց մշտական աշխատանքի առաջարկ անում: Այսինքն Հայաստանում ուսանողները սովորաբար գերադասում են աշխատանք փնտուել դեղատներում և չեն ցանկանում աշխատել դեղագործական ձեռնարկություններում: Չնայած դրան, այնպիսի առաջատար ձեռնարկություններ, ինչպիսիք են Արվիմեդը, Էսկուլապը, արդեն իսկ ներգրավել են տասնյակ ուսանողներ իրենց պրակտիկաների

շաբաթում: Որպես պարտադիր պայմաններ ձեռնարկությունների կողմից առաջ են քաշվում բարձրագույն կրթության առկայությունը և երկարաժամկետ պայմանավորվածությունները:

## Նոր աշխատողների պահանջ

**Կարճաժամկետ և 5 տարվա կտրվածքներով պահանջվող նոր աշխատողների թիվը**

Չնայած Հայաստանում չկան դիմամիկ զարգացման լուրջ նախադրյալներ, ուրախությամբ պետք է նշենք, որ հետազոտված գրեթե բոլոր դեղագործական ձեռնարկությունների դեկավարները իրենց ձեռնարկությունների համար բավականին էքստենսիվ աճ են կանխատեսում: Աշխատողների թվի աճի գնահատված ցուցանիշները ներկայացվում են ստորև բերված այուսակում:

### **Աղյուսակ 6 - Ղեղագործական ձեռնարկություններում աշխատողների թվի աճի կանխատեսումը**

Ղեղագործական ձեռնարկություններ	Աշխատողների թվի նախատեսվող աճը
Երևանի քաղաք	27%
Արփիմետ	20%
Վիտամաքս-Ե	79%
Էսկոլապ	14%
Լիկոր	10%
Մեդիկալ-Հորիզոն	40%
Բիզոն-1	25%
Լեյկո-Ալեքս	25%
Հագենաս	123%

Ընդհանուր առնամբ, հետազոտված դեղագործական ձեռնարկությունների դեկավարները հայտնել են, որ իրենց ձեռնարկություններում գալիք 12 ամիսներին կրացվեն մոտ 170 լրացուցիչ աշխատատեղեր: Ընդհանուր առնամբ գալիք 12 ամիսներին դեղագործական ձեռնարկություններում աշխատողների թիվը կավելանա մոտ 30%-ով:


Ղեղագործական ձեռնարկությունների կողմից հայտարարված 170 նոր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարությունը շատ տպավորիչ է: Առաջին հայացքից այն կարող է որոշակիորեն չափազանցեցված թվական, սակայն ձեռնարկությունների դեկավարները շատ լավ գիտեն իրենց գործունեությունը և ի վիճակի են քիչ թե շատ ճիշտ գնահատականներ տալ: 5 տարվա կտրվածքով տրվող կանխատեսումների մեջ նրանք ավելի պահպանողական են: 4 ձեռնարկությունների դեկավարներ ընդհանրապես հրաժարվել են կանխատեսումներ անելուց: Մնացած 5 ձեռնարկությունների գնահատմամբ 5 տարիների ընթացքում դեղագործական ձեռնարկություններում աշխատատեղերի թիվը կավելանա ևս 240-ով (չհաշված առաջին տարվա 170-ը): Հետագա վերլուծության ընթացքում այս ցուցանիշը կհամարվի կրթական հաստատություններն ավարտող ուսանողների թվի հետ: Մրա նպատակը դեղագործական ոլորտում աշխատողների առաջարկի և պահանջարկի դիմամիկայի հետազոտությունն է:

**Աղյուսակ 7 - Ղեղագործական ծեռնարկություններում աշխատողների պահանջարկը գալիք 5 տարիների կտրվածքով**

>1 տարի	Նոր աշխատողների պահանջարկը	1-5 տարիներ	Նոր աշխատողների պահանջարկը
Տեխնոլոգ	34	Տեխնոլոգ	40
Սպասարկող անձնակազմ	27	Բանվոր	32
Արտադրության օպերատոր	18	Ղեղագետ՝ ղեկավար պաշտոն գրադարանու համար	15
Փաթեթավորման օպերատոր	16	Լիոֆիլիզացիայի մասնագետ	12
Ինժեներ - տեխնիկ	15	Հրշեց	10
Մարքեթինգի մասնագետ	6	Բժշկական ներկայացուցիչ	8
Լաբորատորիայի տեխնիկ	3	Մարքեթինգի մասնագետ	5
Արտահանման մասնագետ	1	Արտադրամասի ղեկավար	5
Բժշկական ներկայացուցիչ	1	Արտադրողօպերատոր	5
Որակի վերահսկողության մասնագետ	1	Լաբորանտ	4
Էւենգիոն յուղերի մասնագետ	1	Գրանցման մասնագետ	2
Չսահմանված	47	Որակի վերահսկողության մասնագետ	1
		Արտահանման մասնագետ	1
		Անձնակազմի կառավարման մասնագետ	1
		Պահեստապետ	1
		Ինժեներ	1
		Ընդհանուր մասնագետ	1
		Լիազորված անձ	1
		Անվտանգության ինժեներ	1
		Չսահմանված	94
<b>Ընդամենը</b>	<b>170</b>	<b>Ընդամենը</b>	<b>240</b>

## Աշխատողներ ներգրավելու հնարավոր եղանակները

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ նոր աշխատողներ ներգրավելիս տեղական դեղագործական ձեռնարկությունները բարդ միջոցառումներ չեն ձեռնարկում: Սովորաբար աշխատանքի տեղավորման գործակալություններից կամ գրաղվածության կենտրոններից ներգրավվում են ընդիանուր մասնագետներ, որոնք հաճախ նույնիսկ դեղագիտական/դեղագործական կամ քիմիական կրթություն չեն ունենում:



Նկար 4 - Դեղագործական ձեռնարկություններում աշխատողներ ներգրավելու եղանակները

Ձեռնարկությունների ղեկավարներին գրավում է անմիջապես կրթական հաստատություններից աշխատողներ ներգրավելու միտքը: Այս քայլը կարող է հանդիսանալ դեղագործական ձեռնարկությունների և կրթական հաստատությունների համագործակցության սերտացման ուղղությամբ առաջին արդյունավետ քայլը:

Դեղագործական ձեռնարկությունների ղեկավարների համար ընկերների և ծանոթների խորհուրդն ու երաշխավորությունը որոշիչ հանգամանքներ է հանդիսանում աշխատողներ ընտրելիս: Չնայած այս երաշխավորությունները բազմաթիվ դեպքերում մասնագիտական տեսանկյունից անընդունելի են լինում, ձեռնարկությունների ղեկավարները շարունակում են հետևել այդ խորհուրդներին՝ պոտենցիալ աշխատողների մասնագիտական ունակությունները դիտարկելու փոխարեն:

## Ունակությունների և գիտելիքների անբավարարությունն ըստ կրթական հաստատությունների ներկայացուցիչների

### Կրթական հաստատությունների նկարագիրը և առաջարկվող ուսուցումը

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են համապատասխան դեղագործական և հարակից կրթություն առաջարկող գործեր բոլոր կրթական հաստատությունները: Այդ հաստատությունները բաժանվում են պետականների և մասնավորների, բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն առաջարկողների և այլն: Հետազոտված կրթական հաստատությունները, ինչպես նաև նրանց կողմից առաջարկվող կրթական ծառայությունները ներկայացված են ստորև բերված այլուսակում:

### Այլուսակ 8 - Հետազոտված կրթական հաստատությունները և նրանց առաջարկած կրթական մակարդակը

Կրթական հաստատություններ	Կրթության տիպը	Մասնագիտությունը
Ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի անվան Արտօնապահության ազգային ինստիտուտ	☞ Դեղագործների վերապատրաստման կուրսեր, ☞ Դեղագետների և դեղագործների վերապատրաստման կուրսեր,	➤ Դեղագետների և դեղագործների վերապատրաստում

	<p>☞ Ղեղագործական մասնագիտացում,</p>	
Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան	<p>☞ Բարձրագույն կրթություն, ☞ Ինտերնատուրա, ☞ Ասպիրանտուրա, ☞ Մասնագիտացում,</p>	➤ Ղեղագետ
Երևանի պետական համալսարան	<p>☞ Բակալավրիատ, ☞ Մագիստրատուրա, ☞ Ասպիրանտուրա,</p>	➤ Ղեղագետ-քիմիկ
Հայաստանի պետական Ճարտարագիտական համալսարան (<ՊՃՀ>)	<p>☞ Միջնակարգ մասնագիտական կրթություն, ☞ Բակալավրիատ, ☞ Մագիստրատուրա, ☞ Ասպիրանտուրա,</p>	➤ Քիմիկ՝ մասնագիտացումը՝ ղեղագործական քիմիա
“Երևանի «Հայբուսակ» համալսարան	<p>☞ Բարձրագույն կրթություն,</p>	➤ Ղեղագործ
Մեհրաբյանի անվան Երևանի բժշկական ինստիտուտ	<p>☞ Բարձրագույն կրթություն, ☞ Միջնակարգ մասնագիտական կրթություն<sup>9</sup>,</p>	➤ Քոլեջ՝ ղեղագործ ➤ Ինստիտուտ՝ ղեղագետ կրթություն՝
Սուլբ Թերեզայի անվան բժշկական համալսարան	<p>☞ Բարձրագույն կրթություն,</p>	➤ Ղեղագործ
Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ	<p>☞ Միջնակարգ մասնագիտական կրթություն,</p>	➤ Ղեղագործ
Գրիգորիս բժշկահումանիտար քոլեջ	<p>☞ Միջնակարգ մասնագիտական կրթություն,</p>	➤ Ղեղագործ
Երևանի «Էրեբունի» պետական բժշկական քոլեջ	<p>☞ Միջնակարգ մասնագիտական կրթություն,</p>	➤ Ղեղատնային ղեղագործ կրթություն,

Կրթական հաստատություններից «կարևորագույնը» ԵՊՀ-ն է: Այն հանդիսանում է ղեղագործության բնագավառի մասնագետների հիմնական «մատակարարը»:

### Դիմորդների և կրթական տեղերի համադրությունը

#### Ուսանողների ներկա թիվը

Ուսանողների ներկա թիվի ուսումնասիրության նպատակը Հայաստանում որակավորված աշխատութիւ առաջարկի և պահանջարկի համադրությունն է 5 տարիների կտրվածքով: Սա բավականին բարդ խնդիր է, քանի որ հնարավոր չէ բոլոր ուսանողներին խնճավորել նույն կատեգորիայի մեջ, քանի որ կրթության ձևերը տարբեր են: Մասնավորապես՝ 1-ին կուրսի ուսանողներ կան և միջնակարգ մասնագիտական հաստատություններում, և ԲՈՒՀ-երում, և Ետրուհական կրթության մեջ (ասպիրանտուրա, մագիստրատուրա): Բացի այդ միջնակարգ մասնագիտական կրթական հաստատություններ ավարտողները ԲՈՒՀ-եր ընդունվելու պոտենցիալ հավակնորդներ են, ԲՈՒՀ-եր ավարտածները՝ Ետրուհական ուսման հավակնորդներ են: Չնայած այս

<sup>9</sup> 2-ամյա կրթություն

բարդությանը, փորձ է կատարվել խնբավորում իրականացնել և ստանալ գոնե մոտավոր պատկեր, որը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

**Աղյուսակ 9 - Ղեղագործական/ղեղագիտական ֆակուլտետներում ուսանողների քանակը 2008-2009թ. ուս. տարում**

Կրթական հաստատություններ	1-ին կուրս	2-րդ կուրս	3-րդ կուրս	4-րդ կուրս	5-րդ կուրս	Ինտեր-նատուրա	Ընդամենը
Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան	156	51	57	61	61	25	<b>411</b>
Երևանի պետական համալսարան	48	68	57	60	57	0	<b>290</b>
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան	0	0	18	16	0	16	<b>50</b>
Երևանի «Հայբուսակ» համալսարան	19	24	30	42	25	0	<b>140</b>
Մեհրաբյանի անվան Երևանի բժշկական ինստիտուտ	16	25	46	7	0	0	<b>94</b>
Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարան	3	0	0	3	2	0	<b>8</b>
Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ	200	200	0	0	0	0	<b>400</b>
Գրիգորիս բժշկահումանիտար քոլեջ	18	18	0	0	0	0	<b>36</b>
Երևանի «Էրեբունի» պետական բժշկական քոլեջ	67	67	0	0	0	0	<b>134</b>
Ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի անվան Արտօնապահության ազգային ինստիտուտ	Այստեղ կրթությունը ցիկլային է և կազմակերպվում է մյուս բարձրագույն կրթական հաստատությունների շրջանավարտների համար: Յուրաքանչյուր ցիկլը կարող է ընդգրկել մինչև մի քանի տասնյակ ուսանողներ, սակայն ցիկլերը կարող են նաև չհամարվել: Կանխատեսումներ անելը նպատակահարմար չէ:						
<b>Ընդամենը</b>	<b>527</b>	<b>453</b>	<b>208</b>	<b>189</b>	<b>145</b>	<b>41</b>	<b>1,563</b>

Հայաստանում համապատասխան կրթական հաստատությունների ղեղագործական ֆակուլտետներն ավարտող ուսանողների թիվը գալիք 5 տարիներին կվազմի 1563 մարդ: Այս ցուցանիշը ներկայացնելիս անհրաժեշտ է մի կարևոր վերապահում կատարել. միջնակարգ մասնագիտական կրթական հաստատությունների և ԲՈՒՀ-երի նույն կուրսի ուսանողները պարզապես ներկայացված են որպես այդ կուրսի սովորողներ՝ չնայած իրենց կրթությամբ նրանց կրթական մակարդակները որակապես տարբեր են<sup>10</sup>: Ուսանողների ներկայացված ցուցանիշը որոշակի մոտավորություն է պարունակում, սակայն գոնե ինչ-որ հնարավորություն է տալիս աշխատողների առաջարկի վերաբերյալ դատողություններ անելու համար:

<sup>10</sup> Մեհրաբյանի անվան Բժշկական ինստիտուտ՝ 1-ին կուրս. 9 ուսանող ԲՈՒՀ-ում և 7 ուսանող քոլեջում, 2-րդ կուրս. 5 ուսանող ԲՈՒՀ-ում և 20 ուսանող քոլեջում, 3-րդ կուրս. 6 ուսանող ԲՈՒՀ-ում և 40 ուսանող քոլեջում: <ՊՃՀ - 1-ին կուրսի 4 և 2-րդ կուրսի 12 ուսանողներ սովորում են մագիստրատուրայում

Մյուս կողմից կրթության տիպը շատ կարևոր է: Միջնակարգ մասնագիտական կրթությունը կարող է բավարարել սովորական աշխատողի կամ միջին դեկավարության պաշտոններ ստանձնելու համար, սակայն ավելի բարձր պաշտոնների համար անհրաժեշտ է ներգրավել բարձրագույն կրթություն ունեցող առավել որակավորված մասնագետների:

### **Ուսանողների թվի և կրթական տեղերի համադրությունը**

Ղեղագործական ֆակուլտետներում կրթական հնարավորությունները սույն հետազոտության կարևորագույն խնդիրներից մեկն է: Ղեղագործական ոլորտի հետազա զարգացումը որակավորված մասնագետների պահանջարկ կստեղծի, որը կարող է բավարարվել միայն որակյալ կրթական հնարավորությունների ստեղծման միջոցով:

**Այլուսակ 10 - Կրթական հաստատությունների ղեղագործական/ղեղագիտական ֆակուլտետներում ուսումնական տեղերի եւ դիմորդների թվի համադրությունը 2006-2008թթ.**

Կրթական հաստատություններ	Ղիմորդների և առևա ուսումնական տեղերի թվի համադրության գործակիցը		
	2006	2007	2008
Մ.Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան	0,6	0,6	1,4
Երևանի պետական համալսարան	1,2	1,2	0,8
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան	6,7	5,3	5,7
Երևանի «Հայբուսակ» համալսարան	0,3	0,4	0,5
Մեհրաբյանի անվան Երևանի բժշկական ինստիտուտ	2,2	1,0	1,3
Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարան	1,0	1,0	0,2
Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ	1,0	1,0	1,0
Գրիգորիս բժշկահումանիտար քոլեջ	1,5	1,5	1,5
Երևանի «Էրեբունի» պետական բժշկական քոլեջ	1,0	1,2	1,0
<b>Միջին գործակից</b>	<b>1,08</b>	<b>1,04</b>	<b>1,15</b>

Ղիմորդների թվի և առևա ուսումնական տեղերի համադրության գործակիցը<sup>11</sup> Հայաստանի կրթական հաստատություններում բավականին ցածր է: Այլուսակի վերջում ներկայացված միջին գործակիցներից կարելի է եզրակացնել, որ վերջին տարիներին կրթության առաջարկի և պահանջարկի ցուցանիշները գրեթե հավասար են՝ չնայած որ տարբեր կրթական հաստատությունների համար այդ գործակիցների մեջությունները զգալիորեն տարբերվում են: Որոշ կրթական հաստատություններում, ինչպիսիք են ՀՊՃՀ-ը, Մեհրաբյանի անվան Երևանի բժշկական ինստիտուտը, Գրիգորիս բժշկահումանիտար քոլեջը, արծանագրվել է համեմատարար բարձր մրցակցություն: Մինչդեռ մյուսներում կրթական տեղերը չեն համարվել. նման իրավիճակ է արձանագրվել ԵՊՀ-ում, ԵՊՀ-ում, «Հայբուսակ» Համալսարանում: Հեղինակավոր այս կրթական

<sup>11</sup> Ղիմորդների թիվը բաժանված է կրթական տեղերի թվի վրա

հաստատություններում նման իրավիճակը կարող է բացատրվել կրթության բարձր արժեքով. այս հաստատություններում անվճար կրթական տեղերի քանակը սահմանափակ է:

Վերը բերված այդուսակից կարելի նաև Եզրակացնել, որ դեղագործական կրթությունը դիմորդների համար հնարավոր է չի հանդիսանում առաջնային պահանջված մասնագիտացում: Դիմորդները այս նշում են որպես երկրորդ կամ երրորդ այլընտրանք (թերևս բացառություն է հանդիսանում ՀՊՀ-ը):

Դեղագործական կրթության վերլուծության ընթացքում անհրաժեշտ է անդրադառնալ ևս մի կարևորագույն հանգամանքի. դեղագործական ֆակուլտետների ուսանողների գերակշիռ մեծամասնությունը նույնիսկ չեն էլ մտածում դեղագործական ծերնարկություններում աշխատելու մասին: Նրանք գերադասում են աշխատանքի հնարավորություններ փնտրել դեղատներում, որտեղ աշխատանքը զգալիորեն ավելի հեշտ է ու անվտանգ և ավելի բարձր է վարձատրվում: Դեղատներում այս դեղագործների մասնագիտական աճի հնարավորությունը բավականին սահմանափակ է, բայց նրանք գերադասում են ունենալ «ավելի լավ պայմաններ այսօր, քան աճի լավ հնարավորություններ վաղը»:

### Կրթական տեղերի թվի որոշումը

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ կրթական տեղերի քանակը դեղագործական ֆակուլտետներում որևէ կապ չունի դեղագործական ոլորտի զարգացման դիմամիկայի հետ: Կրթական հաստատությունները գործում են ոլորտից անկախ, խիստ պետական վերահսկողության ներքո: Կրթական տեղերի քանակը սահմանվում է Հայաստանի Կրթության և Գիտության Նախարարության կողմից տրված Լիցենզիայով: Իր հերթին՝ նախարարությունը լիցենզավորումն իրականացնում է տվյալ կրթական հաստատության հզորությունների՝ տարածքների և ենթակառուցվածքների առկայությունից ելնելով: Որոշում ընդունելու իրավունքը վերապահված է բացառապես Նախարարությանը և ոլորտի ծերնարկությունները որևէ ձևով այդ որոշման վրա ազդելու հնարավորություն չունեն: Միաժամանակ պետք է նշել, որ բարեբախտաբար դեղագործական ֆակուլտետներում դիմորդների թվի և կրթական հաստատություններում տեղերի քանակի միջև մեծ տարբերություն չկա:

Լավագույն դեպքում լիցենզավորող կառույցները կոնկրետ կրթական հաստատություններում կրթական տեղերը սահմանելիս կարող են հաշվի առնել տվյալ պահին շուկայի իրավիճակը: Ոլորտը կարող է կոնկրետ մասնագիտությամբ աշխատողների նման կարիք ընդհանրապես չունենալ և նման մասնագետների ուսուցումը կարող է ժամանակի և այլ ռեսուրսների պարզ փոշիացման վերածվել: Միաժամանակ դեղագործ մասնագետների պահանջարկի գնահատումը խիստ դժվարացված է հետևյալ երկու հիմնական պատճառներով.

- ա) Շուկայական իրավիճակի գնահատումը սուբյեկտիվ գործընթաց է: Կրթական հաստատությունները կարող են իրենց սեփական պատկերացումներն ունենալ շուկայի վերաբերյալ<sup>12</sup>:
- բ) Հայաստանում գործում են հարյուրավոր դեղատներ, որոնք ներկայացնում են դեղագործների պահանջարկ և որոշիչ դեր են խաղում շուկայում:

<sup>12</sup> Այս իրավիճակում կրթական հաստատությունները ֆինանսավոն շահագրգության ներքում առաջարկում են վճարովի ծառայություններ և խնդիրները համապատասխան պահանջարկ և որոշիչ դեր են խաղում շուկայում

## 5 տարիների կտրվածքով դեղագործական ֆակուլտետներ ավարտող ուսանողների թիվը

Գալիք 12 ամիսների և 5 տարիների կտրվածքով կրթական հաստատություններն ավարտող ուսանողների թվի ցուցանիշն անհրաժեշտ է դեղագործության բնագավառում որակավորված աշխատողների առաջարկի և պահանջարկի համադրություն իրականացնելու համար: Արդեն նշվել է, որ դեղագործական ձեռնարկությունները 2009 թվականի համար ներկայացրել են 170 մասնագետների պահանջարկ, իսկ գալիք 5 տարիների համար՝ ընդհանուր առմամբ 410 մասնագետների պահանջարկ<sup>13</sup>. Աշխատողների առաջարկի ցուցանիշները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

**Աղյուսակ 11 - Կրթական հաստատությունների դեղագործական/դեղագիտական ֆակուլտետներում սովորող ուսանողների թվի կանխատեսումը 2009-2013թ.**

Կրթական հաստատություններ	2009	2010	2011	2012	2013	Ընդամենը
Մ.Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան	61	61	55	50	150	377
Երևանի պետական համալսարան	57	60	57	68	48	290
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան	17	17	20	20	20	94
Երևանի «Հայբուսակ» համալսարան	25	42	30	24	19	140
Մեհրաբյանի անվան Երևանի բժշկական ինստիտուտ	10	15	20	25	25	95
Սուլբ Թերեզյանի անվան բժշկական համալսարան	2	3	10	10	10	35
Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ	200	200	200	200	200	1,000
Գրիգորիս բժշկահումանիտար քոլեջ	18	18	20	20	20	96
Երևանի «Էրեբունի» պետական բժշկական քոլեջ	62	77	85	90	100	414
<b>Ընդամենը</b>	<b>452</b>	<b>493</b>	<b>497</b>	<b>507</b>	<b>592</b>	<b>2,541</b>

Դեղագործական ձեռնարկությունների համար անհրաժեշտ աշխատողների քանակի վերաբերյալ միանշանակ դատողություններ անելը շատ դժվար է: Առաջին հայացքից առաջարկը շատ անգամ գերազանցում է պահանջարկը, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել նաև դեղատների կողմից ներկայացվող պահանջարկը: Բացի այդ, դեղագործական ձեռնարկությունների պահանջարկը չի ներկայացվում բացառապես դեղագործների, քիմիկոսների և այլ նեղ մասնագետների համար: Դեղագործական ձեռնարկություններին անհրաժեշտ են նաև մարքեթինգի մասնագետներ, մենեջերներ, ինժեներներ և այլն: Այս պաշտոնները գրադարձնելու համար դեղագործական կամ բժշկական կրթությունը պարտադիր չէ:

<sup>13</sup> 5 դեղագործական ձեռնարկություններ 2-րդից 4-րդ տարիներին կներկայացնեն 240 նոր աշխատողների պահանջարկ:  $170 + 240 = 410$  աշխատող քոլոր 5 տարիներին

## Կրթական հաստատություններում կիրառվող ծրագրերը

### **Կրթական ծրագրերի համապատասխանությունը ներկա իրավիճակին**

Ղեղագործական ձեռնարկությունների հետազոտության ժամանակ դրանց դեկավարներին հարց է տրվել ներկայիս կրթական ծրագրերի և առարկաների դասավանդման արդյունավետության և աղեկվատության վերաբերյալ: Զենարկությունների դեկավարների մի մասը խստ դժգոհ է կրթական ներկա համակարգից և առաջարկում է անհապաղ փոփոխություններ իրականացնել: Խնդրին օբյեկտիվ գնահատական տալու համար անհրաժեշտ է այն քննարկել նաև հակադարձ կողմի, այն է՝ կրթական հաստատությունների ներկայացուցիչների հետ:

Կանխատեսելի էր, որ կրթական հաստատությունների ներկայացուցիչները համոզված են, որ ներկա կրթական ծրագրերը և առարկաների դասավանդումը լավագույնս համապատասխանում է առկա կարիքներին: Գրեթե բոլոր կրթական հաստատությունների ներկայացուցիչները վստահ են, որ ուսանողներին առաջարկվող կրթությունը լրիվությամբ համապատասխանում է դեղագործության ոլորտի ներկայիս պահանջներին: Բացառություն է հանդիսանում միայն ՀՊՃՀ-ի ներկայացուցիչը, որը գտնում է, որ կրթական համակարգը բարելավումների մեջ կարիք ունի, քանի որ դասաժամները քիչ են, տեխնիկական գինվածությունը և լարորատոր հզորությունները անբավարար են, չկան ժամանակակից գրականություն և փորձի փոխանակման հնարավորություններ:

Որոշ դեղագործական ձեռնարկությունների դեկավարներ կարծում են, որ կրթական ծրագրերը շատ հնացած են: Ի հակադրություն դրան, կրթական հաստատությունների ներկայացուցիչները նշում են, որ ծրագրերը թարմացված են. Վերջին փոփոխություններն իրականացվել են 2005 թվականին: Կրթական հաստատություններին թույլ է տրվում ամեն տարի ինքնուրույն ձևով աննշան փոփոխություններ մտցնել կրթական ծրագրերում, սակայն լուրջ փոփոխություններն անթույլատրելի են: Կրթական ծրագրերի հիմնական բնութագրերը սահմանվում են պետական կառույցների կողմից և ենթակա չեն փոփոխության:

Ընդհանուր առմամբ վերջին տարիներին դեղագործության կրթական ծրագրերը որոշակիորեն ընդլայնվել են գրեթե բոլոր կրթական հաստատություններում: Բացառություն է հանդիսանում ՀՊՃՀ-ն, որտեղ այդ ծրագրերը կրծատվել են Բոլորի համաձայնագրի պայմաններին անցնելու պատճառով: Որոշ առարկաներ փոխանցվել են մագիստրատուրա, ինչը սակայն որոշակիորեն նվազեցրել է բակալավրիատում կրթության որակը:

### **Կրթական ծրագրերի փոփոխության անհրաժեշտությունը**

Կրթական բոլոր հաստատություններն ել լիովին գոհ են իրենց կրթական ծրագրերից և դասավանդվող առարկաներից: Չնայած դրան՝ նրանք հասկանում են, որ այդ ծրագրերը ժամանակ առ ժամանակ ենթակա են փոփոխման և թարմացման: Որոշ ինստիտուտներում այդ փոփոխությունները կատարվում են 5 տարին մեկ, մյուսներում՝ նույնիսկ ավելի հազվադեպ: Սա վերաբերվում է մեծ փոփոխություններին, քանի որ փոքր փոփոխություններ կատարվում են գրեթե ամեն տարի:

Կրթական ծրագրերի փոփոխությունը գրեթե միշտ նշանակում է առկա ծրագրերի լրացում և նոր առարկաների ներկայացում: Հետազոտված կրթական հաստատությունների ներկայացուցիչները թվարկել են քիմիայի, կենսաբանության, դեղագործության բնագավառների շուրջ 10 առարկաներ, որոնք պետք է մտցվեն կրթական ծրագրերի մեջ կրթության որակը բարձրացնելու համար: Առողջապահության Ազգային Ինստիտուտը նախաձեռնում է ՊԱԳ ստանդարտների ուսուցման դասընթացներ կազմակերպել ետքուհական կրթության շրջանակներում:

## Բարձր որակավորում ունեցող դասախոսների առկայությունը


Բարձրորակ մասնագետների պատրաստումը մեծապես կախված է անհրաժեշտ ռեսուրսների առկայությունից: Այդ ռեսուրսներից կարևորագույնը բարձր որակավորում ունեցող դասախոսների առկայությունն է: Հետազոտված բոլոր կրթական հաստատությունների ներկայացուցիչները հայտնել են, որ իրենց հաստատություններն ապահովված են բարձր որակավորում ունեցող բավարար թվով դասախոսներով և ի վիճակի են արդյունավետ կրթական գործընթաց ապահովել:

Այս դեպքում ևս դեղագործական ձեռնարկությունների դեկավարների և կրթական հաստատությունների ներկայացուցիչների պատասխանները հակասում են իրար: Դեղագործական ձեռնարկությունների դեկավարները կարծում են, որ կրթական հաստատություններում ուսանողներին մատուցվում են բացառապես տեսական գիտելիքներ, և նրանք ունեն գործնական դասընթացների խիստ կարիք: Սա կխորացնի կրթական հաստատությունների և ոլորտի ձեռնարկությունների համագործակցությունը:

## Հարաբերությունները դեղագործական ձեռնարկությունների հետ

### Համագործակցության աստիճանը

Տեղական դեղագործական ձեռնարկությունների և կրթական հաստատությունների համագործակցության աստիճանի պարզումը սույն հետազոտության կարևոր խնդիրներից մեկն է: Հետազոտված դեղագործական ձեռնարկությունների դեկավարների կարծիքով համագործակցությունը շատ թույլ է և հիմնականում սահմանափակված է ուսանողների համար գործնական դասընթացների և ինտերնատուրայի կազմակերպմանը: Կրթական հաստատությունների ներկայացուցիչների պատասխաններն ավելի խոստումնալից են (տես Նկար 5):



Նկար 5 - Կրթական հաստատությունների եւ դեղագործական ձեռնարկությունների միջև առկա համագործակցության ծերը

Հետազոտված 10 կրթական հաստատություններից միայն 1-ի ներկայացուցիչն է հայտարարել դեղագործական ձեռնարկությունների հետ համագործակցության լրիվ բացակայության մասին: Այդ հաստատությունում պատրաստվում են դեղագործներ բացառապես դեղատներում աշխատելու համար:

Ինչպես երևում է նկարից, համագործակցության առավել հաճախ հանդիպող տարրերակը Դեղագործական ձեռնարկություններ կատարվող այցելություններն են:

Գործնական դասընթացներն ու վերապատրաստումը (արտադրական անձնակազմի կողմից իրականացվող դասաժամները) հաջորդ հաճախ հանդիպող համագործակցության ձևն է: Որոշ դեղագործական ձեռնարկություններ նման միջոցառումներ են կազմակերպում առևտրային հիմունքներով, մյուսները՝ անվճար: Որոշ դեպքերում դեղագործական ձեռնարկություններն ընտրում են որոշ ուսանողների և նրանց համար հատուկ գործնական պարագաներներ կազմակերպում, նույնիսկ վարձատրություն նշանակում: Համատեղ հետազոտական ծրագրերի իրականացումն ամենահազվադեպ հանդիպող համագործակցության ձևն է: Տեղական դեղագործական ձեռնարկությունների և կրթական հաստատությունների միջև համագործակցությունը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

**Աղյուսակ 12 - Կրթական հաստատությունների եւ դեղագործական ձեռնարկությունների գործընկերային հարաբերությունների առկայությունը**

Կրթական հաստատություններ	Գործընկեր ձեռնարկություններ
Ակադեմիկոս Ս. Խ. Ավելիբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ	☞ Արփիմեդ, Ֆարմատեկ, Լիկվոր
Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան	☞ Լիկվոր, Էսկուլապ
Երևանի պետական համալսարան	☞ Արփիմեդ, Ֆարմատեկ, Լիկվոր, Նոկի, Երևանի ՔԴՖ
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան	☞ Երևանի ՔԴՖ, Լիկվոր, Նոկի, Վիտամաքս - Ե, Արիակ
Երևանի «Հայբուսակ» համալսարան	☞ Լիկվոր, Էսկուլապ, Երևանի ՔԴՖ
Մեհրաբյանի անվան Երևանի բժշկական ինստիտուտ	☞ Վիտամաքս - Ե, Լիկվոր, Նոկի
Սուլբ Թերեզյանի անվան բժշկական համալսարան	☞ Նոկի
Գրիգորիս բժշկահումանիտար քոլեջ	☞
Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ	☞ Երևանի ՔԴՖ, Ֆարմատեկ
Երևանի «Էրեբունի» պետական բժշկական քոլեջ	☞

Համատեղ ծրագրերի և հետազոտական աշխատանքների իրականացումը համագործակցության ամենահազվադեպ հանդիպող տարրերակն է: Կրթական հաստատությունները նման համագործակցության այնքան էլ հակված չեն, իսկ դեղագործական ձեռնարկություններն էլ պատրաստ չեն լուրջ ֆինանսական ռեսուրսներ և ժամանակ<sup>14</sup> հատկացնել այս նպատակով: Նման պասիվությունը կարող է հանգեցնել հետագա խնդիրների, քանզի ողջ աշխարհում նմանատիպ համագործակցությունը հանդիսանում է երկկողմանի զարգացման և հաջողությունների կարևորագույն նախադրյալներից մեկը:

<sup>14</sup> Որոշ ձեռնարկություններում նոյնիսկ բողոքում են, որ ուսանողները խանգարում են արտադրական գործնարարություններին և խնդիրներ են առաջացնում: Բացի այդ ոչ բոլոր ձեռնարկություններն ունեն բավարար նմթակառուցվածքներ գործնական դասամասներ կազմակերպելու համար:

## Համագործակցության արդյունավետությունը

Կրթական հաստատությունների ներկայացուցիչների կարծիքով համագործակցությունը դեղագործական ձեռնարկությունների հետ շատ արդյունավետ և օգտակար է իրենց ուսանողների համար: Նրանք բոլորն էլ շատ գոհ էին իրականացվող միջոցառումներից՝ գործնական դասընթացներից, այցելությունների ու պրեգենտացիաների կազմակերպումից և այլն: Այդ համագործակցումը մեծապես նպաստում է ուսանողների փորձառության և ունակությունների ավելացմանը, տեսական գիտելիքների ամրապնդմանը:

Միևնույն ժամանակ դժվար է անվերապահորեն համաձայնվել կրթական հաստատությունների ներկայացուցիչների հետ, որոնք համագործակցության ներկա մակարդակը շատ արդյունավետ են համարում: Փոխհարաբերությունները, ինչպես արդեն նշվել է, սահմանափակվում են մի քանի կոնկրետ միջոցառումներով և ավելի շուտ նման են պարտականության կատարման, քան թե փոխշահավետ համագործակցության:

## Աշխատանքի ուսանողներին աշխատանք գտնելու հարցում

Աշխատանքի տեղավորվելը և մասնագիտական հետագա աճը հանդիսանում են ուսանողների առջև ծառացող կարևորագոյն խնդիրները: Կրթական հաստատությունների դեկավարները այս երևոյթը շատ լավ են հասկանում և փորձում են իրենց լավագոյն ուսանողների համար ապահովել աշխատանքի հնարավորություններ: Գործարար հասարակության համար կրթական հաստատությունների երաշխավորությունները շատ են արժելորվում: Շատ հաճախ որևէ նորավարտ մասնագետի աշխատանքի խնդիրը լուծվում է կրթական հաստատության դեկավարներից որևէ մեկի մի հասարակ հեռախոսազնով:

Միաժամանակ չպետք է այնպիսի տպավորություն ստեղծվի, որ ուսանողների աշխատանքի խնդիրը լուծվում է բացառապես անձնական պրոտեկցիոնիզմի միջոցով: Շատ կրթական հաստատություններ իրենց ներսում ստեղծում են հասուլ ստորաբաժանումներ, որոնք գրավում են ավարտող առաջատար ուսանողների աշխատանքի տեղավորման հարցերով: Նման օրինակներ կան Սեհրաբյանի Անվան Բժշկական Ինստիտուտում, Սուրբ Թերեզայի Անվան Բժշկական Համալսարանում, որոնք սերտ հարաբերություններ են պաշտպանում դեղատների ցանցերի հետ: Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջը եւ Երևանի պետական համալսարանը համագործակցում են Երևանի ՔԴՖ-ի և Նոկիի հետ:


## Դեղագործական ոլորտի ազդեցությունը կրթական գործընթացների վրա

Կրթական գործընթացների վրա դեղագործական ձեռնարկությունների ազդեցության ուսումնասիրությունը ևս նպատակ ունի պարզել երկու տիպի հաստատությունների միջև առկա համագործակցության աստիճանը: Կրթական հաստատությունների ներկայացուցիչները կարծում են, որ նման համագործակցությունը կայացել է, սակայն մենք եւ դեղագործական ձեռնարկությունների դեկավարները չենք կիսում այս կարծիքը:

Դեղագործական ձեռնարկությունները կրթական հաստատությունների վրա որևէ իրական ազդեցություն չունեն: Զերնարկությունները կարող են դիմել կրթական հաստատություններ և իրենց աշխատակիցների համար առանց մրցույթի վճարովի ուսումնական տեղեր բացել, և ոչ ավել: Որոշ դեպքերում դեղագործական ձեռնարկությունների դեկավարներին հրավիրում են մասնակցելու քննական հանձնաժողովների կամ առաջարկում են ոչ մեծ փոփոխությունների առաջարկություններ անել կրթական ծրագրերի մեջ:

## Դեղագործական ձեռնարկությունների վերաբերյալ կրթական հաստատությունների տեղեկացվածություն

Տեղական դեղագործական ձեռնարկությունների վերաբերյալ կրթական հաստատությունների տեղեկացվածության ուսումնասիրությունը հանդիսանում է սույն հետազոտության վերջին խնդիրը: Այս ուսումնասիրությունը ևս նպատակ ունի զնահատական տալ երկու կառույցների համագործակցությանը: Կարելի է ենթադրել, որ դեղագործական ֆակուլտետներ ունեցող կրթական հաստատությունների ներկայացուցիչները պետք է շատ լավ տեղեկացված լինեն ոլորտի բոլոր ձեռնարկությունների մասին, մանավանդ որ դրանք սակավաթիվ են: Այս հայտարարությունը ձիշտ է միայն մասնակիորեն. դեղագործական ձեռնարկությունների մասին լավ տեղեկացված են ոչ բոլոր կրթական հաստատություններում:



Նկար 6 - Կրթական հաստատությունների ներկայացուցիչների տեղեկացվածությունը հայկական դեղագործական ձեռնարկությունների վերաբերյալ

Ինչպես ներկայացված է նկարում, Լիկվոր և Երևանի ջու դեղագործական ձեռնարկությունները ամենաձանաչափածներն են՝ կրթական հաստատությունների 80%-ում տեղեկացված են նրանց մասին: Կրթական հաստատությունների ներկայացուցիչները Վիտամաքս-Ե և Էսկուլապ ձեռնարկությունների մասին ամենաքիչն են հիշատակել:

Ավելարեկյանի անվան Ազգային Առողջապահական ինստիտուտի ներկայացուցիչը ամենատեղեկացվածն է եղել դեղագործական ձեռնարկությունների մասին: Նա փաստորեն լավ տեղեկացված էր բոլոր ձեռնարկությունների մասին: <ՊՃՀ, <ՊԲՀ, ԵՊՀ և «Հայրուսակ» ինստիտուտի ներկայացուցիչները ևս բավականին լավ տեղեկացված են. նրանցից յուրաքանչյուրը տեղյակ է աշնվագն 5-6 դեղագործական ձեռնարկությունների մասին: Միաժամանակ կան կրթական հաստատություններ, որոնք տեղյակ են ընդամենը 1-2 ձեռնարկությունների մասին:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### Հավելված 1 - Հետազոտված դեղագործական ձեռնարկությունների ցանկը

NN	Ձեռնարկություն	Ուսպնդենտի անունը	Պաշտոն
1.	Լիկոր	Սերգեյ Մաթեոսյան	Տնօրեն
2.	Արփիմեդ	Վաչագան Ղազարյան	Գլխավոր տնօրեն
3.	Երեւանի քանչ	Սիրազ Մաթեոսյան	Տնօրեն
4.	Էսկուլապ	Հրաչ Մինասյան	Տնօրեն
5.	Մեղիկալ-Հորիզոն	Շահե Կասիս	Փոխտնօրեն
6.	Վիտամաքս-Ե	Էդուարդ Ղիլանյան	Տնօրեն
7.	Լեյկո-Ալեքս	Գագիկ Ալեքսանյան	Տնօրեն
8.	Բիզոն-1	Սուրեն Հարությունյան	Տնօրեն
9.	Հագենաս	Խաչիկ Գևորգյան	Տնօրեն

### Հավելված 2 - Հետազոտված կրթական հաստատությունները

NN	Կրթական հաստատություն	Ուսպնդենտի անունը	Պաշտոն
1.	Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան	Հասմիկ Հասրաթյան	Դեղագիտական ֆակուլտետի դեկան
2.	Երևանի պետական համալսարան	Արդա Ավետիսյան	Քիմիայի ֆակուլտետի դեկան, ակադեմիկոս
3.	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան	Գեղեցիկ Հովհաննիսյան	Քիմիական տեխնոլոգիաների եւ բնապահպանական ճարտարապետության դեպարտամենտի վարչի տեղակալ
4.	Երևանի «Հայբուսակ» համալսարան	Բոգդան Գասպարյան	Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր
5.	Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարան	Լարիսա Համբարձումյան	Ուեկտոր
6.	Մեհրաբյանի անվան Երևանի բժշկական ինստիտուտ	Լուիզա Մեհրաբյան	Ուեկտոր
7.	Երևանի պետական հեմակետային բժշկական քոլեջ	Ղոնարա Հակոբյան	Ուս. գծով փոխտնօրեն
8.	Ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ	Իրինա Ղազարյան	Դեղագիտության ամբիոնի վարիչ
9.	Երևանի «Էրեբունի» պետական բժշկական քոլեջ	Մարլենա Գևորգյան	Ուս. գծով փոխտնօրեն
10.	Գրիգորիս բժշկահումանիտար	Արթուր Վարդանյան	Հիմնադիր տնօրեն

	քոլեց		
--	-------	--	--

## ՀՊՈՒՄՆԵՐ

1. GMP EU/WHO
2. <https://www.reed.co.uk/job-details>
3. <http://www.hirediversity.com>
4. <http://us.gsk.com/html/career/jobsearch.html>
5. [https://careers.peopleclick.com/careerscp/client\\_bayer/](https://careers.peopleclick.com/careerscp/client_bayer/)
6. <http://careers.roche.com>
7. <http://friendsreunitedjobs.co.uk/cgi-bin/vacdetails.pl>
8. <http://pharmaceutical.ie/jobseekers-details.cfm>
9. [http://www.msd.com.pr/content/corporate/careers/search\\_jobs\\_outside.html](http://www.msd.com.pr/content/corporate/careers/search_jobs_outside.html)
10. [http://www.msd.com.pr/content/corporate/careers/search\\_jobs\\_outside.html](http://www.msd.com.pr/content/corporate/careers/search_jobs_outside.html)
11. <http://careers.astazeneca-us.com/azd/maine.>
12. [https://wyeth.recruitmax.com/MAIN/careerportal/Job\\_Profile.cfm](https://wyeth.recruitmax.com/MAIN/careerportal/Job_Profile.cfm)
13. <http://lifescience.ie>
14. <http://www.biospace.com/jobs/seekersignin.aspx>
15. <http://www.careerbuilder.com/JobSeeker/Jobs/RecommendedJobs.aspx>
16. <http://www.learn4good.com/jobs/jobfind.php>
17. <http://www.mybayerjob.de/en/sapiframe.html>
18. [http://www.drugs.com/drug\\_pharmaceutical\\_company\\_employment\\_jobs.html](http://www.drugs.com/drug_pharmaceutical_company_employment_jobs.html)
19. <http://www.elan.com/Careers/JobSearch/>
20. [http://www.merck.com/careers/search\\_jobs/experienced.html](http://www.merck.com/careers/search_jobs/experienced.html)
21. <http://www.sanofi-aventis.us/live/us/en/layout.jsp>
22. [http://www.icejobs.com/effrecruiting\\_quest1.htm](http://www.icejobs.com/effrecruiting_quest1.htm)
23. <http://pharmaceutical.jobs.jobsearchsite.com/>
24. <http://www.eliasassociates.com/pharmaceutical.htm>
25. <http://www.hr-guide.com/cgi-local/search.cgi>
26. <http://www.wikihow.com/Write-an-Effective-Job-Description>
27. <http://www.ewin.com/articles/jdq.htm>
28. <http://www.brandeis.edu/humanresources/forms/questionnaire.html>
29. <http://www.hr-guide.com/data/G022.htm>

Դեկտեմբեր 8, 2008

## Դեղերի արտադրության բևագավառում ուսակությունների եւ գիտելիքների կարիքների հետազոտություն

Դաշվետվություն, Մաս 2

Ուսակությունների եւ գիտելիքների անհամապատասխանությունը

Դեղինակ՝ ԱՄ Փառաւըրց Քուսսաթիւգ Քասֆու ՍՊԸ



**CAPS**

Բովանդակություն

Կատարողական Ամփոփագիր	3
Նախաբան	3
Հիմնական արդյունքներ և եզրակացություններ	4
<b>ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ</b>	<b>7</b>
Որակավորված անձ	8
Որակի Հսկման Ղեկավար	8
Հետազոտվողների նկարագիրը	8
Պարտականություններ	9
Գիտելիքներ և ունակություններ	11
Արտադրության Ղեկավար	14
Հետազոտվողների նկարագիրը	14
Պարտականություններ	15
Գիտելիքներ և ունակություններ	18
Տեխնոլոգիական Հարցերի Պատասխանատու	22
Հետազոտվողների նկարագիրը	22
Պարտականություններ	23
Գիտելիքներ և ունակություններ	24
Լաբորատորիայի Վարիչ	27
Հետազոտվողների նկարագիրը	27
Պարտականություններ	28
Գիտելիքներ և ունակություններ	30
Գրանցումների Մասնագետ	33
Հետազոտվողների նկարագիրը	33
Պարտականություններ	33
Գիտելիքներ և ունակություններ	35
Արտադրող Օպերատոր	37
Հետազոտվողների նկարագիրը	37
Պարտականություններ	39
Գիտելիքներ և ունակություններ	41
Փաթեթավորող Օպերատոր	44
Հետազոտվողների նկարագիրը	44
Պարտականություններ	45
Գիտելիքներ և ունակություններ	47

<b>Քիմիկոս (Որակի Հսկման Վերլուծաբան)</b>	50
Հետազոտվողների նկարագիրը	50
Պարտականություններ	51
Գիտելիքներ և ունակություններ	52
<b>Լաբորանտ</b>	55
Պարտականություններ	56
Գիտելիքներ և ունակություններ	57
<b>Մանրէաբան</b>	59
Հետազոտվողների նկարագիրը	59
Պարտականություններ	60
Գիտելիքներ և ունակություններ	61
<b>Պահեստի Պատասխանատու</b>	64
Հետազոտվողների նկարագիրը	64
Պարտականություններ	65
Գիտելիքներ և ունակություններ	67
<b>Մարքետինգի Մասնագետ</b>	70
Հետազոտվողների նկարագիրը	70
Պարտականություններ	71
Գիտելիքներ և ունակություններ	72
<b>Բողոքների և Ղեղազգոնության Մասնագետ</b>	75
Հետազոտվողների նկարագիրը	75
Պարտականություններ	76
Գիտելիքներ և ունակություններ	77
<b>Գիտահետազոտական Աշխատանքների Պատասխանատու</b>	79
Հետազոտվողների նկարագիրը	79
Պարտականություններ	80
Գիտելիքներ և ունակություններ	82

## Կատարողական Ամփոփագիր

### Նախաբան

Հայաստանում դեղագործական ձեռնարկությունների աշխատողների հետազոտությունն իրականացվել է Դեղերի արտադրության բնագավառում ունակությունների և գիտելիքների կարիքների հետազոտության շրջանակներում: Այս հետազոտության իմանական նպատակը իրենց ֆունկցիաների և պարտականությունների վերաբերյալ դեղագործական ձեռնարկությունների աշխատողների վերաբերմունքի պարզումն է, ինչպես նաև այդ պարտականություններն արդյունավետորեն իրականացնելու համար նրանց ունակությունների և գիտելիքների համապատասխանության վերաբերյալ գնահատականի ստանալը: Համեմատականներ են անցկացվել այն չափանիշների հետ, որոնք կիրառվում են արտերկրյա առաջատար ձեռնարկությունների կողմից: Հետազոտվող աշխատողներին առաջարկվել է գնահատել նրանց առաջադրվող յուրաքանչյուր պարտականության, պահանջվող գիտելիքի կամ ունակության, ինչպես նաև փորձի և կրթական մակարդակի կարևորության աստիճանը: Աշխատողները միաժամանակ գնահատել են նաև այդ պարամետրերից յուրաքանչյուրի կիրառությունը իրենց ձեռնարկություններում և հայտնել իրենց գիտելիքների և ունակությունների բարելավման կարիքների մասին:

Դեղագործական ձեռնարկությունների աշխատողների հետազոտությունն իրականացվել է ինքնակառավարվող անկետավորման եղանակով: Հետազոտվողներին բաժանվել են հասուլ մշակված հարցաթերթեր (անկետաներ): Հետազոտվողները լրացրել են դրանք և փոխանցել իրենց անմիջական դեկավարներին, որոնց առաջարկվել է կարծիք հայտնել իրենց ենթականների պատասխանների վերաբերյալ: Անմիջական դեկավարների կողմից ևս լրացվելուց հետո հարցաթերթը վերադարձվել են և ենթարկվել հետագա մշակման:

Հետազոտությունն իրականացվել է տեղական դեղագործական ձեռնարկությունների՝ միջազգային լավագույն փորձի և ՊԱԳ-ի ուսումնասիրության իիման վրա սահմանված և դասակարգված 15 հիմնական պաշտոններ գրադեցնող աշխատողների շրջանում: Հետազոտության ընթացքում պարզվել է, որ ձեռնարկությունների մի զգալի մասը իր կառուցվածքում չունի առաջադրվող պաշտոնների նույնիսկ կեսը: Հետազոտվող աշխատակիցների առկայության վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

### Աղյուսակ 1 - Տեղական դեղագործական ձեռնարկություններում պաշտոնների և աշխատողների առկայությունը

Պաշտոններ	Արփիմեր	Լիկվոր	Էսկուպապ	Երևանի բղեժ	Սեղիկալ- Հորիզոն	Վիտա- մաքս-Ե	Բիզոն-1	Լեյկո- Ալեք
Որակավորված անձ	N/A	N/A	N/A	N/A	N/A	N/A	N/A	N/A
Արտադրության դեկավար	A	A	N/A	N/A	A	A	N/A	N/A
Որակի հակման դեկավար	A	A	A	A	N/A	A	N/A	N/A
Պահեստի պատասխանատու	A	A	A	A	A	A	N/A	N/A
Լաբորատորիայի վարիչ	A	A	A	N/A	N/A	A	N/A	N/A***
Տեխնոլոգիական հարցերի պատասխանատու	A	A	A	N/A	A	A	A	A

Գիտահետազոտական աշխատանքների պատասխանատու	N/A	N/A	N/A	N/A	N/A**	N/A	N/A	N/A
Քիմիկոս, որակի հսկող	A	A	A	A	N/A	N/A	A	N/A
Մանրէաբան	A	A	N/A	A	N/A	A	N/A	N/A
Լաբորանտ	A	A	N/A	A	A	N/A	N/A	N/A
Վրտադրող օպերատոր	A	A	A	A	A	A	A	A
Փաթեթավորող օպերատոր	A	A	A	A	A	A	A	A
Բողոքների և դեղազգության պատասխանատու	A	N/A	N/A	N/A	N/A	N/A	N/A	N/A
Գրանցման մասնագետ	A	A	N/A*	N/A	N/A	N/A	N/A	N/A
Մարքերինգի մասնագետ	A	A	N/A	N/A	N/A*	N/A	N/A	N/A

A - Արկա է (պաշտոնը կա և այն գրադարձ է)

N/A - Արկա չէ (պաշտոնը կա և այն գրադարձ չէ)

NP - Նման պաշտոն չկա

\* - Տվյալ պաշտոնի պարտականություններն իրականացվում են մասնագիտացած կազմակերպությունների կողմից

\*\* - Տեխնոլոգիաները ներմուծված են

\*\*\* - Տվյալ պաշտոնի պարտականություններն իրականացվում են ձեռնարկությունից դուրս՝ երբեմն արտերկուում

### Հետազոտության գործիքը և հարցերը

Դեղագործական ձեռնարկությունների հետազոտված աշխատողներին առաջադրվել է հարցերի խումբ, իսկ աշխատողների անմիջական դեկավարներին առաջարկվել է հաստատել կամ մերժել իրենց Ենթականների պատասխանները:

Աշխատողների հետազոտության հարցաշարը անդրադարձ է կատարել հարցերի հետևյալ հիմնական խնդերին:

- ա) Հետազոտվողների նկարագիրը,
- բ) Կոնկրետ ֆունկցիաների և պարտականությունների կարևորությունը,
- գ) Կրթական մակարդակի բավարարությունը,
- դ) Թվարկված գիտելիքների և ունակությունների կարևորությունը,
- ե) Թվարկված գիտելիքների և ունակությունների առկայությունը և բարելավման կարիքները,
- զ) Հավելյալ պահանջների կարևորությունը,
- է) Պարտականությունների մասին տեղեկացման ձևերը,
- ը) Վերապատրաստման դասընթացների ցանկալի ձևաչափերը:

### Հիմնական արդյունքներ և եզրակացություններ

Տեղական դեղագործական ձեռնարկությունների աշխատողների հետազոտությունը բացահայտել է մի շարք կարևոր արդյունքներ և ամփոփումներ իրականացնելու համար տվել է բավականին

ծավալուն նյութը: Հետազոտությունն իրականացվել է արդեն իշխատակված 15 պաշտոնները գրադաստող աշխատողների շրջանում: Հետազոտվողները պատասխանել են միայն այն հարցերին, որոնք վերաբերվել են նրանց և խուսափել են արձագանքել իրենց իրավասություններից դուրս գտնվող խնդիրներին: Ստորև ամփոփ ներկայացվում են հետագա վերլուծության հիմնական արդյունքներն ու դրանցից բխող եզրակացությունները:

1. Սահմանված 15 պաշտոնները ներկայացված և գրադաստությամբ դեղագործական ծերնարկություններից ընդամենը մի քանիսում, այն էլ՝ ոչ ամբողջությամբ: Առավել հաճախ մի քանի պաշտոնների պարտականությունները կենտրոնացվում են մեկի մեջ և հանձնարարվում մի մասնագետի: Իրականում դեկավար պաշտոն գրադաստող յուրաքանչյուր մասնագետ համատեղում է մի քանի պաշտոնների վերաբերվող պարտականությունների կատարումը: Դրա հիմնական պատճառը տեղական ծերնարկությունների համեմատաբար փոքր չափերն են: Նրանք արտադրում են դեղերի ոչ մեծ տեսականի՝ համեմատաբար ոչ մեծ քանակներով: Նման իրավիճակում այս ծերնարկություններին ծերնտու չէ (որոշ դեպքերում նույնիսկ անհմաստ է) բոլոր հիշատակված մասնագետների ներգրավումը:

Միաժամանակ պետք է հիշել, որ ծերնարկությունները զարգանում են և իրավիճակը արագ է փոփոխվում: Դեղագործական ծերնարկությունները պետք է պատրաստ լինեն կարծ ժամանակահատվածում որակյալ մասնագետներ ներգրավել/պատրաստել, վերջին պահին խնդրի առջև չկանգնելու համար: Այս առումով շատ օգտակար կարող են լինել այնպիսի օժանդակող կառույցները, որպիսիք են միությունները, տեխնիկական աջակցության ծրագրերը և այլն: Կարող է ստեղծվել մասնագետների վերաբերյալ տվյալների բազա, կազմակերպել կենտրոնացված վերապատրաստում, գործնական ուսուցում, իրականացվել փորձի փոխանակում և այլն:

2. Իրենց պարտականությունների վերաբերյալ աշխատողների իրազեկումը տարբեր ծերնարկություններում իրականացվում է տարբեր կանոնավորությամբ: Որոշ ծերնարկություններում աշխատողներին հիշեցվում է իրենց պարտականությունների մասին ամեն շաբաթ, մյուսներում այդ գործառույթը գրեթե մոռացված է: Նույնիսկ պարտականությունների պարզ քննարկումը անմիջական կամ ավելի բարձր դեկավարների հետ շատ անկանոն է կազմակերպված հաճախականությունը տատանվում է մեկ շաբաթից մինչև մեկ տարի ժամանակահատվածում: Որոշ ծերնարկություններում աշխատողները իրենց պարտականությունների մասին լսում են միայն մեկ անգամ՝ աշխատանքի ընդունման պահին:

Կարելի է եզրակացնել, որ տեղական դեղագործական ծերնարկությունները այս խնդրին առանձնապես ուշադրություն չեն դարձնում: Սա կարող է ունենալ օբյեկտիվ հիմքեր, սակայն կարող է նաև լինել խնդրի կարևորության ոչ այնքան ճշշտ ըմբռնման արդյունք: Երևոյթը ավելի խորը հասկանալու համար առանձին քննարկում կարելի է կազմակերպել, որի ընթացքում կարելի է տեղական ծերնարկությունների հետ քննարկել այս գործառույթի կանոնավոր իրականացման հնարավոր դրական արդյունքները:

3. Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքում ընտրվել են 15 կարևոր պաշտոններ, որոնցից ակնկալվում է կոմիտետ ֆունկցիաների և պարտականությունների կատարում: Այդ պարտականությունները ներկայացվել են հետազոտված աշխատողներին և նրանց առաջարկվել է գնահատել դրանց կարևորության աստիճանը: Աշխատողների կողմից կարևորվել են գրեթե բոլոր ներկայացված ֆունկցիաներն ու պարտականությունները: Որոշ գիտելիքներ և ունակություններ աշխատողները համարել են ոչ կարևոր, սակայն այստեղ առկա է որոշ սուբյեկտիվ մոտեցում:

Կարևորության վերաբերյալ գնահատականների մեծամասնությունը բաշխվել է «Հատ կարևոր» և «կարևոր» պատասխանների միջև: Սա կարևոր արդյունք է, քանի որ միջազգային լավագույն փորձի հավանական ներդրումը տեղական դեղագործական ձեռնարկություններում չի հանդիպի դիմադրության առկա անձնակազմի կողմից և կանցնի սահուն:

4. Ներկայացված ֆունկցիաների և պարտականությունների կիրառությունը տեղական դեղագործական ձեռնարկություններում իրականացվում է մասնակիորեն: Նեղ մասնագիտական պարտականությունների մոտ կեսը արդեն իսկ կիրառվում է տեղական ձեռնարկություններում: Հաշվի առնելով դեղագործական ձեռնարկությունների գարգացման պլանները, կարելի է ենթադրել, որ ներկայացված պարտականությունների ցանկը մոտ ապագայում զգալիորեն կավելանա:
5. Հետազոտված աշխատողների պատասխանները գրեթե միշտ հաստատվել են անմիջական դեկավարների կողմից: Ողջ հետազոտության ընթացքում կարծիքների ընդամենը մի քանի անհամապատասխանություն է գրանցվել: Տպավորություն է առաջանում, որ անմիջական դեկավարները հակված չեն եղել վիճարկել իրենց ենթականների պատասխանների ճշտությունը:
6. Հետազոտված աշխատողների կողմից գնահատվել են նաև տեղական դեղագործական ձեռնարկություններում միջազգային լավագույն փորձից հավաքված գիտելիքների և ունակությունների կարևորությունն ու կիրառությունը: Միաժամանակ բացահայտվել են նաև այդ գիտելիքների և ունակությունների բարելավման կարիքները: Հատկանշական է, որ աշխատողները առանձնահատուկ նշել են նեղ մասնագիտական ունակությունների կարևորությունը և առանձնապես չեն կարևորել անձնական հատկությունները, ինչպիսիք են առաջատարի ունակությունները, շփվելու և թիմային աշխատանքի հակվածությունը, համակարգչային գիտելիքները և այլն:

Հետազոտվածների նման մոտեցումն ընդհանուր առմամբ հասկանալի է. նրանք առավել հետաքրքրված են մասնագիտական հարցերում: Կազմակերպչական, կառավարման և մի շարք այլ «ժամանակակից» ունակություններն այնքան էլ չեն կարևորվում դեղագործական ձեռնարկությունների աշխատողների կողմից: Սա բավականին «պահպանողական» մոտեցում է. նման աշխատառը հնացած է և կարող է խոչընդոտել նորամուծություններին: Բարձր դեկավարությունը պետք է ուշադրություն դարձնի այս հարցերին, քանի որ հիշատակված «ժամանակակից» ունակություններն իրականում հնարավորություն են ընձեռում բարձրացնել աշխատանքի կազմակերպման արդյունավետությունը:

7. Հետազոտողները ներկայացրել են որակավորման բարձրացման իրենց կարիքները, սակայն նրանց մեծամասնությանը հարմար դասընթացների ձևաչափ չեն կարողացել ընտրել: Ըստ հիմնական պաշտոնների հետազոտված մասնագետների գերակշիռ մեծամասնությունը խիստ տարբեր ձևաչափեր է ընտրել պոտենցիալ դասընթացների համար: Այս առումով հավանաբար լրացրությունը աշխատանք պետք է իրականացվի դեղագործական ձեռնարկությունների դեկավարների հետ, որի արդյունքում կսահմանվեն հետազոտվողների համեմատաբար մեծ մասին հարմար վերապատրաստման դասընթացների ձևաչափերը:

## ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՆԲԱԿԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԴԵՂԱԳՈՐԾՎԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ

Ունակությունների և գիտելիքների անբակարարության հետազոտությունն իրականացվել է տեղական 8 դեղագործական ձեռնարկությունների աշխատողների շրջանում: Հետազոտության իրականացման համար կիրառվել է «հորիզոնական» մոտեցում, աշխատողները դասակարգվել են ըստ 15 կարևոր պաշտոնների և այդ խմբերից յուրաքանչյուրի մասով առանձին վերլուծություն է հրականացվել: Նման տարանջատումն անխուսափելի էր, քանի որ հետազոտված աշխատողների տարբեր խմբերն իրարից խիստ տարբերվում են իրենց պարտականություններով, իրականացրած ֆունկցիաներով, պահանջվող գիտելիքներով և ունակություններով և այլն: Հետազոտված աշխատողների բաշխվածքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

**Աղյուսակ 2 - Հետազոտված աշխատողների բաշխվածքն ըստ ձեռնարկությունների և պաշտոնների**

Ձեռնարկություն	Հետազոտվողների քանակը														
	Մարդաբանության մասնակիություն	Տնօւության մասնակիություն	Հայաստանական պատմության մասնակիություն	Հայաստանի պատմության մասնակիություն											
Արփիմեդ	1	1	1	1	1	2	2	1	1	1	1	1	1	1	16
Լիկվոր	1	1	1	1	1		1	1	1	1	1	1	1	1	13
Էսկուլապ					1	1	1	1	1	1	1	1	1		8
Երևանի քոֆ	1	1		1	1	2	2	1	1	1	1	1	1	1	15
Մեդիկալ-Հորիզոն				1	2	2	2	1	1	1		1	1	1	13
Վիտամաքս-Ե		1		1	1	2	2	1	1		1	1	1		12
Բիզոն-1	1		1	1	1	1		1	1	1					8
Լեյկո-Ալեքս	1	1	1	1	1	2	2	1	1	1					12
<b>Ընդամենը</b>	<b>5</b>	<b>5</b>	<b>4</b>	<b>7</b>	<b>9</b>	<b>12</b>	<b>12</b>	<b>8</b>	<b>8</b>	<b>7</b>	<b>5</b>	<b>6</b>	<b>5</b>	<b>4</b>	<b>97</b>

Մինչև հետազոտության արդյունքների վերջնական վերլուծությունն անհրաժեշտ է մի կարևոր վերապահում կատարել ստացված արդյունքների վերաբերյալ: Որոշ կոնկրետ հարցերի պարագայում հետազոտված աշխատողները հրաժարվել են որևէ պատասխան տալուց: Սա չի նշանակում, որ այդ հարցերին նրանք բացասական պատասխան են տվել. նրանք պարզապես հրաժարվել են պատասխանելուց այդ հարցերին: Վերլուծության ընթացքում հարցաթերերը չեն

լրամշակվել, հավաքված տեղեկատվությունը մնացել է անփոփոխ: Այդ է պատճառը, որ որոշ դեպքերում ստացված պատասխանների թիվը չի համընկնում պատասխանողների թվի հետ:

Ստորև ներկայացվում է գիտելիքների և ունակությունների անբավարարության հետազոտությունն ըստ 15 կարևոր պաշտոնների:

## Որակավորված անձ

Որակավորված անձի պաշտոնի առկայությունը դեղագործական ծերնարկություններում ՊԱԳ ստանդարտների պահանջ է հանդիսանում: Այս պաշտոնյան հանդիսանում է տվյալ ծերնարկության ամենաբարձր իրավասություններ ունեցող դեկավարներից մեկը: Որոշ դեպքերում կազորված Անձինք հանդես են գալիս նաև Որակի Հսկման կամ Արտադրության Ղեկավարի դերում: Փաստորեն համաձայն ՊԱԳ ստանդարտների, ողջ ծերնարկության գործունեության լիցենզավորումն իրականացվում է բացառապես նման մասնագետի առկայության պարագայում: Միաժամանակ պետք է գիտակցել, որ այս պաշտոնը չի նույնանում դեղագործական ծերնարկության տնօրենի կամ դեկավարի պաշտոնի հետ:

Հետազոտված տեղական դեղագործական ծերնարկություններից և ոչ մեկում Որակավորված անձ գրանցված չէ: Զնայած բոլոր հետազոտված ծերնարկությունների դեկավարները գիտակցում են նման մասնագետի առկայության անհրաժեշտություն, հետազոտվողների այս ցանկում որևէ աշխատող չի հայտնաբերվել:

## Որակի Հսկման Ղեկավար

### Հետազոտվողների նկարագիր

Հետազոտված 8 ծերնարկություններից միայն 5-ում են առկա նման պաշտոն գբաղեցնող մասնագետներ: Այդ մասնագետների բնութագրերը ներկայացված են Այլուսակ 3-ում: Բոլոր ներկայացված ծերնարկություններում մասնագետները իրենց աշխատանքը չեն համատեղում այլ պաշտոնների պարտականությունների կատարման հետ:

Հետազոտված 5 աշխատողներից 4-ն ունեն համապատասխան կրթություն: Մեկ մասնագետ ավարտել է ԵՊՀ Ռադիոֆիզիկայի ֆակուլտետը, սակայն հետազայում մասնակցել է Վերապատրաստման բազմաթիվ դասընթացների և սերտիֆիկացման կորսերի՝ տվյալ պաշտոնին ներկայացվող բոլոր պահանջներին համապատասխանելու համար:

### Այլուսակ 3 - Հետազոտվողների նկարագիրը

Զերնարկություն	Պաշտոնը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Աշխատանքային փորձը (տարի)
Արվիիմեդ	Որակի համակարգման բաժնի պատասխանատու	Ղեղագետ	Ինտերնատուրա	1
Լիկվոր	Որակի հսկման մենեջեր	Բիոֆիզիկոս	Մագիստրոս	5-8

Էսկուլապ	Որակի ապահովման մասնագետ	Ղեղագետ-քիմիկոս	Գիտությունների թեկնածու	1-3
Երևանի քոֆ	Որակի գօնվ փոխտնօրեն	Քիմիկոս	Բակալավր	ավելի քան 8
Վիտամաքս-Ե	Որակի գօնվ փոխտնօրեն	Ռադիոֆիզիկոս	Գիտությունների թեկնածու	3-5

Հետազոտված բոլոր աշխատողներն էլ իրենց պարտականությունները կատարելու համար բավարար մասնագիտական կրթություն են ստացել: Ըստ հետազոտված աշխատողների անմիջական դեկավարների՝ տվյալ պաշտոնը գրադեցնելու համար նույնիսկ ավելի պակաս կրթական մակարդակ (գիտական աստիճաններ) է (են) պահանջվում: Ընդհանուր առնամբ լիովին ընդունելի է նաև հետազոտված ձեռնարկությունների Որակի Հսկման Դեկավարների մասնագիտական փորձառությունը: Որոշ ձեռնարկություններում այս պաշտոնը գրադեցնողներն ունեն ընդամենը 1-2 տարվա փորձ: Սա այնքան էլ լավ չէ, սակայն ավելի լավ է, քան առանց Որակի Հսկման Դեկավարի աշխատելը: Առաջատար ձեռնարկությունները, ինչպիսիք են Լիկվորը և Վիտամաքս-Ե-ն, ներգրավել են շատ փորձառու մասնագետների:

### Պարտականություններ

Պարտականությունների ցանկը մշակվել է միջազգային լավագույն փորձի մանրամասն ուսումնասիրության հիման վրա: Որակի Հսկման տեղական մասնագետներին առաջարկվել է գնահատել յուրաքանչյուր ֆունկցիայի կարևորությունը և տեղական դեղագործական ձեռնարկություններում դրանց կիրառության աստիճանը:

### Այլուսակ 4 - Պարտականությունների կարևորությունը և կիրառության աստիճանը

Գործողություններ	Կարևորությունը					Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր	Այլ <sup>1</sup>	Ոչ	
Հաստատել կամ մերժել ելանյութերը, փաթեթավորման նյութերը, միջանկյալ և վերջնական արտադրանքները՝ ըստ դրանց սպեցիֆիկացիաների	3	1	0	0	3	2	
Գնահատել խնբաքանակների արձանագրությունները	4	1	0	0	5	0	
Երաշխավորել բոլոր անհրաժեշտ տեստերի/փորձարկումների կատարումը	3	1	0	0	3	2	
Հաստատել սպեցիֆիկացիաները, նմուշառնան հրահանգները, փորձարկման մեթոդները և որակի հսկման մյուս գործնրացները	3	2	0	0	4	1	

<sup>1</sup> Որոշ հետազոտվողներ պարզապես իրաժարվել են պատասխանելուց. կամ չեն ցանկացել գաղտնի տեղեկություններ հայտնել, կամ էլ պարզապես պատասխան չեն ունեցել

Հաստատել և դիտարկել յուրաքանչյուր պայմանագրային (outsourcing) անալիզը (Եթե այդպիսիք կան)	1	1	1	0	2	2
Ստորգել լաբորատորիայի միջոցները, շենքը և սարքավորումները	3	1	0	0	3	0
Երաշխավորել համապատասխան վալիդացիաների՝ ներառյալ անալիտիկ գործընթացների և հսկող սարքավորումների ճշգրտումների/տրամաչափման իրականացումը	3	1	0	0	3	1
Երաշխավորել աշխատակազմի համար պահանջվող նախնական և շարունակական դասընթացների իրականացումը և կարիքներին համապատասխանեցումը	3	2	0	0	4	1
Կառավարել Որակի փորձարկման լաբո- րատորիաների գործունեությունը (Եթե կան)	2	1	0	0	2	2
Վերանայել նոր արտադրանքի ներկայացման, մեթոդի վալիդացման, գործիքների վալիդացման փաստաթղթերը և թարմացնել փորձարկման ստանդարտները, փորձարկման մեթոդները, կայունության անալիտիկ արձանագրությունները և SOP-ը	3	2	0	0	5	0
Կապ պաշտպանել Որակի ՀԱԿՄԱՆ, տեխնոլոգիական, արտադրական և գոանցման բաժինների միջև	2	3	0	0	5	0
<b>Արտադրության Ղեկավարի հետ համատեղ իրականացվող գործառույթներ:</b>						
<b>Որակին առնչվող պարտականություններ</b>						
Հաստատել գրված գործընթացները և այլ փաստաթղթեր	3	2	0	0	5	0
Դիտարկել և հսկել արտադրական միջավայրը	3	2	0	0	5	0
Հսկել և պահպանել գործարանի հիգիենան	1	2	1	0	3	1
Գործընթացների վալիդացում և անալիտիկ սարքերի ճշգրտում/տրամաչափում	3	2	0	0	4	1
Դասընթացներ ներառյալ որակի ապահովման կիրառությունը /նշանակությունը և սկզբունքները	4	1	0	0	4	1
Նյութեր մատակարարների դիտարկում և հաստատում	1	2	0	0	3	1
Պայմանագրային արտադրողների (outsourcing) դիտարկում և հաստատում	1	1	1	0	1	3
Նյութերի և արտադրանքների պահման պայմանների որոշում և դիտարկում	5	0	0	0	5	0

Դեղերի արտադրության բնագավառում ուժակությունների և գիտելիքների կարիքների հետազոտություն	Ուժակությունների և գիտելիքների անհամապատասխանությունը
---	---

Ներգործնթացային ստուգումների իրականացում և գնահատում	4	1	0	0	5	0
Արձանագրությունների պահպանում	3	2	0	0	5	0
GMP (Արտադրական պատշաճ գործառույթների) պահանջներին համապատասխանեցում	4	1	0	0	5	0
Կատարել հսկողություն, հետազոտում և նմուշառում որպեսզի դիտարկվեն արտադրանքի որակի վրա ազդող գործոնները	4	0	1	0	4	1
GMP փաստաթղթավորման ձևերի կազմում	1	0	0	0	1	0
Մասնակցել արտադրական գործնթացների վերաբերող բոլոր քննարկումներին	0	1	0	0	0	1

Որակի Հակման դեկավարների կողմից առաջադրված գրեթե բոլոր ֆունկցիաներն ու պարտականությունները համարվել են «շատ կարևոր» կամ «կարևոր»: Սա նշանակում է, որ ներկայացված պարտականություններն լրիվությամբ ընդունվում և կարևորվում են տեղական մասնագետների կողմից և ապագայում հանգիստ կարող են ներդրվել տեղական ձեռնարկություններում (եթե դեռևս ներդրված չեն): Պարտականությունների կարևորության և կիրառության գնահատականների մեջ հստակ կորելացիա է նկատվում: Այն ֆունկցիաները, որոնք իսկապես կարևորվում են հետազոտվող աշխատողների կողմից, մեծամասնք արդեն իսկ ներդրված են և կիրառվում են: Հետազոտվող աշխատողների անմիջական դեկավարները հիմնականում կիսում են իրենց ենթականների կարծիքները. միայն եթեք ֆունկցիաների մասով են հետազոտվողների և նրանց անմիջական դեկավարների պատասխանները տարբերվել:

### Գիտելիքներ և ունակություններ

5 դեղագործական ձեռնարկությունների Որակի Հակման Դեկավարները կարծում են, որ իրենց կրթությունը բավարարում է վերը ներկայացված պարտականություններն իրականացնելու համար: Դրան զուգահեռ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա սահմանվել են այն գիտելիքները և ունակությունները, որոնք անհրաժեշտ են այդ պաշտոնները գրադարձնելու համար: Տեղական ձեռնարկությունների աշխատողները իրենց վերաբերմունքն են արտահայտել այդ բնութագրիչների կարևորության վերաբերյալ:

### Այլուսակ 5 - Գիտելիքների և ունակությունների կարևորությունը

Գիտելիքներ և ունակություններ	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանրապես ոչ կարևոր
Հայաստանի դեղագործական օրենսդրության և կարգավորման («Դեղերի մասին» ՀՀ օրենք, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք և այլն), GMP (Արտադրական պատշաճ գործունեության), շրջակա միջավայրի և այլ կարգավորող պահանջների մասին գիտելիքներ	4	1	0	0
GLP (Պատշաճ լաբորատոր գործունեության) և GMP (Պատշաճ Արտադրական գործունեության) և անվտանգության կանոնների	4	1	0	0

Իմացություն՝ ներառյալ տվյալ ոլորտի առանձնահատկությունները				
Գործիքների և մեթոդների վալիդացման գիտելիքներ	4	1	0	0
Ծարունակական սովորելու և անալիտիկ խնդիրների լուծման կարողություն կամ պատրաստակամություն	4	1	0	0
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	1	4	0	0
Համակարգչային ունակություններ	3	2	0	0
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	1	4	0	0
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	3	2	0	0

Միջազգային լավագույն փորձից ընտրված գիտելիքների և ունակությունների կարևորությունը հետազոտվող աշխատողների կողմից գնահատվել են որպես «շատ կարևոր» կամ «կարևոր»: ՊԱԳ ստանդարտների իմացությանը վերաբերվող գիտելիքները կրկին մեծապես կարևորվում են աշխատողների կողմից, ինչը միանշանակորեն հաստատում են նաև նրանց անմիջական դեկավարները:

Հետազոտվողների կողմից գնահատվել են նաև իրենց գիտելիքների և ունակությունների բարելավման կարիքները:

#### Այլուսակ 6 - Անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների առկայությունը և բարելավման կարիքը

Գիտելիքներ և ունակություններ	Առկայություն / Տիրապետում			Բարելավման կարիքը		
	Գերազանց	Լավ	Բավարար	Կա անհա- պաղ կարիք	Կա կարիք	Կարիք չկա
Հայաստանի դեղագործական օրենսդրության և կարգավորման («Դեղերի մասին» ՀՀ օրենք, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք և այլն), GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության), շրջակա միջավայրի և այլ կարգավորող պահանջների մասին գիտելիքներ	0	2	3	0	5	0
GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեության) և GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) և անվտանգության կանոնների իմացություն՝ ներառյալ տվյալ ոլորտի առանձնահատկությունները	0	4	1	0	5	0
Գործիքների և մեթոդների վալիդացման գիտելիքներ	0	1	4	0	5	0
Ծարունակական սովորելու և անալիտիկ խնդիրների լուծման կարողություն կամ պատրաստակամություն	1	4	0	0	1	4
Միաժամանակ բազմակի խնդիրների	0	4	1	0	1	4

լուծման ունակություն						
Համակարգչային ունակություններ	1	2	2	0	1	3
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	0	5	0	0	1	4
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	0	5	0	0	2	3

Գրեթե բոլոր հետազոտվողները կարծում են, որ իրենց գիտելիքները և ունակությունները բավարարում են իրենց պարտականություններն արդյունավետորեն իրականացնելու համար: Չնայած դրան, իրենց որակավորումը բարձրացնելու հնարավորություններից նրանք չեն հրաժարվում, սակայն չեն կարծում, որ այդ կարիքն անհապաղ է: Կատարվել է մեկ այլ հետաքրքիր դիտարկում ևս. հետազոտողների կարծիքով նրանք կարիք չունեն բարելավելու իրենց այսպես կոչված «ընդհանուր» գիտելիքները և ունակությունները՝ ինչպիսիք են շփնան, թիմային աշխատանքի ունակությունները, համակարգչային գիտելիքները և այլն: Այս պարագայում ևս անմիջական դեկավարները գրեթե լիովին համաձայն են իրենց ենթակաների հետ: Ստացված 64 պատասխաններից միայն 4-ի դեպքում են այդ պատասխանների միջև լուրջ տարբերություններ արձանագրվել:

Որակի Հսկման գրեթե բոլոր դեկավարների պնդմամբ իրենց ձեռնարկություններում կանոնավոր ձևով իրականացվում է իրենց պարտականությունների մասին աշխատողների իրազեկում: Միևնույն ժամանակ՝ այս կանոնավորությունը տարբեր ձեռնարկություններում խիստ տարբեր է և տատանվում է մեկ շաբաթից մինչև մեկ եռամյակ ժամանակահատվածում: Որոշ դեպքերում հետազոտվողներն ընդհանրապես հրաժարվել են պարտականությունների իրազեկման վերաբերյալ հարցին պատասխանելուց: Իրենց պարտականությունների վերաբերյալ նրանք տեղեկացվում են աշխատանքի ընդունման պահին և լրացուցիչ կարգադրություններ ստանում են ըստ անհրաժեշտության:

### Հարակից պահանջներ

Պահանջվող գիտելիքներից և ունակություններից բացի դեղագործական ձեռնարկությունների աշխատողներին առաջադրվում են այլ հարակից պահանջներ ևս: Այդ պահանջները որպես կանոն վերաբերվում են պոտենցիալ աշխատողների գիտելիքներին և ունակություններին: Հետազոտվողների պատասխանները այդ լրացուցիչ պահանջների վերաբերյալ ներկայացվում են ստորև բերված այլուսակում:

### Այլուսակ 7 - Հարակից պահանջների կարևորությունը և կիրառության աստիճանը

Պահանջներ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Համալսարանական կրթություն թեմային առնչվող գիտական ասպարեզներում	2	2	1	0	3	0
Նվազագույնը համալսարանական կրթություն քիմիայի բնագավառում, 8 և	2	0	1	0	2	0

ավելի տարվա անալիտիկ և մանրէաբանական դեղագործական փորձ						
Քիմիկական գիտությունների թեկանածու, 4 և ավելի տարվա անալիտիկ և մանրէաբանական դեղագործական փորձ	1	1	1	0	2	0
Աշխատանքային փորձ դեղագործական լաբորատորիայում անալիտիկ մեթոդների և գործիքների իմացությամբ	2	2	0	0	3	0
GMP ստանդարտներով և Գործողությունների Ստանդարտ Ընթացակարգերով աշխատելու փորձ	1	0	0	0	1	0

Այսուսակում ներկայացված ամենակարևոր տեղեկությունը նշված պահանջների կիրառության աստիճանն է. այն շատ բարձր է: Հետազոտվողները կարևորում են այդ պահանջների կիրառությունը, ինչը շատ կարևոր հանգամանք է:

### Դասընթացների կազմակերպումը

Վերը ներկայացված վերլուծության մեջ նշվել է, որ հետազոտվողները գտնում են, որ ունեն իրենց որակավորման բարձրացման որոշակի կարիք: Մեր կարծիքով որակավորման բարձրացման լավագույն եղանակներից մեկը դասընթացների մասնակցությունն է: Ցավոք հետազոտվողներն չեն ընտրել վերապատրաստման դասընթացների այնպիսի ձևաչափ, որը հարմար լինի նրանց մեջամասնության համար:

### Աղյուսակ 8 - Դասընթացների նախընտրելի ծևաչափերը

Ոեժիմը	Հարմար է	Հարմար չէ
Կեսօր	0	5
Մեկ ամբողջ օր	1	4
Մի քանի (2-3) օր	1	4
Մեկ շաբաթ	1	4
Մեկ շաբաթից ավել	0	5
Կանոնավոր	2	3

### Արտադրության Ղեկավար

#### Հետազոտվողների նկարագիրը

Հետազոտված բոլոր ծերնարկությունների կազմակերպչական կառուցվածքում կա Արտադրության Ղեկավարի կամ նմանատիպ համարժեք պաշտոն: Այս պաշտոնը գրադեցնող մասնագետները սովորաբար պատասխանատու են արտադրական գործընթացի կազմակերպման և անխափանության համար և հանդիսանում են ծերնարկության առանցքային ղեկավարներ: Հետազոտված աշխատողների նկարագրերը ներկայացված են ստորև բերված այսուսակում:

**Աղյուսակ 9 - Հետազոտվողների նկարագիրը**

Զեռնարկություն	Պաշտոնը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Աշխատանքային փորձը (տարի)
Արվիմներ	Արտադրության ղեկավար	Քիմիկոս	Մագիստրոս	3 - 5
Լիկոր	Արտադրության փոխտնօրեն	Բիոքիմիկոս	Մագիստրոս	ավելի քան 8
Էսկուլապ	Փոխտնօրեն	Շինարար- կոնսուրուկտոր	Բակալավր	ավելի քան 8
Երեւանի քՂՖ	Գլխավոր ինժեներ	Քիմիկոս	Գիտությունների թեկնածու	ավելի քան 8
Մեդիկալ-Հորիզոն	Արտադրական տնօրեն	Դեղագետ	Ինտերնատուրա	1 – 3
Վիտամաքս-Ե	Արտադրության ղեկավար	Մարզիչ- մանկավարժ	Մագիստրոս	5 - 8
Բիզոն-1	Տնօրեն	Ֆիզիկոս	Գիտությունների թեկնածու	ավելի քան 8
Լեյկո-Ալեքս	Տնօրեն	Տնտեսագետ	Մագիստրոս	5 - 8

Հետազոտված ձեռնարկություններից ոչ բոլորում են Արտադրության Ղեկավարների պաշտոնները զբաղեցնում մասնագետ քիմիկոսներ կամ դեղագործներ: Ինչպես երևում է աղյուսակից, այս պարտականությունները ներկայում իրականացվում են ամենատարբեր մասնագիտություններ ունեցող անձանց կողմից: Հատկանշական է, որ գրեթե բոլոր Արտադրությունների Ղեկավարներն ունեն գիտական աստիճաններ: Սա կարևոր հանգամանք է, քանզի որքան բարձր է կրթության մակարդակը, այնքան բարձր է գիտելիքների և ունակությունների տիրապետման աստիճանը:

Այս պաշտոնը զբաղեցնողների համար մեկ այլ կարևոր բնութագրիչ է հանդիսանում մասնագիտական փորձառությունը: Որքան երկար է զբաղեցնում կոմկրետ մասնագետը տվյալ պաշտոնը, այնքան լավ է տիրապետում դրա խնդիրներին և հնարավորություններին: Ներկայացված պարագայում Արտադրության Ղեկավարներն իրենց պաշտոնները զբաղեցնում են բավարար երկար ժամանակ:

**Պարտականություններ**

Միջազգային լավագույն փորձի հիման վրա Արտադրության Ղեկավարների համար մշակված պարտականությունների ցանկը բավականին երկար է և բազմակողմանի: Դա բնական է, քանի որ այս մասնագետներն առնչվում են դեղագործական ձեռնարկությունների գրեթե բոլոր ստորաբաժանումների աշխատանքի հետ և շատ հաճախ կառավարում այդ աշխատանքը՝ Որակի Հակառակ ղեկավարի հետ միասին: Սահմանված պարտականությունները, որոնց կարևորությունը և կիրառության աստիճանը գնահատել են հետազոտված Արտադրության Ղեկավարները, ներկայացվում են ստորև բերված աղյուսակում:

**Այլուսակ 10 - Պարտականությունների կարևորությունը և կիրառության աստիճանը**

Գործողություններ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանր ապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Ապահովել/երաշխավորել որ դեղերն արտադրվում և պահպում են ըստ համապատասխան փաստաթղթերի	5	3	0	0	7	1
Մշակել և հաստատել վտանգների շարունակական իջեցման ուղղույցներ	3	5	0	0	7	1
Արտադրության ամենօրյա կառավարում	5	3	0	0	8	0
Արտադրական գործողությունների հրահանգների հաստատում և դրանց ամբողջական ներդրման երաշխավորում	3	5	0	0	7	1
Արտադրական գործընթացների շարունակական կատարելագործման ապահովում	3	5	0	0	8	0
Երաշխավորել, որ արտադրական արձանագրությունները գնահատվել և ստորագրվել են նշանակված անձի կողմից մինչև դրանք կուղարկվեն Որակի Հսկման բաժին	6	1	1	0	7	1
Շենքի, տարածքի, սարքերի և արտադրամասի վիճակի ստուգում	5	3	0	0	8	0
Երաշխավորել, որ համապատասխան գործընթացի վալիդացիան և հսկող սարքերի ճշտումը (կալիբրացիա) իրականացվել ու արձանագրվել է, իսկ արձանագրությունները մատչելի են	4	2	2	0	6	2
Երաշխավորել, որ արտադրության անձնակազմի նախնական և շարունակական կրթությունն իրականացվում է և այն հարմարեցված է կարիքներին	1	6	1	0	6	2
Պատասխանատու լինել արտադրության անվտանգության, կանոնավորման և/կամ շրջակա միջավայրի համապատասխանեցման համար	4	4	0	0	7	1
Համագործակցություն հետևյալ բաժինների հետ՝	0	5	3	0	3	5
▪ <u>Հաճակարգեր</u> - պահպանել և նորացնել արտադրության համակարգչային համակարգը և ցանցային կապերը	2	6	0	0	7	1

<u>Ժառայություն</u> - աջակցել նոր սարքի ձևավորմանը և ձեռքբերմանը կամ սարքի վերածևափոխմանը՝ ապահովելով նոր արտադրանքի հրահանգներ և կատարելագործման շարունակական գործառույթներ						
▪ <u>Վայիդացիա/տեխսպասարկում</u> - օժանդակել գործարանի փորձարկումներին, նոր դեղերի հետ կապված գործունեությանը և առկա և նոր գործընթացների, սարքավորումների և էլեկտրոնային համակարգերի վայիդացմանը	3	5	0	0	5	2
Իրականացնել դասընթացներ նոր տեխնոլոգիաների, նոր արտադրանքների և նոր օժանդակ գործընթացների համար	0	7	1	0	1	6
<b>Որակի ՀԱԿԱՆ Պատասխանատուի հետ համատեղ իրականացվող գործառույթներ:</b>						
<b>Որակին առնչվող պարտականություններ</b>						
Գորված գործընթացների և այլ փաստաթղթերի հաստատում	4	4	0	0	8	0
Արտադրական միջավայրի դիտարկում և հսկում	5	3	0	0	7	1
Գործարանի հիգիենայի հսկում և պահպանում	4	4	0	0	8	0
Գործընթացների վայիդացում և անալիտիկ սարքերի ճշգրտում/տրամաչափում	3	5	0	0	7	1
Դասընթացներ ներառյալ որակի ապահովման կիրառությունը/նշանակությունը և սկզբունքները	1	7	0	0	5	3
Նյութեր մատակարարների դիտարկում և հաստատում	3	5	0	0	4	4
Պայմանագրային արտադրողների դիտարկում և հաստատում (Եթե կան)	1	3	1	0	3	3
Նյութերի և արտադրանքների պահպանման պայմանների որոշում և դիտարկում	5	3	0	0	8	0
Ներգործընթացային ստուգումների իրականացում և գնահատում	2	5	1	0	5	2
Արձանագրությունների պահպանում	4	3	1	0	3	3
GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) պահանջներին համապատասխանության մոնիթորինգ	4	3	1	0	5	1
Կատարել ամսելկան պլանավորում և հսկել որանց ժամանակին կատարմանը	1	0	0	0	1	0

Շատ դրական է հանդիսանում այն երևոյթը, որ հետազոտվողները միջազգային պրակտիկայում Արտադրության Ղեկավարների իրականացրած պարտականությունների մեջ նաև համարում են «շատ կարևոր» կամ «կարևոր»: Բացառություն են կազմում այնպիսի պարտականություններ, որպիսիք են «արտադրության համակարգային համակարգի և ցանցային կապերի պահպանումը» և «նոր տեխնոլոգիաների, նոր արտադրանքների և նոր օժանդակ գործընթացների համար դասընթացների իրականացում»:

Ներկայացված պարտականությունների կիրառության վերաբերյալ պատասխանները որոշակիորեն հաստատում են այդ պարտականությունների կարևորության վերաբերյալ պատասխանների օբյեկտիվությունը: Հետազոտված գրեթե բոլոր ձեռնարկություններում արդեն իսկ կիրառվում են ներկայացված պարտականությունների մեջ նաև: Չնայած դրան՝ որոշ պարտականությունները դեռևս չեն ներդրվել և մոտ ապագայում ևս դրանց կիրառությունը կասկածելի է: Դրա համար կան մի քանի պատճառներ. տվյալ ձեռնարկության ընդունված աշխատելազգը, հայկական շուկայի առանձնահատկությունները, համապատասխան ստորաբաժանումների բացակայությունը դեղագործական ձեռնարկություններում և այլն:

### Գիտելիքներ և ունակություններ

Արտադրության Ղեկավարի պաշտոն զբաղեցնող մասնագետներին առաջարդովով գիտելիքների և ունակությունների պահանջները որոշակիորեն ավելի խիստ են, քան մյուս ղեկավարների դեպքում: Միաժամանակ կարևոր է ոչ թե հատուկ գիտելիքների և ունակությունների երկար ցանկի առկայությունը, այլ մասնագետների կողմից դրանց տիրապետելու աստիճանը: Ընդհանուր պատկերը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 11 - Գիտելիքների և ունակությունների կարևորությունը

Գիտելիքներ և ունակություններ	Շատ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանրապես ոչ կարևոր
Հայաստանի դեղագործական օրենսդրության և կարգավորման («Ղեղերի մասին» ՀՀ օրենք, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք և այլն), GMP (Արտադրական պատշաճ գործումներության), շրջակա միջավայրի և այլ կարգավորող պահանջների մասին գիտելիքներ	4	4	0	0
Բաղադրակազմների և տարբեր գործընթացների տեխնոլոգիաների աշխատանքային գիտելիքներ	4	4	0	0
Բոլոր արտադրական գործողությունների, սարքավորումների և գործողությունների Ստանդարտ Ընթացակարգերի ինացություն	2	6	0	0
Կանոնավոր գործընթացներից և համակարգերից դրւու ծագած հիմնախնդիների ճիշտ լուծումներ ապահովելու կարողություն	3	5	0	0
Տարբեր տեխնոլոգիաների հարմարեցման և կառավարման ընդունակություն	2	4	2	0
Արտադրական, ինժեներական և գործողությունների ծառայողներին արդյունավետ առաջնորդություն/ղեկավարում ապահովելու կարողություն	3	3	1	0
Գլխավոր ղեկավարների, ավագ տեխնիկական մասնագետների, ղեկավարների, սպառողների և մատակարարների հետ շփման կարողություն	2	4	2	0

Դեղերի արտադրության բնագավառում ունակությունների և գիտելիքների կարիքների հետազոտություն	Ունակությունների և գիտելիքների անհամապատասխանությունը
---	---

Կազմակերպության ներսում և արտաքին հարաբերություններում				
Գործընթացների օպտիմալացման ձգտում և կարողություն	2	4	2	0
Համապատասխան բաժնի աշխատակազմին սովորեցնելու, խորհրդատվական, կառավարման և ուղղորդման կարողություն	2	4	2	0
Համապատասխան հարցերով պետական կարգավորող մարմինների հետ շփման և բանակցության կարողություն	1	4	3	0
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	3	4	1	0
Համակարգչային ունակություններ	1	5	2	0
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	0	8	0	0
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	4	4	0	0

Ներկայացված գիտելիքները և ունակությունները գնահատելիս հետազոտվողները կրկին կարևորել են դրանց մեջ մասը: «Ոչ այնքան կարևոր» պատասխանը ստացվել է դեպքերի ընդամենը 15%-ի համար: Կրկին ՊԱԳ ստանդարտներին վերաբերվող և ներ մասնագիտական գիտելիքները և ունակությունները ամենակարևորն են համարվել հետազոտվողների համար: Կրկին պատասխանների մեջ մասը հաստատվել է հետազոտվողների անմիջական դեկավարների կողմից:

Ներկայացված գիտելիքների և ունակությունների առկայություն, ինչպես նաև դրանց բարելավման կարիքների վերաբերյալ հետազոտվողների գնահատականները ներկայացվում են ստորև բերված աղյուսակում:

#### Աղյուսակ 12 - Անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների առկայությունը և բարելավման կարիքը

Գիտելիքներ և ունակություններ	Առկայություն / Տիրապետում			Բարելավման կարիքը		
	Գերազանց	Լավ	Բավարար	Կաանհապաղ կարիք	Կա կարիք	Կարիք չկա
Հայաստանի դեղագործական օրենսդրության և կարգավորման («Դեղերի մասին» ՀՀ օրենք, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք և այլն), GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության), շրջակա միջավայրի և այլ կարգավորող պահանջների մասին գիտելիքներ	1	4	2	2	6	0
Բաղադրակազմների և տարրեր գործընթացների տեխնոլոգիաների աշխատանքային գիտելիքներ	4	2	2	0	7	1
Բոլոր արտադրական գործողությունների, սարքավորումների և գործողությունների Ստանդարտ Ընթացակարգերի իմացություն	4	2	2	0	6	2
Կանոնավոր գործընթացներից և համակարգերից դուրս ծագած հիմնախնդիրների ճիշտ լուծումներ ապահովելու կարողություն	2	3	2	0	6	2
Տարրեր տեխնոլոգիաների հարմարեցման և	3	3	1	0	7	1

Կառավարման ընդունակություն						
Արտադրական, ինժեներական և գործողությունների ծառայողներին արդյունավետ առաջնորդություն/հեկավարում ապահովելու կարողություն	2	3	3	0	6	2
Գլխավոր դեկավարների, ավագ տեխնիկական մասնագետների, դեկավարների, սպառողների և մատուկարարների հետ շփման կարողություն կազմակերպության ներսում և արտաքին հարաբերություններում	4	3	1	0	4	4
Գործընթացների օպտիմիզացիայի ձգուում և կարողություն	1	6	1	0	6	2
Համապատասխան բաժնի աշխատակազմին սովորեցնելու, խորհրդատվական, կառավարման և ուղղորդման կարողություն	2	4	1	0	4	4
Համապատասխան հարցերով պետական կարգավորող մարմինների հետ շփման և բանակցության կարողություն	1	3	3	0	4	4
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	3	3	2	0	3	5
Համակարգչային ունակություններ	3	2	2	1	4	3
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	2	5	1	1	3	4
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	3	4	1	1	3	4

Այսուսակում ներկայացված տեղեկատվությունից կարելի է եզրակացնել, որ հետազոտված աշխատողները բավականին վստահ են իրենց մասնագիտական գիտելիքների և ունակությունների վրա: Նրանք իսկապես կարծում են, որ ի վհճակի են արդյունավետորեն իրականացնել իրենց պարտականությունները՝ ունենալով գիտելիքների և ունակությունների ներկա ռեսուրսը: Միաժամանակ նրանք դեմ չեն էլ ավելի բարձրացնել իրենց որակավորման աստիճանը՝ չնայած ոչ այնքան խանդավառորեն: Որոշ «ընդհանուր» գիտելիքների և ունակությունների պարագայում նրանք նույնիսկ բարելավումների կարիք չեն տեսնում:

Առկա գիտելիքների և ունակությունների հաջող կիրառության և մասնագիտական պարտականությունների արդյունավետ կատարման համար մասնագետները նախ և առաջ պետք է լրիվությամբ տեղեկացված լինեն իրենց պարտականությունների մասին: Պարտականությունների վերաբերյալ տեղեկացման կիրառվող գործողությունների վերաբերյալ ստացվել են բավականին տարբեր պատասխաններ: 3 հետազոտվողներ ընդհանրապես չեն պատասխանել, իսկ մյուս հետազոտվողների պարագայում իրազեկման հաճախականությունը տատանվում է մեկ շաբաթց մեկ տարի ժամանակահատվածում: Այսինքն որևէ կանոնավոր պրակտիկա, որն ընդհանուր լինի բոլոր ձեռնարկությունների համար, չկա: Միաժամանակ նշվում է նաև, որ պարտականությունների վերաբերյալ աշխատողների իրազեկման գործառույթը հիմնականում նորմալ իրականացվում է միայն աշխատանքի ընդունման պահին:

### Հարակից պահանջներ

Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքում սահմանվել են նաև այն հարակից պահանջները, որոնք առաջարկվում են Արտադրության Ղեկավարի պաշտոնին հավակնող մասնագետներին: Դրանց կարևորության և կիրառության գնահատականը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

#### Աղյուսակ 13 - Հարակից պահանջների կարևորությունը և կիրառության աստիճանը

Պահանջներ	Կարևորությունը				Կիրառություն	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Ղեղագիտական կրթություն և 4-8 տարիի աշխատանքային փորձ	2	1	4	1	2	4
Գիտությունների թեկնածու և 2-6 տարիի աշխատանքային փորձ	1	1	4	2	4	2
Ղեկավարման աշխատանքային փորձ	4	4	0	0	5	1
Ղեղագործական արտադրության գործողությունների մասնակցություն	1	5	1	1	5	1
Համապատասխան արտադրական գործնթացների փորձ	1	4	3	0	6	0
Շաբաթ-կիրակի և հավելյալ ժամեր աշխատելու պատրաստակամություն	1	7	0	0	5	1
Արագ կողմնորոշվելու և ճիշտ որոշումներ կայացնելու ունակություն	1	0	0	0	1	0
Այլ նմանատիպ արտադրությունների հետ համագործակցություն	2	0	0	0	1	0

Տեղական մասնագետները ներկայացված հարակից պահանջներին արձագանքել են բավականին հավասարակշռված ձևով: Մեծամասնությամբ նրանք այդ պահանջները գնահատել են որպես «կարևոր»: Նրանց համար կրթությունն ու աշխատանքային փորձառությունն այնքան կարևոր չեն, որքան բուն աշխատանքի ժամանակ աշխատողների ձկունությունն ու պատրաստակամությունը: Ներկայացված պայմանների կարևորությունը հաստատվում է նաև դրանց կիրառության վերաբերյալ գնահատականներով: Այն պայմանները, որոնք խկացեն կարևորություն են, արդեն խկ ներդրված են:

### Դասընթացների կազմակերպումը

Հետազոտվողների վերաբերմունքը վերապատրաստման դասընթացներին շարունակում է խնդրահարուց մնալ: Ստեղծվում է այն տպավորությունը, որ ռեսպոնզենտները չեն գնահատում վերապատրաստումները: Վերաբերմունքը զարմացնող է, քանզի վերապատրաստումները որակավորման բարձրացման և նոր հմտությունների ձեռքբերման հնարավորություն են ընձեռում: Ռեսպոնզենտների նման բացասական վերաբերմունքը կարող է բացատրվել նախկինում նրանց մասնակցած վերապատրաստումների ոչ բավարար օգտակարությամբ:

**Այլուսակ 14 - Դասընթացների նախընտրելի ծնաշափերը**

Ռեժիմը	Հարմար է	Հարմար չէ
Կեսօր	1	7
Մեկ ամբողջ օր	3	5
Մի քանի (2-3) օր	1	7
Մեկ շաբաթ	2	6
Մեկ շաբաթից ավել	2	6
Կանոնավոր	3	5

Տարբեր ձեռնարկությունների աշխատողներ ընտրում են տարբեր ծնաշափեր, ինչը կարող է խնդիրներ առաջացնել հետազոյւմ դասընթացներ կազմակերպելու ժամանակ: Ինչևկե, այս խնդիրը ենթակա է հետազա մանրամասն քննարկման և վերլուծության: Առանց նման հստակեցումների հնարավոր չէ կոնկրետ միջոցառումներ այլանավորել:

**Տեխնոլոգիական Հարցերի Պատասխանատու**

**Հետազոտվողների նկարագիրը**

Հետազոտված գրեթե բոլոր դեղագորական ձեռնարկություններում կա Տեխնոլոգիական Հարցերով Պատասխանատուի պաշտոն: Այս մասնագետի հիմնական պարտականությունը տեխնոլոգիական սարքավորումների սահուն և անխափան աշխատանքի ապահովումն է: Դեղագործական ձեռնարկություններում այս մասնագետը սովորաբար աշխատում է Արտադրության կամ Որակի Հսկման Ղեկավարի անմիջական վերահսկողության ներքո: Ստորև բերված այդուսակում ներկայացվում են տեղական ձեռնարկություններում Տեխնոլոգիական Հարցերի Պատասխանատուի պաշտոն գրադեցնող մասնագետների բնութագրերը:

**Այլուսակ 15 - Հետազոտվողների նկարագիրը**

Ձեռնարկություն	Պաշտոնը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Աշխատանքային փորձը (տարի)
Արվիհմեդ	Դեղագետ	Դեղագետ	Ինտերնատուրա	3 - 5
Լիկվոր	Ինժեներ	Ուղիղութեանիկ	Միջնակարգ մասնագիտական	3 - 5
Էսկուլապ	Տեխնոլոգ	Դեղագետ	Մագիստրոս	1 - 3
Երեւանի ՔԴՖ	Արտադրամասի պետ	Բիոքիմիկոս	Մագիստրոս	ավելի քան 8
Մեդիկալ-Հորիզոն	Տեխնիկական վերազինման բաժնի վարիչ	Մեխանիկ	Միջնակարգ մասնագիտական	1
Վիտամաքս-Ե	Գլխավոր տեխնոլոգ	Ինժեներ - մեխանիկ	Մագիստրոս	5 - 8
Բիզոն-1	Տեխնոլոգ	Քիմիկոս	Մագիստրոս	5 - 8
Լեյկո-Ալեքս	Տեխնիկական վերահսկման բաժնի պետ	Քիմիկոս - օրգանիկ	Գիտությունների թեկնածու	1

Հետազոտված աշխատողների մեծամասնության ներ մասնագիտացումը սերտորեն առնչվում է քիմիայի և ճարտարագիտության տարբեր ոլորտների հետ: Սա բնական է, այս մասնագետը զբաղվում է տեխնոլոգիական սարքավորումների կիրառմամբ քիմիական պրոցեսների կառավարմամբ: Կարելի է հետևություն անել, որ բոլոր հետազոտված աշխատողների մասնագիտություններն էլ համապատասխանում են նրանց զբաղեցրած պաշտոններին:

Գիտական աստիճանների առումով պատկերը մի փոքր ավելի խայտարդետ է: Հայաստանում լավագույն ձեռնարկություններից մեկում՝ Լիկվորում, այդ պաշտոնը արդեն 5 տարի զբաղեցնում է միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող մասնագետ: Կան նաև բավականին բարձր գիտական աստիճան ունեցող մասնագետներ: Ընդհանուր հետևությունն այն է, որ չնայած գիտական աստիճանի առկայությունը դրական գործոն է համարվում, սակայն այն միակ կարևոր չի հանդիսանում:

### Պարտականություններ

Ինչպես արդեն նշվել է, Տեխնոլոգիական Հարցերով Պատասխանատուի պարտականություններն առնչվում են տեխնոլոգիական գործընթացների իրականացմանը և սարքավորումների շահագործմանը: Միաժամանակ այս մասնագետները որոշակի ֆունկցիաներ են իրականացնում արտաքին կառույցների (գործընկերների, վերահսկողների) հետ համագործակցության դաշտում: Միջազգային լավագույն փորձից ընտրվել են Տեխնոլոգիական Հարցերով Պատասխանատուների կողմից իրականացվող պարտականություններ, որոնց կարևորության և կիրառության վերաբերյալ գնահատական են տվյալ տեղական մասնագետները:

Այլուսակ 16 - Պարտականությունների կարևորությունը և կիրառության աստիճանը

Գործողություններ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Շատ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանր ապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Իրականացնել աշխատանք համաձայն Գործողությունների Ստանդարտ Ընթացակարգերին, GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) և հաստատված անվտանգության կանոնների	5	3	0	0	8	0
Ելնելով ներկա և գալիք կարիքների՝ մշակել գործընթացների տեխնոլոգիաների ռազմավարություն, կատարել գնահատում և ընտրություն	1	6	0	1	5	3
Կրել պատասխանատվություն սարքավորումների գնահատման, կարգավորիչ փորձարկման և ընտրության հանար	2	3	3	0	6	2
Լրացնել-ավարտել գործընթացների ինժեներական ծրագրավորումը	0	5	0	2	4	4
Ստեղծել գործողությունների տեխնիկական ստանդարտներ և Գործողությունների Ստանդարտ Ընթացակարգեր	3	4	1	0	6	2

Մշակել և պահպանել գործողության նկարագրություններ, գործողության հատվածների հոսքագծերի սխեմաներ, սպեցիֆիկացիաներ և այլ գործողության/սարքավորման փաստաթղթեր՝ ինժեներանախագծային, կատարողական և պետական/ներքին կարգավորիչ ստուգումների համար	1	5	1	1	4	4
Պետական կարգավորող մարմինների հետ առանձնային /իհմնական շփումներ գործողությունների ինժեներական և տեխնոլոգիական հարցերով	1	3	3	1	2	6
Կրել պատասխանատվություն գործողությունների շարունակական կատարելագործման համար	0	8	0	0	6	2
Կրել պատասխանատվություն գործողությունների ծեսափոխման և որակի բարձրացման համար	2	6	0	0	7	1

Պարտականությունների ներկայացված ցանկը շատ երկար չէ, և դրանցից բոլորն ել շատ կարևոր են: Եզակի պարտականություններ են հետազոտվող աշխատողների կողմից գնահատվել որպես «ընդհանրապես ոչ կարևոր»: Տեղական ձեռնարկությունների կողմից հատկապես կարևորվել են ՊԱԳ ստանդարտների, տեխնոլոգիական և ռազմավարական խնդիրների հետ կապված պարտականությունները: Հետազոտվող աշխատողների կողմից կարևորված պարտականությունների մեջ մասը կիրառվում են տեղական ձեռնարկություններում: Պետք է նշել նաև, որ հետազոտված աշխատողների անմիջական դեկավարների մեջ մասը կրկին լիովին համաձայնվել է իրենց ենթականների կարծիքների հետ:

Աշխատողներին իրենց պարտականությունների վերաբերյալ տեղեկացման ընդհանուր ձև կրկին չկա: Որոշ ձեռնարկություններում աշխատողները տեղեկացվում են շաբաթական հաճախականությամբ, մյուսներում՝ տարին մեկ անգամ: Կրկին կան աշխատողներ, որոնք տեղեկացվել են ընդամենը մեկ անգամ աշխատանքի անցնելու պահին: Այս իրավիճակում պետք է հաշվի առնել, որ ընդհանուր համակարգի բացակայությունը առանձին ձեռնարկությունների համար բացառական բնութագրիչ չի հանդիսանում: Աշխատանքային պարտականությունների մասին իրագեկունքը յուրաքանչյուր ձեռնարկության համար ներքին խնդիր է հանդիսանում և չի կարող բնադրատվել առանց լուրջ հիմքերի:

### Գիտելիքներ և ունակություններ

Մասնագիտական պարտականություններն իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների պարագայում պատկերը նմանատիպ է: Միջազգային լավագույն փորձից ընտրված գիտելիքները և ունակությունները դրական արձագանք են գտել տեղական դեղագործական ձեռնարկությունների աշխատողների շրջանում: Վերջիններիս գնահատականները այդ գիտելիքների և ունակությունների կարևորության վերաբերյալ ներկայացվում են ստորև բերված աղյուսակում:

**Աղյուսակ 17 - Գիտելիքների և ունակությունների կարևորությունը**

Գիտելիքներ և ունակություններ	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր
GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) պահանջների վերաբերյալ գիտելիքներ՝ ներառյալ տվյալ ոլորտի առանձնահատկությունները	5	3	0	0
Գիտելիքներ և փորձ գործողության տեխնոլոգիական նորարարության, արտակարգ իրավիճակների և տեղադրության ասպարեզում	3	5	0	0
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	1	6	1	0
Համակարգչային ունակություններ	1	3	4	0
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	1	6	1	0
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	2	6	0	0

Ընդհանուր առնամբ հետազոտված աշխատողների պատասխանները սպասելի էին: Կրկին անհասկանալի է համակարգչային գիտելիքների կարևորության վերաբերյալ հետազոտված աշխատողների ունեցած կարծիքը. մեծ մասը գտնում է, որ այդ ունակություններն այնքան էլ կարևոր չեն: Որքան էլ տարօրինակ է, հետազոտված աշխատողների անմիջական դեկավարները կիսում են իրենց ենթականների այս կարծիքը: Նման վերաբերմունքի միակ խելամիտ բացատրությունը կարող է համարվել այն, որ ձեռնարկությունների մեծ մասում տեխնոլոգիական սարքավորումները շատ նոր չեն և երբեմն շահագործվում են մեխանիկական եղանակով: Այդ պարագայում համակարգչային գիտելիքներն այնքան էլ կիառելի չեն արտադրական գործընթացում:

Չնայած որ համակրգչային ունակություններն առանձնապես չեն կարևորվում տեղական դեղագործական ձեռնարկությունների Տեխնոլոգիական Հարցերով Պատասխանատուի պաշտոնը զբաղեցնող մասնագետների կողմից, այնուամենայնիվ նրանք հակված են բարելավելու իրենց ունակություններն այդ բնագավառում և ոչ միայն:

**Աղյուսակ 18 - Անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների արկայությունը և բարելավման կարիքը**

Գիտելիքներ և ունակություններ	Արկայություն / Տիրապետում			Բարելավման կարիքը		
	Գերա- զանց	Լավ	Բավա- րար	Կա անհա- պաղ կարիք	Կա կարիք	Կարիք չկա
GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) պահանջների վերաբերյալ գիտելիքներ՝ ներառյալ տվյալ ոլորտի առանձնահատկությունները	0	6	2	2	5	1
Գիտելիքներ և փորձ գործողության տեխնոլոգիական նորարարության, արտակարգ իրավիճակների և տեղադրության ասպարեզում	0	4	4	1	6	1
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	0	5	3	0	5	3

Դեղերի արտադրության բնագավառում ունակությունների և գիտելիքների կարիքների հետազոտություն	Ունակությունների և գիտելիքների անհամապատասխանությունը
--	--

Համակարգչային ունակություններ	0	2	5	1	7	0
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	0	7	1	0	3	5
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	0	7	1	0	4	4

Հետազոտվողների կողմից նշվել են բարելավման ենթակա մի շարք գիտելիքներ և ունակություններ, ինչպիսիք են ՊԱԳ ստանդարտներով կոնկրետ գործողությունների իրականացումը, նորարարությունները, տարբեր նեղ տեխնոլոգիական խնդիրների լուծումները և այլն:

### Հարակից պահանջներ

Վերը հիշատակված գիտելիքներից և ունակություններից զատ Տեխնոլոգիական Հարցերով Պատասխանատուններին սովորաբար առաջադրվում են որոշ այլ հարակից պահանջներ, որոնք անհրաժեշտ են պարտականությունների արդյունավետ իրականացման համար: Սեր պարագայում առաջարկվող հարակից պահանջները ներկայացվում են ստորև բերված այլուսակում:

### Այլուսակ 19 - Հարակից պահանջների կարևորությունը և կիրառության աստիճանը

Պահանջներ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Դեղագիտական / քիմիա-ինժեներական կրթություն կամ այդ գիտությունների թեկնածու	1	3	4	0	2	4
Դեղագործական բնագավառում դեկավարնան գործունեության իրականացման փորձ	0	5	3	0	3	3
Պետական կարգավորման մարմինների հետ աշխատելու փորձ	1	4	3	0	2	4

Հետազոտողներն առաջարկված հիմնականում կրթական մակարդակին և փորձառությանը վերաբերվող պահանջներին, արձագանքել են բավականին ոչ միանշանակորեն: Նոյնը վերաբերվում է նաև այդ պահանջների կիրառությանը տեղական դեղագործական ձեռնարկություններում. կարծիքները կրկին կիսվել են: Ձեռնարկություններում կան ներդրված գործընթացներ և դրանք զգալիորեն տարբերվում են միջազգային փորձում ընդունվածներից: Կտրուկ փոփոխությունները կարող են ինչպես զգալիորեն բարելավել վիճակը, այնպես էլ պարզապես կիրառելի չլինել տեղական ձեռնարկություններում:

### Դասընթացների կազմակերպումը

Տեխնոլոգիական Հարցերով Պատասխանատունների դեպքում ևս վերապատրաստման դասընթացների հարմար տարբերակի ընտրության հետ խնդիրներ կան: Ամենահարմար տարբերակը մեկ շաբաթ տևողությամբ դասընթացներն են, որոնք սակայն հարմար են հետազոտվողների ընդունենք կեսի համար:

**Աղյուսակ 20 - Դասընթացների նախընտրելի ձևաչափերը**

Ռեժիմը	Հարմար է	Հարմար չէ
Կեսօր	2	6
Մեկ ամբողջ օր	1	7
Մի քանի (2-3) օր	3	5
Մեկ շաբաթ	4	4
Մեկ շաբաթից ավել	1	7
Կանոնավոր	2	5

Ինչևիցե, դասընթացները հանդիսանում են որակավորման բարձրացման լավագույն եղանակը և հետագա աշխատանք պետք է իրականացվի հետազոտված աշխատողների հետ որևէ հարմար ձևաչափ ընտրելու համար:

**Լաբորատորիայի Վարիչ**

**Հետազոտվողների նկարագիրը**

Հետազոտված 8 դեղագործական ձեռնարկություններից Լաբորատորիայի Վարիչներ կան 6-ում: Այս մասնագետները պատասխանատու են իրենց ձեռնարկություններում լաբորատորիաների անխափան և արդյունավետ աշխատանքի համար: Հետազոտված ձեռնարկություններում Լաբորատորիայի Վարիչի պաշտոնը զբաղեցնող աշխատողների բնութագրերը ներկայացվում են ստորև բերված աղյուսակում:

**Աղյուսակ 21 - Հետազոտվողների նկարագիրը**

Ձեռնարկություն	Պաշտոնը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Աշխատանքային փորձը (տարի)
Արվիմներ	Որակի հսկման լաբորատորիայի վարիչ	Քիմիկոս	Մագիստրոս	5 - 8
Լիկվոր	Որակի հսկման լաբորատորիայի վարիչ	Ինժեներ, քիմիկոս, տեխնոլոգ	Մագիստրոս	3 - 5
Էսկուլապ	Լաբորատորիայի վարիչ	Քիմիկոս - դեղաբան, պրովիզոր	Բակալավր	3 - 5
Երեւանի քաղաք	Որակի հարցով փոխտնօրեն	Քիմիկոս	Մագիստրոս	5 - 8
Մեղիկալ-Հորիզոն	Որակի հսկման բաժնի վարիչ	Քիոֆիզիկոս	Գիտությունների թեկնածու	3 - 5
Վիտամաքս-Ե	Գլխավոր մասնագետ	Քիմիկոս - օրգանիկ	Գիտությունների թեկնածու	5 - 8

Հետազոտված գրեթե բոլոր աշխատողները իրենց ձեռնարկություններում դեկավար պաշտոններ են զբաղեցնում և իրականացնում են լաբորատոր վերահսկողության պարտականություններ: Որոշ ձեռնարկություններում նրանց ֆունկցիաները համատեղվում են Որակի Հսկման Ղեկավարի ֆունկցիաների հետ. դա հիմնականում կախված է ձեռնարկության և նրա արտադրանքի ծավալներից: Հետազոտված բոլոր աշխատողներն ել համապատասխան ոլորտների ներ

մասնագետներ են հանդիսանում: Իրենց կրթության բավարարության վերաբերյալ հարցին բոլոր հետազոտվողներն էլ տվել են դրական պատասխաններ: Նրանցից բոլորն ունեն առնվազն բարձրագույն կրթություն. մեծ մասը՝ գիտական կոչումներ: Պատկերն ամբողջանում է բավականին երկար աշխատանքային փորձով՝ 5 տարի և ավել:

### Պարտականություններ

Ինչպես արդեն նշվել է, Լաբորատորիայի Վարիչի պարտականություններն ընդհանուր առմանք կարող են սահմանվել որպես լաբորատորիայի և կից ստորաբաժանումների աշխատանքի կազմակերպում և վերահսկողություն, ինչպես նաև ներ մասնագիտական հարցերի լուծում (ՊԱԳ ստանդարտներ, փաստաթղթերի պահպանում, վալիդացման և կալիբրացման գործնթացներ, սարքավորումների վերանորոգում և այլն): Միջազգային լավագույն փորձով հաստատված պարտականությունների առավել մանրամասն ցանկը նկարագրված է ստորև բերված այլուսակում:

Աղյուսակ 22 - Պարտականությունների կարևորությունը և կիրառության աստիճանը

Գործողություններ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանր ապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Հումքի և միջանկյալ նյութերի, վերջնական արտադրանքի փորձարկումների և քիմիական ու այլ անալիզների անցկացում	6	0	0	0	5	1
Միջանկյալ նյութերի և վերջնական արտադրանքի վերլուծություն, կայունության որոշում և վալիդացիայի իրականացում	5	1	0	0	5	1
Փորձարկումներ իրականացնող և այլ աջակցող անձնակազմի ղեկավարում	3	3	0	0	5	1
Փորձարկումների ժամանակ ստացված տվյալների գնահատում և ստացված արդյունքների հիման վրա նմուշների ընդունման կամ մերժման առաջարկությունների կատարում	6	0	0	0	6	0
Արձանագրությունների կազմում, արտադրողականության բարձրացման ծրագրերի նշակում, պաշարների ճշգրիտ հաշվառում, վերապատրաստման նյութերի պատրաստում	0	6	0	0	2	4
Լաբորատորիայի համապատասխանեցում GMP պահանջներին և ձեռնարկության գործընթացներին: Հումքերի և դեղերի փորձարկման ապահովում ըստ սպեցիֆիկացիաների/նկարագրերի և մեթոդոլոգիաների	4	2	0	0	6	0
Համապատասխան գործիքների և այլ	1	4	1	0	4	2

լաբորատոր սարքավորումների վերանորոգում և պահպանում						
Աշխատանքային անվտանգ պայմանների ապահովում	3	2	1	0	5	1
Գործիքային վերլուծության զարգացումների վերաբերյալ տեղեկացվածություն	0	5	1	0	3	3
Սարքավորումների և գործողությունների անվտանգ պահպանան ապահովում	3	2	1	0	5	1
Վերլուծաբանների (լաբորանտների) կողմից կատարված աշխատանքի հաստատում: Վալիդացիայի և կալիբրացիայի հաշվետվությունների հաստատում:	3	1	1	1	3	3
Գործողությունների Ստանդարտ Ընթացակարգերի, Հատուկ Վերապատրաստման Մոդուլների, Վերահսկողության գործընթացների լրամշակում	1	3	1	1	3	3
Անձնակազմի վերապատրաստման իրականացում	2	4	0	0	5	1
Լաբորատորիայի ներսում լաբորատոր հետազոտությունների ղեկավարում	4	1	1	0	4	2
Լաբորատոր սարքավորումների գնումների կառավարում	1	4	1	0	2	4
Աջակցություն ներքին և արտաքին առողջապահության աշխատանքներին	0	6	0	0	1	5

Այսուսակում ներկայացված պարտականություններն ու ֆունկցիաներն իրականացվում են արտերկրյա առաջատար դեղագործական ծերնարկություններում և համարվում են միջազգային լավագույն փորձ: Ներկայացված պարտականությունների գերակշիռ մեծամասնությունը տեղական մասնագետների գնահատմամբ հանդիսանում է «շատ կարևոր» կամ «կարևոր»: Բացի կարևորության գնահատումից նրանք հաստատում են նաև դրանց մի զգալի մասի կիրառությունը տեղական ծերնարկություններում: Միաժամանակ կան ֆունկցիաներ (աջակցություն իրականացվող առողջապահությունների, գրառումների իրականացում և պահպանում, արտադրողականության բարձրացման միջոցառումների անցկացում, գնումների վերահսկողություն և այլն), որոնք դեռևս բավականին հազվադեպ են կիրառվում տեղական ծերնարկություններում: Լաբորատորիայի Վարիչների պատասխանները գրեթե լրիվությամբ հաստատվել են նրանց անմիջական ղեկավարների կողմից:

Լաբորատորիայի Վարիչների պարագայում ևս պարտականությունների մասին իրազեկումների ընդհանուր համակարգ գոյություն չունի. ամեն ծերնարկություն այս խնդիրը լուծում է յուրովի: Այս պարագայում իրազեկման հաճախականությունը բավականին մեծ է. այն տարբերվում է մեկ շաբաթից մեկ ամիս ժամանակահատվածում: Կա մի կարևոր առանձնահատկություն. պարտականությունների փոփոխությունները որպես կանոն կատարվում են բանավոր, այդ փոփոխությունները հիմնականում չեն արձանագրվում փաստաթղթորեն:

### Գիտելիքներ և ունակություններ

Վերը ներկայացված պարտականությունների ճիշտ և արդյունավետ իրականացման համար Լաբորատորիայի Վարիչի պաշտոնը զբաղեցնող մասնագետները պետք է ունենան որոշակի գիտելիքներ և տիրապետեն կոնկրետ ունակությունների: Մեծամասամբ այս գիտելիքները և ունակությունները ստացվում են բարձրագույն ուսումնական հաստատություններում, սակայն փոքր դեր չի խաղում նաև գործնական փորձառությունը: Բոլոր հետազոտված աշխատողներն եւ բավարարված են իրենց կրթական մակարդակով: Ստորև բերված աղյուսակում ներկայացվում են այն գիտելիքները և ունակությունները, որոնք անհրաժեշտ են Լաբորատորիայի Վարիչի պարտականությունների իրականացման համար:

Աղյուսակ 23 - Գիտելիքների և ունակությունների կարևորությունը

Գիտելիքներ և ունակություններ	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր
Հայաստանի դեղագործության վերաբերյալ օրենսդրության («Ղեղերի մասին» ՀՀ օրենք, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք և այլն), Շրջակա միջավայրի պաշտպանության եւ այլ պահանջների իմացություն	0	5	1	0
GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեության), GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) և Անվտանգության գործընթացների իմացություն	4	2	0	0
Գործիքների և մեթոդների վալիդացիայի իմացություն	3	3	0	0
Միջանձային շիման և դեկավարման ունակություններ	2	3	1	0
Անընդհատ սովորելու հակվածություն և վերլուծական խնդիրներ լուծելու ունակություն	4	2	0	0
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	2	4	0	0
Համակարգչային ունակություններ	1	4	1	0
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	1	5	0	0
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	3	2	1	0

Հետազոտված աշխատողների կողմից գրեթե բոլոր գիտելիքները և ունակությունները քիչ թե շատ կարևորվել են: Հատկապես մեծ կարևորություն է տրվել ՊԱԳ և ՊԼԳ ստանդարտների և գործառույթների իմացությանը, դրանց կիրառման ունակություններին, և ընդհանուր որակավորման բարձրացման հնարավորություններին:

Տեղական դեղագործական ձեռնարկությունների աշխատողների գիտելիքների և ունակությունների առկայության գնահատումը նպատակ ունի բացահայտել դրանց բարելավման կարիքները և հնարավորությունները: Որակավորման հնարավոր բարձրացումը Լաբորատորիայի Վարիչներին թույլ կտա առավել արդյունավետորեն իրականացնել իրենց պարտականությունները:

**Աղյուսակ 24 - Անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների առկայությունը և բարելավման կարիքը**

Գիտելիքներ և ունակություններ	Առկայություն / Տիրապետում			Բարելավման կարիքը		
	Գերազանց	Լավ	Բավարար	Կաանհապաղ կարիք	Կա կարիք	Կարիք չկա
Հայաստանի դեղագործության վերաբերյալ օրենսդրության («Ղեղերի մասին» ՀՀ օրենք, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք և այլն), Շրջակա միջավայրի պաշտպանության և այլ պահանջների իմացություն	0	4	2	0	4	2
GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեության), GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) և Անվտանգության գործընթացների իմացություն	1	5	0	0	5	1
Գործիքների և մեթոդների վալիդացիայի իմացություն	0	5	1	0	5	1
Միջանձային շփման և դեկավարման ունակություններ	2	4	0	0	0	6
Անընդհատ սովորելու հակվածություն և վերլուծական խնդիրներ լուծելու ունակություն	3	3	0	0	2	4
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	1	4	1	0	1	5
Համակարգչային ունակություններ	0	3	3	0	5	1
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	2	3	1	0	0	6
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	2	3	1	0	3	3

Ինչպես և նախորդ դեպքերում, ՊԱԳ և ՊԼԳ ստանդարտների ու գործառույթների, ինչպես նաև նեղ մասնագիտական խնդիրների տիրապետումը հետազոտվողների կողմից հատկապես առանձնացվել է, և այդ ուղղություններով որակավորման բարձրացման պահանջ է ներկայացվել: Կրկին ընդհանուր և կազմակերպչական ունակությունների բարելավման կարիք չի ներկայացվել:

### Հարակից պահանջներ

Միջազգային պրակտիկայում Լաբորատորիայի Վարիչի պաշտոնը ստանձնելու և համապատասխան պարտականություններն արդյունավետորեն իրականացնելու համար աշխատողները պետք է բավարարեն նաև որոշ հարակից պահանջների: Դրանք հիմնականում վերաբերվում են մասնագետների կրթական մակարդակին և փորձառությամբ:

**Այլուսակ 25 - Հարակից պահանջների կարևորությունը և կիրառության աստիճանը**

Պահանջներ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Չնդիան- րաբես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Համալսարանական մասնագիտական կրթություն (դիպլոմ) ձանաշված գիտական հաստատությունում	3	3	0	0	5	1
Արևվագն բակալավրի գիտական աստիճան քիմիայի և հարակից բնագավառներում, 8+ տարիների վերլուծական և մանրէաբանական փորձ դեղագործական ոլորտում	1	5	0	0	5	1
Քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 4+ տարիների վերլուծական և մանրէաբանական փորձ դեղագործական ոլորտում	0	3	2	1	4	2
Դեղագործական լաբորատորիայում աշխատելու փորձ, վերլուծության մեթոդների և լաբորատոր գործիքների իմացություն	4	2	0	0	6	0

Ինչպես երևում է այլուսակից, հետազոտվողները հիմնականում համաձայնվել են միջազգային լավագույն փորձի հետ: Միայն մեկ «ընդհանրապես կարևոր չէ» պատասխան է ստացվել. Ավելին, ներկայացված հարակից պահանջները լայնորեն կիրառվում են նաև տեղական դեղագործական ձեռնարկություններում: Հետազոտվողների կարծիքները հաստատել են նաև նրանց անմիջական դեկավարները:

**Դասընթացների կազմակերպումը**

Լաբորատորիայի Վարիչները ևս չեն ընտրել մեծամասնության համար հարմար վերապատրաստման դասընթացների ձևաչափ: Հետազոտվողների պատասխանները բաշխվել են գորեթե հավասարաչափ:

**Այլուսակ 26 - Դասընթացների նախընտրելի ձևաչափերը**

Ռեժիմը	Հարմար է	Հարմար չէ
Կեսօր	2	4
Մեկ ամբողջ օր	2	4
Մի քանի (2-3) օր	0	6
Մեկ շաբաթ	2	4
Մեկ շաբաթից ավել	1	5
Կանոնավոր	1	4

## Գրանցումների Մասնագետ

### Հետազոտվողների նկարագիրը

Հետազոտված ձեռնարկություններում Գրանցումների Մասնագետի պարտականություններն իրականացվում են տարբեր մասնագետների կողմից, որոնք այդ պարտականություններին զուգահեռ կատարում են նաև այլ ֆունկցիաներ: Բացառապես գրանցման խնդիրներով զբաղվող մասնագետներ առկա են հետազոտված 8 ձեռնարկություններից միայն 2-ում:

Այլուսակ 27 - Հետազոտվողների նկարագիրը

Ձեռնարկություն	Պաշտոնը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Աշխատանքային փորձը (տարի)
Արվիմներ	Գրանցման բաժնի մասնագետ	Ղեղագետ	Ինտերնատուրա	ավելի քան 8
Լիկվոր	Գրանցման բաժնի վարիչ	Պրովիզոր	Մագիստրոս	3 – 5
Երեւանի քոֆ	Գլխավոր ինժեներ	Քիմիկոս	Գիտությունների թեկնածու	ավելի քան 8
Մեդիկալ-Հորիզոն	Փոխտնօրեն	Ղեղագետ	Օրդինատոր	ավելի քան 8
Վիտամաքս-Ե	Բժշկական ներկայացուցիչ	Բժիշկ - ռադիոլոգ	Օրդինատոր	1 – 3
Բիզոն-1	Տնօրեն	Ֆիզիկոս	Գիտությունների թեկնածու	ավելի քան 8
Լեյկո-Ալեքս	Տնօրեն	Տնտեսագետ	Մագիստրոս	5 - 8

Հետազոտված ձեռնարկությունների մեջամասնությունը գրանցումների մասնագետի պաշտոնի համար ներգրավել են համապատասխան մասնագիտություններ ունեցող աշխատողների: Բացառություն են համդիսանում 2 տեղական դեղագործական ձեռնարկություններ, որտեղ Գրանցումների Մասնագետների պարտականություններն իրականացվում են այդ ձեռնարկությունների տնօրենների կողմից: Այդ իրավիճակը երկար չի կարող շարունակվել, քանի որ զարգացման ընթանուր պայմաններում աշխատանքի ծավալն ավելանալու է և ձեռնարկությունները ստիպված կլինեն հատուկ մասնագետներ ներգրավել:

Հետազոտված բոլոր աշխատողներն ունեն բարձրագույն կրթություն և մոտ ապագայում բոլորն էլ կունենան գիտական աստիճաններ: Կրթական նման մակարդակը հետազոտվողների կարծիքով միանգամայն բավարար է իրենց մասնագիտական պարտականությունները հաջողությամբ իրականացնելու համար: Միաժամանակ կրթական գործընթացում ստացված գիտելիքները և ձեռք բերված ունակությունները մեծապես լրացվել են գործնական փորձառությամբ: Գրեթե բոլոր հետազոտվողներն էլ ունեն բավականին երկար աշխատանքային փորձառություն:

### Պարտականություններ

Գրանցումների Մասնագետի պաշտոնը զբաղեցնող մասնագետների պարտականությունները հիմնականում հանգում են արտաքին վերահսկող մարմինների հետ համագործակցության

համակարգմանը, ինչպես նաև օրենսդրական/կարգավորող դաշտի փոփոխությունների մոնիթորինգին, արձանագրությանը և կյանքի կոչելուն իրենց ձեռնարկություններում:

**Այլուսակ 28 - Պարտականությունների կարևորությունը և կիրառության աստիճանը**

Գործողություններ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանր ապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Փաստաթղթերի պատրաստում և ներկայացում պետական կարգավորող մարմիններին, նրանց հետ հարաբերությունների հաստատում և պահպանում	6	1	0	0	4	0
Փաստաթղթերի ամբողջականության և պետական կարգավորող մարմինների պահանջներին համապատասխանության ապահովում	5	2	0	0	4	0
Պետական կարգավորող մարմիններից ստացվող փաստաթղթերի հետազոտում	5	2	0	0	4	0
Ներքին այլ բաժիններից ստացվող փաստաթղթերի ուսումնասիրություն և գնահատում	4	3	0	0	4	0
Այլ բաժիններին կարգավորման փաստաթղթերի և պահանջների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում	1	6	0	0	3	1
Մասնակցություն ձեռնարկության արտադրանքի և գործունեության վրա ազդող կարգավորող ուղեցույցների վերլուծությանը	3	4	0	0	3	1
Կարգավորման առկա և գալիք փաստաթղթերի դիտարկում, վերլուծություն և խորհրդատվություն:	3	4	0	0	4	0
Ստուգումների և առողիտների աշխատանքների կոռորդինացում	1	6	0	0	3	1

Հետազոտվողների պատասխանների վերլուծությունը բավականին տպավորիչ արդյունքներ է տվել: Հետազոտվողները լրիվությամբ կարևորել են վերը ներկայացված պարտականությունների ցանկը: Ստացվել են բացառապես Ծառ կարևոր և Կարևոր գնահատականներ: Բացի այդ, տեղական դեղագործական ձեռնարկությունների հետազոտված աշխատողները ներկայումս կատարում են թվարկված գրեթե բոլոր պարտականությունները: Նշված պարտականությունների կարևորության բարձր աստիճանը հավաստել են նաև հետազոտվողների անմիջական դեկավարները:

Հետազոտվողների մեծամասնությունը նշել է, որ իրենց պարտականությունների մասին նրանց հիշեցվում է ամեն շաբաթ, կամ առնվազն ամսական մեկ անգամ: Այսինքն տեղական ձեռնարկությունները որոշակիորեն կարևորում են Գրանցումների Սամագետների աշխատանքը և փորձում են կանոնավոր ձևով ուղղորդել նրանց գործողությունները:

### Գիտելիքներ և ունակություններ

Գրանցումների Սամագետների պարտականություններն իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքները ունակություններն ուսումնասիրվել են միջազգային լավագույն փորձի հիման վրա: Դրանք ներկայացված են ստորև բերված այլուսակում:

#### Այլուսակ 29 - Գիտելիքների և ունակությունների կարևորությունը

Գիտելիքներ և ունակություններ	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր
Հայաստանի և այլ երկրների (ուր արտահանվում է ձեռնարկության արտադրանքը) կարգավորման պահանջների իմացություն (ներառյալ դեղերի գրանցման գործընթացները)	5	2	0	0
Միջազգային ուղեցույցների իմացություն	4	3	0	0
Բարդ իրավիճակներում կարգավորման պահանջներին ձեռնարկության գործունեությունը գնահատելու, վերլուծելու եւ համապատասխանեցնելու ունակություն	3	4	0	0
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	2	4	1	0
Համակարգչային ունակություններ	1	6	0	0
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	1	6	0	0
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	3	3	1	0

Հետազոտվողների կողմից կրկին բավականին բարձր գնահատական է տրվել ներկայացված գիտելիքների և ունակությունների կարևորությանը: Հատուկ շեշտադրություն է կատարվել կարգավորման միջավայրի իմացությանը և միջազգային ուղեցույցների վերաբերյալ գիտելիքներին: Կրկին անձնական և կազմակերպչական ունակություններն ամենաքիչն են կարևորվել հետազոտվողների կողմից: Հետազոտված դեղագործական ձեռնարկությունների կարծիքները հաստատվել են նրանց անմիջական դեկավարների կողմից, թեև «շատ կարևոր» և «կարևոր» պատասխանների համամասնությունը մի փոքր տարբերվում է:

Հետազոտված աշխատողները գնահատել են նաև նշված գիտելիքների և ունակությունների առկայությունը և ներկայացրել են դրանց բարելավման իրենց կարիքները:

**Աղյուսակ 30 - Անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների առկայությունը և բարելավման կարիքը**

Գիտելիքներ և ունակություններ	Առկայություն / Տիրապետում			Բարելավման կարիքը		
	Գերազանց	Լավ	Բավարար	Կաանհապաղ կարիք	Կա կարիք	Կարիք չկա
Հայաստանի և այլ երկրների (ուր արտահանվում է ձեռնարկության արտադրանքը) կարգավորման պահանջների իմացություն (ներառյալ դեղերի գրանցման գործընթացները)	2	2	2	3	4	0
Միջազգային ուղեցույցների իմացություն	1	1	3	1	6	0
Բարդ իրավիճակներում վերահսկողության պահանջներին ձեռնարկության գործունեությունը գնահատելու, վերլուծելու եւ համապատասխանեցնելու ունակություն	0	4	2	0	7	0
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	2	2	2	0	4	3
Համակարգչային ունակություններ	0	5	2	0	5	2
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	1	4	2	0	3	4
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	3	2	2	0	4	3

Իրենց պատասխաններում հետազոտված աշխատողները բավականին համեստ են մնացել: Նրանց մեծամասնությունը նշված գիտելիքների և ունակությունների տիրապետման աստիճանը գնահատել է որպես «ցավ» և հայտնել է, որ ունի որակավորման բարելավման կարիք: Հետազոտված մասնագետների կողմից հատկապես կարևորվում է կարգավորման միջավայրի իմացությունը, և նրանք կարծում են, որ այս գիտելիքների բարելավման անհապաղ կարիք ունեն իրենք: Հետազոտված աշխատողների անմիջական դեկավարները ոչ բոլոր դեպքերում են համաձայնվել գիտելիքների և ունակությունների տիրապետման աստիճանի և դրանց բարելավման կարիքների վերաբերյալ աշխատողների տված գնահատականների հետ: Անհամաձայնությունները հատկապես արտահայտվել են վերջին դեպքում:

#### *Հարակից պահանջներ*

Վերը ներկայացված գիտելիքներին և ունակություններին զուգահեռ գրանցումների մասնագետներին առաջադրվում են նաև որոշ հարակից պահանջներ: Ինչպես և նախորդ պաշտոնների դեպքում, դրանք ևս վերաբերվում են աշխատողների կրթական մակարդակին և մասնագիտական փորձառությանը:

**Այլուսակ 31 - Հարակից պահանջների կարևորությունը և կիրառության աստիճանը**

Պահանջներ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րաբես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Դեղագործության, Թիմիայի, Դեղագիտության և հարակից բնագավառներում բարձրագույն կրթություն	5	2	0	0	3	1
3+ տարիների աշխատանքային փորձ դեղերի գրանցման և վերագրանցման բնագավառներում	3	2	1	0	3	1

Հարակից պահանջներին տրված աշխատողների գնահատականները շատ հստակ են: Երկու պահանջներն էլ միանշանակորեն կարևորվել են հետազոտվողների կողմից, չնայած դրանց կիրառության աստիճանը տեղական ձեռնարկություններում բավականին ցածր է: Անմիջական դեկավարներից ևս ստացվել են նմանատիպ պատասխաններ: Նման իրավիճակում կարելի է ենթադրել, որ նշված հարակից պահանջների կիրառությունը տեղական դեղագործական ձեռնարկություններում ընդամենը ժամանակի խնդիր է:

**Դասընթացների կազմակերպումը**

Վերապատրաստման դասընթացների ձևաչափի ընտրությունը կրկին դժվար է:

**Այլուսակ 32 - Դասընթացների նախընտրելի ձևաչափերը**

Ուժինը	Հարմար է	Հարմար չէ
Կեսօր	1	6
Մեկ ամբողջ օր	3	4
Մի քանի (2-3) օր	2	5
Մեկ շաբաթ	2	5
Մեկ շաբաթից ավել	0	7
Կանոնավոր	2	5

Ամենահարմար ձևաչափի համարվել 1 օրամոց դասընթացը, սակայն ընդամենը 3 ձեռնարկություն է համաձայնվել դրան, մնացած ձևաչափերին համաձայնություն են տվել ավելի պակաս թվով աշխատողներ:

## Արտադրող Օպերատոր

### Հետազոտվողների նկարագիրը

Արտադրող օպերատորներն անմիջականորեն ներգրավված են տարբեր դեղերի արտադրության (սինթեզի) գործընթացներում: Զնայած այս պաշտոնը զբաղեցնող մասնագետներին առաջադրվող պահանջներն այնքան էլ խիստ չեն դեկավար անձնակազմին առաջադրվող պահանջների համեմատ, Արտադրող Օպերատորները համարվում են դեղագործական ձեռնարկությունների կազմակերպչական կառուցվածքի կարևորագույն օղակներից մեկը: Տեղական դեղագործական

ձեռնարկություններում Արտադրող Օպերատորի պաշտոն զբաղեցնող մասնագետների բնութագիրը ներկայացված է ստորև բերված այլուսակում:

### Այլուսակ 33 - Հետազոտվողների նկարագիրը

Ձեռնարկություն	Պաշտոնը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Աշխատանքային փորձը (տարի)
Արփիմեր	Օպերատոր	Պրովիզոր	Ինտերնատուրա	1
Արփիմեր	Դեղագործ-օպերատոր	Պրովիզոր-դեղագետ	Ինտերնատուրա	1
Էսկուլապ	Արտադրամասի աշխատանքների և աշխատողների կանոնակարգող	Մանկաբարձուիի	Միջնակարգ մասնագիտական	3 – 5
Երեւանի ՔԴՖ	Տեխնոլոգ	Աքրոքիմիկոս	Մագիստրոս	5 - 8
Երեւանի ՔԴՖ	Վարպետ	Ապրանքագետ	Միջնակարգ մասնագիտական	ավելի քան 8
Մեդիկալ-Հորիզոն	Արտադրող օպերատոր	Դաշնակահար	Միջնակարգ մասնագիտական	1
Մեդիկալ-Հորիզոն	Արտադրող օպերատոր	N/A	N/A	1
Վիտամաքս-Ե	Արտադրող օպերատոր	N/A	N/A	1 - 3
Վիտամաքս-Ե	Արտադրող օպերատոր	Տուրիստական բիզնեսի կառավարում	Մագիստրոս	1 - 3
Բիզոն-1	Արտադրող օպերատոր	Քիմիկոս	Մագիստրոս	ավելի քան 8
Լեյկո-Ալեքս	Կտրող և մաքրող	N/A	N/A	1
Լեյկո-Ալեքս	Հաշվապահ	Տնտեսագետ	Բակալավր	1

Հետազոտված բոլոր դեղագործական ձեռնարկություններում աշխատում են Արտադրող Օպերատորներ: Այս մասնագետներն իրականացնում են բավականին կրնկրետ գործողություններ. նրանց համար մի քանի պաշտոնների պարտականություններ համատեղելը խոչոր ձեռնարկություններում գործեթ անհնար է: Արտադրող Օպերատորների պարտականությունները կարող են զգալիորեն տարբերվել տվյալ մասնագետի կողմից արտադրվող դեղաձևերի տեսակներից (լուծույթներ, դեղահաբեր, քսուկներ և այլն) կախված:

Տեղական ձեռնարկությունների փորձից դատելով՝ Արտադրող Օպերատորների պարտականություններն իրականացնելու համար հատուկ մասնագիտական կրթությունն այնքան էլ պարտադիր չէ<sup>2</sup>: Այս երևույթը կարող է բացատրվել իրականացվող գործողությունների տեխնիկական բնույթով: Այդ է պատճառը, որ նույնիսկ միջնակարգ (ոչ միջնակարգ մասնագիտական) կրթություն ունեցող աշխատողներն ի վիճակի են աշխատել այս պաշտոնում: Նույն դատողությունները կարելի է անել նաև աշխատանքային փորձի վերաբերյալ: 1-2 ամիսը տեղական դեղագործական ձեռնարկությունների սկզբակ աշխատողներին բավարարում է

<sup>2</sup> Զնայած դրան Արտադրող Օպերատորների պարտականությունների մեջ մտնում է նաև դեղների սինթեզը, ինչը պարտադիր ձևով է իրականացվի համապատասխան կրթություն ունեցող աշխատողի կողմից

Արտադրող Օպերատորի պարտականություններն ընթացնելու և հաջողությամբ իրականացնելու համար:

Հետազոտված աշխատողների անմիջական ղեկավարները բողոքում են, որ այս պաշտոնում կադրերի հոսունության աստիճանը բավականին բարձր է: Աշխատանքի ընդունման պահին Արտադրող Օպերատորների պահանջներն առանձնապես բարձր չեն լինում, քանի որ նրանք այդ պահին առանձնապես աչքի չեն ընկնում իրենց կրթությամբ և որակավորումներով: Սակայն ժամանակի ընթացքում, բարձրացնելով իրենց որակավորումը և որոշակի փորձ ձեռք բերելով, այս մասնագետները սկսում են ավելի բարձր վարձատրություն պահանջել: Ծատ դեպքերում դեղագործական ձեռնարկություններն ի վհճակի չեն լինում բավարարել նրանց պահանջները:

### Պարտականություններ

Չնայած նշվեց, որ Արտադրող Օպերատորների պարտականությունները որոշակի տեխնիկական բնույթ ունեն, այնուամենայնիվ դրանց իրականացումը ևս բավականին պատասխանատու գործընթաց է: Այս աշխատողների պարտականությունները բավականին տարբեր են՝ սկսած ՊԱԳ ստանդարտները պաշտպանելուց, վերջացրած սարքավորումների մաքրման և պահպանման գործողություններով: Իրականում այս պարտականություններն իրականացնելու համար բավականին հետևողական մոտեցում պետք է ունենալ:

Ալյուսակ 34 - Պարտականությունների կարևորությունը և կիրառության աստիճանը

Գործողություններ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Շատ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանր ապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Իրականացնել GMP-ով (Պատշաճ Արտադրական Գործունեություն), Գործողությունների Ստանդարտ Ընթացակարգերով և անվտանգության հաստատված կանոներով սահմանված արտադրության տարբեր գործողություններ	9	3	0	0	11	1
Իրականացնել իրեն հանձնված սարքավորումների շահագործման և սպասարկման պարտականություններ	8	3	0	1	11	1
Անմիջապես հաղորդել ղեկավարությանը ստանդարտներից շեղման յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ	9	3	0	0	12	0
Լրացնել և վերանայել խմբաքանակի արձանագրությունները: Խնդիրների հայտնաբերման դեպքում անմիջապես հաղորդել ղեկավարությանը	8	4	0	0	12	0
Աշխատել արտադրության գրաֆիկին հանապատասխան և ապահովել բոլոր փաստաթղթերի ճշգրիտ, ընթացնելի և ժամանակին լրացումը ու պահել	5	7	0	0	11	1

արձանագրությունները ինչպես պահանջվում է						
Ստերիլ մասի օպերատորները պետք է ունենան ասեպտիկ վարքագծի, խողովակային լցումների (ներառյալ հոսքագծի միջամտության) իմացություն, սարքավորումների դիտարկման բազային գիտելիքներ և իրականացնեն ստերիլ մասում նմուշառում	7	4	0	0	8	4
Իրականացնել միջամկյալ ու վերջնական նյութերի տեսողական և ֆիզիկական ստուգումներ	8	4	0	0	11	1
Հետևելով խմբաքանակին և գործողությունների Ստանդարտ Ընթացակարգերի հրահանգներին իրականացնել միջամկյալ և վերջնական արտադրանքի նմուշառում: Մանկներ և հանձննել նմուշերը համապատասխան վայրեր (լաբորատորիա և այլն)	9	3	0	0	8	4
Աշխատանքային օրվա վերջում մաքրել սարքավորումները և արտադրության հարմարանքները՝ հատկապես ասեպտիկ տարածքները	9	3	0	0	10	2
Իրականացնել լցման և փաթեթավորման սարքավորումների մոնտաժում, փորձարկում, ապամոնտաժում և սանիտացիա	1	10	1	0	8	4
Տեղյակ լինել աշխատանքին առնչվող վտանգներին	8	4	0	0	11	1
Կատարել արտադրական գործողությունների, գործընթացների և որակի շարունակական կատարելագործում	6	6	0	0	10	2
Իրականացնել գույքի հսկման և կարգավորման գործունեություն	7	4	1	0	10	2
Վարժ կերպով իրականացնել դեղերի լցարկման, ստուգման և փաթեթավորման աշխատանքները	7	4	0	1	10	2
Աջակցել տեխնիկական աշխատակազմին կանխարգելիչ գործողություններ իրականացնելիս	3	9	0	0	10	2

Վերը ներկայացված պարտականություններն ընտրվել են միջազգային լավագույն փորձի  
ուսումնասիրության արդյունքում: Հետազոտվող աշխատողները կարևորել են գրեթե բոլոր  
ներկայացված պարտականությունները: Որոշակի վերապահումներ պետք է կատարվեն  
պատասխանների վերաբերիության առումով: Օրինակ՝ հեղուկ դեղերի արտադրության մեջ  
ներգրավված մասնագետները այնքան էլ չեն կարևորել կարծը դեղերի արտադրության առնչվող  
պարտականությունները և հակառակը: Հետագա վերլուծության ընթացքում անպայման պետք է

հաշվի աւճնել, որ Արտադրող Օպերատորները տարբեր են լինում և նրանց պարտականությունները ևս բավականին տարբերվում են: Նմանատիպ իրավիճակ է նաև նշված պարտականությունների կիրառության առունուվ՝ չնայած դրանց մեծ մասն արդեն իսկ ներդրված է տեղական ձեռնարկություններում:

Արտադրող Օպերատորները բավականին լավ են տեղեկացված իրենց պարտականությունների մասին: Այս մասնագետներին իրենց աշխատանքային պարտականությունները գրեթե բոլոր ձեռնարկություններում հիշեցնում են ամեն շաբաթ: Առաջին հայացքից այս հաճախականությունը շատ բարձր է թվում, սակայն աշխատանքի այսպիսի ծեաչափը թույլ է տալիս նրանց դեկավարներին անընդհատ վերահսկողություն ունենալ արտադրական գործընթացների վրա, և համոզված լինել, որ Արտադրող Օպերատորներն իրենց պարտականություններն իրականացնում են հավուր պատշաճի:

### Գիտելիքներ և ունակություններ

Արդեն նշվել է, որ Արտադրության Օպերատորի պաշտոն գրադեցնող ոչ բոլոր աշխատողներն են մասնագիտական կրթություն ստացել և նույնիսկ նրանցից ոմանք ունեն պարզապես միջնակարգ կրթություն: Չնայած դրան, բոլոր հետազոտված մասնագետները վստահ են, որ իրենց գիտելիքները և ունակությունները լիովին բավարար են իրենց մասնագիտական պարտականություններն իրականացնելու համար:

#### Աղյուսակ 35 - Գիտելիքների և ունակությունների կարևորությունը

Գիտելիքներ և ունակություններ	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ոնդիան- րապես ոչ կարևոր
GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) պահանջների ամբողջական ընկալում՝ ներառյալ տվյալ ոլորտի առանձնահատկությունները	9	3	0	0
Ստերիլ սենյակի տեխնիկայի, քիմիական նյութերի վարման և օգտագործման հիմնական գիտելիքներ	4	6	1	1
Մեխանիկական / տեխնիկական հակվածություն	0	8	3	1
Ավտոմատ և կիսա-ավտոմատ հակող սարքավորումներ աշխատեցնելու գիտելիքներ	1	9	1	1
Անվտանգության կանոնների, գործընթացքների տեղեկատունների, գործողությունների և վերանորոգման հրահանգները ինքնուրույն կարդալու և հասկանալու կարողություն	6	5	1	0
Փոփոխական իրավիճակներում ճիշտ որոշումներ ընդունելու ունակություն	3	7	2	0
Արտադրության անվտանգության հսկում ներառյալ հսկող նյութերի վարման գիտելիքներ	7	5	0	0
Փորձարկումների տեսողական ստուգման կարողություն	4	6	2	0
Մանրամասների նկատմամբ ուշադրության կարողություն և Արձանագրությունների ձգրիտ պահպանման և մաթեմատիկական հաշվարկներ կատարելու ունակություն	5	7	0	0

Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	3	7	2	0
Համակարգչային ունակություններ	1	5	5	1
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	5	6	1	0
Թիմային մթնոլորտում աշխատելու ունակություն	7	5	0	0

Կրկին հետազոտվող մասնագետների կողմից բարձր է գնահատվել ներկայացված անհրաժեշտ գիտելիքների կարևորության աստիճանը: Այս անգամ ևս աձնական կազմակերպչական ունակություններն առանձնապես չեն կարևորվել Արտադրող Օպերատորների կողմից: Վերջիններս փորձել են նաև գնահատել ներկայացված գիտելիքներին և ունակություններին իրենց տիրապետելու աստիճանը և բացահայտել դրանց բարելավման կարիքները:

#### Այլուսակ 36 - Անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների առկայությունը և բարելավման կարիքը

Գիտելիքներ և ունակություններ	Առկայություն / Տիրապետում			Բարելավման կարիքը		
	Գերազանց	Լավ	Բավարար	Կաանհապաղ կարիք	Կա կարիք	Կարիք չկա
GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) պահանջների ամբողջական ընկալում ներառյալ տվյալ ոլորտի առանձնահատկությունները	0	6	4	4	8	0
Ստերիլ սենյակի տեխնիկայի, քիմիական նյութերի վարման և օգտագործման հիմնական գիտելիքներ	0	6	5	0	11	1
Մեխանիկական / տեխնիկական հակվածություն	0	3	8	0	11	1
Ավտոմատ և կիսա-ավտոմատ հակող սարքավորումներ աշխատեցնելու գիտելիքներ	0	6	5	2	7	3
Անվտանգության կանոնների, գործընթացքների տեղեկատունների, գործողությունների և վերանորոգման հրահանգները ինքնուրույն կարդալու և հասկանալու կարողություն	5	6	1	0	8	4
Փոփոխական իրավիճակներում ձիշտ որոշումներ ընդունելու ունակություն	3	6	3	0	11	1
Արտադրության անվտանգության հսկում ներառյալ հսկվող նյութերի վարման գիտելիքներ	1	7	4	0	11	1
Փորձարկումների տեսողական ստուգման կարողություն	1	8	2	0	8	4
Մանրամասների նկատմանք ուշադրության կարողություն, արձանագրությունների ձգրիտ պահպանման և մաթեմատիկական հաշվարկներ կատարելու ունակություն	1	9	2	0	10	2

<p>Ղեղերի արտադրության բնագավառում ունակությունների և գիտելիքների կարիքների հետազոտություն</p>	<p>Ունակությունների և գիտելիքների անհամապատասխանությունը</p>
--	--

Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	1	8	3	0	9	3
Համակարգչային ունակություններ	0	5	2	1	8	3
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	5	5	2	0	7	5
Թիմային մթնոլորտում աշխատելու ունակություն	5	7	0	1	6	5

Ներկայացված գիտելիքների և ունակությունների տիրապետման աստիճանը «յակ» գնահատականն է ստացել հետազոտված Արտադրող Օպերատորների մեծամասնության կողմից, չնայած որ եղել են նաև ավելի պակաս գնահատականներ: Ներկայացված գիտելիքների և ունակությունների գրեթե բոլորի մասով հետազոտվողները բարելավման կարիք են ներկայացրել: Բացառություններ են հանդիսացել շինան և թիմային աշխատանքի ունակությունները, ինչպես նաև որոշ անձնական հատկանիշներ: Մեկ անգամ ևս խիստ կարիք է ներկայացվել ՊԱԳ ստանդարտներին և գործառույթներին, ներ մասնագիտական/տեխնոլոգիական և անվտանգության հարցերին վերաբերվող ունակությունների բարելավման համար:

### Հարակից պահանջներ

Ստորև բերված այլուսակում ներկայացվում են Արտադրող Օպերատորներին առաջադրվող հարակից պահանջները: Այս պահանջները կիրավում են մի շարք առաջատար արտերկրյա դեղագործական ծերնարկությունների կողմից: Ստորև ներկայացված պահանջները անպայման չեն, որ լրիվությամբ կիրառելի լինեն տեղական դեղագործական ծերնարկություններում, սակայն կարող են որոշակի ուղղորդիչ դեր խաղալ:

### Այլուսակ 37 - Հարակից պահանջների կարևորությունը և կիրառության աստիճանը

Պահանջներ	Կարևորությունը				Առկայությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանրապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Միջնակարգ մասնագիտական կրթություն	9	2	1	0	9	2
2-5 տարվա աշխատանքային փորձ դեղագործական արտադրությունում	3	5	4	0	7	4
Սարքավորումների փոփոխման և ձեռքի գործիքներով աշխատելու փորձառություն	6	3	3	0	9	2

Ընդհանուր առճամբ Արտադրող Օպերատորների պատասխանները կանխատեսելի են: Հետազոտվողները բավականին մեծ կարևորություն են տվել ներկայացված հարակից պահանջներին: Ավելին, ձեռնարկությունների մեծ մասում այս հարակից պահանջները արդեն խսկ կիրառվում են: Միաժամանակ, այս պահանջների առկայությունը դեռևս չի նշանակում, որ դրանք հրականում կատարվում են: Հայաստանում բավականին դժվար է որակյալ աշխատողներ գտնել և դեղագործական ծերնարկությունների դեկավարները հաճախ ստիպված են լինում բավարարվել առկա առաջարկով:

### Դասընթացների կազմակերպումը

Արատդրող Օպերատորների պարագայում վերապատրաստման դասընթացների ձևաչափի ընտրությունն ավելի ընդունելի է: Հետազոտվողների կեսից ավելին որոշակի պահանջարկ է ներկայացրել մեկ շաբաթ և ավել տևողությամբ դասընթացների համար:

#### Աղյուսակ 38 - Դասընթացների նախընտրելի ձևաչափերը

Ուժիմը	Հարմար է	Հարմար չէ
Կեսօր	3	9
Մեկ ամբողջ օր	3	9
Մի քանի (2-3) օր	1	11
Մեկ շաբաթ	7	5
Մեկ շաբաթից ավել	2	10
Կանոնավոր	2	10

Մեկ շաբաթ տևողությամբ դասընթացների պահանջվածությունը հասկանալի է. ավելի կարծ ժամկետում հնարավոր չէ լիովին ընկալել այնպիսի լուրջ թեմաներ, ինչպիսիք են ՊԱԳ ստանդարտները, կամ նեղ մասնագիտական /ուեխնոլոգիական հարցերը և այլն: Այս նպատակով պետք է կազմակերպվեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական դասընթացներ, և կարծ ժամանակահատվածում հնարավոր չէ շոշափելի արդյունքների հասնել:

### Փաթեթավորող Օպերատոր

#### Հետազոտվողների նկարագիրը

Փաթեթավորման գործողությունները դեղերի արտադրության աճածանելի և կարևոր մասն են հանդիսանում և Փաթեթավորող Օպերատորների աշխատանքը կարևորվում է ոչ պակաս, քան նախորդ պաշտոնինը: Տեղական դեղագործական ձեռնարկություններում Փաթեթավորող Օպերատորի պաշտոն զբաղեցնող աշխատողների ընդհանուր նկարագիրը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

#### Աղյուսակ 39 - Հետազոտվողների նկարագիրը

Ձեռնարկություն	Պաշտոնը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Աշխատանքային փորձը (տարի)
Արփիմեդ	Փաթեթավորող օպերատոր	Ղեղագործ	Միջնակարգ մասնագիտական	1
Արփիմեդ	Փաթեթավորող օպերատոր	Ղեղագործ	Միջնակարգ մասնագիտական	1 - 3
Լիկվոր	Փաթեթավորող օպերատոր	Ռադիոնեխանիկ	Միջնակարգ մասնագիտական	ավելի քան 8
Էսկուլապ	Փաթեթավորող օպերատոր	Հաշվապահ	Միջնակարգ մասնագիտական	3 - 5
Երեւանի ՔՂՖ	Փաթեթավորող օպերատոր	Ազրոնոմ	Միջնակարգ մասնագիտական	ավելի քան 8
Երեւանի ՔՂՖ	Փաթեթավորող օպերատոր	Ազրոնոմ	Միջնակարգ մասնագիտական	ավելի քան 8
Մեդիկալ-Հորիզոն	Փաթեթավորող	Բուժքույր-	Միջնակարգ	1

	օպերատոր	դիմահարդար	մասնագիտական	
Մեղիկալ-Հորիզոն	Փաթեթավորող օպերատոր	Քիմ. լաբորանտ	Միջնակարգ մասնագիտական	1
Վիտամաքս-Ե	Փաթեթավորող օպերատոր	Բուժքույր	Միջնակարգ մասնագիտական	1
Վիտամաքս-Ե	Փաթեթավորող օպերատոր	Մանկաբրձուիի	Միջնակարգ մասնագիտական	1
Լեյկո-Ալեքս	Փաթեթավորող և մանրակշռող	N/A	Միջնակարգ	1
Լեյկո-Ալեքս	Կտրող- փաթեթավորող	Ագրարային ձեռնարկատեր	Միջնակարգ մասնագիտական	1

Հետազոտված աշխատողների մեծամասնությունը հայտնել է, որ իրենց պարտականությունների իրականացնան համար հատուկ մասնագիտական պատրաստվածություն պետք չէ: Հետազոտված Փաթեթավորող Օպերատորներն աչքի են ընկնում իրենց մասնագիտությունների խայտաբղետությամբ և միջնակարգ մասնագիտական կրթությունով: Նրանք նշում են, որ Գործողությունների Ստանդարտ Ընթացակարգերի և համապատասխան ուղեցույցների առկայությունը լրիվ բավարար է իրենց խնդիրը հասկանալու և հաջողությամբ լուծելու համար:

Ինչպես և Արտադրող Օպերատորների պարագայում, այս մասնագետները ևս աչքի չեն ընկնում իրենց փորձառությամբ: Եթե Արտադրող Օպերատորների պարագայում որոշ մասնագիտական/գիտական պատրաստվածություն այնուամենայնիվ անհրաժեշտ է, ապա Փաթեթավորող Օպերատորները հիմնականում պատասխանատու են լցարկման և փաթեթավորման գործողությունների համար և ընդհանրապես չեն մասնակցում քիմիական պրոցեսներին: Հետազոտված աշխատողների փորձառությունը կրկին մեծ չէ. մեծամասնությունն ունի մինչև մեկ տարի աշխատանքային փորձ և աշխատանքային ունակություններ ծեռք բերելու համար ունեցել է ընդամենը 1-2 ամիս ժամանակ: Փաթեթավորող օպերատորների պարագայում ևս կա մասնագետների մեծ հոսունություն՝ ինչը կրկին պայմանավորված է վարձատրության խնդիրներով:

#### Պարտականություններ

Փաթեթավորող Օպերատորների պարտականությունները որոշ նմանություն ունեն Արտադրող Օպերատորների պարտականությունների հետ: Այս դեպքում ևս միջազգային լավագույն փորձից ընտրվել է պարտականությունների մի շարք և ներկայացվել տեղական մասնագետների գնահատմանը դրանց կարևորության և իրենց ծեռնարկություններում կիրառության տեսանկյունից:

#### Այլուսակ 40 - Պարտականությունների կարերությունը և կիրառության աստիճանը

Գործողություններ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանր ապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Հետևել բոլոր Գործողությունների Ստանդարտ Ընթացակարգերին, GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության)	5	6	1	0	11	1

Կարգավորմանը և անվտանգության ուղեցույցներին և ձեռնարկության ներքին քաղաքականությանն ու գործընթացներին						
Կարդալ փաթեթավորման հրահանգները և հետևել դրանց	6	6	0	0	12	0
Իրականացնել ներգործընթացային փորձարկում և վերջնական արտադրանքի հսկողություն՝ երաշխավորելով որակի չափանիշներին դեղերի համապատասխանությունը	6	5	1	0	8	3
Լրացնել արտադրության և պահպանման բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը	7	4	0	1	7	4
Միացնել, աշխատեցնել և հարմարեցնել փաթեթավորող սարքավորումները առավելագույն որակ և արդյունք ստանալու համար	8	4	0	0	8	2
Կատարել թերև անսարքությունների հայտնաբերում և ուղղումներ	3	7	1	0	11	0
Կատարել փաթեթավորման և պիտակավորման գործողությունների բոլոր փուլերը	7	5	0	0	11	0
Իրականացնել աշխատավայրի և սարքավորումների մաքրման և պահպանման գործողություններ	6	6	0	0	10	1
Նոր հնարավորություններ գտնել աշխատանքի արտադրողականության և արդյունավետության բարձրացման համար	5	5	1	0	5	6
Կատարել այլ աշխատանքներ ըստ պահանջի	4	6	2	0	11	0

Հետազոտված մասնագետների մեծամասնության կողմից ներկայացված բոլոր պարտականություններին տրվել է կարևորության բարձր աստիճան: Այնուամենայնիվ որոշ ֆունկցիաներ, ինչպիսիք են փաթեթավորման սարքավորումների շահագործումը, անհրաժեշտ փաստաթղթերի լրացումը, առկա ուղեցույցներին անխախտ հետևելը, առավել կարևորվել են: Որևէ պարտականություն հետազոտվողների կողմից «ոչ կարևոր» չի համարվել: Այս կարծիքի օբյեկտիվությունը հաստատվել է նաև տեղական ձեռնարկություններում ներկայացված պարտականությունների կիրառության բարձր աստիճանով: Սա նշանակում է, որ տեղական մասնագետները բավականին լավ տեղեկացված են միջազգային պրակտիկային, ինչը դրական երևույթ է: Փաթեթավորող Օպերատորների պատասխանները համարվել են նրանց անմիջական դեկավարների կարծիքներին. մեծամասամբ այդ երկու կարծիքները համընկել են:

Ըստ հետազոտված աշխատողների՝ տեղական դեղագործական ձեռնարկություններում առանձնապես մեծ ուշադրություն չեն դարձնում Փաթեթավորող Օպերատորներին իրենց պարտականությունները հիշեցնելուն: Իհարկե կան բացառություններ, որոնք շաբաթական

հաճախականությամբ իրազեկում են իրենց աշխատողներին, բայց կան նաև այնպիսի արտադրողներ, որոնք առանձնապես ուշադրություն չեն դարձնում այս խնդրին<sup>3</sup>:

### Գիտելիքներ և ունակություններ

Հետազոտված Փաթեթավորող Օպերատորների բնութագրերից երևում է, որ նրանք չունեն բարձրագույն կրթություն և չեն մասնակցել հասուն վերապատրաստման դասընթացների: Գրեթե բոլորի կրթությունը միջնակարգ մասնագիտական է, և, չնայած դրան, նրանց կարծիքով իրեն գիտելիքները և ունակությունները լիովին բավարարում են իրենց պարտականությունները հաջողությամբ իրականացնելու համար:

#### Աղյուսակ 41 - Գիտելիքների և ունակությունների կարևորությունը

Գիտելիքներ և ունակություններ	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր
Ընդհանուր գիտելիքներ դեղագործական արտադրությունը կարգավորող օրենքների և/կամ կարգավորումների վերաբերյալ	4	6	2	0
GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) գործընթացների վերաբերյալ գիտելիքներ՝ ներառյալ տվյալ ոլորտի առանձնահատկությունները	3	9	0	0
Մաթեմատիկական հմտություններ	0	9	3	0
Նորություններ (ձեռքի գործիքների օգտագործում, տեղեկատունների օգտագործում) սովորելու ցանկություն և կարողություն	4	7	0	0
Նոր պարտականություններին և հանձնարարականներին արագ հարմարվելու կարողություն	6	5	0	0
Պետք է կարողանա բարձրացնել, իրել և քաշել 15-25 կգ ծանրություն	1	7	4	0
Օրեկան 8-10 ժամ կանգնելու, քայլելու և թեքվելու կարողություն	2	9	1	0
Մեխանիկական հակվածություն	0	7	4	1
«Աչք-Ձեռք» համաձայնեցված աշխատանքային կարողություն: Բավարար տեսողություն վերջնական արտադրանքի ստուգում կատարելու համար:	8	4	0	0
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	2	8	1	0
Համակարգչային ունակություններ	0	4	5	2
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	1	10	1	0
Կոլոկտիվի հետ արդյունավեր աշխատելու ունակություն	8	4	0	0

Հետազոտված մասնագետներն ընդունել են ներկայացված գիտելիքների և ունակությունների մեջ մասի կարևորությունը: Կրկին առանձնահատուկ շեշտադրում է կատարվել կարգավորող միջավայրի և ՊԱԳ ստանդարտների տիրապետման վրա: Առանձնացվել են նաև որոշ յուրահատուկ ունակություններ՝ աշխատանքային նոր միջավայրին հարմարվելու ունակություն, թիմային աշխատանքի հակվածություն և այլն: Մեխանիկական հակվածությունը, ֆիզիկական

<sup>3</sup> Օրինակ՝ Արփիմնդում և Վիտամաքս - 6

ունակությունները և համակարգչային գրագիտությունը ամենաքիչ կարևոր ունակություններն են համարվել: Հետազոտվողների անմիջական դեկավարները գործել լիովին համաձայնվել են իրենց ենթականների կարծիքների հետ:

Փաթեթավորող Օպերատորները բավականին ինքնավստահ են և բարձր են գնահատում իրենց գիտելիքների և ունակությունների մակարդակը: Հետազոտվողների մի զգալի մասը կարծում է, որ իրենք գերազանց տիրապետում են բոլոր անհրաժեշտ գիտելիքներին և ունակություններին: Անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների տիրապետման գնահատականները և դրանց բարելավման կարիքները ներկայացված են ստորև բերված այուսակում:

#### Այլուսակ 42 - Անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների առկայությունը և բարելավման կարիքը

Գիտելիքներ և ունակություններ	Առկայություն / Տիրապետում			Բարելավման կարիքը		
	Գերազանց	Լավ	Բավարար	Կաանհապաղ կարիք	Կա կարիք	Կարիք չկա
Ընդհանուր գիտելիքներ դեղագործական արտադրությունը կարգավորող օրենքների և/կամ կարգավորումների վերաբերյալ	1	8	2	1	10	1
GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) գործընթացների վերաբերյալ խոր գիտելիքներ՝ ներառյալ տվյալ ոլորտի առանձնահատկությունները	0	7	4	1	10	1
Մաթեմատիկական հմտություններ	0	4	7	0	6	6
Նորություններ (ձեռքի գործիքների օգտագործում, տեղեկատունների օգտագործում) սովորելու ցանկություն և կարողություն	2	8	1	0	11	1
Նոր պարտականություններին և հանձնարարականներին արագ հարմարվելու կարողություն	3	7	2	0	7	4
Պետք է կարողանա բարձրացնել, իրել և քաշել 15-25 կգ ծանրություն	3	6	3	0	4	8
Օրեկան 8-10 ժամ կանգնելու, քայլելու և թեքվելու կարողություն	3	7	2	0	6	6
Մեխանիկական հակվածություն	0	4	5	0	8	4
«Աչք-Զերք» համաձայնեցված աշխատանքային կարողություն: Բավարար տեսողություն վերջնական արտադրանքի ստուգում կատարելու համար	4	6	1	0	3	8
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	2	8	2	0	7	3
Համակարգչային ունակություններ	0	4	5	0	10	1
Գրավոր և բանավոր հաղորդակցման	1	10	1	0	6	6

ունակություններ						
Կոլեկտիվի հետ արդյունավետ աշխատելու կարողություն	7	4	1	1	2	9

Կարգավորող և ՊԱԳ ստանդարտների ներդրման հարցերում հետազոտվողների ներկայացրած կարիքն արդեն օրինաչափ բնույթ է կրում: Վերջին ժամանակներում այս երկու խնդիրները շատ ինտենսիվորեն քննարկվում են մասնագիտական հանրության կողմից: Միաժամանակ հետազոտված աշխատողները որևէ կարիք չեն տեսնում այնպիսի ունակությունների բարելավման համար, ինչպիսիք են թիմային աշխատանքը, ֆիզիկական ունակությունները, մաթեմատիկական գիտելիքները և այլն: Տրված պատասխանների վերաբերյալ դժվար է օբյեկտիվ դատողություններ անել: Անհրաժեշտ է հաշվի առնել բազմաթիվ գործոններ՝ սկսած հետազոտողների պատասխանների սուբյեկտիվ բնույթից, վերջացրած տեղական դեղագործական արտադրության առանձնահատկություններով:

### Հարակից պահանջներ

Փաթեթավորող օպերատորներին առաջադրվող հարակից պահանջները ներկայացված են ստորև բերված այլուսակում:

#### Այլուսակ 43 - Հարակից պահանջների կարևորությունը և կիրառության աստիճանը

Պահանջներ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Դեղագործական միջին մասնագիտական կամ միջնակարգ կոթություն	3	5	4	0	9	0
1 տարվա լցման/փաթեթավորման սարքավորումների հետ աշխատելու փորձ	4	4	4	0	4	6
Փոփոխված մեխանիզմների և ձեռքի գործիքների հետ աշխատանքային փորձ	3	6	3	0	7	1
Շաբաթ-կիրակի, արտահերթ ժամեր և բոլոր հերթափոխներով աշխատելու պատրաստականություն	3	6	2	0	6	2

Հետազոտվողների պատասխանները հարակից պահանջների կարևորության գնահատականների միջև բաժանվել են գրեթե հավասարաչափ: Որևէ հարակից պահանջ «ընդհանրապես ոչ կարևոր» չի համարվել: Նշվել է, որ հարակից պահանջներն արդեն իսկ իրենց կիրառությունն ունեն հետազոտված ձեռնարկությունների մեջ մասում:

### Դասընթացների կազմակերպումը

Փաթեթավորող Օպերատորներն ևս շատ հաջողակ չեն եղել վերապատրաստման դասընթացների ձևաչափ ընտրելիս: Մեկ շաբաթից երկար տևող դասընթացները աջակցություն չեն գտել ոչ մի հետազոտվողի մոտ, չնայած շատ կարձատև դասընթացները ևս պահանջված չեն:

**Այլուսակ 44 - Դասընթացների նախընտրելի ծևաչափերը**

Ռեժիմը	Հարմար է	Հարմար չէ
Կեսօր	3	8
Մեկ ամբողջ օր	2	9
Մի քանի (2-3) օր	1	10
Մեկ շաբաթ	4	7
Մեկ շաբաթից ավել	0	11
Կանոնավոր	3	8

Դասընթացների մեջաբայաց ծևաչափերի ընտրությունը կրկին բացատրվում է այդ ժամանակահատվածի օպտիմալությամբ: Հետազոտված մասնագետները գտնում են, որ մեկ շաբաթը բավարար ժամանակ է նոր տեխնոլոգիաների կամ սարքավորումների ծանոթանալու համար:

**Քիմիկոս (Որակի Հսկման Վերլուծաբան)**

**Հետազոտվողների նկարագիրը**

Քիմիկոսի պաշտոնը համարվում է դեղագործական ծերնարկությունների կարևորագույն ֆունկցիոնալ օղակներից մեկ: Այն հաճախ նույնանում/համատեղվում է Որակի Հսկման Վերլուծաբանի (ՈՀՎ) պաշտոնի հետ, քանի որ իրականացվող պարտականությունները բավականին նման են իրար:

**Այլուսակ 45 - Հետազոտվողների նկարագիրը**

Զերնարկություն	Պաշտոնը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Աշխատանքային փորձը (տարի)
Արվիհմեդ	Քիմիկոս - Վերլուծաբան	Կենսաքիմիա	Մագիստրոս	3 - 5
Լիկվոր	Մենեջեր	Կենսաֆիզիկա	Մագիստրոս	5 - 8
Էսկուլապ	Վերլուծաբան	Քիմիկոս - դեղաբան, արովկարոր	Բակալավր	3 - 5
Երեւանի ՔՂՖ	Քիմիկոս	Քիմիկ	Մագիստրոս	ավելի քան 8
Մեղիկալ-Հորիզոն	Որակի հսկման բաժնի վարիչ	Կենսաֆիզիկա	Գիտությունների թեկնածու	1
Բիզոն-1	Քիմիկոս, որակի հսկման Վերլուծաբան	Քիմիկոս	Մագիստրոս	3 - 5
Լեյկո-Ալեքս	Տեխնիկական Վերահսկման բաժնի պետ	Քիմիկոս - օրգանական	Գիտությունների թեկնածու	1

Հետազոտված բոլոր տեղական դեղագործական ծերնարկություններում աշխատում են Քիմիկոսներ, որոնք ունեն համապատասխան կրթություն և պատրաստվածություն (քիմիայի, կենսաբանական գիտությունների, դեղագործության բնագավառներում): Այս պաշտոնը զբաղեցնելու համար սովորաբար պահանջվում է համապատասխան բարձրագույն կրթություն և

Վիրձ: Հետազոտված 8 ձեռնարկություններից 6-ում աշխատող քիմիկոսները ունեն գիտական աստիճաններ և աշխատանքի բավականին երկար վիրձ:

### Պարտականություններ

Ընդհանուր առնամբ Քիմիկոսների հիմնական պարտականությունը արտադրված դեղերի որակի հսկումն է և լաբորատոր գործողությունների իրականացումը: Համաձայն միջազգային լավագույն փորձի, այս պաշտոնը զբաղեցնող մասնագետների կողմից պետք է իրականացվի պարտականությունների ստորև ներկայացված ցանկը:

Աղյուսակ 46 - Պարտականությունների կարևորությունը և կիրառության աստիճանը

Գործողություններ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Շատ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանր ապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Սահմանված կարգով փորձարկել միջանկյալ և վերջնական արտադրանքի, վալիդացիոն, ստաբիլիտեյան, լաբորատոր նմուշները	6	1	0	0	7	0
Մշտապես հետևել GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեության) և GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) կանոններին	5	2	0	0	7	0
Անալիտիկ արդյունքների անսխալ արձանագրում/գրանցում	4	3	0	0	6	1
Լաբորատոր սարքավորումների ճշգրտում, շահագործում և պահպանում	4	2	1	0	6	1
Սարքավորումների որակավորման և մեթոդների վալիդացման արձանագրությունների պատրաստում և ձևակերպում	2	5	0	0	5	2
Մշտապես երաշխավորել լաբորատորիայի մաքրությունը, կոկիկությունը և անվտանգությունը	3	4	0	0	6	1
Անհապաղ տեղեկացնել անմիջական դեկավարին ցանկացած անհամապատասխանության (սարքավորումների, գործընթացների և այլն) կամ պատահարի մասին	4	3	0	0	6	1
Լաբորատորիայի ներսում այլ անալիտիկների գործունեության տվյալների ստուգում և/կամ հաստատում ըստ անհրաժեշտության	1	6	0	0	5	2
Զննել տվյալները և մեկնաբանել դրանց հանապատասխանությունը սահմանված	3	3	0	1	5	2

Ղեղերի արտադրության բնագավառում ունակությունների և գիտելիքների կարիքների հետազոտություն	Ունակությունների և գիտելիքների անհամապատասխանությունը
---	---

գործնթացներին, ստանդարտներին ու արձանագրություններին և ժամանակին գրանցել սխալները						
Մշտապես հսկել/ստուգել փոփոխությունները և շեղումները	3	3	0	1	6	1
Վերհանել սարքավորումների խնդիրները և լուծել դրանք, ստուգել կիրառվող մեթոդների համապատասխանությունը	3	3	0	1	5	2
Աջակցել որակի հսկման համակարգի կատարելագործմանը՝ ստեղծելով կամ վերանայելով լարորատոր փաստաթղթային համակարգը	3	3	1	0	6	1
Ներդնել անվտանգության ստանդարտները և հետևել դրանց կատարմանը	3	4	0	0	4	3
Համաձայն գործնթացների և ստանդարտների ձևակերպել ծանուցումներ դեկավարությանը	2	5	0	0	6	1
Մասնակցել հարակից գործունեությունների դասընթացներին	0	5	2	0	3	4
Մշակել դասընթացների նյութեր և անցկացնել գործընկերների ուսուցում	1	5	1	0	3	4

Ուրախությամբ կարող ենք նշել, որ տեղական մասնագետները կրկին կարևորել են միջազգային լավագույն փորձը: Հետազոտվողների կողմից եզակի պարտականություններ են ոչ կարևոր համարվել: Հատուկ ուշադրության են արժանացել լարորատոր գործնթացները և ՊԱԳ ստանդարտները: Այս պարտականություններից շատերն արդեն իսկ կիրառվում են տեղական դեղագործական ձեռնարկություններում, ինչը հաստատվում է նաև հետազոտված աշխատողների անմիջական դեկավարների կողմից:

Հետազոտված աշխատողները հայտնում են նաև, որ իրենց ձեռնարկություններում կանոնավոր կերպով աշխատողներին հիշեցնում են իրենց պարտականությունների մասին: Այս գործողության հաճախականությունը տատանվում է շաբաթական մեկ անգամից մինչև ամսական մեկ անգամ: Սա բավականին արդյունավետ կարող է համարվել. մի կողմից աշխատողները չեն հասցնում մոռանալ իրենց բոլոր պարտականությունները, մյուս կողմից էլ այդ գործողությունը չի կորցնում իր կարևորությունն ու լրջությունը:

### Գիտելիքներ և ունակություններ

Քիմիկոսի վերը ներկայացված պարտականություններն արդյունավետորեն իրականացնելու համար միջազգային լավագույն փորձից ընտրվել են հետևյալ գիտելիքները և ունակությունները: Դրանց վերաբերյալ գնահատականներ են տվել հետազոտված աշխատողները:

**Այլուսակ 47 - Գիտելիքների և ունակությունների կարևորությունը**

Գիտելիքներ և ունակություններ	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր
Վարժ գիտելիքներ GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեության) և GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) վերաբերյալ՝ ներառյալ տվյալ ձեռնարկության արտադրանքի վերաբերյալ առանձնահատկությունները	6	1	0	0
Տեխնիկական տվյալների, գործընթացների և կարգավորող փաստաթղթերի կարդալու, վերլուծելու, մեկնաբանելու եւ հաղորդակցվելու կարողություններ	4	3	0	0
Տեխնիկական հակվածություն և փորձարկման մեթոդների թերությունների վերհանման և շտկման կարողություններ	4	3	0	0
Լաբորատոր միջավայրում աշխատելու, ներառյալ պահանջվող արտահագուստ (հնչախին են ռեսպիրատորները) կրելու կարողություն	1	6	0	0
Կազմակերպելու, պլանավորելու և դատողություններ անելու գերազանց հմտություններ (աշխատակիցների օգնությամբ եւ հետ մեկտեղ)	1	6	0	0
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	1	5	1	0
Համակարգչային ունակություններ	0	6	1	0
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	0	7	0	0
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	0	6	1	0

Հետազոտված աշխատողները կարևորել են գրեթե բոլոր գիտելիքները և ունակությունները: Չեն կարևորվել միայն անձնական հատկանիշները: Այս հատկանիշները որոշակի սուբյեկտիվիզմ են պարունակում և հետազոտվողների պատասխաններն ինչ-որ առումով հասկանալի են: Նրանք կարծում են նաև, որ իրենց կրթությունը լիովին բավարար է իրենց մասնագիտական պարտականությունները կատարելու համար: Չնայած դրան՝ նրանք կարծում են, որ գիտելիքների և ունակությունների բարելավման կարիք իրենք դեռ ունեն:

**Այլուսակ 48 - Անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների առկայությունը և բարելավման կարիքը**

Գիտելիքներ և ունակություններ	Առկայություն / Տիրապետում			Բարելավման կարիքը		
	Գերա- զանց	Լավ	Բավա- րար	Կա անհա- պաղ կարիք	Կա կարիք	Կարիք չկա
Լավ գիտելիքներ GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեության) և GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) վերաբերյալ՝ ներառյալ տվյալ ձեռնարկության արտադրանքի վերաբերյալ առանձնահատկությունները	1	4	2	0	6	1
Տեխնիկական տվյալների, գործընթացների և կարգավորող փաստաթղթերի կարդալու,	0	6	1	0	2	5

Վերլուծելու, մեկնաբանելու եւ հաղորդակցվելու կարողություններ						
Տեխնիկական հակվածություն և փորձարկման մեթոդների թերությունների վերհանման և շտկման կարողություններ	1	4	2	0	5	2
Լաբորատոր միջավայրում աշխատելու, ներառյալ պահանջվող արտահագուստ (ինչպիսին են ռեսպիրատորները) կրելու կարողություն	3	3	1	0	2	5
Կազմակերպելու, պլանավորելու և դատողություններ անելու գերազանց հմտություններ (աշխատակիցների օգնությամբ եւ հետ մեկտեղ)	1	4	2	0	2	5
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	0	6	1	0	4	3
Համակարգչային ունակություններ	0	3	4	0	6	1
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	2	5	0	0	2	5
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	2	4	1	0	3	4

ՊԱԳ ստանդարտներին, սարքավորումների փորձարկումներին և համակրգիչների իմացությանը վերաբերվող ունակություններն առանձնացվել են հետազոտվող Քիմիկոսների կողմից և նշվել է դրանց բարելավման կարիքների մասին: Մեկ անգամ ևս արձանագրվել է, որ հետազոտվող մասնագետները իրենց անձնական կազմակերպչական, հաղորդակցման եւ պլանավորման ունակությունների բարելավման կարիք ընդհանրապես չեն զգում:

#### Հարակից պահանջներ

Քիմիկոսներին առաջադրվող հարակից այլ պահանջները ներկայացվում են ստորև բերված աղյուսակում:

#### Այլուսակ 49 - Հարակից պահանջների կարևորությունը և կիրառության աստիճանը

Պահանջներ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Քիմիայի, վերլուծական քիմիայի կամ հարակից բնագավառներում բարձրագույն կրթություն	6	1	0	0	7	0
Համապատասխան լաբորատոր աշխատանքի փորձ	3	4	0	0	7	0
Ֆարմակոպեական փորձարկման (ներառյալ մեթոդների ստեղծումը) և վալիդացման	4	3	0	0	7	0

բնագավառներում փորձառություն և GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) գործնական իմացություն						
---	--	--	--	--	--	--

Հարակից պահանջների կարևորությունը տեղական մասնագետներն ընդունել են լիովին: Իրենց հերթին, անմիջական դեկավարները ևս նման կարծիքով են հանդես եկել: Սա բնական է, քանի որ այդ պահանջներն արդեն իսկ կիրառվում են տեղական ձեռնարկություններում:

### Դասընթացների կազմակերպումը

Քիմիկոսների համար դասընթացների լավագույն ձևաչափը կանոնավոր կրկնվող միջոցառումներն են: Միաժամանակ առանձին քննարկման է ենթակա նման կանոնավոր դասընթացների հաճախականության հարցը: Այս անգամ ևս կարձատու դասընթացներն այնքան էլ պահանջված չեն:

#### Աղյուսակ 50 - Դասընթացների նախընտրելի ձևաչափերը

Ռեժիմը	Հարմար է	Հարմար չէ
Կեսօր	3	4
Մեկ ամբողջ օր	2	5
Մի քանի (2-3) օր	2	5
Մեկ շաբաթ	3	4
Մեկ շաբաթից ավել	3	4
Կանոնավոր	5	2

### **Լաբորանտ**

#### Հետազոտվողների նկարագիրը

Որքան էլ զարմանալի է, լաբորանտի պարտականություններ իրականացվում են հետազոտված ձեռնարկություններից միայն 4-ում: Շատ ձեռնարկություններում լաբորանտի պարտականություններն իրականացվում են այլ մասնագետների կողմից: Որոշ դեպքերում էլ ձեռնարկությունները լաբորատորիա ընդհանրապես չունեն և լաբորատոր հետազոտությունները անցկացնում են ձեռնարկության սահմաններից դուրս: Հետազոտված ձեռնարկություններում լաբորանտի պաշտոն գրադեցնող աշխատողների ընդհանրացված նկարագիրը ներկայացվում է ստորև բերված այլուսակում:

#### Աղյուսակ 51 - Հետազոտվողների նկարագիրը

Ձեռնարկություն	Պաշտոնը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Աշխատանքային փորձը (տարի)
Արկիմեն	Քիմիկոս	Քիմիկոս	Մագիստրոս	1
Լիկվոր	Լաբորանտ	Մանկավարժ - քիմիկոս	Բակալավր	5 - 8
Երեւանի քղթ	Ավագ	Քիմիկոս	Բակալավր	5 - 8

	լաբորատորիայի լաբորանտ			
Մեղիկալ-Հորիզոն	Լաբորանտ	Քիմիկոս - տեխնոլոգ	Բակալավր	1

Բոլոր հետազոտված աշխատողներն ունեն մասնագիտական կրթություն, պատրաստվածություն և գիտական աստիճաններ: Սա այն պարագայում, որ հետազոտվածների անմիջական դեկավարները նշում են, որ Լաբորանտի պարտականություններ իրականացնելու համար բավարար է նույնիսկ միջնակարգ կրթությունը: Հետազոտված աշխատողների աշխատանքային փորձառությունը բավականին տարբեր է, սակայն անմիջական դեկավարները կրկին նշում են որ փորձը ևս որոշիչ հանգամանք չի հանդիսանում:

### Պարտականություններ

Լաբորանտները սովորաբար իրականացնում են տարբեր փորձեր և փորձարկումներ, մոնտաժում, պահպանում և վերանորոգում Որակի ՀԱԿ և Լաբորատորիայի սարքավորումները և գործիքները: Բացի այդ նրանք կարող են ունենալ բազմաթիվ նեղ մասնագիտական պարտականություններ: Ստորև բերված այսուսակում ներկայացվում են այն պարտականությունները, որոնք լայնորեն կիրառվում են միջազգային պրակտիկայում:

### **Այլուսակ 52 - Պարտականությունների կարևորությունը և կիրառության աստիճանը**

Գործողություններ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանր ապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Ելանյութերի, փաթեթանյութերի, միջանկյալ և վերջնական արտադրանքի որակի համակարգերով փորձարկումների անցկացում	3	0	0	0	1	0
Լաբորատոր սարքավորումների տեղադրում և կիրառություն	0	2	1	0	1	0
Ընդհանուր աջակցություն արտադրական գործընթացին՝ լաբորատորիա մտնող բոլոր միջանկյալ և վերջնական արտադրանքի ժամանակին և որակյալ փորձարկում իրականացնելու միջոցով	1	2	0	0	1	0
Ելանյութերի և փաթեթավորման նյութերի, միջանկյալ և վերջնական արտադրանքի վերլուծությունների արդյունքների արձանագրությունների կազմում և դրանց պահպանում	1	2	0	0	1	0
Աջակցություն քիմիկոսներին հատուկ խնդիրների լուծման ժամանակ, ինչպիսիք են արտադրական փորձարկումները, գործընթացների վալիդացիան և այլն	0	3	0	0	1	0

Դեղերի արտադրության բնագավառում ուժակությունների և գիտելիքների կարիքների հետազոտություն	Ուժակությունների և գիտելիքների անհամապատասխանությունը
---	---

Աշխատավայրի մաքրման գործողությունների իրականացում	3	0	0	0	1	0
Լաբորատոր գործիքների օրական կալիբրացում	1	2	0	0	1	0
Ապակյա սարքավորումների լվացում	1	0	0	0	1	0

Տեղական դեղագործական ձեռնարկությունների հետազոտվող մասնագետները և նրանց անմիջական դեկավարները լրիվությամբ ընդունել են ներկայացված պարտականությունների կարևորության բարձր աստիճանը: Նման պատրաստակամությունը կարող է բացատրվել կամ քննարկվող պարտականությունների փոքրությամբ, կամ էլ ներկայացված պարտականությունների ճշգրիտ բնույթով: Հատուկ շեշտադրում է կատարվել Որակի Հսկման Համակարգերի հետ կապված հարցերին:

Հետազոտվողները հայտնել են, որ իրենց պարտականությունների վերաբերյալ քննարկումներ են ունենում իրենց դեկավարների հետ շաբաթական կամ ամսական հաճախականությամբ: Արդեն նշվել է, որ այս հաճախականությունը բավականին արդյունավետ է:

### Գիտելիքներ և ունակություններ

Որոշ հետազոտվողների կարծիքով հատուկ գիտելիքների և ունակությունների առկայությունը լաբորատորների համար ամենակարևոր չէ. «Մրտացավ մոտեցումը աշխատանքին և սարքավորումներին հաճախ ավելի կարևոր է»:

#### Աղյուսակ 53 - Գիտելիքների և ունակությունների կարևորությունը

Գիտելիքներ և ունակություններ	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանրապես ոչ կարևոր
GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) և GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեության) իմացություն	3	0	0	1
Մանրամասն գրանցումներ իրականացնելու և դրանք պահպանելու ունակություն	2	1	0	1
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	1	2	0	1
Համակարգչային ունակություններ	0	2	1	1
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	0	3	0	1
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	2	2	0	0

Հետազոտվողների կողմից ամենաշատը կարևորվել են ՊԱԳ ստանդարտներին վերաբերվող և հարակից գիտելիքները և ունակությունները: Կա նաև այնպիսի հետազոտվող, որի կարծիքով ներկայացված նույնիսկ բավականին քիչ թվով գիտելիքները և ունակություններն ընդհանրապես կարևոր չեն: Սա բավականին սուբյեկտիվ գործելառ է, որը կարող է նույնիսկ վտանգավոր լինել մասնագիտական տեսանկյունից:

Բոլոր հետազոտվողները նշել են, որ իրենց կրթությունը լիովին բավարար է իրենց պարտականությունների արդյունավետ իրականացման համար: Լաբորատորներն ընդհանուր

առօճանք բավարարված են գիտելիքների իրենց մակարդակով, սակայն չեն պատրաստվում նաև հրաժարվել որակավորման բարձրացման հմարավորություններից:

**Այլուսակ 54 - Անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների առկայությունը և բարելավման կարիքը**

Գիտելիքների և ունակություններ	Առկայություն / Տիրապետում			Բարելավման կարիքը		
	Գերազանց	Լավ	Բավարար	Կաանհապաղ կարիք	Կա կարիք	Կարիք չկա
GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) և GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեության) իմացություն	0	1	2	1	2	0
Մանրանասն գրանցումներ իրականացնելու և դրանք պահպանելու ունակություն	1	1	1	0	2	1
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	0	2	1	0	1	2
Վարժ համակարգչային ունակություններ	0	1	1	0	3	0
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	1	1	1	0	1	2
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	1	0	3	0	2	2

Հետազոտվողների կարծիքով նրանց անպայմանորեն անհրաժեշտ է բարելավել ՊԱԳ ստանդարտների իրենց իմացությունը և համապատասխան ունակությունները: Նմանապես բարելավման կարիք կա նաև համակարգչային գրագիտության ասպարեզում: Հետազոտվողների կարծիքը հաստատում են նաև նրանց անմիջական դեկավարները:

**Հարակից պահանջներ**

Արդեն նշվել է, որ Լաբորատոր պաշտոն գրադեգործ մասնագետներին առաջադրվում են բավականին սահմանափակ պահանջներ: Նույնը կարելի է նշել նաև հարակից պահանջների վերաբերյալ. դրանք ևս շատ խիստ չեն:

**Այլուսակ 55 - Հարակից պահանջների կարևորությունը և կիրառության աստիճանը**

Պահանջներ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանրապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Քիմիայի կամ հարակից բնագավառներում միջնակարգ մասնագիտական կրթություն	3	0	0	0	2	0
Համապատասխան աշխատանքային փորձ դեղագործական լաբորատորիաներում	3	0	1	0	2	1

Հետազոտվողների կողմից երկու հարակից պահանջներն են մեծապես կարևորվել են: Որոշ ձեռնարկություններում այս պահանջները լայնորեն կիրառվում են: Այս անգամ ևս, անմիջական եկավարները կիսել են իրենց ենթականների կարծիքները: Միաժամանակ պետք է նշել, որ ներկայացված պահանջները բավականին պարզունակ են և այլ պատասխան պարզապես դժվար է պատկերացնել:

### **Դասընթացների կազմակերպումը**

#### **Աղյուսակ 56 - Դասընթացների նախընտրելի ձևաչափերը**

Ռեժիմը	Հարմար է	Հարմար չէ
Կեսօր	0	4
Մեկ ամբողջ օր	0	4
Մի քանի (2-3) օր	1	3
Մեկ շաբաթ	2	2
Մեկ շաբաթից ավել	1	3
Կանոնավոր	4	0

Լաբորատորները գերադասում են մասնակցել ոչ երկար տևողությամբ վերապատրաստման կանոնավոր դասընթացների: Ցավոք հետազոտվողները չեն բացատրել իրենց նման մոտեցումը (հատկապես կանոնավորության պահանջը) և չեն կոնկրետացրել դասընթացների կրկնման ցանկալի հաճախականությունը:

### **Մանրէաբան**

#### **Հետազոտվողների նկարագիրը**

Մանրէաբանները հիմնականում զբաղվում են Որակի Հսկման Լաբորատորիաներում մանրէաբանական փորձերի (տեսատերի) իրականացմամբ, վալիդացիայով, Որակի Հսկման համակարգերի նախագծմամբ և ներդրմամբ և այլն: Մանրէաբանները Որակի Հսկման Համակարգի կարևորագույն օղակներից են հանդիսանում: Չնայած դրան հետազոտված ձեռնարկություններից ոչ բոլորն են ներգրավվել նման մասնագետների: Որոշ ոչ մեծ ձեռնարկություններ, որոնք գրաղվում են ոչ-ստերիլ ապրանքների արտադրությամբ, մանրէաբանական գործառույթները հանձնարարում են մասնագիտացած կառույցների:

#### **Աղյուսակ 57 - Հետազոտվողների նկարագիրը**

Ձեռնարկություն	Պաշտոնը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Աշխատանքային փորձը (տարի)
Արվիմետ	Մանրէաբան	Կենսաքիմիկոս	Բակալավր	3 - 5
Լիկվոր	Մանրէաբան	Կենսաբան	Մագիստրոս	5 - 8
Երեւանի ՔԴՖ	Բակտերիոլոգ	Կենսաբան	Մագիստրոս	ավելի քան 8
Մեղիկալ-Հորիզոն	Որակի հսկման բաժնի վարիչ	Կենսաֆիզիկոս	Գիտությունների թեկնածու	1
Վիտամաքս-Ե	Մանրէաբան	Մանրէաբան և կենսատեխնոլոգ	Մագիստրոս	1

Հետազոտված բոլոր մասնագետներն են մասնագիտորեն զբաղվում են մանրէաբանական հետազոտություններով և հարակից գործողություններով: Նրանք բոլորն են ունեն բավարար

գիտական աստիճաններ. որոշ դեպքերում նույնիսկ ավելի բարձր քան պահանջվում է: Տարբեր ձեռնարկությունների Մանրէաբանների աշխատանքային փորձը տարբեր է. դեկավարների գնահատմամբ այդ փորձը պետք է լինի առնվազն 3 տարի, բայց առնվազն երկու հետազոտված ձեռնարկությունների մասով այն ավելի պակաս է:

### Պարտականություններ

Միջազգային լավագույն փորձից դուրս են գրվել մի շարք պարտականություններ, որոնք իրականացվում են բարձր որակավորում ունեցող մասնագետների կողմից առաջատար արտերկոյա ուղագործական ձեռնարկություններում: Այդ պարտականությունները ներկայացվում են ստորև բերված այլուսակում:

### **Այլուսակ 58 - Պարտականությունների կարևորությունը և կիրառության աստիճանը**

Գործողություններ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանր ապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Գործողություններն իրականացնել համաձայն Գործողությունների Ստանդարտ Ընթացակարգերի (SOP), GMP (Պատշաճ Արտադրական Գործունեություն) և GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեություն) պահանջներին համապատասխան	4	1	0	0	5	0
Նմուշառում և նմուշների մանրէաբանական անալիզ, ինչպես նաև շրջակա միջավայրի դիտարկման գործառույթներ	5	0	0	0	5	0
Փորձարկման մեթոդների վալիդացիա	2	3	0	0	5	0
Արդյունքների փաստաթղթավորում կամ տվյալների ներմուծում Լաբորատոր Տեղեկության Կառավարման Համակարգ / LS4C	4	1	0	0	5	0
Մանրէների/միկրոօրգանիզմների հայտնաբերում և մեկուսացում/ իզոլացում	3	2	0	0	5	0
Վերլուծության արդյունքների ուսումնասիրություն և դրանց ուղղվածության / միտումների որոշում	3	2	0	0	4	1
Զեկույցների պատրաստում “տրենից դուրս ուղղվածության” և “առանձնահատկություններից դուրս շեղումների” հայտնաբերման արդյունքների արձանագրում	0	4	1	0	4	1
Լաբորատոր հետազոտությունների անցկացում և համապատասխան հաշվետվությունների պատրաստում	2	3	0	0	5	0
Շրջակա միջավայրի, հումքի, ներգործընթացային / ներարտադրական և վերջնական արտադրանքի հետազոտման ստանդարտների ու Որակի	2	3	0	0	4	1

Վերահսկողության համակարգերի մշակում, փորձարկում և ներդրում						
Առավելագույն արտադրողականության հասնելու համար գործընթացների անընդհատ գնահատման և բարելավման ապահովում	1	3	1	0	3	2
Հավաքագրել և կազմակերպել խաչվող/առնչվող խնդիրների լուծմամբ զբաղվող անձնակազմի աշխատանքը	0	3	2	0	2	3
Պետական կարգավորող մարմինների հետ Մանրէաբանական Որակի Հսկման հարցերով կապի եւ ինսպեկցիայի ապահովում	0	5	0	0	3	2

Ներկայացված պարտականությունների կարևորությունը և կիրառության աստիճանը գնահատվել են տեղական դեղագործական ծերնարկություններում Մանրէաբանի պաշտոն զբաղեցնող աշխատողների կողմից: Նրանք խնդիրն մոտեցել են իրենց մասնագիտական տեսանկյունից: Հատուկ կարևորվել են այնպիսի պարտականություններ, ինչպիսիք են նմուշառումն ու վերլուծության իրականացումը, **ՊԱԳ ստանդարտները, հետազոտությունների արդյունքների փաստաթղթավորումը և տվյալների համակարգչային վերլուծությունը:** Հետազոտվողները ընդամենը մի քանի ֆունկցիաներ են համարել «ոչ այնքան կարևոր»: Բացի այդ նրանք հայտնել են, որ ներկայացված պարտականությունների գերակշիռ մեծամասնությունն արդեն իսկ կիրառվում է իրենց ծերնարկություններում: Սա շատ դրական արձագանք է, քանի որ դա նշանակում է, որ տեղական դեղագործական ծերնարկություններում լավատեյակ են զարգացման միջազգային միտումներից և պատրաստակամ են փոխանելու լավագույն փորձը: Հետազոտվողների անմիջական դեկավարները լիովին համաձայն են իրենց ենթականների հետ:

Մանրէաբաններին հարց է տրվել նաև դեկավարության հետ իրենց պարտականությունները քննարկելու վերաբեյալ: Պատասխաններից հետևում է, որ դեկավարները Մանրէաբաններին հիշեցնում են իրենց պարտականությունների մասին շատ տարբեր հաճախականությամբ՝ մեկ շաբաթից մինչև մեկ եռամսյակ:

### Գիտելիքներ և ունակություններ

Այս անգամ ևս հետազոտվողները նույն պատասխանն են տվել իրենց կրթության վերաբերյալ հարցին: Նրանք կարծում են, որ իրենց կրթական մակարդակը լիովին բավարարում է իրենց մասնագիտական պարտականություններն արդյունավետորեն իրականացնելու համար: Միաժամանակ ակնհայտ է, որ միայն կրթությունը իսկապես բավարար չէ և որոշ հատուկ գիտելիքներ և ունակություններ են անհրաժեշտ:

### Այլուսակ 59 - Գիտելիքների և ունակությունների կարևորությունը

Գիտելիքներ և ունակություններ	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր
GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեության), GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) և Անվտանգության գործընթացների իմացություն	5	0	0	0

Մանրէաբանության իմացություն և արտադրության մանրէաբանական վերահսկողությանը վերաբերող GMP գործընթացների վարժ տիրապետում	5	0	0	0
Նոր սարքավորումների, և տեխնոլոգիաների ներդրում և արտադրական գործընթացների բարելավում	2	2	1	0
Լարորատոր գործիքների և վերլուծական մեթոդների իմացություն	4	1	0	0
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	2	3	0	0
Վարժ համակարգչային ունակություններ	0	4	1	0
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	1	4	0	0
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	0	5	0	0

Հետազոտվողները կարևորել են վերը ներկայացված գորեթ բոլոր գիտելիքները և ունակությունները: Կրկին հատուկ առանձնացվել է ՊԱԳ ստանդարտների, մանրէաբանական նեղ մասնագիտական խնդիրների և վերահսկողության եղանակների իմացությունը: Անմիջական դեկավարների կողմից կրկին հաստատվել են հետազոտվողների կարծիքները:

#### Այլուսակ 60 - Անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների առկայությունը և բարելավման կարիքը

Գիտելիքներ և ունակություններ	Առկայություն / Տիրապետում			Բարելավման կարիքը		
	Գերա- զանց	Լավ	Բավա- րար	Կա անհա- պաղ կարիք	Կա կարիք	Կարիք չկա
GLP (Պատշաճ Լարորատոր Գործունեության), GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) և Անվտանգության գործընթացների իմացություն	1	3	1	1	3	1
Մանրէաբանության իմացություն և արտադրության մանրէաբանական վերահսկողությանը վերաբերող GMP գործընթացների տիրապետում	3	2	0	1	3	1
Նոր սարքավորումների և տեխնոլոգիաների ներդրում և արտադրական գործընթացների բարելավում	0	4	1	0	3	2
Լարորատոր գործիքների և վերլուծական մեթոդների իմացություն	3	2	0	0	2	3
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	3	1	1	0	1	4
Համակարգչային ունակություններ	1	2	1	0	2	3
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	3	2	0	0	0	5
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	3	1	1	0	1	4

Ներկայացված գիտելիքներին և ունակություններին տիրապետելու և դրանց բարելավման կարիքների վերաբերյալ հետազոտվողները տվել են բավականին տարբեր պատասխաններ:

Հետազոտվողների կարծիքով իրենք ոչ վատ գիտելիքներ և ունակություններ ունեն, սակայն նրանք դեմ չեն բարելավելու իրենց որակավորման աստիճանը: Այս անգամ ևս, նրանք չեն ցանկանում բարելավել իրենց անձնական հատկանիշները, բայց պատրաստ են քննարկել որակավորման բարձրացման հնարավոր տարրերակներ:

### Հարակից պահանջներ

Հարակից պահանջների ցանկը Մանրէաբանների համար բավականին կարծ է՝ բաղկացած է կրթության և փորձառության պահանջներից: Այն ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

**Աղյուսակ 61 - Հարակից պահանջների կարևորությունը և կիրառության աստիճանը**

Պահանջներ	Կարևորությունը				Առկայությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Մարէաբանության կամ հարակից գիտությունների համալսարանական (բարձրագույն) կրթություն կամ գիտական աստիճան,	2	3	0	0	4	0
6+ տարիների աշխատանքային փորձ GMP համակարգով որակի հսկման բնագավառում, որից 3 տարին՝ մարէաբանական լաբորատորիայում	2	2	1	0	2	2

Հետազոտվողները կարևորել են ներկայացված երկու հարակից պահանջները: Համալսարանական կրթության պահանջը լայնորեն կիրառվում է նաև Հայաստանի դեղագործական ձեռնարկություններում, բայց ՊԱԳ ստանդարտներին վերաբերվող խնդիրները դեռևս շատ նոր են Հայաստանի համար: Տանըթությունը ՊԱԳ համակարգին և դրա կարևորության ըմբռնումը մեր երկրում նոր է սկսվել: Մասնավորապես, Հայաստանում պարզապես չկան 6 և ավելի տարի ՊԱԳ համակարգով աշխատելու փորձառություն ունեցող մասնագետներ:

### Դասընթացների կազմակերպումը

Մեկ շաբաթ տևողությամբ վերապատրաստման դասընթացները համեմատաբար ամենապահանջվածն են Մանրէաբանների մոտ:

**Աղյուսակ 62 - Դասընթացների նախընտրելի ծևաչափերը**

Ուժիմը	Հարմար է	Հարմար չէ
Կեսօր	1	4
Մեկ ամբողջ օր	2	3
Մի քանի (2-3) օր	1	4
Մեկ շաբաթ	4	1
Մեկ շաբաթից ավել	1	4
Կանոնավոր	3	2

Մանրէաբանները հետազոտվողների առաջին խումբն են հանդիսանում, որտեղ մասնագետների մեծամասնությունը գոհունակություն է հայտնում դասընթացների որևէ ծևաչափի վերաբերյալ:

## Պահեստի Պատասխանատու

### Հետազոտվողների նկարագիրը

Ղեղագործական ձեռնարկություններում սովորաբար առանձնացվում են առանձին պահեստային տարածքներ, որպեսզի հնարավոր լինի անվտանգ ձևով այնտեղ պահպանել հումքային և փաթեթավորման նյութեր, անվարտ տարբեր ապրանքներ և այլն: Ընդ որում այս նյութերի մի մասը հեղուկ են, մյուսները փոշի կամ քսուկներ: Փաթեթավորման նյութերը ևս պահանջում են հատուկ պայմաններ: Պահեստներում նշված նյութերից բացի կարող են պահպանվել թմրանյութեր, թունավոր և հրավտանգ նյութեր, որոնք պետք է առանձնահատուկ ձևով պահեստավորվեն և պահպանվեն:

Փոքր ձեռնարկություններում, որտեղ արտադրվող ապրանքների տեսականին այնքան էլ մեծ չէ, և ելանյութերի թիվը ևս փոքր է, պահեստային տարածքների բաշխվածքը կարող է ոչ այդքան բարդեցված լինել, սակայն անվտանգության նկատառումներից ելնելով, միևնույն է, պետք է հետևել որոշ կանոնների: Ղեղագործական ձեռնարկություններում պահեստների գործունեության կառավարումը բավականին բարդ խնդիր է, և որոշակի ունակություններ են պահանջվում այդ գործողությունն իրականացնելու համար:

### Աղյուսակ 63 - Հետազոտվողների նկարագիրը

Ձեռնարկություն	Պաշտոնը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Աշխատանքային փորձը (տարի)
Արփիմեդ	Պահեստի պատասխանատու	Քիմիկոս - տեխնոլոգ	Բակալավր	1 - 3
Լիկվոր	Պատրաստի արտադրանքի պահեստապետ	Տնտեսագետ	Բակալավր	3 - 5
Էսկուլապ	Պահեստապետ	Քիմիկոս, դեղագործ	Բակալավր	1
Երեւանի ՔԴՖ	Պահեստապետ	Քիմիկոս	Միջնակարգ մասնագիտական	ավելի քան 8
Մեդիկալ-Հորիզոն	Պատրաստի արտադրանքի պահեստապետ	N/A	Միջնակարգ	1
Մեդիկալ-Հորիզոն	Պահեստապետ	Ատամնատեխնիկ	Միջնակարգ մասնագիտական	1
Վիտամաքս-Ե	Պահեստի պատասխանատու	Ինժեներ - էլեկտրիկ	Մագիստրոս	1 - 3
Բիզոն-1	Տնօրեն	Ֆիզիկոս	Գիտությունների թեկնածու	ավելի քան 8
Լեյկո-Ալեքս	Տնօրեն	Տնտեսագետ	Մագիստրոս	3 - 5

Հետազոտված տեղական 8 դեղագործական ձեռնարկություններից 6-ում աշխատում են Պահեստի Պատասխանատուի պաշտոն զբաղեցնող մասնագետներ (որոշ ձեռնարկություններում, որտեղ հումքի և պատրաստի արտադրանքի պահեստները առանձնացված են իրարից, առկա են այդ պաշտոններ զբաղեցնող մեկից ավելի անձինք): Նրանք պատասխանատու են իրենց

Ճեզնարկություններում պահեստների անվտանգ և անխափան գործունեության համար: Մյուս երկու հետազոտված ճեզնարկություններում Պահեստի Պատասխանատուի պարտականություններն իրականացվում են ճեզնարկությունների տնօրենների կողմից՝ իրենց անմիջական պարտականությունների կատարմանը գուգահեռ: Պահեստի Պատասխանատուի պաշտոնը պահանջում է հատուկ պատրաստվածություն և ունակություններ, սակայն Հայաստանում այս խնդիրները լուծվում են ամենատարբեր մասնագետների կողմից, որոնք հաճախ որևէ պատրաստվածություն կամ փորձ չունեն նման պարտականություններ ստանձնելու համար:

Ղեկավարները նաև նշում են, որ 3 տարվա աշխատանքային փորձը լիովին բավարար է Պահեստի Պատասխանատուի պարտականությունները հաջողությամբ իրականացնելու համար: Տեղական դեղագործական ճեզնարկություններում հետազոտված մասնագետների միայն կեսն է բավարարում այս պահանջին:

### Պարտականություններ

Առաջին հայացքից Պահեստի Պատասխանատուունների պարտականություններն իրենց բնույթով բավականին սահմանափակ են և հեշտ իրականացվող: Այս կարծիքը, սակայն, պիտի պաշտոնը պահանջում է տարբեր բնագավառների բավականին խորը գիտելիքներ, որոշ հատուկ անձնական հատկանիշներ և պատրաստականություն: Միջազգային լավագույն փորձից առանձնացվել է Պահեստի Պատասխանատուուններին առաջադրվող պարտականությունների ցանկ և ներկայացվել է տեղական մասնագետների գնահատմանը:

### **Այլուսակ 64 - Պարտականությունների կարևորությունը և կիրառության աստիճանը**

Գործողություններ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանր ապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Տարբեր տեսակի ապրանքների (ելանութերի և փաթեթավորման նյութեր, վերջնական արտադրանք, կարանտինի մեջ գտնվող, ժամկետանց, ետ վերադարձված, ետ կանչված ապրանքներ և այլն) պահեստավորման պատշաճ համակարգի մշակում և ներդրում	8	0	0	1	8	1
Ռադիոակտիվ նյութերի, թմրանյութերի և վտանգավոր/թունավոր այլ դեղերի (որոնք պարունակում են հատուկ ռիսկեր, չարաշահումների վտանգ, հրավտանգ կամ պայմանավտանգ են) հավելյալ անվտանգություն ունեցող պահեստավորման համակարգի մշակում և ներդրում:	5	2	0	2	3	6
Արտադրանքի որակական ստանդարտների մոնիթորինգի և համապատասխան պահանջների ներդրման պարտականություն	4	3	0	1	4	4
Նյութերի շրջանառության կոռորդինացում և կառավարում, ներառյալ նյութերի ստացումը, պահեստավորումը,	6	3	0	0	9	0

Տեսակավորումը, առաքումը և բոլոր գործնարարությունների փաստաթղթավորումը						
Գործողությունների Ստանդարտ Ընթացակարգերի բարեփոխում և համապատասխանեցում կարգավորման և անվտանգության պահանջներին	3	4	0	1	5	3
Հումքի և այլ բաղկացուցիչ նյութերի առաքում համապատասխան ստորաբաժանումներին	5	3	0	1	7	2
Արտադրանքի բեռնման և բեռնաթափման կազմակերպում	2	6	1	0	7	2
Ամբարձիչների շահագործում ըստ հաստատված գործնարարությունների	2	4	0	3	1	8
Համապատասխան գործողությունների կոորդինացում (տարածքի մաքրում, ապրանքների խմբավորում և այլն)՝ պահեստում անհրաժեշտ մաքրություն, չորություն, ջերմաստիճան ու կարգուկանոն ապահովելու համար	6	3	0	0	8	1
Նյութերի տեղավորման և դրանց շարժը վերահսկելու համակարգչային հաշվառման կիրառություն՝ նյութերը պահեստներում օպտիմալ տեղավորելու և տարածքներն առավելագույն չափով օգտագործելու նպատակով	6	1	1	1	5	4
Ապրանքների մուտքի և առաքման տեղեկատվական համակարգերում տվյալների մուտքագրում	5	4	0	0	7	2
Պահեստի և բաշխման ստորաբաժանումների գործունեության ամենօրյա համակարգում և վերահսկում	4	4	1	0	8	1
Պահեստի աշխատակիցների խթանում, վերապատրաստում և առաջնորդում	4	3	1	1	4	5
Պահեստավորման և բաշխման գործողությունների շարունակական բարելավում, համապատասխանեցում պետական կարգավորող և ներքին պահանջներին	4	5	0	0	7	2
Աջակցություն շենքային պայմանների և սարքավորումների բարեկարգման աշխատանքներին	2	5	2	0	6	3
Պահեստի և շրջակա տարածքի անվտանգության ապահովում և վերահսկում	4	5	0	0	8	1

Հետազոտվողների մեծամասնությունը կարևորել է ներկայացված պարտականությունների հիմնական մասը: Որոշ պարտականություններ գնահատվել են որպես «շատ կարևոր», և վերաբերվում են հիմնականում նեղ մասնագիտական հարցերին: Միակ պարտականությունը, որն ընդհանրապես չի կարևորվել հետազոտվողների կողմից, ամբարձիչների շահագործման ունակությունն է:

Տեղական դեղագործական ձեռնարկություններում թվարկված պարտականությունների կիրառության պատկերը բավականին ոչ միանշանակ է: Որոշ ֆունկցիաներ ինտենսիվորեն կիրառվում են, մյուսները գրեթե ներդրված չեն: Մոտ ապագայում այս պարտականությունները կարող են ավելի ինտենսիվորեն կիրառվել տեղական դեղագործական ձեռնարկություններում, քանի որ դրանց դեկավարները գրեթե միանշանակորեն ընդունել են այդ պարտականությունների կարևորությունը: Անմիջական դեկավարները գրեթե լիովին համաձայնվել են իրենց ենթականների հետ:

Տարբեր ձեռնարկություններում դեկավարության կողմից տարբեր հաճախականություններ են սահմանված Պահեստի Պատասխանատունների հետ նրանց պարտականությունները քննարկելու համար: Որոշ ձեռնարկություններում այդ հաճախականությունը մեկ շաբաթից մեկ ամիս է, մյուսներում կարող է նույնիսկ լինել ընդամենը մեկ անգամ՝ աշխատանքի ընդունման պահին: Առաջին տարբերակն իհարկե ավելի ցանկալի է, քանի որ գործունեության միջավայրը բավականին արագ է փոփոխվում, ինչը կարող է հանգեցնել նաև դեղագործական ձեռնարկությունների աշխատողների պարտականությունների որոշ մոդիֆիկացման:

### Գիտելիքներ և ունակություններ

Բոլոր հետազոտվողներն էլ հայտարարել են, որ իրենց կրթությունը բավարար հիմք է տվել նրանց իրենց մասնագիտական պարտականությունները հաջողությամբ իրականացնելու համար: Որոշ հավելյալ գիտելիքներ և ունակություններ նրանք ձեռք են բերել գործնական փորձառության արդյունքում: Գիտելիքների և ունակությունների այս պաշարի համապատասխանությունը միջազգային լավագույն փորձին ներկայացված է ստորև բերված այուսակում:

Աղյուսակ 65 - Գիտելիքների և ունակությունների կարևորությունը

Գիտելիքներ և ունակություններ	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր
Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի վերաբերյալ Հայաստանի և միջազգային օրենսդրության իմացություն	1	3	4	1
GMP-ի (Պատշաճ Արտադրական Գործունեության), Good Storage Practice (Պատշաճ Պահեստավորման Գործունեության) և Good Distribution Practice (Պատշաճ Բաշխման Գործունեության) իմացություն	2	6	0	1
Ամբարձիչների աշխատեցնելու պատրաստականություն և ունակություն	0	4	2	3
Հատուկ գործողություններ իրականացնելու նպատակով շնչառական / ռեսպիրատորային պաշտպանության միջոցներից օգտվելու ունակություն	2	6	1	0
Այլ աշխատակիցներին սովորեցնելու պատրաստականություն և ունակություն	1	7	0	1
Ծանր առարկաներ բարձրացնելու և տեղաշարժելու ունակություն	0	5	2	2
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	3	5	1	0
Համակարգչային ունակություններ	2	5	2	0
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	2	6	1	0
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	3	4	2	0

Ներկայացված գիտելիքների և ունակությունների կարևորության վերաբերյալ տրվել են հիմնականում միջին պատասխաններ: Չատ քիչ գիտելիքներ և ունակություններ են համարվել «շատ կարևոր» կամ «ընդհանրապես ոչ կարևոր»: Հարկ է առանձնացնել միայն մեկ հատուկ կետ: Իետազոտվողների մոտ կեսը այնքան էլ չի կարևորում «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի վերաբերյալ Հայաստանի և միջազգային օրենսդրության իմացությունը»: Սա որոշակիորեն անհասկանալի է և քննարկումների տեղիք է տալիս: Հետազոտվողների անմիջական դեկավարները համաձայնվել են իրենց ենթականների հետ գրեթե լիովին:

Ներկայացված գիտելիքների առկայության և ունակություններն ունենալու վերաբերյալ հետազոտվողների պատասխանները բավականին զարմանալի են: Հետազոտված Պահեստի Պատասխանատումների մոտ կեսը գտնում է որ իրենց իմացության մակարդակը «բավարար» է: Կան նաև այնպիսիները, որ դրանից էլ ավելի քննադատաբար են մոտեցել իրենք իրենց: Սա շատ կարևոր հանգամանք է և անպայման պետք է հետազա քննարկման արժանանա:

#### Աղյուսակ 66 - Անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների առկայությունը և բարելավման կարիքը

Գիտելիքներ և ունակություններ	Առկայություն / Տիրապետում			Բարելավման կարիքը		
	Գերազանց	Լավ	Բավարար	Կաանհապաղ կարիք	Կաակարիք	Կարիք չկա
Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի վերաբերյալ Հայաստանի և միջազգային օրենսդրության իմացություն	0	1	5	0	4	5
GMP-ի (Պատշաճ Արտադրական Գործունեության), Good Storage Practice (Պատշաճ Պահեստավորման Գործունեության) և Good Distribution Practice (Պատշաճ Բաշխման Գործունեության) իմացություն	0	2	6	0	7	2
Ամբարձիչների աշխատեցնելու պատրաստակամություն և ունակություն	1	1	2	0	1	8
Հատուկ գործողությունների իրականացնելու նպատակով շնչառական/ռեսպիրատորային պաշտպանության միջոցներից օգտվելու ունակություն	1	2	5	0	4	5
Այլ աշխատակիցներին սովորեցնելու պատրաստակամություն և ունակություն	1	7	1	0	2	7
Ծանր առարկաներ բարձրացնելու և տեղաշարժելու ունակություն	1	2	4	0	0	9
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	2	3	4	0	2	7
Համակարգչային ունակություններ	1	3	2	0	6	3
Գործող և բանավոր հաղորդակցման ունակություններ	2	6	1	0	1	8
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	2	6	1	0	1	8

Չնայած վերը բերված խիստ «համեստ» գնահատականներին՝ հետազոտվողներն իրենց որակավորումների բարձրացման անհապաղ կարիք չեն ներկայացրել: Բարելավման կարիք չի ներկայացվել անհատական և կազմակերպչական ունակությունների բարելավման համար: Հետազոտվողների անմիջական դեկավարների մեծամասնությունը կրկին անվերապահորեն համաձայնվել է իրենց ենթականների կարծիքների հետ:

### *Հարակից պահանջներ*

Պահեստի Պատասխանատուններին առաջադրվող հարակից պահանջների մեջ մտնում են ոչ միայն նրանց կրթական նակարդակին և փորձառությանը վերաբերվող հարցեր, այլև որոշ ուրիշ խնդիրներ ևս:

### **Աղյուսակ 67 - Հարակից պահանջների կարևորությունը և կիրառության աստիճանը**

Պահանջներ	Կարևորությունը				Առկայությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Ղեղագիտական բարձրագույն կրթություն	0	5	4	0	5	1
Պահեստում աշխատելու փորձ	0	4	5	0	4	1
Անվտանգության պահանջների և տեղափոխման կանոնների իմացություն	0	7	2	0	4	1
Պահեստի Ավտոմատացված Կառավարման Համակարգերից օգտվելու փորձ	0	7	2	0	4	2
Օրական 12 ժամ աշխատելու պատրաստակամություն (ներառյալ հանգստյան օրերին), արտաժամյա աշխատանքի պատրաստակամություն	3	4	2	0	4	2

Սույն հետազոտության կարևոր արդյունքներից է հանդիսանում անկանոն (ձկուն) աշխատաժամանակի վերաբերյալ հետազոտվողների կարծիքի պարզաբանումը: Հետազոտվողները շատ են կարևորում այս գործոնը: Միաժամանակ նրանց մոտ կեսը կարծում է, որ բարձրագույն կրթությունը և աշխատանքային փորձն այնքան էլ կարևոր չեն Պահեստի Պատասխանատուի պաշտոն գրադեցնելու համար: Հետազոտվողների անմիջական դեկավարները համաձայն չեն միայն վերջին հայտարարությանը, նրանք բավականին կարևորում են աշխատանքային փորձառությունը:

### *Դասընթացների կազմակերպումը*

Պահեստի պատասխանատուները բավականին մեծ հակվածություն են դրսերել դեպի վերապատրաստման դասընթացները: Նրանց պատասխանները դասընթացների նախընտրելի ծևաչափերի վերաբերյալ ներկայացված են ստորև:

**Այլուսակ 68 - Դասընթացների նախընտրելի ձևաչափերը**

Ուժիմը	Հարմար է	Հարմար չէ
Կեսօր	2	7
Մեկ ամբողջ օր	3	6
Մի քանի (2-3) օր	1	8
Մեկ շաբաթ	6	3
Մեկ շաբաթից ավել	1	8
Կանոնավոր	1	8

Այս անգամ ևս մեկ շաբաթից պակաս տևողությամբ դասընթացները պահանջված չեն: Մեկ շաբաթից ավել տևողությունը ևս հարմար չէ շատերին: Ցավոր հետազոտվողները չեն մանրամասնել մեկ շաբաթ տևողությամբ դասընթացների ձևաչափի իրենց ընտրության պատճառները:

## Մարքետինգի Մասնագետ

### Հետազոտվողների նկարագիրը

Հետազոտված 8 ձեռնարկություններից միայն 5-ում են իրականացվում մարքետինգային մասնագիտացած գործողություններ: Այդ ձեռնարկություններում աշխատող մարքետինգի մասնագետների բնութագրերը ներկայացված են ստորև բերված այլուսակում: Զերծնարկություններից միայն երկուսում կան նման պաշտոններ. մյուս ձեռնարկություններում այդ ֆունկցիաներն իրականացվում են տնօրենների կողմից՝ իրենց հիմնական պարտականությունների կատարմանը գույքահեռ:

Մարքետինգի մասնագետներից և ոչ մեկը չունի համապատասխան մարքետինգային կրթություն: Հետազոտվողներից միայն մեկն ունի տնտեսագիտական կրթություն (ավարտել է ԵրժՏԻ-ն): Սյուս կողմից պետք է նշել, որ բազմաթիվ մասնագետների կարծիքով դեղագործական ձեռնարկություններում մարքետինգային ֆունկցիաները պետք է իրականացնեն դեղագործ մասնագետները:

**Այլուսակ 69 - Հետազոտվողների նկարագիրը**

Ձեռնարկություն	Պաշտոնը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Աշխատանքային փորձը (տարի)
Արփիմեդ	Մարքեթինգի մենեջեր	Ղեղագետ	Ինտերնատուրա	ավելի քան 8
Լիկվոր	Մարքեթինգի և իրացնան բաժնի ղեկավար	Ղեղագետ	Ինտերնատուրա	1 - 3
Երեւանի ՔԴՖ	Գլխավոր ինժեներ	Քիմիկոս	Գիտությունների թեկնածու	ավելի քան 8
Բիզոն-1	Տնօրեն	Ֆիզիկոս	Գիտությունների թեկնածու	3 - 5
Լեյկո-Ալեքս	Տնօրեն	Տնտեսագետ	Մագիստրոս	1 - 3

Բոլոր հետազոտված աշխատողներն ունեն գիտական կոչումներ: Նրանց և նրանց անմիջական ղեկավարների կարծիքով կրթական առկա նակարդակը լիովին բավարար է իրենց ամենօրյա պարտականությունների հաջող իրականացման համար: Մասնագիտական աշխատանքային փորձը

մասնագետների կարծիքով և կարևոր նշանակություն ունի: Այնպազն 3 տարված աշխատանքային փորձը ղեկավարները բավարար են համարում այս պաշտոնը զբաղեցնող աշխատողների համար:

### Պարտականություններ

Մարքետինգի մասնագետների պարտականությունները և դուրս են գրվել միջազգային լավագույն փորձից: Տեղական մասնագետների կարծիքները դրանց կարևորության և տեղական ձեռնարկություններում կիրառության աստիճանի վերաբերյալ ներկայացվում են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 70 - Պարտականությունների կարևորությունը և կիրառության աստիճանը

Գործողություններ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Շատ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանր ապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Գործողություններն իրականացնել համաձայն Հայաստանի դեղագործական օրենսդրությանը և կարգավորմանը, ձեռնարկության ներքին քաղաքականությանը և ընդունված գործընթացներին	2	3	0	0	2	0
Գործողություններն իրականացնել համաձայն ընդունված ներքին Մարքետինգային Ընթացակարգերին	4	1	0	0	2	0
Մարքետինգային ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մարքետինգային ռազմավարության և տակտիկայի մշակում	2	3	0	0	2	0
Տարեկան մարքետինգային ալյանավորման իրականացում	2	3	0	0	2	0
Մարքետինգային նախագծերի մշակում և դրանց խթանման անհրաժեշտ գործողությունների ներկայացում	3	2	0	0	2	0
Գովազդային, կրթական և այլ նյութերի մշակում ու կիրառում	1	4	0	0	2	0
Սպառողներին տվյալ բրենդի վերաբերյալ տեղեկությունների տարածադրում:	2	3	0	0	2	0
Շուկայի մասնագիտական վերլուծությունների և քանակական/որակական հետազոտությունների կանոնավոր իրականացում:	3	2	0	0	2	0
Մրցակիցների հետազոտության իրականացում	2	3	0	0	2	0
Սպառողների սեգմենտավորում և թիրախում	0	4	0	0	1	0
Վաճառքի մասնագետներին արտադրանքի նկարագրերի տրամադրում և	0	5	0	0	2	0

Վերապատրաստման անցկացում						
Վաճառքի մասնագետների կողմից մարքետինգային ռազմավարության պատշաճ իրականացման վերահսկողություն	0	5	0	0	2	0
Մասնակցություն մարքեթինգային միջոցառումների բյուջետավորման գործողություններին	0	0	0	0	0	0

Տեղական մասնագետների կողմից ներկայացված բոլոր պարտականություններն էլ մեծապես կաևորվել են: Այսինքն մարքետինգի տեղական մասնագետները ընդունում են նման պարտականությունների իրականացման նպատակահարմարությունը: Սա կարող է նպաստել տեղական ձեռնարկություններում այդ պարտականությունների հետագա առավել խորը ներդրմանը, չնայած դրանք արդեն իսկ լրիվ ցանկով կիրառվում են Հայաստանում:

### Գիտելիքներ և ունակություններ

Բոլոր հետազոտվողներն էլ հայտնել են, որ իրենց կրթության մակարդակը բավարար է իրենց վերը նշված մասնագիտական պարտականությունների արդյունավետ իրականացման համար: Չնայած դրան՝ ընդհանուր կրթությունը կարող է իսկապես չբավարարել կոնկրետ ֆունկցիաների իրականացման և որոշ բարդ խնդիրների լուծման համար և մասնագետները կարող են իրենց գիտելիքների և ունակությունների օրոշակի բարելավման կարիք ունենալ:

### Աղյուսակ 71 - Գիտելիքների և ունակությունների կարևորությունը

Գիտելիքներ և ունակություններ	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր
Հայաստանի դեղագործական օրենսդրության («Ղեղերի մասին» ՀՀ օրենք, «Գովազդի մասին» ՀՀ օրենք և այլն) իմացություն	1	4	0	0
Ղեղերի իրացման և խթանման վերաբերյալ միջազգային (WHO, EU) ուղեցույցների իմացություն	1	3	1	0
Ռազմավարական մտածելակերպ և վերլուծական ունակություններ	3	1	1	0
Նպատակավացություն և զարգացման ձգտում	2	3	0	0
Ուղիշներին մոտիվացմելու (խթանման) ունակություն	2	2	1	0
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	2	3	0	0
Փոփոխվող իրավիճակում արդյունավետ աշխատելու ունակություն	3	2	0	0
Ծրագրերի կառավարման, բյուջետավորման և ըստ բյուջեի աշխատելու ունակություն	2	3	0	0
Օրոշումներ ընդունելու ունակություն և փորձ	4	1	0	0
Մարքետինգի և խթանման գործիքների արտակարգ իմացություն	2	2	1	0
Համակարգչային ունակություններ	1	3	1	0

Կրկին պատասխանների մեծամասնությունը ստացվել է «շատ կարևոր» և «կարևոր» սյունյակների ներքո: Ինչպես երևում է այսուակից, որոշ գիտելիքներ և ունակություններ հետազոտողներն առավել կարևորել են, չնայած երբեմն նրանց պատասխանները անհասկանալի են: Մասնավորապես դժվար է պատկերացնել, որ ռազմավարական մտածելակերպ և վերլուծական ունակություններ ունեցող մարքետինգի մասնագետը կարող է մարքետինգային և ծրագրային կառավարման ունակությունները համարել «ոչ այնքան կարևոր»:

**Աղյուսակ 72 - Անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների առկայությունը և բարելավման կարիքը**

Գիտելիքներ և ունակություններ	Առկայություն / Տիրապետում			Բարելավման կարիքը		
	Գերազանց	Լավ	Բավարար	Կաանհապաղ կարիք	Կա կարիք	Կարիք չկա
Հայաստանի դեղագործական օրենսդրության («Ղեղերի մասին» ՀՀ օրենք, «Գովազդի մասին» ՀՀ օրենք և այլն) իմացություն	0	2	3	1	3	1
Ղեղերի իրացման և խթանման վերաբերյալ միջազգային (WHO, EU) ուղեցույցների իմացություն	0	4	1	0	3	2
Ռազմավարական մտածելակերպ և վերլուծական ունակություններ	0	4	1	0	3	2
Նպատակավայրական և գարզացման ձգտում	2	2	1	0	4	1
Ուրիշներին մոտիվացնելու (խթանելու) ունակություն	0	4	1	0	4	1
Գերազանց գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	1	3	1	0	2	3
Փոփոխվող իրավիճակում արդյունավետ աշխատելու ունակություն	1	3	1	0	2	3
Ծրագրերի կառավարման, բյուջետավորման և ըստ բյուջեի աշխատելու ունակություն	0	3	2	0	3	2
Որոշումներ ընդունելու ունակություն և փորձ	1	4	0	0	3	2
Մարքետինգի և խթանման գործիքների արտակարգ իմացություն	1	2	2	0	4	1
Համակարգչային ունակություններ	1	2	2	2	0	3

Իրենց գիտելիքների և ունակությունների մակարդակը գնահատելիս Մարքետինգի Մասնագետները բավականին համեստ են հանդես եկել: Չնայած դրանք նրանք իրենց որակավորումը բարձրացնելու առանձնապես մեծ խանդավառություն հանդես չեն բերել: Ավելին՝ նրանցից ոմանք պարզապես հրաժարվել են այդ մտքից: Հետազոտվողների անմիջական դեկավարների մեծամասնությունը լիովին համաձայնվել են իրենց Ենթակաների հետ:

Հետազոտված դեղագործական ծերնարկություններից որոշները կանոնավոր կերպով կիրառում են պարտականությունների վերաբերյալ տեղեկացման գործառույթները: Մեծամասամբ այս գործողության հաճախականությունը տատանվում է մեկ շաբաթից մեկ ամիս

Ժամանակահատվածում, սակայն կան նաև որոշ հետազոտվողներ, որոնք պարզապես չեն կարողացել որևէ պատասխան տալ: Այսինքն կարելի է ենթադրել, որ նրանց պարագայում նման գործառույթ ընդհանրապես չկա: Որոշ դեպքերում աշխատակիցները տեղեկացվում են իրենց պարտականությունների մասին միայն աշխատանքի ընդունման պահին, իսկ հետագայում միայն անհրաժեշտության առաջանալու պարագայում են ստանում լրացուցիչ հանձնարարություններ:

### Հարակից պահանջներ

Մարքետինգի Մասնագետի պարտականություններ ստանձնելու համար պոտենցիալ հավակնորդներին կարող են առաջադրվել ոչ միայն վերը ներկայացված գիտելիքների և ունակությունների տիրապետման, այլև որոշ հարակից պահանջներ: Վերջիններս հիմնականում վերաբերվում են կրթական աստիճաններին և աշխատանքային փորձին:

**Այլուսակ 73 - Հարակից պահանջների կարևորությունը և կիրառության աստիճանը**

Պահանջներ	Կարևորությունը				Առկայությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Արևագն բակալավրի գիտական աստիճան մարքետինգի կամ հարակից բնագավառներում	4	0	1	0	2	1
3+ տարվա աշխատանքային փորձ մարքետինգի կամ խթանման բնագավառում	2	3	0	0	3	0
Փորձառություն գովազդի ոլորտում և ԶԼՍ- ների հետ աշխատանքում	1	2	2	0	2	1
MBA գիտական աստիճանի առկայություն	1	1	3	0	1	2

Հետազոտվողների կողմից հարակից պահանջներից հատկապես կարևորվել է բարձրագույն կրթության (արևագն բակալավրի կոչման) առկայությունը: Մարքետինգային և հարակից ոլորտներում աշխատանքի որոշ փորձառությունը ևս տեղական մասնագետները կարևորել են:

### Դասընթացների կազմակերպումը

**Այլուսակ 74 - Դասընթացների նախընտրելի ձևաչափերը**

Ուժիմը	Հարմար է	Հարմար չէ
Կեսօր	1	3
Մեկ ամբողջ օր	2	2
Մի քանի (2-3) օր	0	4
Մեկ շաբաթ	0	4
Մեկ շաբաթից ավել	1	3
Կանոնավոր	1	3

Վերը ներկայացված վերլուծությունից կարելի է ենթադրել, որ հետազոտվողներն ունեն իրենց որակավորումը բարելավվելու հստակ կարիք: Նման իրավիճակներում վերապատրաստման դասընթացներն ամենալավ գործիքն են հանդիսանում:

Ցանկությունը հետազոտվողներն ի վիճակի չեն եղել սահմանել վերապատրաստման դասընթացների այնպիսի մի ձևաչափ, որն ընդունելի և հարմար լինի նրանց

մեծամասնության համար: Սա բավականին լուրջ խնդիր է, քանի որ հնարավոր չէ կանոնավոր դասընթացներ կազմակերպել մեկ-երկու հոգու համար:

## Բողոքների և Ղեղազգոնության Մասնագետ

### Հետազոտվողների նկարագիրը

Ղեղազգոնության Մասնագետի պաշտոնը առաջատար դեղագործական ձեռնարկություններում ամենակարևոր և հեղինակավոր պաշտոններից մեկն է հանդիսանում: Այս մասնագետները գործ ունեն դեղերի վերաբերյալ ստացվող բողոքների և համապատասխան հետազոտությունների իրականացնան հետ: Նրանք անվտանգության պահպանման խնդիրների շուրջ սերտորեն համագործակցում են վերահսկող կառույցների հետ:

Այս ամենը սակայն քաղվածք է միջազգային դեղագործական ձեռնարկությունների պրակտիկայից: Հայաստանում դեղագործական ձեռնարկություններն ի վիճակի չեն ներգրավել բացառապես բողոքներով և դեղազգոնության խնդիրներով զբաղվող մասնագետների: Փաստորեն այս պարտականություններն իրականացվում են այլ աշխատողների կողմից՝ համատեղվելով նրանց մշտական պարտականությունների հետ: Նման իրավիճակի հիմնական պատճառը տեղական ձեռնարկությունների փոքր չափերն են և արտադրության սահմանափակ ծավալները: Ինչիցեւ, ստորև բերված այլուսակում ներկայացվում է տեղական դեղագործական ձեռնարկություններում Բողոքների և Ղեղազգոնության Մասնագետի պաշտոնի գործառնություններն իրականացնող աշխատողների ընդհանուր բնութագիրը:

### Այլուսակ 75 - Հետազոտվողների նկարագիրը

Ձեռնարկություն	Պաշտոնը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Աշխատանքային փորձը (տարի)
Արվիմետ	Բժշկական ներկայացուցիչ	Ղեղագետ	Գիտությունների թեկնածու	3 – 5
Լիկվոր	Որակի հսկման մենեջեր	Կենսաֆիզիկա	Մագիստրոս	5 – 8
Երեւանի ՔԴՖ	Տեխնիկական վերահսկման մենեջեր	Ինժեներ - տեխնոլոգ	Մագիստրոս	3 – 5
Վիտամաքս-Ե	Ղեղագործ	Ղեղագործ	Բակալավր	ավելի քան 8
Լեյկո-Ալեքս	Գիտական արտադրության գծով փոխանորեն	Քիմիկոս	Գիտությունների թեկնածու	3 – 5

Այլուսակից երևում է, որ տեղական ձեռնարկություններից և ոչ մեկը չունի Ղեղազգոնության Մասնագետ: Համապատասխան պարտականություններն իրականացնում են տարբեր ստորաբաժանումների դեկավարներ, որոնք ունեն դեղագործական կամ կենսաբանական գիտություններով մասնագիտացում: Բոլոր հետազոտված աշխատողներն ունեն բավարար կրթական մակարդակ և աշխատանքային փորձ: Առնվազն այսպես են մտածում հենց իրենք՝ հետազոտվողները և նրանց անմիջական դեկավարները: Անհանգստացնող է միայն մեկ հանգամանք. միաժամանակ տարբեր պաշտոնների պարտականությունների իրականացումը

Կարող է զգալիորեն նվազեցնել աշխատողների արդյունավետությունը և ավելացնել սխալվելու հնարավորությունները:

### Պարտականություններ

Բողոքների և Ղեղազգոնության Մասնագետի պարտականություններ իրականացնողների համար միջազգային լավագույն փորձը սահմանում է մի շարք պարտականություններ, որոնց կարևորության և կիրառության գնահատականը տվել են տեղական դեղագործական ծեռնարկությունների աշխատողները:

Աղյուսակ 76 - Պարտականությունների կարևորությունը և կիրառության աստիճանը

Գործողություններ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանր ապես ոչ կարևոր	Այն	Ոչ
Հետևել բոլոր Գործողությունների Ստանդարտ Ընթացակարգերին, հանապատասխան պետական կարգավորմանը և ծեռնարկության կանոնակարգերին, որոնք վերաբերում են բոլոր տեսակի բողոքներին՝ ներառյալ խմբաքանակների եւ կանչման և դեղերի կողմնակի ազդեցությունների դիտարկման հարցերին	4	1	0	0	3 1	
Արտադրանքի թերությունների վերաբերյալ բոլոր բողոքների գրանցում և գեկուցում նշանակված պաշտոնյային՝ հետազա անհրաժեշտ գործողություններն իրականացնելու նպատակով	3	2	0	0	4 1	
Պարզել թե բողոքը դեղերի կեղծման արդյունք է, թե ոչ	4	1	0	0	4 1	
Հանդես գալ որպես պետական կարգավորող մարմինների հետ կապն իրականացնող անձ դեղերի անվտանգությանը վերաբերող հարցերում	1	4	0	0	2 3	
Կողմնակի ազդեցությունների վերաբերյալ հաղորդագրությունների դիտարկում և դրանց մասին գեկուցում ներքին պատասխանատուններին և ծեռնարկության հատուկ նշանակված պաշտոնյաներին և պետական կարգավորող մարմիններին	0	4	0	0	3 2	
Ուսումնասիրել և հետևել դեղերի կողմնակի ազդեցությունների դեպքերին Հայաստանում և արտերկրում	1	4	0	0	1 4	
Ուսումնասիրել և պետական կարգավորող մարմիններին ներկայացնել Ղեղերի Անվտանգության Պարբերական Հաշվետվություն և Ղեղերի Անվտանգության Տարեկան	0	4	0	0	1 3	

Հաշվետվություն						
Ղեղերի անվտանգության վերաբերյալ հարցումներին պատասխանելու նպատակով գործընկերների (քֆիշների, կոլեկտիվի անդամների, առևտորյային գործընկերների և այլն) հետ գնահատման պլանների մշակում և իրականացում:	2	1	1	0	3	2
Ղեղամիջոցների անվտանգության հետ կապված դասընթացների անցկացում անձնակազմի համապատասխան ներկայացուցիչների համար	2	3	0	0	2	3
Ղեղերի կողմնակի ազդեցությունների ուսումնասիրության ծրագրերի մշակում և ներդրում	1	0	3	0	1	4
Հայտնաբերել գործընթացների թերությունները և առաջարկել բարելավման տարրերակներ	1	3	1	0	3	2
Ղեղերի անվտանգության վերաբերյալ ազդանշանների ստոցում, պարզաբանում և գեկուցում դեկավարությանը	0	4	0	0	4	1

Ինչպես երևում է այսուսակից, բավարար թվով հետազոտվողների կողմից «ոչ այնքան կարևոր» է համարվել միայն «Ղեղերի կողմնակի ազդեցությունների ուսումնասիրության ծրագրերի մշակում և ներդրում» ֆունկցիան: Բոլոր մյուս ֆունկցիաները՝ հատկապես նեղ մասնագիտական հարցերին վերաբերվող պարտականությունները, կարևորվել են տեղական մասնագետների կողմից: Նշված պարտականությունների մի զգալի մասը արդեն իսկ կիրառվում է Հայաստանում, սակայն դեռևս կան բավականին ֆունկցիաներ, որոնք տեղական ձեռնարկություններում ներդրված չեն:

### Գիտելիքներ և ունակություններ

Ինչպես և այլ մասնագետների դեպքում, Ղեղագոնության Մասնագետները ևս հայտարարել են իրենց կրթական մակարդակի բավարար լինելու մասին: Այնուամենայմիվ ընդհանուր կրթությունը չի կարող ամբողջությամբ ապահովել ներկայացված պարտականությունների անթերի կատարումը. անհրաժեշտ են նաև որոշ ստորեւ նծված հատուկ ունակություններ:

### Այլուսակ 77 - Գիտելիքների և ունակությունների կարևորությունը

Գիտելիքներ և ունակություններ	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր
Հայաստանի դեղագործական օրենսդրության իմացություն	2	3	0	0
GMP (Պատշաճ Արտադրական Գործունեություն) մասնավորապես տվյալ արտադրատեսակներին առընչվող առանահատվությունների իմացություն	3	2	0	0
Ղեղերի անվտանգության մասին գիտելիքներ	4	1	0	0
Կողմնակի ազդեցության դեպքերի արձանագրման գիտելիքներ և փորձ	2	2	1	0
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	2	3	0	0

Ղեղերի արտադրության բնագավառում ունակությունների և գիտելիքների կարիքների հետազոտություն	Ունակությունների և գիտելիքների անհամապատասխանությունը
---	---

Գերազանց կազմակերպչական ունակություններ	2	3	0	0
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	1	4	0	0
Ծրագրերի կառավարման ունակություններ	0	4	1	0
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	0	5	0	0

Հետազոտվողները մեծապես կարևորել են ներկայացված գրեթե բոլոր գիտելիքները և ունակությունները: Հատուկ ուշադրություն է դարձվել ՊԱԳ ստանդարտներին և նեղ մասնագիտական գիտելիքներին:

#### Աղյուսակ 78 - Անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների առկայությունը և բարելավման կարիքը

Գիտելիքներ և ունակություններ	Առկայություն / Տիրապետում			Բարելավման կարիք		
	Գերազանց	Լավ	Բավարար	Կանհապաղ կարիք	Կարիք չկա	Կարիք չկա
Հայաստանի դեղագործական օրենսդրության իմացություն	1	3	1	0	3	2
GMP (Պատշաճ Արտադրական Գործունեություն)՝ մասնավորապես տվյալ արտադրատեսակներին առընչվող առանահատկությունների իմացություն	1	4	0	1	2	2
Դեղերի անվտանգության մասին գիտելիքներ	3	2	0	0	2	3
Կողմնակի ազդեցության դեպքերի արձանագրման գիտելիքներ և փորձ	1	3	1	0	2	3
Ծրագրերի կառավարման ունակություններ	0	3	2	0	2	3
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	1	3	1	0	1	4
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	2	3	0	0	1	4
Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ	2	3	0	0	1	4
Համակարգչային ունակություններ	0	2	3	1	3	1

Հետազոտվողները որևէ գիտելիքի կամ ունակության անհապաղ բարելավման կարիք չեն ներկայացրել: Վյուամենայնիվ, ընդհանուր որակավորման որոշակի բարելավումից հետազոտվողները չեն հրաժարվում: Որակավորման բարելավման առաջնահերթ թեմաների ցանկում նշվել են պետական վերահսկողությանն ու կարգավորման խնդիրները:

#### Հարակից պահանջներ

Դեղագոնության Մասնագետներին առաջադրվող հարակից պահանջների ստորև բերված աղյուսակում ներկայացված ցանկը բավականին կարծ է և հասկանալի:

**Աղյուսակ 79 - Հարակից պահանջների կարևորությունը և կիրառության աստիճանը**

Պահանջներ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Բժշկական կամ դեղագիտական կրթություն	4	1	0	0	2	0
Դեղագործության բնագավառում գիտական աստիճան	1	1	2	1	1	0
Աշխատանքային փորձ	3	2	0	0	1	0

**Դասընթացների կազմակերպումը**

Այս անգամ ևս մենք բախվում ենք մի իրավիճակի, երբ հետազոտվողներն ի վիճակի չեն լինում ընտրել վերապատրաստման դասընթացների մի ծևաչափ, որը հարմար կլինի նրանց մեծամասնությանը:

**Աղյուսակ 80 - Դասընթացների նախընտրելի ծևաչափերը**

Ուժիմը	Հարմար է	Հարմար չէ
Կեսօր	1	4
Մեկ ամբողջ օր	1	4
Մի քանի (2-3) օր	0	5
Մեկ շաբաթ	1	4
Մեկ շաբաթից ավել	2	3
Կանոնավոր	2	3

Նման իրավիճակում միայն մեկ եզրակացություն կարելի է կատարել: Պետք է այս թեմայով ավելի մանրամասն քննարկումներ կազմակերպել ձեռնարկությունների բարձր դեկավարության հետ և առավել հարմար ծևաչափ մշակել դեղագործական ոլորտի աշխատողների տարբեր խմբերի համար:

**Գիտահետազոտական Աշխատանքների Պատասխանատու**

**Հետազոտվողների նկարագիրը**

Ներկա արտադրանքի որակական հատկանիշների բարելավմամբ և նոր դեղերի արտադրության համար անհրաժեշտ հետազոտություններով և սինթեզով զբաղվող մասնագետների ներգրավումը իրենց կարող են բոլոր դեղագործական ձեռնարկությունները: Այսիսկ աշխատողներ ունենալը շատ թանկ է արժենում, և դա պայմանավորված է ոչ միայն գիտնականների բարձր աշխատավարձով, այլև նրանց գործունեության հետ կապված ծախսերի մեծությամբ: Այդ է պատճառը, որ տեղական ձեռնարկություններից և ոչ մեկը չունի Գիտնականի պաշտոն իր կառուցվածքում, իսկ այդ պարտականությունների մի մասն իրականացվում է այլ մասնագետների կողմից՝ համատեղվելով նրանց հիմնական պարտականությունների հետ:

**Այլուսակ 81 - Հետազոտվողների նկարագիրը**

Զեօնարկություն	Պաշտոնը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Աշխատանքային փորձը (տարի)
Արվիհմեդ	Որակի հսկման լաբորատորիայի վարիչ	Քիմիկոս	Մագիստրոս	3 - 5
Լիկվոր	Որակի վերահսկման լաբորատորիայի վարիչ	Ինժեներ, քիմիկոս-տեխնոլոգ	Մագիստրոս	ավելի քան 8
Բիզոն-1	Հաշվապահ	Կենսաֆիզիկոս	Մագիստրոս	1 - 3
Լեյկո-Ալեքս	Տեխնիկական վերահսկողության բաժնի վարիչ	Դեղագետ	Գիտությունների թեկնածու	1

Հետազոտված ձեռնարկություններից ընդամենը 4-ում են հայտնել Գիտնականի գործողությունների իրականացման մասին: Ֆունկցիաներն իրականացվում են տարբեր մասնագետների կողմից, որոնք իմնականում զբաղված են Որակի Հսկման ստորաբաժանումներում: Նման համատեղումը շատ արդյունավետ լինել չի կարող. Որակի Հսկման ֆունկցիաներն առանց այն էլ շատ բարդ են և ժամանակատար: Դրանց պատշաճ կատարումը պարզապես ժամանակ չի թողնի ստեղծագործ գիտահետազոտական աշխատանքի իրականացման համար:

Ներկայացված 5 ձեռնարկությունների հետազոտված աշխատողներն ունեն համապատասխան կրթություն և պատրաստվածություն: Գիտական աստիճանները ևս բավարար են: Տարբեր ձեռնարկությունների մասնագետների մոտ աշխատանքային փորձը տարբեր է: Մեր կարծիքով նվազագույն փորձը պետք է կազմի առնվազն երեք տարի, և դեկավարները համաձայն են այս գնահատականի հետ:

**Պարտականություններ**

Գիտնականի պարտականություններն ընտրվել են միջազգային լավագույն փորձից և ներկայացվել տեղական մասնագետների գնահատմանը:

**Այլուսակ 82 - Պարտականությունների կարևորությունը և կիրառության աստիճանը**

Գործողություններ	Կարևորությունը				Կիրառությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհանր ապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Մասնակցել ներկա դեղերի որակի և բաղադրակազի կատարելագործմանը	2	2	0	0	3	1
Կազմակերպել և իրականացնել գիտահետազոտական փորձարկումներ նոր ապրանքների մշակման նպատակով	1	3	0	0	4	0
Մշակել և ուսումնասիրել գիտահետազոտական աշխատություններ՝	1	3	0	0	3	1

Անրաջական նոր դեղերի վերաբերյալ արձանագրություններ						
Ուսումնասիրել կայունության ներկա գործնթացները, գնահատել կայունության ցուցանիշները և առաջարկություններ անել դրանց բարելավման ուղղությամբ	1	2	1	0	3	1
Առաջարկել ծախսերի նվազեցման եւ արտադրանքի բարելավումների հնարավորությունները	1	3	0	0	3	1
Զերնարկության դեկավարությանը գիտական և տեխնիկական աջակցություն տրամադրել նոր հնարավորությունների հայտնաբերման և իրականացման հանար	1	3	0	0	2	1
Նոր (ավելի արդյունավետ) սարքավորումների, գործնթացների, փաստաթղթավորման համակարգերի հայտնաբերում, առաջարկում և ներդրում կամ առկա համակարգերի կատարելավործում	1	3	0	0	3	1
Աջակցություն GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեություն) եւ Գիտահետազոտական փորձարկումների փաստաթղթերի պատրաստման գործնթացներին	2	1	1	0	2	1
Անալիտիկ փորձարկման աջակցություն արտադրության բոլոր փուլերում	3	0	1	0	3	1
Գիտահետազոտական ծրագրերի իրականացման ողջ ընթացքում (նոր դեղերի նախնական մշակումից մինչև կինիկական խմբաքանակների արտադրություն, գրանցում) առաջատար դերի ստանձնում և դեկավարման իրականացում	1	2	1	0	2	1
Փաստաթղթերի մշակում և ուսումնասիրություն՝ ներաջակ (բայց ոչ սահմանափակվելով) Գործողությունների Ստանդարտ Ընթացակարգերը, Ստանդարտ Վերլուծական Մեթոդները (զարգացման եւ վալիդացիայի փաստաթղթերը), խմբաքանակի գլխավոր (Մաստեր) գրանցումները, ստարիլության, նմուշների եւ սարքավորումների վալիդացիայի ակտերը	3	1	0	0	4	0

Տեղական մասնագետները բավականին կարևորել են ներկայացված գրեթե բոլոր  
պարտականությունները: Ավելին, այդ պարտականությունների մեջ մասն արդեն իսկ կիրառվում է  
տեղական ձեռնարկություններում<sup>4</sup>:

<sup>4</sup> Այս պարտականությունները կատարում են այն մասնագետները, որոնք համատեղության կարգով ստանձնել են նաև Գիտնականի  
պարտականություններ

### Գիտելիքներ և ունակություններ

Գիտելիքների և ունակությունների առկայությունը իրավամբ համարվում է գիտական աշխատանքների պատասխանատուի կարևորագույն բնութագրիչը։ Միաժամանակ այս մասնագետները սովորաբար հակված են կարևորել հատկապես այն գիտելիքները և ունակությունները, որոնց տիրապետում են։

#### Այլուսակ 83 - Գիտելիքների և ունակությունների կարևորությունը

Գիտելիքներ և ունակություններ	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան- րապես ոչ կարևոր
Միայնակ կամ թիմային աշխատանքի միջոցով գիտական և տեխնիկական խնդիրների հայտնաբերման ունակություն	1	3	0	0
Ներկա դեղերի բնութագրիչների և արտադրական գործնթացների իմացություն	3	1	0	0
Մաթեմատիկական / վիճակագրական մոդելավորման իմացություն	0	2	1	1
Առաջատարի արտահայտված ունակություններ	1	1	1	0
Քանադատական և ստեղծագործական մտածելակերպ	1	3	0	0
Աշխատակիցներին խրախուսելու և մոտիվացնելու ունակություն	1	3	0	0
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	1	3	0	0
Համակարգչային ունակություններ	0	4	0	0
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	1	3	0	0

Միջազգային փորձից վերցված գրեթե բոլոր գիտելիքները և ունակությունները կարևորվել են տեղական գիտնականների համար։ «Ընդհանրապես ոչ կարևոր» գնահատականը ստացվել է ընդամենը մեկ անգամ՝ չնայած բավական կարևոր գիտելիքի համար (Մաթեմատիկական / վիճակագրական մոդելավորման իմացություն)։ Հետազոտվողների գնահատականները որոշակի սուրբեկտիվություն են պարունակում։ Ծառ դեպքերում դրանք հետևանքն են տարբեր գործունների, որոնք պայմանավորում են տվյալ ձեռնարկության աշխատանքը։ Այդպիսի գործուններից են արտադրվող դեղերի տեսականին և քանակները, հետազոտվողների ներ մասնագիտացումը, նրանց կրթությունը և աշխատանքային փորձը, ձեռնարկությունում առկա հզորությունների բնութագիրը և այլն։

#### Այլուսակ 84 - Անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների առկայությունը և բարելավման կարիքը

Գիտելիքներ և ունակություններ	Առկայություն / Տիրապետում			Կատարելագործման կարիք		
	Գերա- գանց	Լավ	Բավա- րար	Կա անհա- պաղ կարիք	Կա կարիք	Կարիք չկա
Միայնակ կամ թիմային աշխատանքի միջոցով գիտական և տեխնիկական խնդիրների հայտնաբերման ունակություն	1	3	0	0	1	3
Ներկա դեղերի բնութագրիչների և արտադրական գործնթացների իմացություն	1	3	0	0	4	0

Դեղերի արտադրության բնագավառում ունակությունների և գիտելիքների կարիքների հետազոտություն	Ունակությունների և գիտելիքների անհամապատասխանությունը
---	---

Մաթեմատիկական/Վիճակագրական մոդելավորման իմացություն	0	2	1	0	3	1
Առաջատարի արտահայտված ունակություններ	1	1	2	0	0	4
Քննադատական և ստեղծագործական մտածելակերպ	1	3	0	0	1	3
Աշխատակիցներին խրախուսելու և նոտիվացնելու ունակություն	0	2	2	0	0	4
Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն	0	3	1	0	2	2
Համակարգչային ունակություններ	0	2	2	0	4	0
Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ	0	4	0	0	1	3

Չնայած հետազոտվող գիտնականները բավականին համեստ գնահատականներ են տվել իրենց գիտելիքներին և ունակություններին, նրանք չեն դրսևորել որևէ որակավորման բարձրացման անհապաղ կարիք: Ընդհանրապես նրանք նշել են բարելավման ենթակա շատ քիչ գիտելիքներ և ունակություններ: Ինչպես և բոլոր նախորդ դեպքերում, հետազոտվողները ցանկություն են հայտնել բարելավել իրենց նեղ մասնագիտական որակավորումը, ինչպես նաև թարմացնել մաթեմատիկայի և վիճակագրության գիտելիքները, համակարգչի ինացությունը: Հետազոտված աշխատողների անմիջական դեկավարները ընդհանուր առմամբ համաձայնվել են իրենց ենթականների հետ, սակայն որոշ դեպքերում առաջարկել են ոչ մեծ ուղղումներ կատարել:

### Հարակից պահանջներ

Հարակից պահանջների ցանկը բաղկացած է երկու բաղկացուցիչներից՝ աշխատողների կրթությանը և աշխատանքային փորձին առաջարրվող պահանջներ: Ստորև ներկայացված են այս երկու պահանջների տարբեր համադրություններ:

### Աղյուսակ 85 - Հարակից պահանջների կարևորությունը և կիրառության աստիճանը

Պահանջներ	Կարևորությունը				Առկայությունը	
	Ծառ կարևոր	Կարևոր	Ոչ այնքան կարևոր	Ընդհան-րապես ոչ կարևոր	Այլ	Ոչ
Քիմիայի, Դեղագիտության, Կենսաքիմիայի կամ այլ հարակից բնագավառներում բարձրագույն կրթություն և դեղերի մշակման 6+ տարի աշխատանքային իիմնավորվող փորձ	1	3	0	0	2	1
Քիմիայի, Դեղագիտության, Կենսաքիմիայի կամ այլ հարակից բնագավառներում մագիստրոսի աստիճան և դեղերի մշակման 4+ տարի աշխատանքային իիմնավորվող փորձ	0	4	0	0	4	0
Քիմիայի, Դեղագիտության, Կենսաքիմիայի կամ այլ հարակից բնագավառներում գիտության թեկնածուի աստիճան և դեղերի	1	1	2	0	2	1

մշակման 2+ տարի աշխատանքային հիմնավորվող փորձ						
--	--	--	--	--	--	--

Կրթական մակարդակի և աշխատանքային փորձի վերաբերյալ հետազոտվողների կարծիքները կիսվել են: Պատասխանների նման բաշխվածքն օրինաչափ է և ընդունելի: Խնդիրը կրկին կայանում է հետազոտվող ձեռնարկությունների ծավալների, արտադրանքի տեսականու, զինվածության և այլ բնութագրերի մեջ:

### **Դասընթացների կազմակերպումը**

Դասընթացների հարմարության վերաբերյալ ստացվել են բավականին տարբեր պատասխաններ: Ամենապահանջված ձևաչափը 2-3 օր տևողությամբ վերապատրաստման դասընթացներն են:

#### **Աղյուսակ 86 - Դասընթացների նախընտրելի ձևաչափերը**

Ռեժիմը	Հարմար է	Հարմար չէ
Կեսօր	1	3
Մեկ ամբողջ օր	2	2
Մի քանի (2-3) օր	3	1
Մեկ շաբաթ	2	2
Մեկ շաբաթից ավել	2	2
Կանոնավոր	1	3

Նման ձևաչափն ավելի հարմար է սեմինարների և քննարկումների կազմակերպման համար, սակայն հմարավոր է նաև այդ ժամանակահատվածում սեղմ թեմաներով ինտենսիվ դասընթացներ կազմակերպել:

Դեկտեմբեր 8, 2008

## Դեղերի արտադրության բնագավառում ուսակությունների եւ գիտելիքների կարիքների հետազոտություն

Յաշվետվություն, Մաս 3

Աշխատանքի Նկարագրերի նախագծեր

Հեղինակ՝ ԱՄ Փառաւորա Քուսսաւահագ Քասթի ՍՊԸ



## ՑԱՆԿ

Լիազորված (ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ) ԱՆՁ	2
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ	4
ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՈՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ	6
ՊԱՀԵՍՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	8
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՎԱՐԻՉ	10
ՏԵԽՆՈԼՈԳԻԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	12
ԳԻՏԱԿԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	14
ՔԻՄԻԿՈՍ (ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԱՆԱԼԻՏԻԿ)	16
ՄԱՆՐԵԱԲԱՆ	18
ԼԱԲՈՐԱԾ	20
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՊԵՐԱՏՈՐ	21
ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՕՊԵՐԱՏՈՐ	23
ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԴԵՂԱԶԳՈՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	25
ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏ	27
ՄԱՐՖԵԹԻՆԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ	28

## Պաշտոն

### Լիազորված (ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ) ԱՆՁ

#### Ընդհանուր նկարագիր

Լիազորված Անձը կազմակերպում և վերահսկում է ձեռնարկության ամբողջ գործունեությունը: Հաճախ գրադարանում է Որակի Հսկման Ղեկավարի պաշտոնը, երբեմն էլ՝ Արտադրության Ղեկավարի: Ապահովում է, որ արտադրանքի յուրաքանչյուր խմբաքանակի թողարկումն իրականացվի ձեռնարկության ներքին ուղեցույցների հիման վրա: Կազ է պաշտպանում ներքին և արտաքին առողջիւ իրականացնողների հետ, հաշվետվություններ է ներկայացնում է ձեռնարկության ղեկավարությանը և բաժնետերերին:

#### Պարտականություններ

- Սինէլ խմբաքանակի բացթողման թույլտվություն տալը պետք է՝
  - Համոզվել, որ խմբաքանակն արտադրվել է GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) և գործողության Ստանդարտ Ընթացակարգերին համապատասխան,
  - Համոզվել, որ արտադրության և փորձարկման հիմնական գործընթացները վալիդացվել են,
  - Համոզվել, որ արտադրության կամ որակի հսկման ցանկացած փոփոխություն արտոնվել է համապատասխան մասնագետի կողմից,
  - Համոզվել, որ բոլոր անհրաժեշտ ստուգումներն ու փորձարկումներն իրականացվել են,
  - Համոզվել, որ արտադրությանը և որակի հսկմանը վերաբերող բոլոր փաստաթղթերը պատշաճորեն լրացվել և ստորագրվել են լիազորված մասնագետների կողմից,
  - Համոզվել, որ խմբաքանակը համապատասխանում է մարքեթինգի ծառայության պատվերին:
- Մասնակցել ողջ ձեռնարկության վալիդացիայի ծրագրի մշակմանը և ներդրմանը:
- Կառավարել թերի ապրանքների վերաբերյալ ստացվող բողոքներին արձագանքելու գործընթացը և իրականացնել անհրաժեշտ գործողություններ:
- Համոզվել, որ ժամանակին և պատշաճ լուծվել են ներքին և արտաքին ստուգումների արդյունքում արձանագրված և բարձրացված խնդիրները:
- Մասնակցել տարբեր ստորաբաժանումների համար Գործողության Ստանդարտ Ընթացակարգերի մշակմանը և ներդրմանը:
- Մասնակցել ձեռնարկության ղեկավարմանը, ռազմավարական ծրագրերի իրականացմանը:
- Կառավարել անձնակազմի վերապատրաստման գործընթացները :
- Մշակել արտադրության անընդհատ բարելավման գործառույթներ և ընթացակարգեր:
- Պատրաստվել տեսչական ստուգումներին և կառավարել դրանց անցկացումը:
- Մշակել արդյունավետ QMS (Որակի Կառավարման Համակարգի) չափանիշներ:
- Վերահսկել փաստաթղթավորումը և արձանագրությունների պահպանումը:
- Պլանավորել արտադրության ծավալները, պատրաստել գրաֆիկները, վերահսկել պաշարները:

#### Պահանջներ

- Համալսարանական կրթություն հետևյալ գիտություններից որևէ մեկում՝ դեղագիտություն, բժշկություն, քիմիա, դեղագործական քիմիա և տեխնոլոգիա, կենսաբանություն:
- Դեղերի արտադրության և/կամ որակի ստուգման գործընթացների կառավարման 2+ տարիների փորձ:

### Գիտելիքներ եւ ուսակություններ

1. Հայաստանի և միջազգային (EU, WHO) դեղագործական օրենսդրության և կարգավորման համակողմանի իմացություն (դեղերի արտադրությանը, պահեստավորմանը և բաշխմանը վերաբերող):
2. GMP ((Պատշաճ Արտադրական Գործումենության) և QA (Որակի Ապահովման) սկզբունքների և գործնական իմացություն:
3. Աշխատանքի և անվտանգության կանոնների լավ իմացություն:
4. Անձնական հատկանիշների առկայություն (առաջատար լինելու պատրաստակամություն, խնդիրներ սահմանելու և շփման ուսակություններ):
5. Արտադրական տարածքների, սարքավորումների և ծառայությունների նախագծման, ընտրության, տեղակայման գիտելիքներ:
6. Կալիբրացման, կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու և վերապատրաստում իրականացնելու գիտելիքներ:
7. Մաթեմատիկայի և վիճակագրության իմացություն:
8. Դեղերի դեղաբանական դասակարգման իմացություն:
9. Հիվանդությունների դասակարգման և դեղերով դրանց բուժման գիտելիքներ:
10. Արտադրության հիմնական տեխնոլոգիական գործընթացների, դրանց սահմանափակումների և հսկողության չափանիշների իմացություն:
11. Գործընթացների վակիդացման և կառավարման մեթոդների իմացություն:
12. Լաբորատոր վերլուծության սկզբունքների իմացություն:
13. Դեղագործական մանրէաբանության իմացություն:
14. GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեության) իմացություն:
15. Սիաֆամանակ բազմակի խնդիրների լուծման ուսակություն:
16. Համակարգչային ուսակություններ:
17. Գրավոր և բանավոր հաղորդակցման ուսակություններ:
18. Թիմային համատեղ աշխատանքի ուսակություններ:

## Պաշտոն

### ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

#### Ընդհանուր նկարագիր

Կազմակերպում է արտադրական գործընթացը եւ վերահսկում հումքի ձեռքբերումից մինչեւ վերջնական արտադրանքի իրացման բոլոր փուլերը: Որակի Հսկման ղեկավարի հետ համատեղ ձեռնարկությունում իրականացնում է օպերացիոն ստուգումներ:

#### Պարտականություններ

- Ապահովել / երաշխավորել, որ դեղերն արտադրվում և պահպում են ըստ համապատասխան փաստաթղթերի պահանջների:
- Ստեղծել վտանգների շարունակական իջեցման ուղեցույցներ:
- Արտադրության ամենօրյա կառավարում:
- Արտադրական գործողությունների իրահանգների հաստատում և դրանց անբողջական ներդրման ապահովում:
- Արտադրական գործընթացների շարունակական կատարելագործման ապահովում:
- Նշանակված անձի կողմից արտադրական արձանագրությունների գնահատման և ստորագրման ապահովում, մինչև դրանց Որակի Հսկման ստորաբաժանում ուղարկելը:
- Շենքի, տարածքի, սարքերի և արտադրանասի վիճակի ստուգում:
- Երաշխավորել, որ համապատասխան գործընթացի վալիդացիան և հսկող սարքերի ճշգրտումը (կալիբրացումը) իրականացվել ու արձանագրվել է մատչելի ձևով:
- Երաշխավորել, որ արտադրության ամձնակազմի նախնական և շարունակական վերապատրաստումը իրականացվում է և այն հարմարեցված է ներկա կարիքներին:
- Պատասխանատու լինել արտադրության անվտանգության, կանոնավորման և/կամ շրջակա միջավայրի պաշտպանության պայմաններին համապատասխանեցնելու համար:
- Հանագործակցություն հետևյալ բաժինների հետ՝
  - Հանակարգեր - պահպանել և նորացնել արտադրության համակարգչային հանակարգը և ցանցային կապերը,
  - Գործարանի ինժիներական ծառայություն - աջակցել նոր սարքերի ձևավորմանը և ձեռքբերմանը կամ սարքի վերածնափոխմանը՝ ապահովելով նոր արտադրանքի ներկայացման և կատարելագործման շարունակական գործառույթներ,
  - Վայիդացում / տեխնսպասարկում - օժանդակել գործարանի փորձարկումներին, նոր դեղերի հետ կապված գործունեությանը, ինչպես նաև առկա ու նոր գործընթացների, սարքավորումների և էլեկտրոնային հանակարգերի վալիդացմանը:
- Իրականացնել դասընթացներ նոր տեխնոլոգիաների, նոր արտադրանքների և նոր օժանդակ գործընթացների համար:

Որակի Հսկման Ղեկավարի հետ համատեղ իրականացվող գործառույթներ: Որակին առնչվող պարտականություններ

- Փաստաթղթավորված գործընթացների և այլ փաստաթղթերի հաստատում,
- Արտադրական միջավայրի դիտարկում և հսկում,
- Գործարանի հիգիենայի հսկում և պահպանում,
- Գործընթացների վալիդացում և անալիտիկ սարքերի ճշգրտում / տրամաչափում,
- Դասընթացների իրականացում, ներառյալ Որակի Ապահովման հիմնադրույթների ներդրման և կիրառության վերաբերյալ:

18. Նյութերի մատակարարների դիտարկում և հաստատում:
19. Պայմանագրային արտադրողների դիտարկում և հաստատում (Եթե այդպիսիք կան):
20. Նյութերի և արտադրանքների պահպանման պայմանների դիտարկում և որոշում:
21. Ներգործընթացային ստուգումների իրականացում և գնահատում:
22. Արձանագրությունների պահպանում:
23. GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) պահանջներին արտադրության համապատասխանության մոնիթորինգ:

### Պահանջներ

1. Բարձրագույն դեղագիտական կրթություն (կամ համապատասխան բարձրագույն կրթություն Հայաստանում) և 4 և ավել տարվա աշխատանքային փորձ:
2. Գիտությունների թեկնածու և 2-6 տարի աշխատանքային փորձ:
3. Ղեկավարման աշխատանքային փորձ:
4. Ղեղագործական արտադրության ընդհանուր փորձառություն:
5. Համապատասխան արտադրական գործընթացների փորձառություն:
6. Շաբաթ-կիրակի և հավելյալ ժամեր աշխատելու պատրաստակամություն:

### Գիտելիքներ եւ ունակություններ

1. Հայաստանի դեղագործական օրենսդրության և կարգավորման («Դեղերի մասին» ՀՀ օրենք, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք և այլն), GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության), շրջակա միջավայրի և այլ կարգավորող պահանջների մասին գիտելիքներ:
2. Աշխատանքի և անվտանգության կանոնների լավ իմացություն:
3. Բաղադրակազմների և տարբեր գործընթացների տեխնոլոգիաների աշխատանքային գիտելիքներ:
4. Բոլոր արտադրական գործողությունների, սարքավորումների և Գործողության Ստանդարտ Ընթացակարգերի իմացություն:
5. Կանոնավոր գործընթացներից և համակարգերից դուրս ծագած հիմնախնդիրների ճիշտ լուծումներ պահովելու կարողություն:
6. Տարբեր տեխնոլոգիաների հարմարեցման և կառավարման ընդունակություն:
7. Արտադրական, ինժեներական և գործողությունների ծառայողներին արդյունավետ կառավարման ունակություն:
8. Գլխավոր դեղագործների, ավագ տեխնիկական մասնագետների, դեկանների, սպառողների և մատակարարների հետ շփման կարողություն:
9. Գործընթացների օպտիմիզացիայի ձգտում և կառավարման կարողություն:
10. Համապատասխան բաժնի աշխատակազմին սովորեցնելու, խորհրդատվական, կառավարման և ուղղողման կարողություն:
11. Համապատասխան հարցերով պետական կարգավորող մարմինների հետ շփման և բանակցություններ վարելու կարողություն:
12. Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն:
13. Համակարգչային ունակություններ:
14. Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ:
15. Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ:

## Պաշտոն

### ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԴԵԿԱՎԱՐ

#### Ընդհանուր նկարագիր

Վերահսկել որակին վերաբերող հարցերը (արտադրության եւ արտադրանքի որակը), դեկավարել Որակի Հսկման Լաբորատորիայի աշխանքները եւ իր աշխատակիցների աշխատանքը: Արտադրության Դեկավարի հետ համատեղ ձեռնարկությունում իրականացնել օպերացիոն ստուգումներ:

#### Պարտականություններ

- Հաստատել կամ մերժել ելանյութերը, փաթեթավորման նյութերը, միջանկյալ և վերջնական արտադրանքների համապատասխանությունը համաձայն իրենց սպեցիֆիկացիաներին:
- Գնահատել խմբաքանակների արձանագրությունները:
- Երաշխավորել բոլոր անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների կատարումը:
- Հաստատել սպեցիֆիկացիաները, նմուշառման հրահանգները, փորձարկման մեթոդները և որակի հսկման մյուս գործնթացները:
- Հաստատել և դիտարկել բոլոր լաբորատոր վերլուծաբանների (եթե կան) աշխատանքը:
- Կանոնավոր ստուգել լաբորատորիայի միջոցները, շենքը և սարքավորումները:
- Երաշխավորել համապատասխան վալդիացումների, ներառյալ անալիտիկ գործընթացների և հսկող սարքավորումների ձգգրտումների / տրամաչափման իրականացումը
- Երաշխավորել աշխատակազմի համար պահանջվող նախնական և շարունակական վերապատրաստման դասընթացների իրականացումը և կարիքներին համապատասխանեցումը:
- Կառավարել որակի փորձարկման լաբորատորիաների գործումներությունը (եթե կան):
- Վերանայել նոր արտադրանքի ներկայացման, մեթոդի և գործիքների վալիդացման փաստաթղթերը և թարմացնել փորձարկման ստանդարտներն ու մեթոդները, կայունության անալիտիկ արձանագրությունները և Գործողության Ստանդարտ Ընթացակարգերը:
- Կապ հաստատել Որակի Հսկման, տեխնոլոգիական, արտադրական և գրանցման բաժինների միջև:

Արտադրության Դեկավարի հետ համատեղ իրականացվող գործառույթներ: Որակին առնչվող պարտականություններ՝

- Փաստաթղթավորված Գործողության Ստանդարտ Ընթացակարգերի և այլ փաստաթղթերի հաստատում:
- Արտադրական միջավայրի դիտարկում և հսկում:
- Գործարանի հիգիենայի հսկում և պահպանում:
- Գործընթացների վալիդացում և անալիտիկ սարքերի ձգգրտում / տրամաչափում:
- Դասընթացների իրականացում, ներառյալ Որակի Ապահովման հիմնադրույթների ներդրման և կիրառության վերաբերյալ:
- Նյութերի մատակարարների դիտարկում և հաստատում:
- Պայմանագրային արտադրողների (outsourcing) դիտարկում և հաստատում (եթե կան):
- Նյութերի և արտադրանքների պահպանման պայմանների որոշում և դիտարկում:
- Ներգործընթացային ստուգումների իրականացում և գնահատում:
- Արձանագրությունների պահպանում:

22. GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) պահանջներին համապատասխանեցման մշտադիտարկում:
23. Հսկողության իրականացում, արտադրանքի որակի վրա ազդող գործոնների հետազոտում և նմուշառում:

### Պահանջներ

1. Բարձրագույն մասնագիտական կրթություն համապատասխան գիտական ասպարեզներում:
2. Նվազագույնը բարձրագույն թիմիական կրթություն, 4 և ավելի տարվա անալիտիկ և մանրէաբանական դեղագործական փորձ:
3. Թիմիկական գիտությունների թեկանածու, 4 և ավելի տարվա անալիտիկ և մանրէաբանական դեղագործական փորձ:
4. Աշխատանքային փորձ դեղագործական լաբորատորիայում, անալիտիկ մեթոդների և գործիքների իմացություն:

### Գիտելիքներ եւ ուսակություններ

1. Հայաստանի դեղագործական ոլորտի օրենսդրության և կարգավորման («Դեղերի մասին» ՀՀ օրենք, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք և այլն), GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության), շրջակա միջավայրի և այլ կարգավորող պահանջների մասին գիտելիքներ:
2. GLP (Պատշաճ լաբորատոր գործունեության) և GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) և անվտանգության կանոնների իմացություն, ներառյալ տվյալ ոլորտի առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքներ:
3. Աշխատանքի և անվտանգության կանոնների իմացություն:
4. Գործիքների և մեթոդների վալիդացման գիտելիքներ:
5. Անընդհատ սովորելու և անալիտիկ խնդիրներ լուծելու կարողություն և պատրաստակամություն:
6. Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն:
7. Հաճակարգչային ունակություններ:
8. Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ:
9. Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ:

## Պաշտոն

### ՊԱՀԵՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

#### Ընդհանուր նկարագիր

Կազմակերպում է հումքի, կիսապատրաստուկների և պատրաստի դեղերի պատշաճ պահեստավորումը եւ պահեստից բացթողնումը: Հատուկ ուշադրություն է դարձնում պահեստի և շրջակա տարածքի անվտանգությանը:

#### Պարտականություններ

1. Տարբեր տեսակի ապրանքների (ելանութերի և փաթեթավորման նյութեր, վերջնական արտադրանք, կարանտինի մեջ գտնվող, ժամկետանց, ետ վերադարձված, ետ կանչված ապրանքներ և այլն) պահեստավորման պատշաճ համակարգի մշակում և ներդրում:
2. Ռադիոակտիվ նյութերի, թմրանյութերի և վտանգավոր / թունավոր այլ դեղերի (որոնք պարունակում են հատուկ ռիսկեր, չարաշահումների վտանգ, իրավտանգ կամ պայթյունավտանգ են) հավելյալ անվտանգություն ունեցող պահեստավորման համակարգի մշակում և ներդրում:
3. Որակի եւ արդյունավետության ստանդարտների դիտարկման և համապատասխան պահանջների ներդրման պարտականություն:
4. Նյութերի շրջանառության համակարգում և կառավարում, ներառյալ նյութերի ստացումը, պահեստավորումը, տեսակավորումը, առաքումը և բոլոր գործընթացների փաստաթղթավորումը:
5. Գործողության Ստանդարտ Ընթացակարգերի բարեկոխում և համապատասխանեցում կարգավորման ու անվտանգության պահանջներին:
6. Հումքի և այլ բաղկացուցիչ նյութերի առաքում համապատասխան ստորաբաժանումներին:
7. Տեղական շուկայի եւ արտահանման համար արտադրանքի բեռնման և բեռնաբաժնման կազմակերպում:
8. Ամբարձիչների շահագործում ըստ հաստատված գործընթացների:
9. Համապատասխան գործողությունների համակարգում (տարածքի մաքրում, ապրանքների խմբավորում և այլն)՝ պահեստում անհրաժեշտ մաքրություն, չորություն, ջերմաստիճան ու կարգուկանոն ապահովելու համար:
10. Նյութերի տեղավորման և դրանց շարժը վերահսկելու համակարգային հաշվառման կիրառություն՝ նյութերը պահեստներում օպտիմալ տեղավորելու և տարածներն առավելագույն չափով օգտագործելու նպատակով:
11. Ապրանքների մուտքի և առաքման տեղեկատվական համակարգերում տվյալների մուտքագրում:
12. Պահեստի և բաշխման ստորաբաժանումների գործունեության ամենօրյա համակարգում և վերահսկում:
13. Պահեստի աշխատակիցների վերապատրաստում և առաջնորդում:
14. Պահեստավորման և բաշխման գործողությունների շարունակական բարելավում, համապատասխանեցում պետական կարգավորմանը և ներքին պահանջներին:
15. Աջակցություն շենքային պայմանների և սարքավորումների բարեկարգման աշխատանքներին:
16. Պահեստի և շրջակա տարածքի անվտանգության ապահովում և վերահսկում:

#### Պահանջներ

1. Առնվազն միջնակարգ մասնագիտական կրթություն համապատասխան ասպարեզներում:
2. Պահեստում աշխատելու փորձ:
3. Անվտանգության պահանջների և տրանսպորտային կանոնների իմացություն:
4. Պահեստի Ավտոմատացված Կառավարման Համակարգերից օգտվելու փորձ:
5. Օրական 12 ժամ աշխատելու պատրաստակամություն (ներառյալ հանգստյան օրերին),  
արտաժամանակի պատրաստակամություն:

### Գիտելիքներ եւ ունակություններ

1. Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի վերաբերյալ Հայաստանի և միջազգային օրենսդրության իմացություն:
2. GMP-ի (Պատշաճ Արտադրական Գործունեության), Good Storage Practice (Պատշաճ Պահպանման Գործունեության) և Good Distribution Practice (Պատշաճ Բաշխման Գործունեության ) իմացություն:
3. Աշխատանքի և անվտանգության կանոնների լավ իմացություն:
4. Անբարձիչների աշխատեցնելու պատրաստակամություն և ունակություն:
5. Հատուկ գործողություններ իրականացնելու նպատակով շնչառական / ռեսպիրատորային պաշտպանության միջոցներից օգտվելու ունակություն:
6. Այլ աշխատակիցներին սովորեցնելու պատրաստակամություն և ունակություն:
7. Ծանր առարկաներ բարձրացնելու և տեղաշարժելու ունակություն:
8. Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն:
9. Համակարգչային ունակություններ:
10. Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ:
11. Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ:

## Պաշտոն

### ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՎԱՐԻՉ

#### Ընդհանուր նկարագիր

Իրականացնում է Որակի Հսկման լաբորատորիայի անմիջական ղեկավարում: Երաշխավորում է բոլոր փաստաթղթերի պատշաճ պահպանումը եւ բոլոր գործիքների ու սարքավորումների անխափան աշխատանքը:

#### Պարտականություններ

- Հումքային և միջանկյալ նյութերի, վերջնական արտադրանքի փորձարկումների և քիմիական ու այլ անալիգների անցկացում:
- Միջանկյալ նյութերի, վերջնական արտադրանքի, կայունության եւ (ըստ անհրաժեշտության) վալիդացման նմուշների վերլուծության կատարման կազմակերպում:
- Արտադրական պրոցեսների վալիդացման կազմակերպում:
- Փորձարկումների իրականացնող և այլ աջակցող անձնակազմի ղեկավարում:
- Փորձարկումների ժամանակ ստացված տվյալների գնահատում և ստացված արդյունքների հիման վրա նմուշների ընդունման կամ մերժման առաջարկությունների կատարում:
- Արձանագրությունների կազմում, արտադրողականության բարձրացման ծրագրերի մշակում, պաշարների ճշգրիտ հաշվառում, վերապատրաստման նյութերի պատրաստում:
- Լաբորատորիայի համապատասխանեցում GMP և GLP պահանջներին և ձեռնարկության գործընթացներին: Հումքերի և դեղերի փորձարկում ըստ սպեցիֆիկացիաների / նկարագրերի և մեթոդոգիաների:
- Համապատասխան գործիքների և այլ լաբորատոր սարքավորումների վերանորոգում և պահպանում:
- Աշխատանքային անվտանգ պայմանների ապահովում:
- Գործիքային վերլուծության զարգացումների վերաբերյալ տեղեկացվածություն:
- Սարքավորումների անվտանգ և վալիդացված պահպանում:
- Քիմիկոս վերլուծաբանների կողմից կատարված աշխատանքի հաստատում: Վալիդացիայի և կալիբրացիայի հաշվետվությունների հաստատում:
- Գործողության Ստանդարտ Ընթացակարգերի, Հատուկ Վերապատրաստման Մոդուլների, Վերահսկողության գործընթացների լրամշակում:
- Անձնակազմի վերապատրաստման իրականացում:
- Լաբորատորիայի ներսում լաբորատոր հետազոտությունների ղեկավարում:
- Լաբորատոր սարքավորումների գնումների կառավարում:
- Աջակցություն ներքին և արտաքին առողջության աշխատանքներին:

#### Պահանջներ

- Բարձրագույն մասնագիտական կրթություն (դիպլոմ) ձանաչված գիտական հաստատությունից:
- Քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 4 և ավել տարիների վերլուծական և մանրէաբանական փորձ դեղագործական ոլորտում:
- Ղեղագործական լաբորատորիայում աշխատելու փորձ, վերլուծության մեթոդների և լաբորատոր գործիքների իմացություն:

#### Գիտելիքներ եւ ունակություններ

1. Հայաստանի դեղագործության վերաբերյալ օրենսդրության («Ղեղերի մասին» ՀՀ օրենք,  
«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք և այլն), Շրջակա միջավայրի պաշտպանության  
պահանջների իմացություն:
2. GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեության), GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության)  
և Անվտանգության գործընթացների իմացություն:
3. Աշխատանքի և անվտանգության կանոնների լավ իմացություն:
4. Գործիքների և մեթոդների վալիդացման իմացություն:
5. Միջանձային շփման և ղեկավարման ունակություններ
6. Անընդհատ սովորելու հակվածություն և վերլուծական խնդիրներ լուծելու ունակություն:
7. Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն:
8. Համակարգչային ունակություններ:
9. Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ:
10. Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ:

## Պաշտոն

### ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

#### Ընդհանուր նկարագիր

Պատասխանատու է դեղերի արտադրության տեխնոլոգիական հարցերի համար: Իրականացնում է տեխնոլոգիական սարքավորումների ընտրություն, դիզայնի և պահպանման աշխատանքներ: Առաջարկում է գործընթացների կատերալագործման հնարավոր տարբերակներ:

#### Պարտականություններ

1. Հիմնել Գործողությունների Ստանդարտ Ընթացակարգեր և աշխատել դրանց համաձայն: GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) և հաստատված անվտանգության կանոնների:
2. Ելնելով ներկա և գալիք կարիքներից՝ մշակել գործընթացների տեխնոլոգիաների ռազմավարություն, գնահատում և ընտրություն:
3. Կրել պատասխանատվություն սարքավորումների վալիդացման, կարգավորող փորձարկման և ընտրության, ինչպես նաև համապատասխան կառուցների մաքրության համար
4. Իրականացնել գործընթացների վալիդացում:
5. Լրացնել - ավարտել գործընթացների ինժեներական ծրագրավորումը:
6. Ստեղծել գործողությունների տեխնիկական ստանդարտներ և Ստանդարտ Ընթացակարգեր:
7. Մշակել և պահպանել գործողության նկարագրություններ, գործողության հատվածների հոսքագծերի սխեմաներ, սպեցիֆիկացիաներ և այլ գործողությունների ու սարքավորումների փաստաթղթեր ինժեներա-նախագծային, կատարողական և պետական / ներքին վերահսկողական ստուգումների համար:
8. Պետական կարգավորող մարմինների հետ առանցնային / հիմնական շփումներ գործողությունների ինժեներական և տեխնոլոգիական հարցերով:
9. Ապահովել գործողությունների շարունակական կատարելագործումը:
10. Պատասխանատու լինել արտադրական գործընթացների ձեւափոխման եւ նորացման համար:
11. Աջակցել ծնավորման, արտադրանքի և նիշֆունկցիոնալ նախագծման աշխատանքներին:
12. Պատասխանատու լինել վերամշակման պրոցեսների տեղակայման և գործունեության իրականացման համար:

#### Պահանջներ

1. Ղեղագիտական կամ քիմիական - ինժեներական բնագավառներում բակալավրի կամ մագիստրի աստիճան:
2. Ղեղագործական բնագավառում դեկավարման փորձ:
3. Պետական կարգավորման մարմինների հետ աշխատելու փորձ:

#### Գիտելիքներ եւ ունակություններ

1. GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) պահանջների վերաբերյալ գիտելիքներ՝ ներառյալ տվյալ ոլորտի առանձնահատկությունները:
2. Գիտելիքներ և փորձ գործողության տեխնոլոգիական նորարարության, արտակարգ իրավիճակների և վերամշակման ասպարեզում:
3. Աշխատանքի և անվտանգության կանոնների լավ իմացություն:
4. Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն:

5. Համակարգչային ուսակություններ:
6. Գրավոր և բանավոր հաղորդակցման ուսակություններ:
7. Թիմային համատեղ աշխատանքի ուսակություններ:

## Պաշտոն

### ԳԻՏԱԿԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

#### Ընդհանուր նկարագիր

Իրականացնում է ակտիվ գիտահետազոտական աշխատանքներ և առաջարկում ինչպես առկա դեղերի բնութագրիչների (հիմնականում պահպանման ժամկետի, կայունության և այլն) բարելավման, այնպես էլ նոր դեղերի սինթեզման ուղիներ: Տալիս է վերլուծական գնահատականներ և օժանդակում այլ աշխատողներին տարբեր փաստաթղթերի պատրաստման և պահպանման հարցերում:

#### Պարտականություններ

1. Մասնակցել ներկա դեղերի որակի կատարելագործմանը և նոր դեղերի ստեղծմանը:
2. Կազմակերպել և իրականացնել գիտահետազոտական փորձարկումներ՝ նոր արտադրանքների մշակման նպատակով:
3. Մշակել և ուսումնասիրել գիտահետազոտական աշխատություններ եւ արտադրանքի գնահատման վերաբերյալ արձանագրություններ:
4. Ուսումնասիրել կայունության ներկա գործընթացները, գնահատել կայունության ցուցանիշները և առաջարկություններ անել դրանց բարելավման ուղղությամբ:
5. Օպտիմալացնել արտադրանքի ներկա կազմությունը և նոր արտադրատեսակներ մշակել:
6. Հետազոտել ընթացիկ արտադրական գործընթացները և կատարել բարեփոխումների և ծախսերի կրճատման առաջարկներ:
7. Զերնարկության դեկավարությանը գիտական և տեխնիկական աջակցության տրամադրել նոր հնարավորությունների հայտնաբերման և իրականացման նպատակով:
8. Նոր (ավելի արդյունավետ) սարքավորումների, գործընթացների, փաստաթղթավորման համակարգերի հայտնաբերում, առաջարկում և ներդրում կամ առկա համակարգերի կատարելագործում:
9. Աջակցություն GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեություն) փաստաթղթերի պատրաստման գործընթացներին:
10. Առաջարկել դեղերի փորձարկման նոր մեթոդներ դեղերի արտադրության բոլոր փուլերում:
11. Գիտահետազոտական ծրագրերի իրականացման ողջ ընթացքում (նոր դեղերի նախնական մշակումից մինչև կիրակական խմբաքանակների արտադրություն, գրանցում) առաջատար դերի ստանձնում և դեկավարման իրականացում:
12. Փաստաթղթերի մշակում և ուսումնասիրություն, ներառյալ Գործողությունների Ստանդարտ Ընթացակարգեր, Ստանդարտ Վերլուծական Մեթոդներ (մշակման և վալիդացման փաստաթղթերը), խմբաքանակի գլխավոր գրանցումներ, կայունության, նմուշառման եւ սարքավորումների վալիդացման փաստաթղթեր:

#### Պահանջներ

1. Քիմիայի, Դեղագիտության, Կենսաքիմիայի կամ այլ հարակից բնագավառումներում բակալավրի աստիճան և դեղերի մշակման 6 և ավել տարի աշխատանքային հիմնավորվող փորձ:
2. Քիմիայի, Դեղագիտության, Կենսաքիմիայի կամ այլ հարակից բնագավառումներում մագիստրոսի աստիճան և դեղերի մշակման 4 և ավել տարի աշխատանքային հիմնավորվող փորձ:

3. Քիմիայի, Դեղագիտության, Կենսաքիմիայի կամ այլ հարակից բնագավառումներում գիտությունների թեկնածուի աստիճան և դեղերի մշակման 2 և ավել տարի աշխատանքային հիմնավորվող փորձ:

### Գիտելիքներ եւ ունակություններ

1. Միայնակ կամ թիմային աշխատանքի միջոցով գիտական և տեխնիկական խնդիրների հայտնաբերման և լուծման ունակություն:
2. Ներկա դեղերի բնութագրիչների և արտադրական գործընթացների իմացություն:
3. Աշխատանքի և անվտանգության կանոնների լավ իմացություն:
4. Մաթեմատիկական / Վիճակագրական մոդելավորման իմացություն:
5. Առաջատարի արտահայտված ունակություններ:
6. Քննադատական և ստեղծագործական մտածելակերպ:
7. Աշխատակիցներին խրախուսելու և մոտիվացնելու ունակություն:
8. Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն:
9. Համակարգչային ունակություններ:
10. Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ:
11. Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ:

## Պաշտոն

### ՔԻՄԻԿՈՍ (ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀԱԿՄԱՆ ԱՆԱԼԻՏԻԿ)

#### Ընդհանուր նկարագիր

Իրականացնում է լաբորատոր վերլուծություններ և փորձարկումներ դեղերի արտադրության բոլոր փուլերում: Երաշխավորում է լաբորատորիայի գործիքների և սարքավորումների անխափան աշխատանքը: Պատրաստում է տարբեր փաստաթղթեր և երաշխավորում դրանց պատշաճ պահպանումը:

#### Պարտականություններ

- Սահմանված կարգով (գրավոր գործողություններով կամ դեղագրքով) փորձարկել միջանկյալ և վերջնական արտադրանքի, վալիդացման, կայունության և շրջակա միջավայրի նմուշները:
- Մշտապես հետևել GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեության) և GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) կանոններին:
- Անսխալ արձանագրել անալիտիկ արդյունքները:
- Շահագործել, պահպանել և ստուգաչափել լաբորատոր սարքավորումները:
- Լաբորատորիայի նյութերի օգտագործում և արձանագրությունները պահպանում:
- Պատրաստել և ձևակերպել սարքավորումների որակավորման և մեթոդների վալիդացման արձանագրությունները:
- Մշտապես երաշխավորել լաբորատորիայի մաքրությունը, դասավորվածությունը և անվտանգությունը:
- Անհապաղ տեղեկացնել ցանկացած անհամապատասխանության (սարքավորումների, գործընթացների և այլն) մասին վերադաս դեկավարությանը:
- Ըստ անհրաժեշտության լաբորատորիայի ներսում ստուգել և/կամ հաստատել այլ անալիտիկների գործունեության տվյալները:
- Զննել տվյալները և մեկնաբանել դրանց համապատասխանությունը սահմանված գործընթացներին, ստանդարտներին ու արձանագրություններին և ժամանակին գրանցել սխալները:
- Մշտապես հսկել / ստուգել փոփոխությունները և շեղումները:
- Հայտնաբերել և լուծել սարքավորումների խնդիրները, ստուգել կիրառվող մեթոդների համապատասխանությունը:
- Աջակցել որակի հսկման համակարգի կատարելագործմանը՝ ստեղծելով լաբորատոր փաստաթղթային համակարգ կամ վերանայելով այն:
- Ներդնել անվտանգության ստանդարտներ և հետևել դրանց կատարմանը:
- Ծանուցումներ պատրաստել և հանձնել դեկավարության՝ համաձայն գործընթացների և ստանդարտների:
- Մասնակցել գործունեության հարակից տեսակների դասընթացներին:
- Մշակել դասընթացների նյութեր և անցկացնել գործընկերների ուսուցում:

#### Պահանջներ

- Քիմիայի, վերլուծական քիմիայի կամ հարակից բնագավառներում բարձրագույն կրթություն:
- Համապատասխան լաբորատոր աշխատանքի փորձ:

3. Դեղագործային փորձարկման (ներառյալ մեթոդների ընտրությունը) և վալիդացման բնագավառներում փորձառություն և GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) գործնական իմացություն:

### Գիտելիքներ եւ ուսակություններ

1. Գիտելիքներ GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեության) և GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) վերաբերյալ՝ ներառյալ տվյալ ձեռնարկության արտադրանքատեսակների վերաբերյալ առանձնահատկությունները:
2. Տեխնիկական տվյալների, գործընթացների և կարգավորող փաստաթղթերի կարդալու, վերլուծելու, մեկնաբանելու կարողություններ:
3. Աշխատանքի և անվտանգության կանոնների լավ իմացություն:
4. Լաբորատոր սարքավորումների իմացություն:
5. Տեխնիկական հակվածություն և փորձարկման մեթոդների (GC, HPLC and Dissolution testing method) թերությունների վերհանման և շտկման կարողություններ:
6. Լաբորատոր միջավայրում աշխատելու, ներառյալ պահանջվող անձնական անվտանգության արտահագուստ հագնելու (ինչպիսին են, օրինակ, ռեսպիրատորները) կարողություն:
7. Կազմակերպելու, պլանավորելու և դատողություններ անելու գերազանց հմտություններ:
8. Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ուսակություն:
9. Համակարգչային ուսակություններ:
10. Գրավոր և բանավոր հաղորդակցման ուսակություններ:
11. Թիմային համատեղ աշխատանքի ուսակություններ:

## Պաշտոն

### ՄԱՆՐԵԱԲԱՆ

#### Ընդհանուր նկարագիր

Որակի հսկման լաբորատորիայում իրականացնում է տարրեր մանրէաբանական վերլուծություններ, կատարում է վալիդացում, կատարելագործում որակի հսկման համակարգը և այլն: Մանրէաբանական Որակի Հսկման հարցերով կապ ապահովել պետական կարգավորող մարմինների հետ:

#### Պարտականություններ

1. Իրականացնել գործողություններ՝ Ստանդարտ Ընթացակարգերի (SOP), GMP (Պատշաճ Արտադրական Գործունեություն) և GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեություն) պահանջներին համաձայն:
2. Կատարել նմուշառում և նմուշների մանրէաբանական անալիզ, ինչպես նաև շրջակա միջավայրի դիտարկման գործառույթներ:
3. Իրականացնել փորձարկման մեթոդների վալիդացում:
4. Կատարել արդյունքների փաստաթղթավորում կամ տվյալների ներմուծում Լաբորատոր Տեղեկության Կառավարման Համակարգ (ԼՏԿՀ):
5. Իրականացնել մանրէների / միկրոօրգանիզմների հայտնաբերում և մեկուսացում / իզոլացում:
6. Ուսումնասիրել վերլուծության արդյունքները և որոշել դրանց ուղղվածությունը / միտումները:
7. Պատրաստել զեկույցներ ուղղվածության և առանձնահատկության շեղումների հայտնաբերման արդյունքների վերաբերյալ:
8. Լաբորատոր հետազոտությունների անցկացնել և պատրաստել համապատասխան հաշվետվություններ:
9. Շրջակա միջավայրի, հումքի, ներգործընթացային /ներարտադրական և վերջնական արտադրանքի հետազոտման ստանդարտների, գործողությունների և Որակի Հսկման համակարգերի մշակում, փորձարկում և ներդրում:
10. Առավելագույն արտադրողականության հասնելու համար գործընթացների անընդհատ գնահատման և բարելավման ապահովում:
11. Հավաքագրել և կազմակերպել խաչվող/առնչվող խնդիրների լուծմամբ գրադարձության անձնակազմի աշխատանքը:
12. Պետական կարգավորող մարմինների հետ Մանրէաբանական Որակի Հսկման հարցերով կապի ապահովում:

#### Պահանջներ

1. Մարէաբանության կամ հարակից գիտությունների բարձրագույն կրթություն կամ գիտական աստիճան:
2. 2 և ավել տարիների աշխատանքային փորձ GMP համակարգով որակի հսկման բնագավառում, որից 1 տարին՝ մարէաբանական լաբորատորիայում աշխատելու փորձ:

#### Գիտելիքներ եւ ունակություններ

1. GLP (Պատշաճ Լաբորատոր Գործունեության), GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) և Անվտանգության գործընթացների իմացություն:

2. Մանրէաբանության իմացություն և արտադրության մանրէաբանական վերահսկողությանը վերաբերող GMP գործընթացների տիրապետում:
3. Նոր սարքավորումների և տեխնոլոգիաների ներդրման և արտադրական գործընթացների բարելավման ունակություն:
4. Լաբորատոր գործիքների և վերլուծական մեթոդների իմացություն:
5. Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն:
6. Համակարգչային ունակություններ:
7. Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ:
8. Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ:

## Պաշտոն

### ԼԱԲՈՐԱՏ

#### Ընդհանուր նկարագիր

Իրականացնում է տարբեր փորձարկումներ և ապահովում Որակի Հսկման Լաբորատորիայի սարքավորումների պատշաճ խնամքը:

#### Պարտականություններ

- Ելանյութերի, միջանկյալ և վերջնական արտադրանքի որակի հսկողության համակարգերով փորձարկումների անցկացում:
- Լաբորատոր սարքավորումների տեղադրում և շահագործում:
- Ընդհանուր աջակցություն արտադրական գործընթացին՝ լաբորատորիա մտնող բոլոր նյութերի ժամանակին և որակյալ փորձարկում իրականացնելու միջոցով:
- Ելանյութերի և փաթեթավորման նյութերի, միջանկյալ և վերջնական արտադրանքի վերլուծությունների արդյունքների արձանագրությունների կազմում և պահպանում:
- Աջակցություն քիմիկոսներին հատուկ խնդիրների լուծման ժամանակ, ինչպիսիք են փորձարկումները, գործընթացների վալիդացումը և այլն:
- Աշխատավայրի մաքրման գործողությունների իրականացում:
- Լաբորատոր գործիքների օրական կալիբրացում (ստուգաչափում):

#### Պահանջներ

- Քիմիայի կամ հարակից բնագավառներում միջնակարգ մասնագիտական կրթություն:
- Աշխատանքային փորձ դեղագործական լաբորատորիաներում:

#### Գիտելիքներ եւ ունակություններ

- GMP (Պատշաճ Արտադրական Գործումնեության) և GLP (Պատշաճ Լաբորատոր Գործումնեության) գերազանց իմացություն:
- Աշխատանքի և անվտանգության կանոնների լավ իմացություն:
- Մանրամասն գրանցումներ իրականացնելու և դրանք պահպանելու ունակություն:
- Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն:
- Համակարգչային ունակություններ:
- Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ:
- Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ:

## Պաշտոն

### ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՊԵՐԱՏՈՐ

#### Ընդհանուր նկարագիր

Անմիջականորեն մասնակցում է արտադրկան գործընթացներին: Սպասարկում է արտադրական սարքավորումները և ապահովում դրանց խնամքը, դեկավարում սարքավորումների ու գործիքների շահագործումը:

#### Պարտականություններ

1. Իրականացնել GMP-ով (Պատշաճ Արտադրական Գործունեություն), Ստանդարտ Ընթացակարգերով և անվտանգության հաստատված կանոններով սահմանված արտադրության տարբեր փուլերի գործողություններ:
2. Շահագործել և սպասարկել իրեն հանձնված արտադրական սարքավորումներ:
3. Անմիջապես հաղորդել դեկավարությանը ստանդարտներից շեղման յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ:
4. Լրացնել և վերանայել խմբաքանակի արձանագրությունները: Խնդիրների հայտնաբերման դեպքում անմիջապես հաղորդել դեկավարությանը:
5. Աշխատել արտադրության գրաֆիկին համապատասխան և ապահովել բոլոր փաստաթղթերի ճշգրիտ, ընթեռնելի և ժամանակին լրացումը և պահել արձանագրությունները ինչպես պահանջվում է:
6. Ստերիլ մասի օպերատորները պետք է ունենան ասեպտիկ վարքագիր, խողովակային լցումների (ներառյալ հոսքագիր միջամտության) խմացություն, սարքավորումների դիտարկման բազային գիտելիքներ և իրականացնեն ստերիլ մասում նմուշառում:
7. Իրականացնել միջանկյալ ու վերջնական նյութերի տեսողական և ֆիզիկական ստուգումներ:
8. Հետևելով խմբաքանակին և Ստանդարտ Ընթացակարգերի իրահանգներին իրականացնել միջանկյալ և վերջնական արտադրանքի նմուշառում: Մանկներ և հանձնել նմուշները համապատասխան վայրեր (լաբորատորիա և այլն):
9. Աշխատանքային օրվա վերջում մաքրել սարքավորումները և արտադրության հարմարանքները՝ հատկապես ասեպտիկ տարածքները:
10. Իրականացնել լցման և փաթեթավորման սարքավորումների մոնտաժում, փորձարկում, ապամոնտաժում և սանիտացիա:
11. Տեղյակ լինել աշխատանքին առնչվող վտանգներին: Բոլոր անհամապատասխանությունների վերաբերյալ գեկուցել պրոցեսների դեկավարներին:
12. Ապահովել արտադրական գործողությունների, գործընթացների և որակի շարունակական կատարելագործում
13. Իրականացնել գույքի հսկման և կարգավորման գործունեություն:
14. Վարժ կերպով իրականացնել դեղէրի լցման, ստուգման և փաթեթավորման աշխատանքները:
15. Աջակցել տեխնիկական աշխատակազմին կանխարգելիչ գործողություններ իրականացնելիս:

#### Պահանջներ

1. Արնվազն միջնակարգ մասնագիտական կրթություն:
2. 2 և ավել տարվա աշխատանքային փորձ դեղագործական արտադրությունում:
3. Սարքավորումների փոփոխման և ձեռքի գործիքներով աշխատելու փորձառություն:
4. Վիզուալ փորձարկումներ կատարելու կարողություն:

## Գիտելիքներ և ունակություններ

1. GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) պահանջների ամբողջական իմացություն ներառյալ տվյալ ոլորտի առանձնահատկությունները:
2. Ստերիլ սենյակի տեխնիկայի, քիմիական նյութերի հետ վարման և օգտագործման հիմնական գիտելիքներ:
3. Մեխանիկական / տեխնիկական հակվածություն:
4. Ավտոմատ և կիսա-ավտոմատ հսկող սարքավորումներ աշխատեցնելու գիտելիքներ:
5. Անվտանգության կանոնների, գործընթացքների տեղեկատունների, գործողությունների և վերանորոգման հրահանգները ինքնուրույն կարդալու և հասկանալու կարողություն:
6. Փոփոխական իրավիճակներում ճիշտ որոշումներ ընդունելու ունակություն:
7. Արտադրության անվտանգության պահանջների իմացություն և հսկում՝ ներառյալ հսկող նյութերի վերաբերյալ գրանցումների վարման գիտելիքներ:
8. Փորձարկումների տեսողական ստուգման կարողություն:
9. Մանրամասների նկատմամբ ուշադրության կարողություն:
10. Արձանագրությունների ճշգրիտ պահպանման և մաթեմատիկական հաշվարկներ կատարելու ունակություն:
11. Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն:
12. Համակարգչային ունակություններ:
13. Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ:
14. Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ:

## Պաշտոն

### Փաթեթակորսան օղերատոր

#### Ընդհանուր նկարագիր

Իրականացնում է դեղերի փաթեթավորման գործողություններ, ստուգում փաթեթավորող սարքավորումների աշխատանքի ճշգրտությունը և փաթեթավորման նյութերի որակը:

#### Պարտականություններ

1. Իրականացնել փաթեթավորման և մակնիշավորման բոլոր փուլերի գործընթացները :
2. Հետևել բոլոր Ստանդարտ Ընթացակարգերին, GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) կարգավորմանը և անվտանգության ուղեցույցներին և ձեռնարկության ներքին քաղաքականությանն ու գործընթացներին:
3. Կարդալ փաթեթավորման իրահանգները և հետևել դրանց:
4. Իրականացնել ներգործընթացային փորձարկում և վերջնական արտադրանքի հսկում Գործողության Ստանդարտ Ընթացակարգերի եւ խմբաքանակի փաստաթղթերի պահանջների համաձայն:
5. Լրացնել արտադրության և պահպանման բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:
6. Միացնել, աշխատեցնել և հարմարեցնել փաթեթավորող սարքավորումները՝ առավելագույն որակ և արդյունք ստանալու համար:
7. Ապահովել թերև անսարքությունների հայտնաբերում և ուղղումներ
8. Կատարել փաթեթավորման և պիտակավորման գործողությունների բոլոր փուլերը:
9. Իրականացնել աշխատավայրի և սարքավորումների մաքրման և պահպանման գործողություններ:
10. Նոր հնարավորություններ գտնել աշխատանքի արտադրողականության և արդյունավետության բարձրացման համար:
11. Կարիքի դեպքում կատարել այլ աշխատանքներ:

#### Պահանջներ

1. Դեղագործական միջին մասնագիտական կամ միջնակարգ կրթություն:
2. Լցման / փաթեթավորման սարքավորումների հետ աշխատելու 1 տարվա փորձ:
3. Փոփոխված մեխանիզմների և ձեռքի գործիքների հետ աշխատելու փորձ:
4. Շարաթ - կիրակի, արտահերթ ժամեր և բոլոր հերթափոխներով աշխատելու պատրաստականություն:

#### Գիտելիքներ եւ ուսակություններ

1. Ընդհանուր գիտելիքներ դեղագործական արտադրությունը կարգավորող օրենքների և/կամ կարգավորումների վերաբերյալ:
2. Աշխատանքի և անվտանգության կանոնների լավ իմացություն:
3. GMP (Պատշաճ Արտադրական Գործունեության) գործընթացների վերաբերյալ գիտելիքներ՝ ներառյալ տվյալ ոլորտի առանձնահատկությունները:
4. Մաթեմատիկան հմտություններ:
5. Նորություններ (ձեռքի գործիքների օգտագործում, տեղեկատումների օգտագործում) սովորելու ցանկություն և կարողություն:

6. Նոր պարտականություններին և հանձնարարականներին արագ հարմարվելու կարողություն:
7. 15-25 կգ ծանրություն բարձրացնելու, հրելու և քաշելու կարողություն:
8. Օրեւկան 8-10 ժամ կանգնելու, քայլելու և թեքվելու կարողություն:
9. Մեխանիկական հակվածություն:
10. «Աչք-Զեռք» համաձայնեցված աշխատանքային կարողություն: Բավարար տեսողություն վերջնական արտադրանքի ստուգում կատարելու համար:
11. Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ուսակություն:
12. Հաճակարգչային ունակություններ:
13. Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ:
14. Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ:

## Պաշտոն

### ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԴԵՂԱԶԳՈՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

#### Ընդհանուր նկարագիր

Գրանցում է դեղերի վերաբերյալ բոլոր բողոքները և իրականացնում հետազոտություններ: Սերտորեն համագործակցում է պետական կարգավորող մարմինների հետ անվտանգության հետ կապված հարցերով: Հետևում է տեղական և միջազգային շուկաներում ընթացող փոփոխություններին ու զարգացումներին, ստուգում վերլուծական նյութերը:

#### Պարտականություններ

1. Հետևել բոլոր Ստանդարտ Ընթացակարգերին, համապատասխան պետական կարգավորմանը և ձեռնարկության կանոնակարգերին, որոնք վերաբերում են բոլոր տեսակի բողոքներին՝ ներառյալ խմբաքանակների ետ կանչման և դեղերի կողմնակի ազդեցությունների դիտարկման հարցերին:
2. Արտադրանքի թերությունների վերաբերյալ բոլոր բողոքների գրանցում և գեկուցում նշանակված պաշտոնյային հետազա անհրաժեշտ գործողություններն իրականացնելու նպատակով:
3. Պարզել թե բողոքը դեղերի կեղծման արդյունք է, թե ոչ:
4. Հանդես գալ որպես պետական կարգավորող մարմինների հետ կապն իրականացնող անձ դեղերի անվտանգությանը վերաբերող հարցերում:
5. Ուսումնասիրել կողմնակի ազդեցությունների վերաբերյալ հաղորդագրություններ և դրանց մասին գեկուցել ներքին պատասխանատուններին և ձեռնարկության հատուկ նշանակված պաշտոնյաններին և պետական կարգավորող մարմիններին:
6. Ուսումնասիրել և հետևել դեղերի կողմնակի ազդեցությունների դեպքերին Հայաստանում և արտերկրում:
7. Ուսումնասիրել և պետական կարգավորող մարմիններին ներկայացնել Դեղերի Անվտանգության Պարբերական Հաշվետվություն և Դեղերի Անվտանգության Տարեկան Հաշվետվություն:
8. Դեղերի անվտանգության վերաբերյալ հարցումներին պատասխանելու նպատակով գործընկերների (բժիշկների, կոլեկտիվի անդամների, առևտրային գործընկերների և այլն) հետ գնահատման պլանների մշակում և իրականացում:
9. Դեղերի անվտանգության հետ կապված դասընթացների անցկացում անձնակազմի համապատասխան ներկայացուցիչների համար:
10. Դեղերի կողմնակի ազդեցությունների ուսումնասիրության ծրագրերի մշակում և ներդրում:
11. Հայտնաբերել գործընթացների թերությունները և առաջարկել բարելավման տարբերակներ:
12. Դեղերի անվտանգության վերաբերյալ ազդանշանների ստացում, պարզաբանում և գեկուցում դեկավարությանը:

#### Պահանջներ

1. Բակալավրի կամ մագիստրոսի աստիճան դեղագիտության կամ բժշկության ասպարեզներում:
2. 2 և ավել տարվա համապատասխան աշխատանքային փորձ:

#### Գիտելիքներ և ունակություններ

1. Հայաստանի և միջազգային դեղագործական օրենսդրության գերազանց իմացություն:
2. GMP (Պատշաճ Արտադրական Գործունեություն)՝ մասնավորապես տվյալ արտադրատեսակներին առընչվող առանահատկությունների, իմացություն:
3. Դեղերի անվտանգության մասին գիտելիքներ:
4. Կողմնակի ազդեցության դեպքերի արձանագրման գիտելիքներ և փորձ:
5. Ծրագրերի կառավարման ունակություններ:
6. Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն:
7. Հաճակարգչային ունակություններ:
8. Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ:
9. Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ:

## Պաշտոն

### ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏ

#### Ընդհանուր նկարագիր

Կապ է պաշտպանում Պետական կարգավորող մարմինների հետ: Տարբեր փաստաթղթեր է պատրաստում, ներկայացնում, վերլուծում և պահպանում: Աջակցում է նոր արտադրատեսակների բնութագրերի և ցուցումների մշակմանը:

#### Պարտականություններ

1. Փաստաթղթերի պատրաստում և ներկայացնում պետական կարգավորող մարմիններին, նրանց հետ հարաբերությունների հաստատում և պահպանում:
2. Փաստաթղթերի ամբողջականության և պետական կարգավորող մարմինների պահանջներին համապատասխանության ապահովում:
3. Պետական կարգավորող մարմիններից ստացվող փաստաթղթերի հետազոտում:
4. Ներքին այլ ստորաբաժանումներից ստացվող փաստաթղթերի ուսումնասիրություն և գնահատում:
5. Այլ ստորաբաժանումներին կարգավորման փաստաթղթերի և պահանջների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:
6. Մասնակցություն ձեռնարկության արտադրանքի և գործունեության վրա ազդող կարգավորող ուղեցույցների վերլուծությանը:
7. Կարգավորման առկա և գալիք փաստաթղթերի դիտարկում, վերլուծություն և խորհրդատվություն:
8. Ստուգումների և առողջուների աշխատանքների համակարգում:

#### Պահանջներ

1. Ղեղաբանության, Քիմիայի, Ղեղագիտության և հարակից բնագավառներում մագիստրոսի աստիճան:
2. Ղեղաբանության, Քիմիայի, Ղեղագիտության և հարակից բնագավառներում գիտությունների թեկնածուի աստիճան:
3. 3 և ավել տարիների աշխատանքային փորձ դեղէրի գրանցման և վերագրանցման բնագավառներում

#### Գիտելիքներ և ունակություններ

1. Հայաստանի և այլ երկրների (ուր նախատեսվում է արտահանել ձեռնարկության արտադրանքը) կարգավորման պահանջների իմացություն (ներառյալ դեղէրի գրանցման գործընթացները):
2. Միջազգային ուղեցույցների վարժ իմացություն:
3. Աշխատանքի և անվտանգության կանոնների լավ իմացություն:
4. Կարգավորող մարմինների վերահսկողության պահանջներին ձեռնարկության գործունեությունը համապատասխանեցնելու ունակություն:
5. Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն:
6. Համակարգչային ունակություններ:
7. Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ:
8. Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ:

## Պաշտոն

### ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ

#### Ընդհանուր նկարագիր

Զբաղվում է Ուսումնական և Մարքետինգային ծրագրերի պատրաստմամբ, հետզոտություններ է իրականացնում, ներդնում է տարբեր մարքետինգային գործիքներ: Իրականացնում է նաև ձեռնարկության և մրցակիցների շուկայի մասնաբաժինների հետազոտություն, կազմակերպում է տարբեր առաջնորդական միջոցառումներ:

#### Պարտականություններ

- Գործողություններն իրականացնել համաձայն Հայաստանի դեղագործական օրենսդրությանը և կարգավորմանը, ձեռնարկության ներքին քաղաքականությանը և ընդունված գործընթացներին:
- Գործողություններն իրականացնել համաձայն ընդունված ներքին Մարքետինգային Գործունեության Ընթացակարգերին:
- Մարքետինգային ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մարքետինգային ռազմավարության և տակտիկայի մշակում:
- Տարեկան մարքետինգային պլանավորման իրականացում:
- Արտադրանքի մարքետինգային նախագծերի մշակում և դրանց խթանման անհրաժեշտ գործողությունների ներկայացում:
- Գովազդային, կրթական և այլ նյութերի մշակում ու կիրառում:
- Բոլոր ստորաբաժանումներից անհրաժեշտ նյութերի հավաքագրում, մարքետինգային նյութերի պատրաստում և պառողմերին տվյալ բրենդի վերաբերյալ տեղեկությունների տրամադրում:
- Շուկայի մասնագիտական վերլուծությունների և քանակական / որակական հետազոտությունների կանոնավոր իրականացում:
- Մրցակիցների հետազոտության իրականացում:
- Սպառողների սեգմենտավորում և թիրախում:
- Վաճառքի մասնագետներին արտադրանքի նկարագրերի տրամադրում և վերապատրաստման անցկացում:
- Վաճառքի մասնագետների կողմից մարքետինգային ռազմավարության պատշաճ իրականացման վերահսկողություն տեղերում այցելությունների իրականացման միջոցով:
- Մասնակցություն մարքեթինգային միջոցառումների բյուջետավորման գործողություններին:

#### Պահանջներ

- Բակալավրի գիտական աստիճան մարքետինգի կամ հարակից բնագավառներում:
- 3 և ավել տարվա աշխատանքային փորձ մարքեթինգի կամ խթանման բնագավառում:
- Փորձառություն գովազդի ոլորտում և ԶԼՄ-ների հետ աշխատանքում:
- MBA գիտական աստիճանի առկայությունը ցանկալի է::

#### Գիտելիքներ և ունակություններ

- Հայաստանի դեղագործական օրենսդրության («Դեղերի մասին» ՀՀ օրենք, «Գովազդի մասին» ՀՀ օրենք և այլն) վարժ ինացություն:
- Դեղերի իրացման և խթանման վերաբերյալ միջազգային (WHO, EU) ուղեցույցների ինացություն:

3. Ուազմավարական մտածելակերպ և վերլուծական ունակություններ:
4. Նպատակավացություն և զարգացման ձգտում:
5. Ուրիշներին մոտիվացնելու ունակություն:
6. Փոփոխվող իրավիճակում արդյունավետ աշխատելու ունակություն:
7. Ծրագրերի կառավարման, բյուջետավորման և ըստ բյուջեի աշխատելու ունակություն:
8. Որոշումներ ընդունելու ունակություն և փորձ:
9. Մարքետինգի և խթանման գործիքների իմացություն:
10. Միաժամանակ բազմակի խնդիրների լուծման ունակություն:
11. Հաճակարգչային ունակություններ:
12. Գրավոր և բանավոր հաղորդակցման ունակություններ:
13. Թիմային համատեղ աշխատանքի ունակություններ: